

ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ


գրական-գեղարվեստական հանդես

40²⁰¹⁵ 41

ՊԻԵՍՆԵՐ

Գուրգեն ԽԱՆՉՅԱՆ	2	ԱՐՄԱԳԵՂՈՆ
Սամվել ԿՈՍՅԱՆ	42	ԴԵՌ ՎԵՐԶԲ ՉԷ
Կարինե ԽՈՎԻԿՅԱՆ	66	ՏՈՒՆԸ ՄԱՀՍԱԽԻ ՎՐԱ
Արտաշես ՇԱՀՔԱԶՅԱՆ	101	ՄԵՆՔ ԿՎԵՐԱՊԱՌԱՆԱՆՔ
Հովհաննես		
ԹԵՐԳՅՈԶՅԱՆ	137	ԱՐԽԻՎ՝ ՄԱՐԴԻԿ ԱՐԽԻՎ՝ ՄԱՐԴԻԿ-1
Նինա ՄԱԶՈՒՐ	166	ԱՄՈԿ ԼԵՋԻ ԿԱՊՈՒԼԵՏ

ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



Գուրգեն ԽԱՆՃՅԱՆ

Դրամատուրգիան չունի
պոեզիայի կամ էլ արձակի գրավչությունը, հավանաբար՝
ազատության հնարավորությունների սահմանափակ լինելու
պատճառով, նրա թևերը կապված են՝ բեմով, տարաբնոյթ
մասնակիցներով, հանդիսատեսով...

Եթե այլ դեպքերում կարող ես ասել՝ կարդում են,
կարդան, չէ՝ չէ, ինձ համար եմ գրում, այս դեպքում
ըստուսությունդ չի անցնի. պիեսը պետք է բեմադրվի,
պիեսը հանդիսատեսի համար է: Այնպես, որ, ուզում ես
թռչել-սակառնել, բայց բեմը պահում է, իր չափերն է
ցուցանում, հանդիսատեսի աչքը պահում է... Սակայն
կարող ես բեմն ու հանդիսատեսին պոկել, հետո երկինք
բարձրացնել, կարող ես երկինքներից կերպար որսալ,
իշեցնել բեմին, կարող ես...
Մի խոսքով՝ կարող ես, եթե կարող ես...

ԱՐՄԱԳԵՂՈՆ

Տրագիկոմեդիա Երկու արարով

Գործող անձինք

**ՎԱՐԱԶՊԱՏ կամ ՎԱՐՈ - մեծահարուս օլիգարխ
ՍՈՎՍԵՍ կամ ՍՈՍՈ - Վարոյի դղրցական ընկերն է,**

գործարար

ՄԻՀՐԱՅ - Վարոյի դղրցական ընկերն է, չինովնիկ

ՀՈՒՓՍԻՄԵ - Վարոյի կինը

ՍԱՐԻՔԵԿ կամ ՍԱՐԻԿ - նրանց որդին

ՆԱՆԵ - Սարիկի նշանածը

ԱՐԱՄ - Նանեի հայրը, Մատենադարանի գիտաշխատող

ՆԱԶԻԿ - Նանեի մայրը

ՏԵՐ ՀԱՅՐ

ՀՈՒՄԻԿ

ՆՈՐՈ - Վարոյի թիկնասղակը

ԲԺԻԾԿ - Եսամոզնության բժիշկ

ԲՈՒԺՔՈՒՅՑ - Եսամոզնության բուժքույց

ՄԱՏՈՒՅՈՂ - միասեռականության հակումով

ՏԻՐԱՅ - Մատենադարանի կրտսեր գիտաշխատող

ՑԽՈՇԻՎՈՐ

Հյուրեր - նշանութեալի արարողությանը հրավիրվածներ,

որոնց վաս լուրն ինանալուն դես փախչում են:

Արար 1

Ուստորանի դակիճ, պսակադրության արարողություն, սեղաններ,
նրանց շուրջը՝ ներկաները՝ ոտքի վրա:

ՄԻՀՐԱՅ - Հարգելի մասնակիցներ...

Մի րոպէն, ուշադրություն, խնդրում
եմ: Այսօր, այս շքեղ սրահում, մեր

սիրելի Վարագդատ Փարսադա-

նի Փարսադանյանը մեզ հավա-
քել է մի շատ երջանիկ առիթով:

Սակայն մինչև առիթին անցնելը, մի պոետիկ շեղում, եթե թույլ կտաք: Իսկական տղամարդը, հավանաբար լսել եք, ի թիվս այլսայլ գործերի, պիտի երեք կարևոր բան անի, այն է՝ պիտի տուն կառուցի, ծառ տնկի և որդի մեծացնի: Մեր Վարազդատը, մեր սիրելի Վարոն, ում բարի համբավը վաղուց դուրս է եկել հանրապետության սահմաններից, անհամար ծառեր է տնկել դեռևս այն ժամանակներից սկսյալ՝ երբ աշխատում էր անտառտնտեսությունում, իովք ու զովք պարզելով իր համաքաղաքացիներին: Նա կառուցել է տուն, և՝ ոչ մեկը, ինչպես գիտեք՝ երկար տարիներ ազգիս համար կարևոր բազում շինարարությունների պետ է եղել մեր սիրելի Վարազդատը, վերջապես՝ որդի է ունեցել, մեծացրել, իրաշալի դաստիարակություն տվել, ահա նա՝ մեր սիրելի Սարիբեկը:

ՍԱՐԻԿ - (*հեռացնելով ականջակալը*): Ի՞նչ ասիր...

ՄԻՀՐԱՆ - Մեր սիրելի Սարիբեկը...

ՍԱՐԻԿ - Սարիբեկը պապդ ա, էղավ, Միհրան:

ՎԱՐՈ - Զայնդ, այ տղա, ականջակալները նորից մտցրու ականջներդ ու էլ չխառնվես: (*Միհրանին.*) Շարունակիր, մի քիչ կարծ խոսիր, ժողովությը հոգնեց, տեմպով, տեմպով:

ՄԻՀՐԱՆ - Մեր Սարիկին՝ ինչպես

նրան սիրով անվանում ենք, Վարազդատն այսօր ամուսնացնում է մի իսկական հայ օջախի զավակ, համեստ ու խելացի և պարզապես գեղեցկուիի Նանեի հետ: Ասում են, մեր հասարակությունը շերտավորված է, մեծահարուսաները խուսափում են աղքատներից, սակայն ահա այս դեպքը գալիս է ցրելու այդ մտայնությունը...

ՎԱՐՈ - Ի... Հասկանում ես, ինչ ես խոսում, այ տղա:

ՄԻՀՐԱՆ - Ինչ ասացի որ... (*Վարոն ինչ-որ բան է հուշում նրա ականջին: Դառնալով ներկաներին:)* Չե, ինձ սխալ չհասկանաք, ես չեմ ասում, թե մեր սիրասուն Նանեի ընտանիքը չքավոր է, քավլիցի, մենք գործ ունենք սակավապետ, համեստ ու հարգարժան ընտանիքի հետ, հանձինս... հանձինս Արամի, ով մեր Մատենադարանի ավագ գիտաշխատողն է, մշակույթի անխոնց մշակ, և նրա իրաշալի կնոջ՝ Նազիկի, որ իր փիսրուն ուսերին է առել մատադ սերնդի կրթության պատասխանատու գործը, նա, ինչպես հասկացաք, ուսուցչուիի է դպրոցում: Ահա: Ծիմա խնդրում եմ լցնել բաժակները և բարձրացնել... (*Վարոն նրա ականջը մոտ է բերում, շշնջում է:)* Այո, այո, իհարկե, նախ՝ տերունական աղոթքը...

Կոտրատվելով գալիս է Մատուցողը, ինչ-որ բան է դնում սեղանին, ինչ-որ բան է տեղափոխում:

ՄԻՀՐԱՆ - Արագացրու, խանգարում ես:

ՄԱՏՈՒՑՈՂ - Գնում եմ, գնում, անհամբեր տղամարդ: (*Հեռանում է:*)

ՄԻՀՐԱՆ - Տեր հայր, շնորհ արեք:

ՏԵՐ ՀԱՅՐ - Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անոն քո: Եկեսցէ արքայություն քո, եղիցին կամք քո որպես յերկինս և յերկրի: Զիաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Եվ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոնց պարտապանաց: Եվ մի տանիր զմեզ ի փորձություն, այլ փրկեա զմեզ ի չարէ: Զի քո է արքայություն և զօրություն և փառք հավիտյանս. ամէն:

ՄԻՀՐԱՆ - Դեհ, բարձրացրեք բաժակները, խմենք մեր չքնաղ ծաղիկների կենացը:

Երաժշտություն: Պարում են, Սարիկը պարելիս էլ է ականջակալներով, խոսում է հեռախոսով՝ «Հա, ախպերս, դե պետք ա, էլի, մինչև երբ ազապ մնանք... Էղավ, ընգեր, կապի մեջ, կապի մեջ»...

ՎԱՐՈ - Գոնե պարելուց հեռախոսն անջատի, այ քո... ցավը տանեմ: (*Սեփական հեռախոսն է ձայնում, խոսում է:*) Ալո: Ես եմ, հա, ինչ կա... Ո՞վ ա, է... Կարապետ, հարթաճ ե՞ս, արա, քեզ օֆիսում հեր-

թապահ եմ թողել, որ դնես՝ հարբես, այ քո էն... ցավը տանեմ: Ինչը սպասեմ... Ինչ... Մի հատուցքի արի, արա, էդ ի՞նչ ախմախ կատակներ են, կարող ա՞ տեղը չես բերում, այ տղա... Վիզդ պոկելու եմ, լուրջ եմ ասում:

ՀՈՒՓՍԻՄԵ - Ինչ եղավ, Վարագդատ:

ՎԱՐՈ - Ոչինչ, օֆիսից էր, Կարապետը:

ՀՈՒՓՍԻՄԵ - Եվ ինչ...

ՎԱՐՈ - Ինչ ես դու էլ հարցախեղդ անում:

ՀՈՒՓՍԻՄԵ - Ախր, գույնդ գցեցիր մի տեսակ:

ՎԱՐՈ - Ջղանացրեց: Ասում ա՝ աշխարի վերջը մոտ ա: Ուրախությունս հարամում ա անասունը: Լավ աշխատող ա, բայց այ սենց ախմախ կատակներ ա անում մեկ-մեկ, վայ թե հանեմ գործից: (*Սարիկին.*) Ասինք՝ էդ ականջակալները հանի:

ՍԱՐԻԿ - (հանելով ականջակալները): Իմ ականջակալները խանգարում են, չեմ հասկանում, քսանմեկերորդ դարն ա, չէ... սուպեր ուրիշ եմ լսում, չլսեմ... Ասա:

ՎԱՐՈ - Ինչ ասեմ, այ քո... ցավը տանեմ, էս տեսակ գեղեցկուիու հետ ես պարում, խոսի հետը, իրան լսի... Վայելի, էլի, ուրիշները կերազեին...

ՍԱՐԻԿ - Աղջիկ ա, էլի, այ հեր, երես չտանք, կնստի գլխներիս:

ՎԱՐՈ - Դոդում: (*Հեռախոսն է ձայ-*

նում, միացնում է:) Ալո: Էլի դո՞ւ, այ... Հավ, լսում եմ, ասա... Ոնց թե՝ երդվես... Ո՞ւմ արև... (Անջատելով:) Ասում ա՝ մորս արև, աշխարի վերջն ա, ասում ա՝ հեռուստացույցով ա լսել:

ՄԻՀՐԱՆ - Մատուցնող, հեռուստացույց բեր, շուտ:

Հյուրերը անհանգստանում են, ոմանք հեռախոսով ինտերնետ են մտնում կամ զանգում ծանոթներին:

ՎԱՐՈ - Հանգիստ, հանգիստ, ժողովուրդ, սադրանք է, ուզում են ուրախությունս հարամեն, հազար ուզող ունեմ, բայց հազար էլ չուզող:

ՄՈՍՈ - Այ մարդ, ինչ եք խառնվել իրար, ինչ պրոբլեմ կա, ասեք՝ լուծեմ, ձեռս քարի տակ չի: Կմ ախպեր, օհտես, չէ, քու համար՝ ոնց ասես...

ՎԱՐՈ - Չեմ կասկածում, Մոստ ջան, մեռնեմ սրտիդ:

Մատուցողը սայլակի վրա գլորելով բերում է հեռուստացույցը:

ՄԱՏՈՒՑՈՂ - Ծուտ բերեցի, չէ... Մեր օրենքսի սերվիսն ա, է, կայ- ծակնային:

ՄԻՀՐԱՆ - Քիչ խոսիր, միացրու:

Մատուցողը միացնում է հեռուստացույցը, պատկեր չկա, խարա- բումներ են բոլոր ալիքներով:

ԱՐԱՄ - Սա լավ նշան չէ:

ՄՈՍՈ - Այ մարդ, վոազ դուխներդ գցում եք... Անտենան թռած կլնի, մի հատ բգեք:

ՄԻՀՐԱՆ - (ստուգելով): Ալեհավաքը տեղում է:

Հյուրերը շարունակում են զանգեր ստանալ, անհանգստությունն աճում է:

ՄՈՍՈ - (հեռախոսով): Լսում եմ, կնիկ... Ցնդել ես, ո՞ւր գամ, ասեցի՝ հետս արի, լավ հաց են տալու, չուզիր, ասիր՝ սիրտս լավ չի, վատ բան ա վկայում... Ի՞նչը... Ոնց թե... Չէ, հա... Խելքիդ զոռ մի տու, էտի լինելիք բան չի... (Անջատելով հեռախոսը): Ասում ա՝ շուտ տուն արի...

ՎԱՐՈ - Էղքանը:

ՄՈՍՈ - Չէ, ասում ա՝ մինչև առավոտ, Վարո ջան...

ՀՈՒՓՍԻՄԵ - Ի՞նչը:

ՄՈՍՈ - Կյանքը, էղքան ա մնացել, բայ, տելեյով ա լսել, ասել են՝ արմագեղոն: Ինչ էլ գեշ անուն ա... Էտի ո՞րն ա որ:

ՏԵՐ ՀԱՅՐ - Արմագեղոն, ասել է, թե՝ աշխարհի կործանում:

ՎԱՐՈ - Բայց ինչի՞ ես ուրախացել, տեր հայր, ոնց որ հարուր տարի սպասած լինես էս օրվանը:

ՏԵՐ ՀԱՅՐ - Չեմ ուրախանում, զավակս, դեմքիս արտահայտությունն է խարուսիկ, աստծո լուսը կա վրան:

ՄԻՇՐԱՆ - Բա որ այդքան լուսավոր ես, ինչո՞ւ կանխավ չես իմացել ու մեզ էլ հայտնել:

ՏԵՐ ՀԱՅՐ - Իմացել ենք, եկեղեցին վաղուց գիտեր, ի վերուստ էինք տեղեկացված, դեռևս երկու հազար տարի առաջ, սակայն ինչո՞ւ խուժապի մեջ օցել մարդոց: Ասված է՝ մինչև վերջին ակնթարթը պետք է ապրել հավերժության զգացումով, և ապաշխարել, և աղոթել, քանզի չկա մահ, և կա փրկություն հավատավորաց համար՝ երկինքներում պատրաստված:

ՄՈՍՈ - Սուս ա ասում, աչքերին նայեք, մորս արև, ինքն էլ նոր իմացավ:

ՎԱՐՈ - Տեր հորը հանգիստ թողեք, իմացել ա-չի իմացել... Ինքներդ մի հատ կարգին ստուգեք էդ ին-ֆորմացիան, աչքի՞ իմ զիսին օյին են խաղում, կանկուրենտներս են, ուզում են սիրտս կայնի, օրյեկտներիս տիրանան:

ՄԻՇՐԱՆ - Այո, ստուգել է պետք, շատ էլ ինչ-որ կանայք ինչ-որ բան ասացին:

ՄՈՍՈ - Ինչ-որ չի, իմ կնիկն ա, արա, քեզ հավքած պահի:

ՎԱՐՈ - Սուս եք, մի հատ զանգեմ վերադասիս, կարող ա մի բան ասի: (Զանգում է, քծնանքով է խոսում:) Բարև ձեզ... Չեկաք, էլի, հրավերքն ուղարկել էի, ստոպ տված՝ սպասում էինք... Ի՞նչ... Զէ, ՞նոց կիամարձակվեմ, ուղարկել

եմ, առավոտյան, ձեր վարորդի հետ, եկավ՝ տարավ, բա ՞նց... Ասում եմ՝ էս ի՞նչ շուխուր են օցել ազգիս մեջ... Անջատեց...

ՀՌԻՓՍԻՄԵ - Կարող ա՝ միամիտ անջատվեց, մեկ էլ փորձի, Վարո:

ՎԱՐՈ - (զանգում է): Զէ, չի վերցնում: Էսի լավ նշան չի...

ՍԱՐԻԿ - (հեռախոսով խոսելուց հետո): Տղերքը զանգեցին, ասում են՝ բան չմնաց, ասում են՝ էսի վերջն ա:

ՎԱՐՈ - Սպասի դու էլ քու տղերքով: Միհրան, էդ հեռուստացույցը մի հատ կարգին թափ տվեք:

Միհրանն ու Մոսոն հեռուստացույցի ալիքներն են փոխում, փնտրում են, թուրքական ալիք են գտնում:

ՄԻՇՐԱՆ - Միայն թուրքական ալիքն է, մնացածները անջատած են... Մեջներս թուրքերեն իմացող կա՞:

ԱՐԱՄ - Ես գիտեմ:

ՄՈՍՈ - Վարո, էս քու խնամին շատ շուտրի ա էրևում, հա: Մատենադարանի աշխատողն էլ թուրքերեն իմանա, լրիվ ազգային դավաձանություն ա, հորս արև:

ԱՐԱՄ - Լոեք՝ լսեմ, հա՞:

ՆԱԶԻԿ - Իմ ամուսինը յոթ կենդանի լեզու գիտի և երեք՝ մեռած:

ՄՈՍՈ - Կ...

ԱՐԱՄ - (թարգմանում է լսելուց հետո): Այո, լուրը կարծես թե հա-

վաստի է: Օրեր առաջ ասում էին, թե այդ չարաբաստիկ գիսաստղը անվտանգ հեռավորությամբ է անցնելու, սակայն այսօր առավոտյան դիտարկումներից հանկարծ պարզ է դարձել, որ ինչոր անհայտ ուժի ազդեցության տակ գիսաստղի ուղեգիծը փոխվել է, և միլիարդավոր տոննաներ կշռող այդ հսկայական զանգվածը գալիս է ուղիղ մեզ վրա:

ՆԱԶԻԿ - Հայաստանին է խփելո՞ւ, մեր այս բազմաչարչար երկրին:

ՀՈՒՖՍԻՄԵ - Կարկուտը ծեծած տեղն ա ծեծում:

ԱՐԱՄ - Չասվեց՝ կոնկրետ որտեղ է խփելու, բայց դա կարևոր չի, որտեղ էլ խփի՝ ամբողջի կործանումն անխուսափելի է:

ՄՈՍՈ - Թուրքերի ասածն իմ համար ասնավանի չի:

ԱՐԱՄ - Լուրը Համաշխարհային Տիեզերական Կենտրոնն է տարածել: Կարող էին, իհարկե, չիայտնել, թաքցնել, սակայն կարծում եմ՝ ձիշտ են վարվել, մարդիկ իրավունք ունեն իմանալու, թե իրենց ինչ է սպասվում, վերջին ցանկություններ կան, վերջին անելիքներ...

ՎԱՐՈ - Իսկ հնար չկա՞ մի կերպ պլստալու, դե, խոսքի, պահվալ-ներում թաքնվենք, բան...

ԱՐԱՄ - Դրանից տասն անգամ փոքր գիսաստղը միլիոնավոր տարիներ առաջ երկրի երեսից վերացրեց բոլոր դինոզավրերին:

ՄՈՍՈ - Վարո, չնեղանաս, բայց էս խնամիդ լրիվ բայդուշ ա, ախպեր, ասի՝ արի մեր Մխոյի աղջկան ուգենք, չուզիր:

ՎԱՐՈ - Սպասի դու էլ քու Մխոյով: Մխոյի աղջիկը շիլ չի, արա:

ՄՈՍՈ - Հա դե, մի քիչ կա, բայց էտի ինչ արգումենտ ա Մխոյի փողերի դեմ, էնի պապական փողատեր ա, հասկանում ես, պապական:

ՎԱՐՈ - Ձեռ քաշի: (*Արամին.*) Ինչքան ժամանակ ունենք:

ԱՐԱՄ - Մինչև առավոտյան յոթն անց երեսունյոթը:

ՏԵՐ ՀԱՅՐ - Ասված է՝ «Եվ առաջին հրեշտակը հնչեցրեց փողը, և եղավ որոտ և ձայներ և փայլատակում և մեծ՝ երկրի վրա, և երկրի մեկ երրորդ մասը այրեց, այրեց և ծառերի մեկ երրորդ մասը, այրեց և ամբողջ դալար խոտը»:

Հյուրերը խուճապահար սկսում են հեռանալ:

ՄԻՀՐԱՆ - (նստելով սեղանի մոտ): Դե ինչ, ուտենք վերջին անգամ: Նստեք, ոտի վրա քաղցած մնալուց ինչ օգուտ:

ՆԱԶԻԿ - Դուք երևի ձիշտ չիասկացաք, թե ինչ է կատարվում, պարոն:

ՄԻՀՐԱՆ - Հասկացանք, տիկին, բայց ինչ կարող ենք անել, դուք գիտե՞ք՝ ինչ անել, ասեք՝ անենք:

ՄՈՍՈ - (նստելով): Ահ, էլ գնում եմ տուն՝ ինչ անեմ: Նստի, Վարո

ախպեր, արժանապատիվ դիմա-
վորենք փորձանքը:

Վարագրատը նառում է:

ՎԱՐՈ - Ժողովորդը գնաց:

ՄՈՍՈ - Գնաց՝ գնաց, մենք-մերոն-
քով կնստենք, չվախես:

ՎԱՐՈ - Սա վերջն ա, ամեն ինչի
վերջն ա, Մոսո, հասկանո՞ւմ ես,
Էլ ոչ փող, ոչ կայֆ, ոչ... ոչ մի
բան...

ՄՈՍՈ - Հասկանում եմ, Վարո ջան,
բայց իմ ձեռն ինչ կա: Համ էլ
մտածում եմ՝ կարող ա փափուկ
մատերիալից ըլնի էդ անտերը,
էդքան էլ վնաս չտա:

ԱՐԱՄ - Միամիտ մարդ:

ՑԵՑՈՏԻԱՎՈՐ - (Ներխուժելով): Ա-
պաշխարեք, ապաշխարեք, զայս
է աստծո պատիժը մեղսավորնե-
րիդ գլխին...

ՄԻՀՐԱՍ - Իբր ինքը փրկվելու է:

ՎԱՐՈ - (ցնցոտիավորին, որ իրեն է
նայում): Ինչ ես տենց նայում, ա-
րա: Էս քրջոտին ով թողեց ներս,
տարեք, տարեք՝ էլ չերևա: Նորո՞:

ՆՈՐՈ - Ստեղ եմ, մեռնեմ քեզ:

ՎԱՐՈ - Սրան հանի ըստից:

ՆՈՐՈ - Հանեմ, ցավդ տանեմ: Արի
ստե, արա, այ բոմժ...

Նորոն ցնցոտիավորին տաճում է:

ՀՈՒՓՍԻՄԵ - Չեմ հավատում, չեմ
հավատում...

ՏԵՐ ՀԱՅՐ - Ասված է՝ կլինի լաց ու
կոծ և ատամների կրծտոց:

ՄԻՀՐԱՍ - (ծամելով): Դու իմ ա-
տամների կրծտոցը մի հաշվի,
հա՞, արի մի կտոր բան կեր,
աստծո առջև ես ելնելու, չասի՝
սոված ենք պահել իր դրածոյին:
Մատուցնող, բաժակները լցորու:

**Մատուցողը լցնում է բաժակնե-
րը, ընթացքում քամավելով Մոսո-
յին:**

ՄՈՍՈ - Ուշքդ բաժակների վրա պա-
հի, չթափես շալվարիս, կպատ-
ժեմ:

ՄԱՏՈՒՅՈՂ - Վայ, թափվեց... Հիմա
պատժելու նեք...

ՄՈՍՈ - Թու, քու մարդ ասողի... Գնա
ըստից:

ՄԱՏՈՒՅՈՂ - Բա չեք պատժելո՞ւ:
Լավ, սպասեք, գոնե մաքրեմ...
(Փորձում է մաքրել Մոսոյի տա-
րատը):

ՄՈՍՈ - Էս տեղը չես բերո՞ւմ, այ
տղա, թե՞ իմացար աշխարի
վերջն ա՝ էրես առար, կզյուլեմ,
մորս արև:

ՄԱՏՈՒՅՈՂ - (հեռանալով): Գա-
զան:

ԱՐԱՄ - Ներող եղեք, մենք գնանք:

ՎԱՐՈ - Ո՞ր, խնամի, էլ ո՞ր, նստեք՝
իրար հետ դիմավորենք...

ՆԱԶԻԿ - Չէ, տուն գնանք, տունը
տուն է մնում ամեն դեպքում: Ես
ուզում եմ իմ տանն անցկացնել
վերջին ժամերը:

ՎԱՐՈ - Է, տան գերին ենք, էլի, սաղ
կյանք կառուցեցինք, դրինք,

լցրինք... Հիմա ինչ, լրիվ գել ու գազանի փայ աղառնալու:

ՀՈՒՍԻԿ - Գել ու գազանի չե, առնետի, միայն առնետներն են մնալու երկրի վրա, առնետի իշխանության դարաշրջանն է գալիս:

ՄՈՍՈ - Ես չեմ մնալու՝ կոհսներն են մնալո՞... Տեր, բա ո՞ւր մնաց քու արդարությունը, Մոսոյի պես տղեն վարի գնա, կոհսներն ուտեն-խմեն, սեքս անեն:

ՏԵՐ ՀԱՅՐ - «Եվ փող հնչեցրեց նաև երկրորդ հրեշտակը, և մի բան, ինչպես մի մեծ հրդեհված լեռ, ընկավ ծովը, և ծովի մեկ երրորդ մասը արյուն դարձավ, և ծովային կենդանիների մեկ երրորդ մասը կոտորվեց, և կենդանի ինչ շունչ որ կար, ոչնչացավ»:

ՎԱՐՈ - Սրտներիս հետ գնա դու էլ...

ՄԻՇՐԱՆ - Տեր հայր, կեր, այս ազնվացեղ իշխան ձուկը շատ համեղ է, վերցրու, իո ծոմ չես պահում:

ՏԵՐ ՀԱՅՐ - Չէ, էլ ինչ ծոմ: (*Ուտում է: Արամին և Նազիկին.*) Դուք էլ նստեք, զավակներս, ածապարության կարիք այլևս չիք:

ԱՐԱՄ - Չէ, շնորհակալ եմ, մենք գնանք:

ՎԱՐՈ - Որ գնացիք՝ փրկվելո՞ւ եք, նստեք, էլի:

ԱՐԱՄ - Մատենադարանից զանգեցին, խորհուրդ են հավաքում, պիտի փորձենք գրքերը փրկելու ուղիներ գտնել:

ՄՈՍՈ - Մենք կորելու ենք, գնանք, դուք նստելու եք՝ ձեր մեռած գրքերի մասին մտածե՞ք... Ճիշտ են ասում, էլի, մեր մտավորականները ժողովրդի հետ չեն. չեն, էլի, ախալեր:

ԱՐԱՄ - Եթե ժողովրդին դուք եք ներկայացնում՝ վայ այդ ժողովրդին:

ՆԱԶԻԿ - Մի բորբոքվիր, Արամ:

ՄՈՍՈ - Ի... Ուրեմն ես ժողովուրդ չեմ, ես մարդ չեմ: Տեսա՞ր, ինչ ա ասում խնամիդ, Վարո ախալեր: Արա, այ գիտնական, քեզ խելոք պահի, կերակեմ, մեկ ա՝ էլ ոչ դատ կա, ոչ դատաստան:

ԱՐԱՄ - Ափսոս, ժամանակ չունեմ...

ՄՈՍՈ - Թե չէ ինչ...

ՆԱԶԻԿ - Երբ ամուսինս կովում էր սահմանի վրա, դուք երևի այս-տեղ թալանով էիք զբաղված, պարոն, հիմա նստել, ոտքը ոտքին գցել՝ հոխորտում եք:

ՄՈՍՈ - Խի՞, կարող ա՞ մենք չենք կովել, քոր ջան, շռամներս ցոյց տամ (*քանդելով շապիկի կոճակները*), ցոյց տամ...

ՎԱՐՈ - Լավ, վերջ տվեք: Կովել ենք, չենք կովել... Սպանիք ձեր կովով, գոլոխ գովալու բան եք գտել. չեք լսել, որ պատերազմը չարիք ա, չարիք:

ՄԻՇՐԱՆ - (*ծամելով*): Ավելի քան ծշմարիտ է Վարազդատը:

ՆԱԶԻԿ - Նանե, ո՞ւր ես, գնում ենք, աղջիկս, Նանե:

ՎԱՐՈ - Չէ, չէ, էդ մեկը չեղավ, մեր

աղջկան ուր եք տանում, տիկին Նազիկ, թող մնա, հիմա մենք ենք նրա պաշտպանը:

ՀՈՒՓՍԻՄԵ - Նա արդեն մեր տան անդամ է, թող մնա երեխան, մեղք է:

ՄԻՀՐԱՆ - Այո, սիրուց չգրկենք երեխաներին, ինչպես ասում է մեր իմաստուն ժողովուրդը՝ աշխարհը մեռնել կա:

ՏԵՐ ՀԱՅՐ - Եվ ասված է՝ թող ոչ ոք չբաժանի նրանց, այր ու կին՝ մեկ մարմին:

ՎԱՐՈ - Ըիր, էրքան էլ ծիշտ:

ՆԱԶԻԿ - Ես առանց իմ աղջկա չեմ գնա:

ՀՈՒՓՍԻՄԵ - Դուք էլ մնացեք, ինամի, գնաք տուն՝ մենակ ինչ եք անելու, ընկերով մահը հարսանիք է՝ չնք լսել:

ԱՐԱՄ - Գուցե իսկապես մնան, Նազիկ, կողքներդ գոնե մարդ կլինի...

ՆԱԶԻԿ - Գործերդ ավարտես, կգա՞ն մեր ետևից:

ԱՐԱՄ - Իհարկե: Դե, իմոնց լավ կնայեք, հարգարժան Վարագդատ, ես գնացի:

ՎԱՐՈ - Արխային: Դու գնա՝ մեր հոգևոր հարստությունը փրկի, ինամի ջան, աշխարհիկը թող ինձ:

ՄՈԽԱՆ ՓԹՔԱԳՑԱՆՈՒՄ է, Վարոն աչքութքով սաստում է: Արամը համբուրում է կնոջն ու դուրս է գալիս:

ՆԱԶԻԿ - Բայց ինչ եղավ իմ աղջիկը, ձեր տղան ուր տարավ նրան: **ՎԱՐՈ** - Երևի տուալետ գնացին, տիկին Նազիկ, մի անհանգստացեք, կգան: Նորո՞:

ՆՈՐՈ - Էստեղ եմ, ցավի տանեմ, ասա:

ՎԱՐՈ - Մի հատ նայի՝ ինչ եղան է- րեխեքը, բան ասող չլի:

ՆՈՐՈ - Աչքիս վրա: (*Դուրս է գալիս:*)

ՄԻՀՐԱՆ - Վախենամ՝ էլ չգա:

ՎԱՐՈ - Ինչի՞:

ՄԻՀՐԱՆ - Խելքին վերջապես կիաս- նի, որ աշխարհի վերջն է:

ՎԱՐՈ - Դու Նորոյիս չես ձանաչում, նա էն աշխարհում էլ ա ինձ ծա- ռայելու: Դե լցրեք, լցրեք խմենք: (*Միհրանին, որ լցնում է:*) Ապրես: (*Վերցնում է բաժակը:*) Եհ, ողոր- մի:

ՄՈԽՈ - Ո՞ւմ:

ՎԱՐՈ - Մեզ, էլ ո՞ւմ:

ՄՈԽՈ - Վախս, էդ չպիտի ասեիր: (*Աչքերն է սրբում:*)

ՏԵՐ ՀԱՅՐ - «Փող ինչեցրեց նաև եր- րորդ հրեշտակը, և երկնքից ըն- կավ մի մեծ աստղ, հրաբորբոք, ինչպես ջահ, և ընկավ գետերի ու աղբյուրների մեկ երրորդ մասի վրա: Եվ աստղի անունն էր՝ Դառ- նություն, և ջրի դառնությունից շատերը մեռան»:

ՄՈԽՈ - Էս էլ որ իրա բայդուշ ծենը չի գցում... Հա շատ կա՞ էդ փողե- րից՝ ինչացնես գլխներիս, տեր հեր:

ՏԵՐ ՀԱՅՐ - Եվս երեքը, համբերող եղիր, որդյակս, մի քանի ժամից Տիրոջ դուռն ես գնալու:

ՄՈՍՈ - Կզնանք, հարց չի, մեռնեմ իրա զորությանը:

ՄԻՀՐԱՆ - Սիրաշահում ես Տիրոջը:

ՄՈՍՈ - Ի, էնքան փող, որ ես մոմի եմ տվել, դու սկի ընտանիքիդ վրա չես ծախսել, այ ախտեր:

Խոնում եմ բոլորը, բացի կանանցից և հեռվում կծկված Հուսիկից:

ՄԻՀՐԱՆ - Անուշ եղավ:

ՎԱՐՈ - (Հուսիկին): Ընգեր, չգիտեմ դու որ կողմից ես բարեկամ, բայց էտի կարևոր չի, արի դու էլ մի բաժակ խմի, հաց կեր:

ՀՈՒՍԻԿ - (վախեցած): Չէ, չէ, շնորհակալ եմ, ես չէ, ես... Չէ:

ՎԱՐՈ - Ոնց կուզես: Տիկին Նազիկ, դո՞ւք ինչի չեք խմում... Խմեք, կերեք, ես խոստացա մեր խնամուն, որ ձեզ լավ եմ նայելու: Դե, մի նեղացեք մեր ընկերոջից, ներենք իրար, բորբոքվեցիք՝ անցավգնաց, ինչ ենք տանելու էս մեղսավոր աշխարհից: Մոս ջան, մի հատ համբուրի մեր խնամու ձեռքը:

ՄՈՍՈ - Համբուրեմ, խի՞ չհամբուրեմ, սիրուն էլ ձեռ ա: (Համբուրում է:)

ՏԵՐ ՀԱՅՐ - Կեցցես, որդյակս: Այո, ներենք միմյանց և մաքրենք մեր հոգիները մաղծից, սիրելիներս: Միհրան, մեկ օավաթ էլ լեցրու:

ՀՈՒՓՍԻՄԵ - Էլ չես նեղանում, չէ:

Նազիկ ջան... Դե վերցրու, վերցրու՝ ես ու դու էլ խմենք. առաջ լարդիս համար վախենում էի, մաշկիս գույնի համար վախենում էի, չաղանալու համար վախենում էի... հիմա՝ էի, էլ ինչ... (Հանկարծակի հիստերիկ լաց է սկսում:)

ՆԱԶԻԿ - (գրկում է Հոհիփսիմեին):

Տիկին Հոհիփսիմե, սիրելիս, մի լացիր, խնդրում եմ, թե չէ ես էլ կլացեմ: Դե, հանգստացիր... Արի խմենք, հա՞:

ՀՈՒՓՍԻՄԵ - Ազիզս... (Համբուրում է Նազիկին:) Ախր, ախր... Առավոտյան յոթ անց կեսին բոլորս ծզմվելու ենք... Չէ, դուք հասկանո՞մ եք... (Լալիս է:)

ՄՈՍՈ - (կոնյակ մոտեցնելով Հոհիփսիմեի բերանին): Խմի, խմի՝ հանգստացի, տիկին Հոհիփսիկ ջան:

ՎԱՐՈ - Ի...

ՄՈՍՈ - Հա, ինչ, վատ ա մարդը:

ՀՈՒՓՍԻՄԵ - Հա, վատ եմ, շատ վատ եմ, տուր, Մովսես ջան:

ՄՈՍՈ - (խմեցնելով): Խմի-խմի-խմի... Ապրես: Թեթևացար, չէ:

ՀՈՒՓՍԻՄԵ - Մի քիչ:

ՄՈՍՈ - Դե, մի քիչ էլ խմի... խմի-խմի-խմի...

ՎԱՐՈ - Ինչ էլ հավես ունի...

ՆՈՐՈ - (գալով): Գտա էրեխեքին, շեֆ, բարում էին, գալիս են:

ՎԱՐՈ - Ապրես: (Հեռավոր սեղանը ցույց տալով:) Գնա, էնտեղ նստի, քու համար կեր-խմի, Նորո ջան, ամեն բան կա:

ՆՈՐՈ - Հա, մեռնեմ սրտիդ: Հանկարծ պետք էղա՝ ձեն տուր, ստեղեք եմ:

Հրիփսիմեն ու Նազիկը հանկարծ գրկախառնվում են:

ՀՈՒՓՍԻՄԵ - Վայ, Նազիկ ջան, կներես, էլի, ներող եղիր:

ՆԱԶԻԿ - Ինչի՞ համար, քոյրս, սիրելիս, բոլորիս հետ էլ պատահում է, ներենք միմյանց, աշխարհի վերջն է վերջապես:

ՀՈՒՓՍԻՄԵ - Հա, միշտ չի, որ աշխարհի վերջ է լինում: Չխմենք մի-մի հատ էլ:

ՆԱԶԻԿ-Իհարկե, էլ ինչ ունենք անելու:

Գալիս են Սարիկն ու Նամեն:

ՆՈՐՈ - (*հեռվից, գոռալով*): Ծեֆ, հենա, էկան:

ՎԱՐՈ - Տեսնում եմ, քոյ չեմ:

ՆԱԶԻԿ - Աղջիկս, եկար... Ինչ սիրուն ես, զգեստն ինչքան է սազում քեզ:

ՎԱՐՈ - (*Սարիկին*): Էս ո՞ր էիր տարել էս էրեխուն, այ... քոյ ցավը տանեմ:

ՍԱՐԻԿ - Էս կողմերում էինք, հերջան: Մի րոպե... (*Հեռախոսով*): Հա, լսում եմ, հա ցավդ տանեմ... հա մեռնեմ քեզ... Բա ո՞նց, էլ ինչ, էկա: (*Անջատելով հեռախոսը*): Տղերքն են, ասում են՝ արի, սառնա-քան, ախսերովի վարի գնալը հեշտ կըլնի:

ՎԱՐՈ - Հա, գնա, բա ո՞նց, մնում ես՝ որ ինչ:

ՍԱՐԻԿ - Չէ լուրջ, ես գնամ:

ՎԱՐՈ - Գնա:

ՀՈՒՓՍԻՄԵ - Չէ, չեմ թողնի, մնամ մեզ հետ, մնա, տղաս:

ՎԱՐՈ - Գնում ա՝ թող գնա, էս օրով ով ում կարա բան արգելի:

ՀՈՒՓՍԻՄԵ - Վայ չէ, ո՞ր գնա, չէ:

ՎԱՐՈ - Թող գնա, մեզ հետ նահատակ լինելն իրան հետաքրքիր չի:

ՍԱՐԻԿ - Հա, էլի, պապան ինձ հասկանում ա: Դե, հաջող ձեզ, մենք գնացինք: (*Լանեի ձեռքը քաշելով*)

ՎԱՐՈ - Էս էրեխուն ուր ես տանում, այ քու... ցավը տանեմ:

ՍԱՐԻԿ - Չտանեմ:

ՎԱՐՈ - Ի, նա քոյ ախսերության հետ ինչ գործ ունի, էս մատղաշ, համեստ, հրեշտակի պես աղջիկը:

ՍԱՐԻԿ - Ոնց ասես:

ՀՈՒՓՍԻՄԵ - Փոխանակ ընտրյալիդ հետ մնաս, տղա ջան, մորդ հետ մնաս էս վերջին ժամերին... (*Փղձկում է:*)

ՍԱՐԻԿ - Չէ, տղերքը սպասում են: Էկեք մի հատ պաշեմ... (*Համրուրում է մորը, հորը, Նանեին մի քիչ երկար է համբուրում:*)

ՎԱՐՈ - Լավ, հերիք ա, թատրոն մի սարքի:

ՍԱՐԻԿ - Դե, պինդ մնացեք: (*Գնում է:*)

ՀՈՒՓՍԻՄԵ - Տղաս, տղաս, ախր էլ չենք տեսնվի, սպասիր... (*Գրկում է:*)

ՍԱՐԻԿ - Թող, մեր ջան, գնամ՝ ուռեմ, ծակվեմ, լակեմ՝ սատկեմ:

ՍԱՆԵ - Սարիկ, ինձ մի թող:

ՍԱՐԻԿ - Թողում եմ, չեմ կարա, կյանքս:

ՎԱՐՈ - Դե գնա արդեն, հասկացանք:

ՍԱՐԻԿ - Մնաք բարով:

ՎԱՐՈ - Գնաս բարով:

ՍԱՐԻԿ - Մի բան խնդրեմ, էլի, հեր ջան, էն իքս 6-իդ բալնիքը տուր, դրանով գնամ, խաթրս մի կոտրի, էլի, կարող ա վերջի ցանկությունս ա:

ՀՈՒՓՍԻՄԵ - Տուր, Վարո ջան, տղայիս սիրտը մի կոտրի:

ՎԱՐՈ - Առ, քշի, բալես: (*Տալիս է մեքենայի բանալին:*)

ՍԱՐԻԿ - Մեռնեմ ձեր սրտին: (*Գնում է:*)

ՍԱՆԵ - Սարիկ...

ՎԱՐՈ - Թող գնա, մի վախի, ես կողքիդ եմ:

ՍԱՆԵ - Հայրիկ... (*Գլուխը դնում է վարոյի ուսին, լաց է լինում:*)

ՍԱԶԻԿ - Լաց եղիր, աղջիկս, լաց եղիր, թող սրտիկդ թեթևանա:

ՀՈՒՄԿ - (*մոտ գալով*): Մարդիկ, մարդիկ, մարդիկ... Այնպիսի իդիլիկ զորոյցներ եք անում, կարծես ոչինչ չի եղել, չեք հասկանո՞ւմ՝ ինչ է կատարվում, տեղ չի հասել դեռ:

ՄԻՀՐԱՆ - Սա՞ որ ծակից ելավ:

ՄՈՍՈ - Զենդ գլուխդ մի օցի, այտղա, թող սթրվենք:

ՀՈՒՄԿ - Բայց չէ, մի րոպե, դուք

հասկանո՞ւմ եք, որ ամեն ինչի վերջն է, ամեն ինչի, մի հատ խորացեք. ամեն ինչի՝ լսո՞ւմ եք. իուսերի, սիրո, ապագայի, կյանքի...

ՎԱՐՈ - Ինչ անեմ, թռնեմ գիսաստղ բոնճմ:

ՀՈՒՄԿ - Զանգեք, զանգեք...

ՎԱՐՈ - Աստծոն:

ՏԵՐ ՀԱՅՐ - Լավ կատակ չէր, զավակս:

ՎԱՐՈ - Կներես:

ՀՈՒՄԿ - Ինչո՞ւ աստծուն, դուք հանրապետությունում հեղինակություն ունեցող մարդ եք, վերևներին զանգեք, ամենավերևներին, գուցե կան ինչ-որ թաքնված հնարավորություններ, ինչ-որ ծածուկ ինֆորմացիաներ:

ՄԻՀՐԱՆ - Բայց ձիշտ է ասում, գիտե՞ս, Վարազդատ, հնարավոր է, որ սահմանափակ քանակով մարդկանց համար փրկվելու ինչ-որ միջոց կա, Նոյան տապանի պես մի բան, զանգիր:

ՏԵՐ ՀԱՅՐ - Աստված ինքը կփրկի՝ ում հարկն է, Աստծուց առաջ մի ընկեք:

ՄՈՍՈ - Սպասի դու է... Զանգի, Վարո, բալքի մի-մի փչովի նավ էլ մեզ հասնի:

ՎԱՐՈ - Լավ, փորձեմ, հետո չասեք՝ չարեց: (*Զանգում է:*) Հարգանքներիս հավաստիքը, բարև ձեզ... Վարազդատն եմ, Վարազդատ Փարսադանիչը... Իհարկե, իհարկե... Գիտե՞ք՝ ինչ էի ասում, ասում էի՝ կարող ա մեզ համար ինչ-որ

ձև կա փրկվելու, էլիտայի համար, էլի: Ինչ... (*Իշեցնելով հեռախոսը:*) Ասում ա` եղունգ ունես՝ գլուխդ քորի:

ՏԵՐ ՀԱՅՐ - «Փող հնչեցրեց նաև չորրորդ հրեշտակը, և զարկվեց արեգակի մեկ երրորդ մասը, լուսնի մեկ երրորդ մասը և աստղերի մեկ երրորդ մասը, և խալարեց նրանց մեկ երրորդ մասը, նույնպես և՝ գիշերվա մեկ երրորդ մասը»:

ՄՈՍՈ - (Վարոյին): Ուրեմն իրանք էլ են մեռնելու:

ՎԱՐՈ - Բա չէ, անմահ են:

ՏԵՐ ՀԱՅՐ - Եվ տեսա ու լսեցի երկնքի մեջ թռչող հրեշտակի ծայնը, որ ասում էր բարձր ծայնով. «Վայ, վայ, վայ երկրի վրա բնակվողներին, երբ կինչի նաև մյուս երեք փողերի ծայնը, որը պիտի հնչեցնեն հրեշտակները»:

Հուսիկը հիստերիկ գոռոցով վագում, պատուհանից դուրս է նետափսմ:

ՎԱՐՈ - (տեր հորը): Հասցրիր մարդուն քու հրեշտակներով, էլի:

ՏԵՐ ՀԱՅՐ - Ճակատագիր է, Վարագդատս, լինելիքը լինելու էր:

ՆԱԶԻԿ - Խեղճ մարդ:

ՄՈՍՈ - (բաժակը վերցնելով): Եհ, ողորմի:

ՄԻՀՐԱՆ - Չեմ կարծում:

ՄՈՍՈ - Ինչի՞ որ:

ՄԻՀՐԱՆ - Երկրորդ հարկում ենք ընդամենը:

ՄՈՍՈ - Նուրբ տղա էր, էնի էրկու հարկին էլ չի դիմանա: Գրագ գանք:

ՄԻՀՐԱՆ - Ինչի՞ վրա:

ՄՈՍՈ - Հազար դոլարի:

ՄԻՀՐԱՆ - Համաձայն եմ, բայց երկու օրից կտամ, կլինի:

ՄՈՍՈ - Խի չէ, կլնի... (*Կոահելով:*) Այքու ավանտյուրիստ... Ուզում էիր խարճն Մոսոյին, էս տղին... Զու գիշերվա ման էկածը ես ցերեկով եմ ման գալի, այ տղա:

ՀՈՒՓՍԻՄԵ - (*Լազիկին գրկած:*) Մենք գնացինք:

ՎԱՐՈ - Ո՞ւր:

ՀՈՒՓՍԻՄԵ - Չենք ասի, պարկեշտ կանայք դա բարձրաձայն չեն ասում:

Հոփսիմեն և Նազիկը գնում են:

ՎԱՐՈ - (*Լանեին, որ ուզում է հետևել մորը:*) Դու էլ ես ուզ՛ւմ, սիրուս, ես կտանեմ:

ՆԱՆԵ - Չէ, ուզում եմ մամայի հետ գնամ, մաման խմելոց վատանում է, բան չպատահի:

ՎԱՐՈ - Չի պատահի: Դու իմ կողքին մնա, էս դաժան ժամին քեզ ուժեղ ձեռք ա պետք, ուժեղ թիկունք: Գիտճն ինչ, դու էլ խմի մի բաժակ, խմի՝ թեթևանաս:

ՆԱՆԵ - Չեմ ուզում, ես էլ եմ խմիչքից վատանում, գլուխս սկսում է պտտվել:

ՎԱՐՈ - Թող մի քիչ էլ պտտվի, վնաս չունի, խմի, անարատ կոն-

յակ է: (Նանեն խմում է:) Ապրես...
Դե, էս համով կտորն էլ կեր... Ը-
հը...

ՄՈՍՈ - Հարս ես պահում, էլի, օր
վերջալուսի:

ՎԱՐՈ - Չպահեմ:

ՄՈՍՈ - Խի՞, կայք ա տալի՞:

ՎԱՐՈ - Աշխարհ վերջը գեց ա ազ-
դել վրեղ, Մովսես:

ՄՈՍՈ - Քիչ բան չի, դու տաք ես, չես
զգում:

ՎԱՐՈ - Ուզած դեպքում մենք պիտի
հոգատար լինենք մատաղ
սերնդի նկատմամբ, պարոն
Մովսես: (Նանեին.) Կեր, աղջիկ
ջան, կեր, բալես:

ՏԵՐ ՀԱՅՐ - Կեցցես, Վարազդատս:

ՄԻՀՐԱՆ - Միայն թե նոր փող
չինչեցնես, տեր հայր, տեսար՝ էն
խեղծը ոնց կործանվեց:

ՏԵՐ ՀԱՅՐ - Փրկվեց, փրկվեց, քան-
զի ասված է...

ՄՈՍՈ - Ստոպ, խմում ենք, մի հա-
րամի:

ՏԵՐ ՀԱՅՐ - Խմեք, կսպասեմ:

ՄՈՍՈ - Մի սպասի, դու էլ խմի:

ՏԵՐ ՀԱՅՐ - Լավ, կխմեմ, բայց կար-
միր գինի, կամ կարմիր գինի:

ՎԱՐՈ - Վարազդատի հարսանիքի
սեղանին կարմիր գինի պակասի:

ՄԻՀՐԱՆ - Վարազդատ, շփոթում
ես, քո հարսանիքը չի, որդուդ
հարսանիքն է:

ՎԱՐՈ - Ինչի, ես ինչ ասեցի:

ՍԱՆԵ - Գլուխս պտտվեց:

Հայտնվում է Հուսիկը՝ ախուվա-
խով, կաղալով:

ՄՈՍՈ- Լուսը քեզ տեսնողին: Ես էլ
էս եզի վրա քիչ էր մնում գոազ
գայի:

ՄԻՀՐԱՆ - Մարդ աստծո, չգիտեիր,
որ երկրորդ հարկում ենք:

ՀՈՒՍԻԿ - Զէ: Գոնե զգուշացնեիք:

ՄԻՀՐԱՆ - Ինչ իմանայինք՝ քեզ
զգելու ես, որ զգուշացնեինք:

ՄՈՍՈ - Զեզ լնենց թափով գցիր,
ոնց որ աշխարհի վերջն ըլներ:

ՎԱՐՈ - Որ էկար էստեղ, չզոգեցիր
հարկը:

ՀՈՒՍԻԿ - Զէ, մտքերի մեջ էի, ու-
շադրություն չդարձրի:

ՄՈՍՈ - Դու, կա-չկա, հարսի կողմի
բարեկամն ես, ապեր:

ՄԻՀՐԱՆ - Ոչ մեկի բարեկամն էլ չի,
մտքերի մեջ խորասուզված եկել՝
պատահաբար մտել է: Այդպես չէ:

ՀՈՒՍԻԿ - Գուցե... Հիմա դա ի՞նչ
կարևոր է, մի բան արեք, մեռա:

ՄԻՀՐԱՆ - Անեմ: Բարձրանում ես
տանիք ու այնտեղից ես գցում
քեզ, հաստատ կստացվի, տասն-
վեց հարկ է:

ՀՈՒՍԻԿ - Զեմ կարող, ոտքս կոտր-
ված է:

ՄՈՍՈ - Հա, ինչ ես առաջարկում՝
գիպս դնենք:

ՀՈՒՍԻԿ - (կաղալով գնում է սրահի
խորքը, պակում բազմոցին, գո-
ռում է ցավից): Վայ, մամա ջան,
մեռա:

ՄԻՀՐԱՆ - Մայրիկ էլ ունի մարդը:

ՀՈՒՍԻԿ - Ունեմ, բա չունեմ... Գյուղում է ապրում խեղծը, հիմա մենակ, անտեր...

ՎԱՐՈ - Փոխանակ մորդ մոտ գնայիր՝ հարսանիք ես էկել:

ՄԻՀՐԱՆ - Փոխանակ մորդ մոտ գնաս՝ քեզ պատուհանից գցում ես:

ՀՈՒՍԻԿ - Շոկի մեջ էի, էլ չեմ անի, երդվում եմ:

ՄՈՍՈ - Լուրջ ես ասում... Ապրես, մի բաժակ կխմեն:

ՀՈՒՍԻԿ - Չէ, ինչ խմել, մեռնում եմ, օգնեք, հայ քրիստոնյա չե՞ք:

ՏԵՐ ՀԱՅՐ - Օգնեք մարդուն, տառապում է:

ՎԱՐՈ - Բայց ինչ անենք, քրիստոնյա ենք, իո թժիշկ չենք:

ՀՈՒՍԻԿ - Բժիշկ կանչեք, շտապօգնություն:

ՄԻՀՐԱՆ - Հեռախոս չունեն:

ՀՈՒՍԻԿ - Ճիշտ որ, մուննաթ չանեմ:
(Հանում է հեռախոսը:)

ՄՈՍՈ - Իզուր ա, թժիշկները հիմա փախած են:

ՀՈՒՍԻԿ - Հտապօգնությունն է... Հասեք, մեռնում եմ: Ութք եմ կոտրել, գլուխս եմ ջարդել, կողերս, լյարդս... Քանի տարեկան եմ... Երեսուներեք, բայց դա ինչ կարևոր է, մեռնում եմ, հասեք... Հասցեն... (Սերկաներին.) Հասցեն:

ՄՈՍՈ - Բայց դու էս ինչքան ես մեզ զբաղացնում, ընգեր:

ՆԱՆԵ - Մեղք է, ասեք:

ՎԱՐՈ - Սևանի խճուղի, ոեստորանային կոպլեքս «Դրախտ»...

ՄԻՀՐԱՆ - Այո, այստեղից ուղիղ դրախտ ենք թռչելու:

ՎԱՐՈ - ...Երկնագույն դահլիճ:

ՄՈՍՈ - Կ, ուրիշ կարգին գոյնի զալ չկա՞ր, Վարո ախպեր:

ՀՈՒՍԻԿ - (հեռախոսով): Ոեստորան «Դրախտ», երկնագույն դահլիճ, այո, Սևանի խճուղի:

ՏԵՐ ՀԱՅՐ - Է, կգա՞ն, զավակս, ինչ ասացին:

ՀՈՒՍԻԿ - Ասացին՝ զալիս ենք: Վայ, մեռա...

ՄՈՍՈ - Արա, դե սուսուփուս մեռի, էլի, մեր դարդը մեզ հերիք ա:

ՏԵՐ ՀԱՅՐ - Սիրենք զմիմյանց, զավակս, մոտեցիր, ցավակցիր, շոյիր մերձավորիդ:

ՄՈՍՈ - Զեռ ես առնո՞ւմ, տեր հեր, դուրդ գալիս ա՝ ինքդ շոյի:

ՏԵՐ ՀԱՅՐ - Փող հնչեցրեց նաև հինգերորդ հրեշտակը...

ՄՈՍՈ - (Հուսիկին): Էս էիր ուզո՞ւմ, արա:

ՀՈՒՍԻԿ - Մեռա...

ՏԵՐ ՀԱՅՐ - ...Եվ տեսա, որ մի աստղ ընկավ երկնքից... (Հեռախոսն է ծայնում:) Այո, տեր եմ, տեր եմ, զավակս: Անհապաղ, անհապաղ գալիս եմ: (Սերկաներին.) Կանչում են, եկեղեցին կանչում է, պիտի գնամ, պիտի գնամ Աստծո տաճարը, պիտի աղոթեմ ձեզ համար, համայն աշխարհի փրկության համար: Խաղաղությամբ մնաք, չվախեք, Տերը ձեզ

հետ է: (*Ելնում է, հեռախոսով:*)
Տղա, մեքենան պատրաստիր:
ՄԻՀՐԱՆ - *Հինգերորդ փողը կիսատքողիր, տեր հայր:*
ՏԵՐ ՀԱՅՐ - (*հեռանալով*): *Հաջորդիվ, հաջորդիվ, զավակս:*
ՄՈՍՈ - *Թող գնա, հազիվ գնում ա:*
ՆԱՆԵ - (*հարբել է*): *Հիմա ի՞նչ, ես մեռնելու եմ, ծեզ եմ հարցնում, ես, այսպես գեղեցիկ, ջահել, չմայրացած, ու մեռնելո՞ւ եմ, ո՞ր է արդարությունը, ո՞ր է աստված...*
ՎԱՐՈ - *Չկա, ոչ արդարություն, ոչ աստված, ես կամ, քեզ ես կփրկեմ, սիրունս:*
ՆԱՆԵ - *Խնդրում եմ, հայրիկ, փրկիր, փրկիր...*
ՎԱՐՈ - *Իմ մարմնով կծածկեմ, մեռնեմ քեզ, թող իմ գլխին խփի:*

Գալիս են բժիշկը և բուժույրը:

ՄՈՍՈ - *Իյա, էկան...*
ԲԺԻՇԿ - *Եկանք, այո, չգայի՞նք:*
ՎԱՐՈ - *Կարծում էինք՝ չեք գա:*
ԲԺԻՇԿ - *Հարգելիներս, մենք բժիշկ ենք, մենք Հիպոկրատի երդում ենք տվել:*
ԲՈՒԺՔՈՒՅՅՐ - *Տվել ենք, հա:*
ՄԻՀՐԱՆ - *Դե լավ է, լավ է, մեր հիվանդի բախտը բերեց:*
ԲԺԻՇԿ - *Ի դեպ, ո՞ր է հիվանդը: (Վարոյին.) Դո՞ք եք:*
ՎԱՐՈ - *Բերանդ խերով բացի: (Ցուցանելով:) Հրեն, ոռնում ա, չեք լսո՞ւմ:*
ԲԺԻՇԿ - *Բայց ձեր տեսքն էլ առողջ չի:*

ՎԱՐՈ - *Մի հնարի, գործիդ նայի:*
ԲԺԻՇԿ - (*մոտենալով Հուսիկին*):
Ի՞նչ է եղել, սիրելիս, ինչո՞ւ եք բղավում, ցավո՞ւմ է:
ՀՈՒՍԻԿ - *Ցավում է, բժիշկ, մի բան արեք, շուտ:*
ԲԺԻՇԿ - *Որտե՞ղ է ցավում:*
ՀՈՒՍԻԿ - *Ամեն տեղ:*
ՄԻՀՐԱՆ - *Երկրորդ հարկից իրեն գցել է:*
ԲԺԻՇԿ - *Սուիցիդի փո՞րձ:*
ՄՈՍՈ - *Հենց իմացավ՝ աշխարհի վերջն ա՝ իրան գցեց:*
ԲՈՒԺՔՈՒՅՅՐ - *Աշխարհի վերջ:*
ԲԺԻՇԿ - *Ի՞նչ մանկական զրոյցներ են, ինչ ինձ իիշում եմ, ասում են՝ աշխարհի վերջ: (Տնտղում է Հուսիկին:) Ձեր հիվանդին պետք է հիվանդանոց տեղափոխել:*
ՎԱՐՈ - *Մերը չի:*
ԲԺԻՇԿ - *Բա ո՞ւմն է:*
ՄԻՀՐԱՆ - *Հենց այնպես հիվանդ է, անտեր:*
ՄՈՍՈ - *Է, հիմա սաղս էլ անտեր ենք:*
ԲԺԻՇԿ - *Ձեմ հասկանում, ի՞նչ անկումնային տրամադրություններ են, այն էլ՝ այս շքեղ ռեստորանում:*
ՄԻՀՐԱՆ - *Բժիշկը երևի տեղյակ չի, քնած է մնացել:*
ԲԺԻՇԿ - (*բուժքորոշը*): *Ճնշումը չափիր: (Մյուսներին.) Այո, իերթապահությունից առաջ քնելիանգստացել ենք: Ի՞նչ է եղել որ...*
ՄՈՍՈ - *Երանդ ձեզ: Բժիշկ ախանք,*

մի տասը ժամկա կյանք ա մնացել, իլա ավելի քիչ:

ԲԺԻՆԿ - Թողեք այդ կատակները, ձեր ընկերը ջարդուխուրդ է եղել,

դուք կատակում եք, սիրուն չի, չէ:

ՄՈՍՈ - Բերանդ խերով բացի, էտի մեզ ի՞նչ ընկեր:

ՎԱՐՈ - Չի հավատում բժիշկը:

ՀՈՒՄԻԿ - Մեռա, հասեք:

ԲԺԻՆԿ - Սպասիր, սպասիր...

(Մյուսներին.) Կարգին ասեք՝ հասկանանք, ի՞նչ եք անդադար ակնարկներով խոսում:

ՄԻՀՐԱՆ - Ահոելի գիսաստող գալիս է երկրագնդի վրա, ուղիղ կենտրոնին է խփելու, բժիշկ, վերանալու ենք, ինչպես դինոզավրերը վերացան հիսուն միլիոն տարի առաջ:

ԲՈՒԺՔՈՒՅՑՐ - (ավարտելով Հուսիկի ճնշումը չափելը): Չունի ճնշում:

ԲԺԻՆԿ - Առհասարակ:

ԲՈՒԺՔՈՒՅՑՐ - Չէ, մի քիչ կա, վաթսունը քառասունի:

ԲԺԻՆԿ - (ականջին դնելով զանգող հեռախոսը): Լսում եմ: Այո, Ստեպան Գեորգիչ: Անմիջապես... Բայց հիվանդի մոտ ենք... Թքանք... Ինչո՞ւ... Նոր այստեղ էլ ասին՝ չհավատացի: Լո՞րջ է... Եկանք, այո, իհարկե: (Բուժքույցը.) Փաստորեն՝ աշխարհի վերջի մասին լուրերը չափազանցված չեին, գնացինք, գլխավորը շտապ կանչում է, անհապաղ, հավաքվիր:

ՄԻՀՐԱՆ - Ո՞ր, բա այն խեղանք...

ԲԺԻՆԿ - Խեղանք ի՞նչ, աշխարհն է կործանվում, աշխարհի կործանման հետ խաղ եք անո՞ւմ, եղբայր:

ՀՈՒՄԻԿ - Մեռա:

ՄՈՍՈ - Ձեոյ հետ գոնե հիվանդանոց տարեք, գլուխներս ուղեց սրա ձվավոնցից:

ԲԺԻՆԿ - Ո՞ր հիվանդանոցը կընդունի հիմա, վերցնենք՝ կրակն ընկնենք:

ՎԱՐՈ - Բա Հիպոկրատի երդո՞ւմը:

ԲԺԻՆԿ - Դե... Գիտե՞ք ի՞նչ կա, երդվելիս ֆորս մաժորային դեպքերը նախատեսված չեին:

ԲՈՒԺՔՈՒՅՑՐ - Հիպոկրատ, միպոկրատ... Չէ-չէ մի՛ Ամիրդովլաթ Ամասիացի... (Բժշկին.) Գնացինք:

ՑԱՅՏԻԱՎՈՐ - (անցնելով): Ապաշխարեք, ապաշխարեք, քանի ուշ չէ:

ՄՈՍՈ - Ուշ ա արդեն, ուադ էդի:

ՎԱՐՈ - Սպասի, Մոսո, երևի սովածա մարդը, չասի՝ քծիա ենք: (Ցնցոտիավորին.) Արի, մի կտոր բան կեր, ընգեր, կաշի-ոսկոր ես մնացել, արի:

ՑԱՅՏԻԱՎՈՐ - Մոս է ժամը հատուցման, ապաշխարեք: (Հեռանում է:)

ՀՈՒՄԻԿ - Վայ, մեռա... Ինձ հանեք վերի հարկերը, էնտեղից գցեք՝ սատկեմ-պրծնեմ:

ՎԱՐՈ - Էլ բան ու գործ չունենք:

ՄԻՀՐԱՆ - Բժիշկ, գոնե մի ցավազրկող սրսկեք, հանգստանա մարդը:

ԲԺԻԾԿ - Ցավազրկնդ: (*Բուժքրոջը.*)
Ունենք:
ԲՈՒԺՔՈՒՅՅՐ - Կա ոնց որ:
ԲԺԻԾԿ - Դե, սրսկիր, արագ:
ԲՈՒԺՔՈՒՅՅՐ - (*լցնելով սրսկիչը*):
Շրջեք փորի վրա:
ՄՈՍՈ - Ինքներդ շրջեք:
ԲԺԻԾԿ - Ես կշրջեմ: (*Շրջում է:*) Ա-
հա:
ԲՈՒԺՔՈՒՅՅՐ - Ծալվարն իշացրեք:
ԲԺԻԾԿ - Ծատ չեղավ... Ծալվարի
վրայից սրսկիր, արդեն կարևոր
չի:
ԲՈՒԺՔՈՒՅՅՐ - (*սրսկելով*): Ըիր,
սրսկեցինք: Չցավաց, չէ:
ՀՈՒՄԻԿ - Ցավաց:
ԲՈՒԺՔՈՒՅՅՐ - Սուտ ա ասում, չհա-
վատաք, իմ պես սրսկող Հայաս-
տան աշխարհը չունի:
ՄՈՍՈ - Դրան նորից հետ ֆոցրեք,
իո տենց չի մնալու:
ԲԺԻԾԿ - Օֆֆ, ինչ նազուտուզով հի-
վանդներ են: (*Շրջում է:*)
ՎԱՐՈ - Հիվանդն ինքդ ես: Արի, մի
թաս բան կխմի, դու էլ արի, քու-
րու:
ԲՈՒԺՔՈՒՅՅՐ - Լցրեք: (*Վերցնելով
բաժակը:*) Աշխարին խաղաղութ-
յուն: Եհ: (*Խմում է:*)
Բժիշկը նույնպես խմում է:
ՎԱՐՈ - Ըիր, հիմա կարաք գնաք:
ԲԺԻԾԿ - Մնաք բարով:
ՄԻՀՐԱՆ - Բարնվ... Ոնց որ ձեռ առ-
նեք, բժիշկ:
ՄՈՍՈ - Հլա տաք ա, չի զգում:

ԲՈՒԺՔՈՒՅՅՐ - Սրսկեցինք:
ՎԱՐՈ - Լավ արիք, մեռսի:
ԲԺԻԾԿ - Ու վերջ... Էս ծանր օրով
հասել ենք այստեղ...
ՎԱՐՈ - Հասկացա: (*Փող է տալիս:*)
Առ, վերցրու:
ՄՈՍՈ - Էս էլ վերցրու, հերիք ա՞:
ԲԺԻԾԿ - Հերիք է, ապրեք:
ՄԻՀՐԱՆ - Բայց ինչներին է, չեմ
կարծում, թե այն աշխարհում
որամը փոխարկելի լինի:
ԲՈՒԺՔՈՒՅՅՐ - Ինչ իմանաս:
ԲԺԻԾԿ - Այո, ամեն դեպքում՝ չի
խանգարի: Գնացինք:
ՎԱՐՈ - Գնաք բարով:

Բժիշկն ու բուժքույրը դուրս են
գալիս:
ՄԻՀՐԱՆ - Քնեց խեղճը:
ՄՈՍՈ - Դրա խոռոցն ա՞, ես էլ իմացա՝
ին անտերն արդեն մոտեցել ա:

Գալիս են Հռիփսիմեն ու Նազի-
կը:
ՎԱՐՈ - Լույսը ձեզ տեսնողին, էս
ինչ երկար եք չիշիկ անում:
ՀՈՒՓՍԻՄԵ - Մի գոեհկացիր, Վա-
րազդատ, ինչ անենք՝ աշխարհի
վերջն է, տղամարդը ուզած դեպ-
քում պիտի ցենտլմեն մնա: Բա-
րում նստեցինք, վիսկի խմեցինք,
նարինչ կերանք... Չլինի՛ կարո-
տել եք:
ՄՈՍՈ - Հարբած են, ախանք:
ՀՈՒՓՍԻՄԵ - Հա, ինչ անենք, ես
հարբած ավելի հմայիչ տեսք ու-

նեմ, ասել են... Այնպես չի, Մովսես:

ՄՈՍՈ - Ըտենց ա, քուրս, ցավդ տանեմ:

ՎԱՐՈ - Ավել-պակաս քիչ խոսեք: Ես խնամու հայն ինչ ա:

ՀՈՒՓՍԻՄԵ - Հարբած է կինը, յոլա տարեք, մենք ձեզ ո՞նց ենք յոլա տանում ամեն օր:

ՎԱՐՈ - Լավ ա, էլի:

ՆԱՆԵ - (թմրիրից սրավիվելով): Մամ, դու ես:

ՆԱԶԻԿ - Ես եմ աղջիկս, բայց վատ եմ, գլուխս պտտվում է... Հիմա ես կտամ:

ՄԻՇՐԱՆ - Միայն՝ ոչ այստեղ, տիկին, խնդրում եմ, հաց ենք ուտում:

ՆԱԶԻԿ - Ճիշտ է, տուն գնամ, գնամ պառկեմ:

Լույսերը հաճգում են:

ՄՈՍՈ - Սկսավ, ախպեր:

ՎԱՐՈ - Ինչի սենց շուտ, ժամ-պատարագ չկա՞մ, չեմ հասկանում:

ՄՈՍՈ - Ինչ իմանամ, մեռնեմ քեզ, դրա շոփերը երկի հայ ա:

ՆԱԶԻԿ - Նանե, առաջ ընկիր, աղջիկ ջան գնում ենք:

ՎԱՐՈ - Ոչ մի Նանե, ձեզ ո՞վ Նանե կվստահի էս վիճակում:

ՆԱՆԵ - Ես մորս հետ կգնամ:

ՎԱՐՈ - Ոչ մի տեղ էլ չես գնա:

ՆԱՆԵ - (Վարոյին, որ գրկել է): Թողեք ինձ, պարոն Վարագրատ...

Ինչ եք անում...

Յնցոտիավորն է անցնում:

ՑԱՑՈՏԻԱՎՈՐ - Ապաշխարեք, աղոթեք, հուդաներ, վերջներդ եկավ, ձեզ եմ ասում, խլացել եք, ապաշխարեք...

ՎԱՐՈ - Նորո՞, քեզ չասի՞՝ դրա ձենը կտրցրու, ո՞ւր ես:

ՄՈՍՈ - Ստեղ եմ, շեֆ ջան, մատաղ սրտիդ, հեսա կտրցնեմ: Արի ստե, արա, այ քրջոտ, արի... Ի, փախավ բեսը:

ՆԱՆԵ - Թողեք ինձ...

ՎԱՐՈ - Ոչ մի տեղ չես գնա՝ ասեցի, ես եմ որոշում:

ՆԱԶԻԿ - Թողեք աղջկաս...

ՀՈՒՓՍԻՄԵ - Թող երեխային, Վարագրատ, գժվել ես:

ՎԱՐՈ - Դու սուս, ձենդ չլսեմ: (Թիկնապահին.) Նորո՞, ո՞ւր ես:

ՆՈՐՈ - Ստեղ եմ, մեռնեմ կյանքիդ, ասա:

ՎԱՐՈ - Ես մեր խնամուն տար, տուն հասցրու, լավ կհասցնես, հավեսով, էղավ, դե տար:

ՆՈՐՈ - Դու ասես՝ Նորոն չտանի, ընենց տանեմ, որ ասի՝ մի հատ էլ տար... (Նազիկին.) Արի տենամ, քուր ջան:

Նորոն գրկում է Նազիկին, նա ճշում է, ճշում է նաև Նանեն, ում ամուր գրկել է Վարոն:

ՀՈՒՓՍԻՄԵ - Այս ինչ է կատարվում, Աստված իմ... Թո՞ղ կնոջը, Նորայր:

ՆՈՐՈ - Չեմ կարա, տիկին Հոփսի-

մե ջան, քեզ ինչքան էլ հարգեմ, շեֆի հրամանն ա, պտի տանեմ: (*Տանում է Նաղկիկն:*)

ՀՌԻՓՄՒՄԵ - Ուշքի արի, Վարագ-
դատ:

ՎԱՐՈ - Դու չխառնվես, քու խելքի
բանը չի, լավ կանես՝ դու էլ գնաս
ստեղից, դավայ:

ՄՈՍՈ - (*Բռնելով Հոփիսիմեի ձեռ-
քը*): Գործ չունես, ցավի տանեմ,
Վարոն կատաղած ա, աստված
հեռու պահի, գիտես խապաթը, է-
լի:

ՎԱՐՈ - Մոսո, դրան տուն տար:

ՄՈՍՈ - Տանեմ, Վարո ջան, ոնց ա-
սես:

ՎԱՐՈ - (*Լանեին, գրկած*): Դու կար-
ծում ես՝ իմ դարդը էն ախմախ լա-
կոտն ամ... Նա քեզնից ինչ ա
հասկանում: Չէ, կյանքս, ես ու-
զում էի, որ միշտ իմ աչքիս առաջ
լինես, որտև խելքս գնում ա քու
համար, հրեշտակս, բռմբս...

ԼԱՆԵ - Բայց ես չեմ ուզում... Թո-
ղեք... Թող, տականք, զզվանք...

ՎԱՐՈ - (*տանելով Լանեին*): Խփի,
չանգոի, մեռնեմ ջանիդ...

ՀՌԻՓՄՒՄԵ - Այս ինչ հրեշի հետ եմ
ապրել կյանքս, աստված իմ:
(*Լալիս է:*)

ՄՈՍՈ - Դե, մի լացի, մի լացի, սի-
րունս: Նա ինչ ա հասկանում՝ խս-
կական կնիկն ինչ ա... Եշն ինչ
գիտի, նուշն ինչ ա:

ՀՌԻՓՄՒՄԵ - Էշ, այո, էշ, ավանակ:

ՄՈՍՈ - Վախ, մեռնեմ քեզ, ինչ հա-
մով ես ջղայնանում... Դե, մի լա-

ցի... Այսինքն՝ լացի, քեզ սազում
ա, կյանքս...

ՀՌԻՓՄՒՄԵ - Խղճում ես ինձ, չէ,
Մոսո:

ՄՈՍՈ - Մոսոն տանի ցավերդ...
Խղճում եմ, էն էլ ոնց եմ խղճում:

ՀՌԻՓՄՒՄԵ - Ինչ լավն ես, ես չգի-
տեի, որ էսքան լավն ես:

ՄՈՍՈ - Լավն եմ, ցավի տանեմ: Բա
դու ինչ լավն ես... Գնանք, գնանք՝
արցունքներդ լվամ՝ ջուրը խմեմ,
մեռնեմ կյանքիդ:

ՀՌԻՓՄՒՄԵ - Տար ինձ, Մովսես, ես
այստեղ մնալ այլևս չեմ կարող,
տար:

ՄՈՍՈ - Տարա:

Մոսոն Հոփիսիմեին գրկած տա-
նում է:

ՄԻՃՐԱՆ - Հարբեցին տղերք-աղջ-
կերքը... Հազար ասել եմ՝ խմելու
հետ լավ ուտել է պետք: (*Ուտելիք
է վերցնում, ետ է դնում:*) Սառել է:
Մատուցող, ո՞ւր ես:

ՄԱՏՈՒՅՈՂ - Եկա, ահավասիկ: (*Քսմսվելով Միհրանին:*) Ինչ է
ձեր ուզածը, այ տղամարդ:

ՄԻՃՐԱՆ - Կերակուրը սառել է, տաք
խորտիկներից ինչ ունեք:

ՄԱՏՈՒՅՈՂ - Ինչ էլ ուզեք՝ ձերն է,
կմատուցեմ սիրով:

ՄԻՃՐԱՆ - Խոզի խորոված, գառան
խաշլամա, ստերյադ, կարմրա-
խայտ...

ՄԱՏՈՒՅՈՂ - Զեզ համար՝ ամեն
ինչ: Ասում են՝ եթե տղամարդը
լավ է ուտում, ուրեմն ուժը տեղն է:

ՄԻՀՐԱՆ - Տեղն է, երևի...

ՄԱՏՈՒՅՈՂ - Դե, ուրեմն գնանք ինձ հետ, ինքներդ կընտրեք ձեր ուղած խորտիկը, գնանք... Դե, գնանք:

ՄԻՀՐԱՆ - Գնանք որ...

ՄԱՏՈՒՅՈՂ - Իհարկե, աշխարհի վերջն է, ո՞ւմ եք սպասում: Ձեզ կմատուցվի մի այնպիսի խորտիկ, որի նմանը երբեք չեք համտեսել: Խոճկորիկ, հա՛, սիրում եք, չէ՞ էսպես կարմրաթշիկ, թմբիկ... Դե եկեք, իմ ետևից:

Միհրանը և Մատուցողը դուրս են գալիս:

Արար 2

Նոյյն տերում, մամերի լույսի մերքը: Հուսիկն արքնացել է, տնքում է: Գալիս է Վարոն՝ կիսախավարի մեջ իրերին խփվելով:

ՀՈՒՏԻԿ - Մեռա, օգնեք, էլ չեմ դիմանում...

ՎԱՐՈ - Մութ ա, ամեն տեղ մութ ա...
Էյ, ո՞վ կա, մի քանի մոմ էլ վառեք, մութ ա: (*Հուսիկին.*) Ելի մեռնում ես, այ տղա:

ՀՈՒՏԻԿ - Մեռնում եմ, ինձ հիվանդանոց տարեք:

ՎԱՐՈ - Բիշ մնաց, հիվանդանոցն իրա խորով կօպա՝ կտանի, համբերի: Տղերքն ուր են: Միհրան, Մոսոն:

ՄԱՏՈՒՅՈՂ - (գալով): Ի՞նչ է եղել,

պարոն Վարազդատ, ինչի՞ կարիք ունեք, սուրճ բերեմ:

ՎԱՐՈ - Հա, սուրճը կդզի, բեր: Էս լոյսերն ինչի անջատեցին, է:

ՄԱՏՈՒՅՈՂ - Ասում են՝ ատոմակայան է կանգ առել, ՀԵԿ-երն էլ, մարդիկ լքել են գործը: Ճիշտ էլ արել են, վերջին ժամին աշխատեն, որ ինչ:

ՎԱՐՈ - Բա դու ինչի ես աշխատում:

ՄԱՏՈՒՅՈՂ - Ոեստորանը ատոմակայան չի, մարդ իր վերջին ժամերը պիտի ոեստորանում անցկացնի: Միհրանն էլ է այս կարծիքին:

ՎԱՐՈ - Միհրանն ո՞վ ա:

ՄԱՏՈՒՅՈՂ - Ձեր ընկերը, մոռացմք:

ՎԱՐՈ - Էնի քու համար երբվանից Միհրան դառավ:

ՄԱՏՈՒՅՈՂ - Խանդում նք:

ՎԱՐՈ - Ապուշ-ապուշ դուս մի տու: Ինքն ո՞ւր ա:

ՄԱՏՈՒՅՈՂ - Մոտերքում, ուր որ է կգա:

ՎԱՐՈ - Ես մութն անտանելի ա, մոմ բեր, փողը կտամ, շատ բեր:

ՄԱՏՈՒՅՈՂ - Կրերեմ, թռա:

ՎԱՐՈ - Թոհի... Սպասի, Մոսոն ինչ եղավ:

ՄԱՏՈՒՅՈՂ - Դուք ինչ-որ տեղ ուղարկեցիք, չեք հիշո՞ւմ:

ՎԱՐՈ - Չէ, չեմ հիշում: Լավ, գնա:

ՄԱՏՈՒՅՈՂ - Ուրիշ բան պետք չի:

ՎԱՐՈ - Չէ: Նայի՝ կոֆեն լավ քաղցր

ըլնի ու թուլ, թունդը սրտիս լավ չի, ոիթմից գցում ա:

ՄԱՏՈՒՅՈՂ - Վայ, պարոն Վարագ-դատ, վայ, սիրտն էլ ինչների՞դ ա: **ՎԱՐՈ** - Ճիշտ որ: Լսի, մոտիկ արի, բան եմ ասում... Էղքան չէ...

ՄԱՏՈՒՅՈՂ - Էսքան լա՞վ է:

ՎԱՐՈ - Հա: Դու... դու չես վախո՞ւմ, մի տեսակ շատ ես զվարթ ու ակ-տիվ:

ՄԱՏՈՒՅՈՂ - Դե, ոնց ասեմ... Ես փիլիսոփայորեն եմ մոտենում խնդրին:

ՎԱՐՈ - Էդ ո՞րն ա, հետևանց:

ՄԱՏՈՒՅՈՂ - (Ժիծաղելով): Վայ, պարոն Վարագդատ, դու էս ինչ հումորով տղամարդ ես, Էնքան եմ սիրում, որ տղամարդը հումո-րով է լինում, Էնքան եմ սիրում: Անկեղծ ասեմ՝ վախենում եմ, աշ-խատում եմ ինձ ցրել, բայց հենց հիշում եմ՝ մարմինս վախոց սկսում է դողալ:

ՎԱՐՈ - Բա: Ես էլ էդպես:

ՄԱՏՈՒՅՈՂ - Դողո՞ւմ է:

ՎԱՐՈ - Էն էլ ոնց... Բայց՝ մեր մեջ մնա:

ՄԱՏՈՒՅՈՂ - Իհարկե, իհարկե, մեր մեջ մնա, պարոն Վարագդատ ջան: Մեր մեջ...

ՎԱՐՈ - Հեռու կանգնի՝ ասինք:

ՄԱՏՈՒՅՈՂ - Ահա, սկսվեց վախի նոպան... Նայեք, ձեռքս ինչպես է դողում, բռնեք, բռնեք, չեմ կծի... Ինչ գեղեցիկ ձեռք է, չէ, կանայք կնախանձեն, բայց դողում է, ոնց է դողում...

ՎԱՐՈ - Թո՞ւ քո... Ինչ էլ գտա՝ ում ա-ռաջ սիրտս բացեմ:

ՄԱՏՈՒՅՈՂ - Բացեք, սիրելիս, մի քաշվեք, ես վստահելի մարդ եմ: Կարող եմ խորհուրդ էլ տալ:

ՎԱՐՈ - Ա դե, քու տված խորհուրդն ինչ պիտի լինի, է:

ՄԱՏՈՒՅՈՂ - Ասեմ. վախոց խմելն է փրկում:

ՎԱՐՈ - Խմում ենք, էլի, բայց կար-օին չի լազրում անտերը: Կարող ա՞ ջուր եք խառնում:

ՄԱՏՈՒՅՈՂ - Չե, ինչ եք ասում, բա մեր պրեստիժը... Համ էլ հիմա էլ ինչ իմաստ: Պարզապես քիչ եք խմում, խնայում եք ծեզ, պարոն Վարագդատ: Ես, օրինակ, տաս րոպեն մեկ մեծ բաժակով գցում եմ: Բա ո՞նց: Հարբում եմ՝ ու ծովը ծնկներովս է:

ՎԱՐՈ - Փիլիսոփայորենն էդ ա՞:

ՄԱՏՈՒՅՈՂ - Իհարկե: Օմար խայա-մին հիշեք:

ՎԱՐՈ - Հես ա, վուազ հիշեմ:

ՄԱՏՈՒՅՈՂ - «Խմենք, եղբայր, մինչ մեր փոշուց թաս կսարքեն գինու համար»: Գուցե մի քիչ սխալվեցի, բայց միտքը հիմնականում այս է:

ՎԱՐՈ - Լավ ա ասել, իմ արև: Դու ունես էդ գիրքը... Ժամանակ ըլ-ներ՝ դնեի կարդայի, բայց էլ ո՞ր ա մեզ ժամանակ... Սուրճ պետք չի, արադ լից:

Մատուցողը լցնում է, խմում են:

ՄԱՏՈՒՅՈՂ - Անուշ:

ՎԱՐՈ - Մեռսի: Դե գնա, տղերքը
չգան՝ տեսնեն:

ՄԱՏՈՒՅՈՂ - Տեսնելու ինչ կա որ:

ՎԱՐՈ - Որ քո հետ խմում եմ. կնե-
րես, բայց էտի իմ նման տղուն
սազական չի:

ՄԱՏՈՒՅՈՂ - Չէ, ձեզ նոյնիսկ ար-
մագեղոնը չի փրկի: Զզվանք,
զզվում եմ: Քյառթո՞ւ: (Գնում է:)

ՎԱՐՈ - Աա, շառդ քաշի գնա, Է:
Միհրան, Մոսն... Կ, էս նեղ օրով
մարդու մենակ են թողո՞ւ: Ո՞ւր
եք, արա:

ՄԻՀՐԱՆ - (գալով): Գալիս եմ, գա-
լիս եմ, Փարսադանիչ ջան: Եկել
ես ու ծայն չես հանո՞ւ:

ՎԱՐՈ - Էս մի ժամ ա կանչում եմ,
չկաք, ախաքեր:

ՄՈՍՈ - Բարիրիգուն: Ինչ լավ հավք-
վել եք, բլոտ չխաղանք:

ՎԱՐՈ - Ո՞ւր էիր, մեր ախաքեր:

ՄՈՍՈ - Տիկին Հոփսիմեին տարա
տուն, դու չասի՞ր:

ՎԱՐՈ - Ասել Էմ:

ՄՈՍՈ - Կ, մոռացա՞ր... Միհրան, չա-
սնց:

ՄԻՀՐԱՆ - Ասել է, այո:

ՎԱՐՈ - Հա, ծիշտ ա, հիշեցի: Տա-
րա՞ր:

ՄՈՍՈ - Տարա, առոք-փառոք տեղ
հասցրի, բա ո՞նց: Քուչեքը լրիվ
դատարկ են, մի քանի ախմախ
ջահել լակած, ուռած, ուղեղներն
անջատած՝ ավտոներով գան-
յատներ են անում, գալիս են ու-
ղիղ վրեդ, ախաքեր, քիչ մնաց

խիեհի, հազիվ փախցրի: Հարսդ
ո՞ւր ա, Վարո:

ՎԱՐՈ - Էնտեղ, սենյակում, քնել ու-
զեց էրեխտեն:

ՄՈՍՈ - Հա, թող քնի, քնելը լավ ա:

ՎԱՐՈ - Լավ ա, հա... Բայց ինչի ես
ըտենց նայում որ...

ՄՈՍՈ - Ե՞րբ նայեցի... Ձեզ ինչ եղավ,
այ ախաքեր, լավ չ՞ե՞ս:

ՎԱՐՈ - Հոյակապ եմ, հես ա, մի
քանի ժամ մնաց, սատկելու եմ՝
գնամ, էլի լավ չլնե՞մ:

ՄԻՀՐԱՆ - Կարծես մենք մնալու
ենք:

ՄՈՍՈ - Վայ, մորս արև, մտիցս թռել
էր, իզուր հիշացրիք: Ինձ որ
հարցնեխն՝ վարշե չպիտի ասած
ըլնեխն: Իզուր ժողովրդին դիվա-
դադար արին: Միամիտ մեր հա-
մար քնեխնք, ախաքեր, գար էլ,
գնար էլ...

ՎԱՐՈ - Մոսո, սադ կյանքս ծանա-
չում եմ քեզ, մի անգամ մի խելոք
բան չլսեցի:

ՄՈՍՈ - Լավ դե, դու էլ եյնշտեյնը
չես, ախաքեր:

ՎԱՐՈ - Էդ ո՞վ ա:

ՄՈՍՈ - Մեծ մարդ ա, էն եքա Նյու-
տոնին լրիվ սխալ հանեց:

ՎԱՐՈ - Կ...

ՄՈՍՈ - Բա դու գիդաս Մոսոն ախ-
մախ ա՞, խաչքառը դնում կես
ժամում լուծում եմ, ախաքեր:

ՄԻՀՐԱՆ - Կնոջդ հարցնելով, չէ:

ՄՈՍՈ - Դե, այր ու կին՝ մի մարմին:
Վարո, բայց որ մտածես՝ շատ էլ
ծիշտ եմ ասում, մի հատ պատկե-

րացրու՝ հիմա միամիտ մեր համար խմածքնած ըլնեինք, իսկի չէինք էլ իմանա՝ խփեց, չսփեց, ոնց խփեց, ձխլեց, չձխլեց, ոնց ձխլեց, վառեց, չվառեց...

ՎԱՐՈ - Դե, վերջ տուր, ոնց որ սա-
դիստ ըլնես, արա:

ՀՈՒՍԻԿ - Մեռա, վայ...

ՎԱՐՈ - Դու էլ վերջ տուր:

ՄԻՀՐԱՆ - (մոտեցել է պատուհա-
նին): Լույսը բացվում է, մեր վեր-
ջին լուսաբացը: Ինչ սիրուն է
Երևանը, տղերք, երբեք էսքան
սիրուն չէի տեսել... Մեր Երևանի
վերջին լուսաբացը... Հավատս չի
գալիս...

ՄՈՍՈ - Բա ինչ ենք անելու, Վարո
ախպեր:

ՎԱՐՈ - Ինչքան դժվար հարց կա՝
ինձ եք տալի:

ՄՈՍՈ - Բա ո՞ւմ տանք, դու մեր մեծն
ես:

ՎԱՐՈ - Կ, այ տղա, մի դասարանում
չենք սովորել, ո՞նց եմ մեծ:

ՄՈՍՈ - Չէ, տարիքով չէ, աֆտարի-
տետով:

ՎԱՐՈ - Հա... Մոստ ջան, ես էլ՝ ձեր
պես, ինչ իմանամ: Օմար Խա-
յամն ասում ա՝ խմեք մինչև վեր-
ջի խազը:

ՄՈՍՈ - Է՞ղ ով ա:

ՎԱՐՈ - Հեք, թեթև գլուխդ մի ծանդ-
րացրու, ընգեր:

ՄԻՀՐԱՆ - Ես գիտեմ՝ ինչ անենք:

ՄՈՍՈ - Չէ հա...

ՄԻՀՐԱՆ - Հա: Եկեք խաշ ուտենք,

իսկը խաշի ժամն է, մեր վերջին
խաշը:

ՄՈՍՈ - Ճիշտ ա ասում ախպերը:
Լավաշով, սխտորով, բողկով, ծի-
ծակով...

ՎԱՐՈ - Արժի, արժի:

ՄՈՍՈ - Օֆիցյանտ, ստե արի, շուտ,
արա, է... Օֆիցյանտ: Դու կանչի,
Միրո, քեզ կլսի:

ՄԻՀՐԱՆ - Ալբարտ:

ՄՈՍՈ - Պահի:

ՄԻՀՐԱՆ - Ե հա, որ մարդու անունը
Ալբերտ է, չասեմ՝ Ալբերտ:

ՄՈՍՈ - Կուզեմս Էլբըրթ ասա, մենակ
թե խաշ բերի:

ՄԱՏՈՒՑՈՂ - Եկա, ահավասիկ:
(Միհրանին.) Լսում եմ և ենթարկ-
վում:

ՄՈՍՈ - Բա ես որ կանչում եմ, ինչի
չես լսում ու ենթարկվում:

ՄԱՏՈՒՑՈՂ - Որովհետև դուք կո-
պիտ մարդ եք, վերաբերմունք
չունեք, ինչ է նշանակում՝ ստե ա-
րի, արա, է, շուտ: Ես մատուցող
եմ, ոչ՝ ստրուկ:

ՄՈՍՈ - Ես արմագեղոնը աչքիս հեչ
լավ բան չի, օֆիցյանտները
հաբրգում են: Թոփ՝ խաշ բեր մեզ,
արա, վրազ, ես եմ ասում, էս
տղեն:

ՄԱՏՈՒՑՈՂ - Հկա խաշ:

ՄՈՍՈ - Հիմա կըլնի: (Հանում է
ատրճանակը:)

ՄԱՏՈՒՑՈՂ - Ինչ պուապուշ զենք է,
խաղալիք է, չէ:

ՄՈՍՈ - Հես ա գլուխող կծակի, կիմանաս՝ ինչ խաղալիք ա:

ՄԱՏՈՒՅՈՂ - Յյա... (Կարատեհ կեցվածք է ընդունում:)

ՄԻՀՐԱՆ - Լավ, Ալբերտ, խաղաղվիր: Մի կարգին խաշ բեր՝ ուտենք, աշխարհը մեռնել կա:

ՄԱՏՈՒՅՈՂ - Լսում եմ և ենթարկվում: Կարգին տղամարդուն հնց չտաս, խաշ:

ՀՈՒՄԿ - Վայ, մեռա:

ՄՈՍՈ - Քեզ չասի՞նք՝ սուս մնա:

ՀՈՒՄԿ - Գոնե մի բաժակ օյի տվեք, որպես ցավազրկող, անգութներ:

ՎԱՐՈ - (մատուցողին): Ի դեպ, մեզ արադ բեր, պիծել ա, ին ամենալավերից: (*Սեղանից շիշը վերցնելով:*) Սա տուր էն ախմախին, թող խմի:

Մատուցողը օյին տալիս է Հուսիկին, դուրս է գալիս: Հուսիկն ազահորեն խմում է:

ՄՈՍՈ - Հոպ, արա, չհարբես:

ՆՈՐՈ - (գալով): Էն կնգան տարա, շեֆ ջան:

ՎԱՐՈ - Ինչ կնիկ, այ տղա:

ՆՈՐՈ - Խնամին, էլի, մոռացար:

ՎԱՐՈ - Հա, խնամին... Կարգին տարա՞ր գոնե...

ՆՈՐՈ - Հա, ոնց ասիր՝ հավեսով, կարգին, ապահով տարա:

ՎԱՐՈ - Ապրես:

ՆՈՐՈ - Ու համ էլ էկա:

ՎԱՐՈ - Դե, մի բաժակ խմի, թարմացի:

ՆՈՐՈ - Դու ասես՝ ես չխմեմ: Բայց ինչ խմեմ:

ՎԱՐՈ - Հես ա կրերեն:

ՀՈՒՄԿ - (երգում է): «Ախ իմ սև բախտ, քեզ ինչ արի»...

ՄՈՍՈ - Հարբեց, ախաբեր:

ՄԻՀՐԱՆ - Բառաչը քիչ էր, հիմա էլ երգում է:

ՀՈՒՄԿ - Մեռնում եմ անմխիթար, այս աշխարհում դաժան, ու չհանդիպեց այդպես էլ, գեթ մեկ զթասիրտ մարդ: «Վախ, իմ սև բախտ...»:

ՎԱՐՈ - Նորո, մի բան արա, սրա ծենը էլ չլսեմ:

ՆՈՐՈ - Ինչ անեմ, մեռնեմ կյանքիդ:

ՎԱՐՈ - Էն էս ասեմ, թիկնապահ նս, թե մեխի գլուխ:

ՆՈՐՈ - Մեխի գլուխ, ցավդ տանեմ... Վայ չէ, ուզեցի ասեմ՝ թիկնապահ:

ՎԱՐՈ - Դե, մի բան արա:

ՆՈՐՈ - Հաշվի՝ արած: (*Մոտենում է՝ գնդակահարում Հուսիկին:*) Ըիը, էլ ձեն չի հանի, միանշանակ, պրձ:

ՄՈՍՈ - Էս ինչ արիր:

ՆՈՐՈ - Սենց լավ ա, Մոսո ծածա, դու չգիտես, մի էրկու ժամից մեկ ա՝ վարի էր էթալու, մուփթա տանջվում էր խեղծը:

ՄԻՀՐԱՆ - Պարզվում է՝ բարեգործ է մեր Նորայրը:

ՆՈՐՈ - Կարմիր խաչի պես, չէ:

ՄՈՍՈ - (Ժիծաղելով): Ես ինչ տիպ ա
էս Նորոն, ախաբեր, սրան որդո՞ւց
ես ծարել, մի հատ էս սրանից ինձ
ծարի, էլի, Վարո՞:

ՆՈՐՈ - Բայց խի՞, թողեի՞՝ Փարսադա-
նիշիս վերջի օրը հարամե՞ր բեսը:

ՎԱՐՈ - Դե լավ, գնա, Նորիկ Զան,
ապրես, գնա:

ՆՈՐՈ - Գնամ, հարց չի: Բայց...

ՎԱՐՈ - Ասա:

ՆՈՐՈ - Ախր, ոնց ասեմ, է...

ՎԱՐՈ - Դե, մի ասա:

ՆՈՐՈ - Չէ բայց ասեմ, էլի:

ՎԱՐՈ - Դե պրծի, ծևեր մի թափի,
չեմ սիրում:

ՆՈՐՈ - Լավ, ասում եմ: Ես մի մեծ ե-
րազանք ունեմ, շեֆ Զան:

ՎԱՐՈ - Չէ հա:

ՆՈՐՈ - Հա: Իմ մանկության երա-
զանքն ա, մանկուց եմ տեսնում,
էլի: Ու դու, շեֆ Զան, մատադ քեզ,
մեռնեմ սրտիդ ու ջիզարիդ, պլո-
ծիկ-մլոծիկիդ, խուճուժ-մուճուժիդ,
էն սիրուն...

ՎԱՐՈ - Ստո՞պ:

ՆՈՐՈ - Դու էսօր կարաս իմ երա-
զանքը ռեալիզացնես՝ դնես դեմս:

ՎԱՐՈ - Կարամ որ...

ՆՈՐՈ - Կարաս, ցավդ տանեմ:
(Ծնկի է իշնում Վարոյի առաջ:)
Կարաս:

ՄՈՍՈ - Պրծի, Նորո, էդքան ժամա-
նակ չունենք, էն անտերը խրած
գալիս ա:

ՆՈՐՈ - Լավ, ասում եմ: Փարսադա-
նիշ Զան, մի միլիոն կանաչով՝ իմ
կյանքի երազանքն ա, սադ չոտ-

կի հաշվել եմ, մի հատ Ռենջ,
Այգեծորում մի հատ առանձնա-
տուն, Զորադրյուրում մի հատ
դաշա...

ՄՈՍՈ - Միլիոնդ պրծավ, ախաբեր:

ՆՈՐՈ - Հա... Չէ, Փարսադանիշ Զան,
երևի՝ միլիոն ու կես... հա, հաշ-
վեմ՝ նայի, ուրեմս...

ՎԱՐՈ - Եէէ, կյանքդ մի պատմի, մեկ
ու կես ասի՞ր:

ՆՈՐՈ - Հա, էլի, մեկ ու կես, էրկու...
Դե, դու շատ ունես, հիմա էլ ին-
չիդ ա:

ՎԱՐՈ - Բայց քո՞ւ ինչիդ ա, այ դմբո:

ՆՈՐՈ - Ըտենց մի ասա, շեֆ, իմ
վարդագույն երազանքը մի
փշացրա, մեծություն:

ՎԱՐՈ - Չեմ փշացնում, բայց ինչիդ
ա:

ՆՈՐՈ - Դու տուր, ես գիտեմ:

ՎԱՐՈ - Տամ, բան չեմ ասում, բայց
հիմա բաց բանկ չկա, ո՞նց եմ
տալի:

ՆՈՐՈ - Վայ քու, արա, էտի մտքովս
չէր անցել... Տանը չունես, վոազ
թռնենք՝ վերցենք:

ՎԱՐՈ - Հիմա հ՞վ ա տանը փող պա-
հում, այ տղա, հ՞ր դարն ա:

ՄԻՀՐԱՆ - Վերջին:

ՆՈՐՈ - Վախ, մորս արև... Բա ինչ ա-
նենք:

ՎԱՐՈ - Կարամ չեկ գրեմ, բայց
կմնա թղթի վրա, ոչ ոք քեզ փող
չի տա դրա դիմաց:

ՆՈՐՈ - Դու գրի, ցավդ տանեմ, գրի,
կարող ա համոզեմ, տան:

ՄՈՍՈ - Լրիվ բութ ա էս տղեն:

ՎԱՐՈ - Այ դդում, չորս կողմդ նայի, հիմ համոզես, որտե՞ղ:

ՆՈՐՈ - Լավ, չհամոզեմ՝ չհամոզեմ, բայց հու կիմանամ՝ որպես միլիոնատեր եմ գնում էս փոք աշխարհից: Էսի քիչ չի: Կասեն՝ ողորմի միլիոնատեր Նորոյին:

ՎԱՐՈ - Ո՞վ ասի:

ՆՈՐՈ - Դե, ո՞վ՝ ով...

ՄԻՀՐԱՆ - Լավ, Վարագդատ, տորտ, թող կատարվի տղայի երազանքը, ինչպես ասում են՝ բարին արա՝ ջուրը գցիր, մի տեղ կգա դեմո:

ՎԱՐՈ - Էն աշխարում, չէ... Դու էլ ես սրա խելքին, հորս արև: Լավ, տամ, ինչի չտամ որ: Ասիր՝ մեկ ու կես...

ՆՈՐՈ - Դե, որ էրկու գրես՝ լավ կլնի, էի, մեծություն:

ՎԱՐՈ - Գրեմ՝ էրկու:

ՆՈՐՈ - Հա, էի, գրի, էի: Դոլարային հաշիվ ունես, չէ, մեռնեմ ծեռիդ:

ՎԱՐՈ - Ձեռ ա առնում:

ՆՈՐՈ - Չէ, ցավդ տանեմ, բա ես ինձ թույլ կտամ, պրոստը ուզում եմ սաղ չոտկի ըլնի, էի: Մի քիչ շուտ գրի, հոգուդ մեռնեմ, շուտ գրի, որ երկար վայելեմ:

ՎԱՐՈ - (*հանում է չեկի գրքույկը, գրում*): Ըիր, էրկու... (Կնիքը գրանից հանում՝ կնքում է:) Առ, բարով վայելեմ:

ՆՈՐՈ - Սադ չոտկի ա, չէ, շեֆ ջան, ստորագրություն, պեչատ...

ՎԱՐՈ - Բա չէ, կեղծ ա:

ՆՈՐՈ - (*վերցնելով*): Աստված քեզ երկար կյանք տա:

ՎԱՐՈ - Եշ-էշ դուս մի տու, վերց՝ գնա:

ՄՈՍՈ - Աստված... Ի՞նչ աստված, աստծու էն...

ՄԻՀՐԱՆ - Զհայինյես:

ՄՈՍՈ - Ինչի՞ որ, էլ ինչից ես վախում:

ՄԻՀՐԱՆ - Համենայնդեպս:

ՄՈՍՈ - Այ քու շոպլիկ... Էն դպրոցական հասակից ըտենց էիր, մեռար մեզ դասատուներին ծախելով:

ՄԻՀՐԱՆ - Անհարկի զրույցներ ես վարում, Մովսես, մի հատ էլ մանկապարտեզը հիշիր:

ՄՈՍՈ - Պետք էղավ՝ կիշեմ: Հիշմ...

ՎԱՐՈ - Վերջ տվեք, Նորոյիս երջանկությունը չհարամեք, կատարվեց իրա երկնագույն երազանքը:

ՆՈՐՈ - Վարդագույն, շեֆ, հի: Միլիոնատիրոջ համար:

ՄՈՍՈ - Սադ ըլնես, ջոջգլուխ: Էս ո՞ւր, արա:

ՆՈՐՈ - (*գնալով*): Բանկ, էլ ո՞ւր:

ՎԱՐՈ - Ինչ բանկ, այ տղա, ուշքի արի:

ՆՈՐՈ - Պահակ-մահակ կլնի, միլիցա-բան, զաստավիտով փողս կառնեմ: Ծուտ կգամ, շեֆ ջան, չվախես, բան ասող էղավ, ասահես ա Նորոն կգա՝ սաղիդ ականջները կկտրա: (Դուրս է գալիս:)

- ՎԱՐՈ** - Հայվան գյաղա: Էս խաջն ինչ էղավ:
- ՄՈՍՈ** - Արա Ալբերթ:
- ՄԱՏՈՒՅՈՂ** - Եկա, Եկա: (*Խաշը բերելով*) Պահ-պահ-պահ... Այսպիսի խաջ կերած չեք լինի:
- ՎԱՐՈ** - Մարդու մահը իրան խաջ ուտելուց պիտի բռնացնի, որ նա-խանձից սատկի:
- ՄԻՀՐԱՆ** - Հայավարի ապրել ենք, հայավարի կմեռնենք:
- ՄՈՍՈ** - Մտքովս զիդաք ինչ անցավ, տղերք:
- ՎԱՐՈ** - Ը՞:
- ՄՈՍՈ** - Մի հատ չպարենք էս մեր պարը, պարենք, ու թող մեր չու-զողի աչքը դուս գա:
- ՎԱՐՈ** - Պարում ենք, գնաց, մուզիկա:
- Երաժշտություն:** Պարում են, յու-րաքանչյուրի բնույթն իր շար-ժումներում դրսևրվում է:
Մատուցողն է միանում պարին:
- ՄՈՍՈ** - Թու քու, արա, սաղ հարա-մեց: (*Դադարեցնում է պարը*):
- ՄԻՀՐԱՆ** - Լավ դե, թող տղան ուրա-խանա վերջին անգամ, մարդ է, էի, ինչ է եղել:
- ՎԱՐՈ** - Երկուսով պարեք, լավ է սազում եք իրար: (*Լսում է*):
- ՄԱՏՈՒՅՈՂ** - Չէ, սա Եվրոպան չի... Թողնելու եմ՝ գնամ Հոլանդիա, սա երկիր չի, այս երկիրն ինձ արժանի չի: (*Գնում է*):
- ՄՈՍՈ** - Բերեք, բերեք խմենք մեր

կենացը, մեր անցած-գնացած օ-րերի կենացը, մեր ապրած-չապ-րածի, մեր բորիկ մանկության... (*Լաց է լինում*:)

ՎԱՐՈ - Քեզ ձգի, ախաբեր, ամոթ ա, Մոսո՛, Մոսո ջան... Այ Մոսո ջան, ախր սենց ո՞նց կլնի, է՛, էսի ըլնե-լու բան ա՛, որ ըլնում ա մեր գլխին... (*Լաց է լինում*:)

ՄԻՀՐԱՆ - Էհ, տղաներ... ո՞ւմ մտքով կանցներ: (*Հեծկլտում է*): Բա իմ ապագան, իմ ծրագրերը... Գար-նանն ուզում էի Դուբայ գնալ, ամ-ուանն ուզում էի սեփական նոտարական օֆիս բացել, աշ-նանն ուզում էի ամուսնանալ... Էհ... (*Լաց է լինում*:)

Երեքով, իրար գրկած, լաց են լի-նում:

ՎԱՐՈ - (*սթափվելով*): Լավ, տղերք, դուխներդ տեղը պահեք, հազար աչք կա վրներս, թշնամի չուրա-խացնենք: Խաշ ենք ուտում, դա-վայ: Լավաշները գցեք գլխներիդ:

Լավաշներով գլուխները ծած-կում են՝ ուտում:

ՑԱՑՈՏԻԿՎՈՐ - (*անցնելով*): Գիշա-տիշների ընթրիք: Խժոեք, շնա-գայլեր, խժոեք, բան չմնաց, շուտով ձեզ կխժեն գեհենում...

ՎԱՐՈ - Նորո՞:

ՄԻՀՐԱՆ - Նորոն բանկերի դռներն է մաշում:

ՑԱՅՈՏԻԱՎՈՐ - Քիչ խժոեիք, գուցե աստված չպատժեր...

ՄՈՒՍՈ - Արի, դու էլ կեր, գոնե վերջի անգամ կուշտփոր կեր, արի, բի-ձա, մի փնթփնթա, փնթփնթալու համար էլ ա պատիժ հասնում:

ՑԱՅՈՏԻԱՎՈՐ - Այդ էր պակաս՝ ես ձեր հացն ուտեմ: Ապաշխարեք, գիշատիչներ, ապաշխարեք, մեղսավորներ, քանզի մոտ է ժամը հատուցման:

ՄԻՀՐԱՍ - Բայց չէ՞ որ ասված է՝ եթե քաղաքում գոնե մեկ իսկական հավատավոր կա՝ Տերը կփրկի այդ քաղաքը:

ՑԱՅՈՏԻԱՎՈՐ - Հավատավորներն այլս ի զորու չեն հավասարակշռելու ձեր մեղքերը, իժեր:

ՄԻՀՐԱՍ - Գուցե դո՞ւ էլ մեղքեր ունես, խոստովանիր, ասված է՝ ով անմեղ է, թող նա առաջինը օցի իր քարը: Դու պատրաստ ես քար գցելու:

ՑԱՅՈՏԻԱՎՈՐ - Այստեղ քար չկա, բայց կարող եմ շշով խփել:

ՎԱՐՈ - Քեզ հավքի՝ ստից ռադ էդի, այ բոմծ, արագացրու, չկրկնեմ:

ՑԱՅՈՏԻԱՎՈՐ - Այ, այդպես կվախենաք: (*Հեռանում է:*) Ապաշխարեք, ապաշխարեք, իժի ծնունդներ...

ՄՈՒՍՈ - Վերջի օրով հարամ պիտի անեն, էս ինչ չուզող են, արա: Ես խաշն էլ ջրիկ ա ոնց որ: Ասա՝ իհմա էլ նք քծիպություն անում, կարգին խաշ տվեք, իո հետներդ չնք տանելու:

ՄԻՀՐԱՍ - Պրոֆեսիոնալներ են, Մովսես, ձեռքի չափ ունեն, իո հանուն աշխարհի ավարտի չեն խախտելու իրենց կարգը:

ՄՈՒՍՈ - Կարգ ասիր՝ իհշեցի, բերեք իմենք ծնողների կենացը:

ՎԱՐՈ - Ապրես, Մոստ ջան: Վերջը՝ վերջ, բայց հարգանքը՝ հարգանք, մենք ծնողի հարգը իմացող տղերը ենք: Ծնողների կենացը:

ՄԻՀՐԱՍ - Այո, ծնողաց համար: Ով ողջ է՝ երկար կյանք...

ՄՈՒՍՈ - Զստացվավ: Դու էլ բան մի ասա, Միհրան, պրոստը խմի: (*Խմում են:*) Մի հատ զանգեմ հորս, տենամ՝ ինչ հալի ա հալիվորը: (*Զանգում է:*) Անջատել են հեռախոսը: Զերն էլ:

ՎԱՐՈ - (*Վիրձելով*): Հա, անջատած ա:

ՄԻՀՐԱՍ - (իր հեռախոսը վիրձելով): Կապ չկա այլս, վերջ:

Գալիս է Սարիկը:

ՎԱՐՈ - Սարիբնեկ, լուսը քեզ տեսնողին... ինչի էկար, այ տղա, ախ-պերությանդ հետ բաղնիք էիր գնացել՝ մնայիր, էլի:

ՍԱՐԻԿ - Լուսերն անջատին, կապն անջատին, տղերքը ցրվան տներով, ես էլ, ինչ մեղքս թաքցնեմ, նշանածիս կարոտեցի, ասի՝ մի հատ տենամ վերջի անգամ, էն էլ...

ՎԱՐՈ - Էն էլ՝ ինչ:

- ՍԱՐԻԿ** - Ի՞նչ պտի: Բարում ասին՝ Էն կողքի սենյակում ա, մտա, տենամ՝ երակները լրիվ փրթած, արունի մեջ պառկած ա Նանես:
- ՎԱՐՈ** - Քո աչքով տեսար:
- ՍԱՐԻԿ** - Հա, ձեռ էլ տվի՝ սառած էր արդեն: Բայց խի՞ ա մտել էդ սենյակը, այ հեր, խի՞ նշանածիս լավ չես նայել:
- ՎԱՐՈ** - Քամակից կպած ման գայի՞... Մնայիր՝ ինքդ նայեիր: Ասում ես՝ սառած էր:
- ՍԱՐԻԿ** - Հա: Մեռած ա նշանածս, ըստենց էլ չհասցրի ընտանիք կազմեմ:
- ՎԱՐՈ** - Վրեն սավան օցեցի՞ր գոնե:
- ՍԱՐԻԿ** - Հա, օցել եմ: (*Դեպի երկինք:*) Բա էս արդարացի ա՞, բի-ձեքին փակում ես՝ փակի, ջահելներին խի ես փակում:
- ՄՈՍՈ** - Բիձեքն էլ մենք ենք, հա՞:
- ՍԱՐԻԿ** - Դե, տենց ա ստացվում, էլի:
- ՎԱՐՈ** - Դու գնա, Սարիբեկ:
- ՍԱՐԻԿ** - Ո՞ր գնամ:
- ՎԱՐՈ** - Գնա... Տուն գնա:
- ՍԱՐԻԿ** - Տունը ի՞նչ ունեմ անելու, է՞:
- ՎԱՐՈ** - Մորդ մոտ գնա... Մերդ մենակ ա, մոտն էղի:
- ՍԱՐԻԿ** - Բա դո՞ւ:
- ՎԱՐՈ** - Ես կգամ, հետո: Դե գնա՝ ասեցի: Սպասի, էն էրեխու վրա սավան օցի մի հատ:
- ՍԱՐԻԿ** - Դե ասինք՝ օցել եմ, էլի: (*Գնալով:*) Իշնում եմ բար, տուն գնացող չկա:

Սարիկը ենթանում է:

ՄՈՍՈ - Ի՞նչ ես սառել, Վարո, լինելիքը էղավ, դու ի՞նչ մեղք ունես:

ՄԻՀՐԱՅ - Այո, փաստորեն ինքն իրեն փրկեց աղջիկը:

ՎԱՐՈ - Չդիմացավ արմագեղոնի սարսափին: Պիտի մնայի մոտը... Բայց քնեց ոնց որ, ես էլ ասի՝ չխանգարեմ...

ՄԻՀՐԱՅ - Քեզ իզուր մի տանջի, Վարազդատ, հեշտ չէր, նորք աղջիկ էր, մատադ հոգի, չդիմացավ արհավիրքի սպասումին: Էհ, ողորմի: (*Խմում է:*)

Ցնցոտիավորը ետ է գալիս:

ՄՈՍՈ - Ելի էկա՞ր, այ բոմծ:

ՑՆՑՈՏԻԱՎՈՐ - Ձեր հոգու փրկության համար եմ գալիս, անաստվածներ, այլասերվածներ, ապաշխարեք, կատարվում է Հովնանի հայտնությունը, ոչ ոք չի փրկվելու:

ՄԻՀՐԱՅ - Եթե ոչ ոք չի փրկվելու, էլ ի՞նչ իմաստ ապաշխարելուց:

ՑՆՑՈՏԻԱՎՈՐ - Կարծ է միտքդ, մարդ, ճարպակալած է, քանզի ուտել-խմելուն ես տվել քեզ, այստեղ ոչ ոք չի փրկվի, դուք այնտեղի փրկության մասին հոգացեք, ձեր մարմինը կմնա այս մեղսավոր աշխարհում, իսկ հոգին կգնա Տիրոց դատաստանին:

ՄՈՍՈ - Էդ ո՞վ ա քեզ ըտենց տոչնի-տոչնի գեկուցում, այ բոմծ, կարող ա՞ մեզնից լավ տղա ես,

ինձ, օրինակ, ոչ ոք ոչինչ չի ասում:

ՑԱՑՈՏԻԱՎՈՐ - Որովհետև դու քեզ փակել ես երկինքների առաջ:

ՄՈՍՈ - Էղ ո՞նց եմ փակել, է:

ՑԱՑՈՏԻԱՎՈՐ - (Վարոյին): Ագահությամբ, ընչաքաղցությամբ, շահամոլությամբ, անխղճությամբ, գոռողությամբ...

ՎԱՐՈ - Մի բառ էլ ասես՝ կսպանեմ:

ՑԱՑՈՏԻԱՎՈՐ - Այլասերվածությամբ...

ՎԱՐՈ - Վերջ, համբերությունս հատակ:

ՑԱՑՈՏԻԱՎՈՐ - Ապաշխարիր, մեղքերի մեջ թաղված մարդ, մոտ է հատուցումը:

ՎԱՐՈ - (բռնելով նրա կոկորդը): Ձենդ կտրեն, արա, թե՞ ես կտրեմ:

ՑԱՑՈՏԻԱՎՈՐ - (խեղղվելով): Աստծո պատիժը ուր որ է՝ թափվելու է գլխիդ, իժ:

ՄԻՀՐԱՆ - Թող, Վարագդատ, կխեղդես:

ՎԱՐՈ - Հա, հենց էլ խեղդում եմ, բակարծում ես՝ հանաք եմ անհմանը:

ՄՈՍՈ - Տո, դե ձիշտ էլ անում ես, խեղդի՝ պրծնենք, կուզեն օգնեմ:
ՎԱՐՈ - Ուշ ա: (Ժողնում է Յնցուիավորին:)

Յնցուիավորը վկվում է հատակին:

ՎԱՐՈ - Նորոյ: Զկա Նորոն, թռած ա: Մոսոն, օգնի:

Քարշ են տախս դիակը, պառկեցնում Հուսիկի կողքը:

ՎԱՐՈ - Նայում են: Մրանց աչքերը փակի, ապեր:

ՄՈՍՈ - Ես մեռելից վախում եմ, Վարո, դու փակի:

ՎԱՐՈ - Ամեն ինչ ես եմ անելու: Միհրան, մի հատ քեզ նեղություն տուր:

ՄԻՀՐԱՆ - Ե՞ս...

ՎԱՐՈ - Հա, դու, թե՞ մենակ նոտարական թղթեր կարաս պեչատես, կարող ա՞ պատիվդ չի ներում:

ՄԻՀՐԱՆ - Ներում է, լիովին: (Պոկում է վարագույրը, ծածկում դիակները:) Խնդրեմ: Ինչ էլ սիրուն մեկնվել են միմյանց մերձ:

ՄՈՍՈ - Ողորմի ջխտին: (Խմում է:)

ՄԻՀՐԱՆ - Փրկվեցին: (Խմում է:)

ՎԱՐՈ - (լուս խմում է): Արադը պրծավ, արադ բերեք, է:

ՄՈՍՈ - Ճիշտ որ, պրծցրինք: Օֆիցյանտ:

ՄԱՏՈՒՑՈՂ - Բերում եմ, բերում եմ: (Օղին դնում է սեղանին:) Անուշ արեք:

ՄՈՍՈ - Ապրես: Մանրից դուրս գալիս ես, գիտես:

ՄԱՏՈՒՑՈՂ - Լուրջ եք ասում, Մովսես:

ՄՈՍՈ - Զդնենք, սրան իրեքով բռնաբարենք, լավություն ա, էլի, անենք, զցենք ջուրը, կարող ա

ՎԵՐԱԿՈՒՄ ՀԱՉՎԻ ԱռՆԵՆ: (*Հոհոում է:*)

ՎԱՐՈ - Հարբեցիր, արա:

ՄՈՍՈ - Վարո, բայց մեջդ ինչ մարդասիրություն չկա, էն քրջոտը դրուգ էր ասում:

ՎԱՐՈ - Դու էլ մի խմի, հա՛, Մոսո:

ՄՈՍՈ - Լավ, հանաք արի, ախալեր, լուրջ մի ընդունի:

ՄԱՏՈՒՑՈՂ - Հիմա ի՞նչ եք ասում:

ՎԱՐՈ - Գնա, գնա, դավայ:

ՄԱՏՈՒՑՈՂ - Ուժ... (Գնում է:)

ՄՈՍՈ - Հո չխանդեցիր, Միհրան ախալեր:

ՄԻՀՐԱՆ - Գուեկանում ես, Մովսես:

ՄՈՍՈ - Ի... Հարբգում ն'ս, այ տղա, աշխարհի վերջը դուխ ա տալի՞:
Կպատճեմ, հա՛, նայի տես:

ՎԱՐՈ - Մի հատ սուս: (Ուշադիր լուս է:) Լսեցիք:

ՄԻՀՐԱՆ - Ի՞նչը:

ՎԱՐՈ - Են ի՞նչ ձեն ա... Հուսիկն ա տնքում ոնց որ, հ՞ի... Միհրան, մի հատ նայի, աչքիս Նորոն փուստ ա տվել:

ՄՈՍՈ - Այ Վարո ջան, Նորոն փուստ տվող չի, ականջդ ձեն ա տալի:

ՎԱՐՈ - Ինձ գժի տեղ ես դնո՞ւմ, ասում եմ՝ տնքում ա... Ըհը, չլսա՞ք... Գնացեք տեսեք մի հատ:

ՄՈՍՈ - Դավայ, Միհրո:

ՄԻՀՐԱՆ - Բայց ինչո՞ւ նորից ես:

ՄՈՍՈ - Իմ ոտը ցավում ա, դու գնա:

ՄԻՀՐԱՆ - (ստուգում է): Խաղաղ քնած են հավերժական քնով:

ՄՈՍՈ - Են բոմֆը հիմա ընդեղ ա, ստուկաչություն ա անում մեր վրով:

ՎԱՐՈ - Միհրան, լավ նայեցիր, հաստատ մեռած են:

ՄԻՀՐԱՆ - Առավել մեռած լինել հնարավոր չի: Փարսադանիչ, սիրելիս, իմաստնությամբ մոտեցիր խնդրին, դու փաստորեն լավություն ես արել, փրկել ես նրանց, դու փրկիչ ես:

ՄՈՍՈ - Հա, փրկիչ ես, ախալեր, էտի հաստատ ա:

ՄԻՀՐԱՆ - Ահա, Մովսեսն էլ նոյն կարծիքին է: Ջեզ ամենակին մեղավոր մի զգա, Վարազդատ:

ՎԱՐՈ - Զեմ էլ զգում:

ՄԻՀՐԱՆ - Իհարկե, նրանք արդեն այնտեղ են, իսկ մենք, ովք գիտի, դեռ ինչ կտտանքների ու լկանքների ենք ենթարկվելու:

ՄՈՍՈ - Արա, դե հայերեն խոսա, հասկնանք, էլի:

ՄԻՀՐԱՆ - Եկեք խաշ ուտենք վերցապես, սառեց:

Երեքով սևեռված ուտում են:

ՄՈՍՈ - Ընենց ենք վրա տվել, ոնց որ աշխարհի վերջն ըլի, ախալեր: (Ծիծաղ:)

ՄԻՀՐԱՆ - (բաժակը վերցնելով): Խմենք: Եվ մի վիատվեք, բարեկամներս, ասենք՝ մի քան տարի հետո լիներ, ի՞նչ էր փոխվելու, քան տարի հետո, թե այսօր՝ մեծ տարրերություն չկա:

ՄՈՍՈ - Կա: Հլա հաշվի՝ քանի սենց խաշ-խորոված կուտեինք քսան տարում, բա էտի հաշիվ չի:

ՄԻՀՐԱՆ - Այդ մեկը՝ հա, համաձայն եմ:

ՄՈՍՈ - Բա քանի նանար կսիրե՞նք:

ՄԻՀՐԱՆ - Այո, բայց դե, աշխարհի ամբողջ խաշը չես ուտի և բոլոր կանանց էլ չես սիրի, մեկ է:

ՄՈՍՈ - Կուզե՞ս էս մեկն էլ չուտենք, ըիր: (*Հրում է ափսեն:*) Դո՞ւ ինչ կասես, Վարո ախապեր:

ՎԱՐՈ - Եսիմ: Մի կողմից մտածում եմ՝ ախտի բիձայանայինք, ընկնեինք տեղաշոր, տակներս, ամոթ ա ասել... լավ չի էսպես առողջ, առույգ...

ՄՈՍՈ - Լավ չի:

ՄԻՀՐԱՆ - Լավ չի:

ՎԱՐՈ - Հա, լավ չի: Ողորմի սաղիս: (*Խմում է:*)

ՄՈՍՈ - Օֆ-օֆ-օֆ, տեր, չկարցար կարգին տեր կայնես, էլի, դուխս չհերիքեց, ընգեր:

ԽՄՈՒՄ ԵԱՆ: Գալիս է Տիրանք:

ՏԻՐԱՆ - Բարև ծեզ:

ՄՈՍՈ - Էս ո՞վ էր էս նեղ մաջալին... Հլա լուսի տակ արի՝ տենանք, ախապերացու:

ՄԻՀՐԱՆ - Բարև ծեզ:

ՎԱՐՈ - Ինչ կա, բան ա՞ պետք:

ՏԻՐԱՆ - Պետք է: Բարի ախորժակ:

ՄՈՍՈ - Մերսի: Ո՞վ ես:

ՏԻՐԱՆ - Տիրանն եմ:

ՎԱՐՈ - Հետո:

ՏԻՐԱՆ - Պարոն Արամ Մատինյանի տեղակալն եմ:

ՎԱՐՈ - Որ տեղակալ ես, էդ լավ ա,

բայց էդ պարոն Մատինյան Արամն ո՞վ ա:

ՏԻՐԱՆ - Ձեր խնամին, Վարագոյատ Փարսադանիչը դուք եք երևի, չե...

ՎԱՐՈ - Երևում ա՞:

ՏԻՐԱՆ - Այո: Պարոն Վարագոյատ, ինձ ձեր խնամի Արամն է ուղարկել:

ՎԱՐՈ - Հա, բայց էդ խնամի ասվածն էրեգ էր, էսօր էլ ինչ խնամի, սկեսուր-սկեսար, տալ-բաջանադրան... պրծավ, հիմա բոլորը պոտենցիալ դիակ են, աշխարի վերջն ա, արմագեղոն, չես լսել:

ՏԻՐԱՆ - Հենց այդ առիթով եմ եկել:

ՄԻՀՐԱՆ - Հրաշալի առիթ է, բան չունեմ ասելու:

ՏԻՐԱՆ - Պարոն Արամը շատ էր զբաղված, ինձ ուղարկեց: Փորձում ենք Մատենադարանի գրքերը փրկել, վճռված է՝ տանել խոր հանքահորերը, այնտեղ պահել:

ՄՈՍՈ - Չհասկացա, մենք զանք՝ գիրք կրենք էս ազիզ օրով:

ՏԻՐԱՆ - Չէ, շնորհակալ ենք...

ՄՈՍՈ - Չարժի:

ՏԻՐԱՆ - Կրող կա, ահագին կամավոր է հավաքվել Մատենադարանի մոտ:

ՎԱՐՈ - Ինչքան խելառ կա էս երկում, հորս արև, հետո ասում են՝ երկիրն առաջընթաց չունի, օլիգարխներն են մեղավոր, էսքան խելառ վրեն՝ ո՞նց առաջնթաց կունենա, խեղծ օլիգարխն ինչ անի...

ՄՈՍՈ - Էդ ասա:

ՄԻՀՐԱՆ - Լավ, իսկ մեզնից ի՞նչ եք ուզում, պարոն Տիրան:

ՄՈՍՈ - Փող տանք, սպոնսոր կանգնենք:

ՏԻՐԱՆ - Ոչ, ի՞նչ փող, փողն այլս անուժ է:

ՄՈՍՈ - Ո՞վ կմտածեր, հ՞ը, Վարո, ո՞մ մտքով կանցներ, որ մի օր փողը էլ ոչ ոքու պետք չի ըլիի: Վայ, մորս արև, իսկականից որ՝ վերջն ա:

ՎԱՐՈ - Սպասի, տեսնենք՝ մեր խնամին ինչ ա ուզում մեզնից: (*Տիրանին.*) Ծուտ-շուտ խոսի, ժամանակ չկա:

ՄԻՀՐԱՆ - Այո, ժամանակը, ցավոք, ավարտին է մոտենում, ժամանակի աստված Զրոնոսը փակում է մեր մոլորակի իր օֆիսը:

ՏԻՐԱՆ - Մեքենաներ են պետք, բեռնատար, գրքերը տեղափոխելու համար, արդեն հավաքել ենք, եթե արագ բարձենք-տեղափոխսենք, գուցե հասցնենք: Արամն ասաց, դուք շինկազմակերպություն ունեք, բեռնատար մեքենաների պարկ:

ՎԱՐՈ - Ունեմ, ամեն ինչ էլ ունեմ:

ՄՈՍՈ - Ես էլ ունեմ, հա, հետո ի՞նչ:

ՄԻՀՐԱՆ - Ենթադրենք հասցրիք, տարաք, հորեցիք, բայց վստահ եք, որ կփրկվեն:

ՏԻՐԱՆ - Վստահ չենք, իհարկե, ո՞նց վստահ կլինենք, բայց եթե մեկ տոկոսի հույս էլ կա, պետք է փորձել, մեկ էլ տեսար՝ պահպանվեցին:

ՄԻՀՐԱՆ - Մեկ էլ տեսար:

ՏԻՐԱՆ - Այո: Եվ երբ այս մոլորակի վրա նորից կյանք ստեղծվի, քաղաքակրթություն սկզբնավորվի, մարդիկ հանկարծ կգտնեն մեր գոքերը, պատկերացնում եք... Պատկերացնում եք՝ որքան օգնած կլինենք նոր կյանքին, մեր պատմությունը, մեր փորձը գրքերի միջոցով կփոխանցվի իրենց...

ՄՈՍՈ - Վայ, մորս արև, մենք ստել վարի ենք էթում, դուք մտածում եք՝ գուց-էլոր թազա մարդ ա գալու, նստի՝ գիրք կարդա... Տո զա էլ, գնա էլ, մեզ էտի քորում ամ... Խնդալու բաներ ես ասում, ընգեր:

ՎԱՐՈ - Ոնց գցում-բռնում եմ՝ լինելիք բան չի, ախալերս, ինքդ ես ասում՝ փողն անուժ է, իհմա ես ո՞մ համոզեմ, ասեմ՝ մոլիքա նստի ոռվին, քշի՝ գիրք տար-բեր էս վերջի օրով, մարդիկ տուն-տեղ ունեն, ծնող-էրեխա ունեն...

ՏԻՐԱՆ - Դե, գուցե մեկը-երկուսը գիտակցեն, համաձայնվեն:

ՄՈՍՈ - Դուք խփնված եք, ընգեր, հորս արև: Ինձ լսի՝ թարգի էդ գրքի գործը:

ՄԻՀՐԱՆ - Չէ, մենք, իհարկե, գիտակցում ենք գրքերի կարևորությունը, անշուշտ, սակայն իրատես լինենք, հարգելիս, մանկական խաղ է ձեր այդ ձեռնարկը: Չեզ թվում է՝ աշխարհը կործանող գիսաստոր գրքերը կխնայի... Այրվելու է ամեն բան,

քարերը նոյնիսկ, և ամեն բան մոխիր է դառնալու:

ՄՈՍՈ - Էն ո՞նց էր, էն հրեշտակը, բանը...

ՄԻՀՐԱՆ - Փող ինչեցրեց նաև հինգերորդ հրեշտակը՝ կասեր տեր հայրը...

ՄՈՍՈ - Տենաս ինչ բանի ա հիմա մեր տերտերը, ում գլխին ա քարոզ կարդում:

ՎԱՐՈ - Հիմա երկի իրա գլխին են քարոզ կարդում:

ՄՈՍՈ - Կամ էլ թռել ա տուն, կնգա փեշի տակ:

ՎԱՐՈ - Էնի կնիկ չունի, սուրբ ա:

ՄՈՍՈ - Կունենա, ախալեր, միամիտ չլնես:

ՏԻՐԱՆ - Մի շեղվեք, խնդրում եմ:

ՄՈՍՈ - Չէ, անհոյս ա էս մեր ախպերը: Արի, արի մեր հետ խաշ կեր, արադ խմի, էդ սուտի բաները թարգի, արի:

ՏԻՐԱՆ - Ինչ խաշ՝ այս օրհասական ժամին:

ՄՈՍՈ - Պահ, ոնց կլներ... Դե, գնա, գիրք կրի այս օրհասական ժամին:

ՏԻՐԱՆ - Լավ, վարորդները չկան, բայց դուք կարո՞ղ եք բեռնատարները ավտոպարկից հանել:

ՄՈՍՈ - Ոնց... Ես ու Վարոն քշնք... Դու իհասկանում ես՝ ում հետ ես խոսում, ընգեր, թե՞ գիրաս մենք էլ ձեր խելքին ենք:

ՏԻՐԱՆ - Գնամ, պարոն Արամին ասեմ՝ հրաժարվեցիք:

ՎԱՐՈ - Գնա էլ, ասա էլ, վախեցրիր

քու Արամով. Էնի քու համար ա աֆտարիտետ, մեր համար՝ հեչ, էղած-չեղած:

ՏԻՐԱՆ - Բայց ինձ թվում է՝ դուք լավ չպատկերացրիք իրավիճակը, գուցե ես լավ չբացատրեցի...

ՄՈՍՈ - Նորից չսկսես:

ՄԻՀՐԱՆ - Հասկացել ենք, երիտասարդ, ամեն բան լավ հասկացել ենք:

ՏԻՐԱՆ - Պարզ է: Դե, ձեզ բարի ախորժակ, կուշտ գլուխվեք վերջից առաջ, հանկարծ սոված չգնաք վերին ատյան, չեն ընդունի: (Գնում է:)

ՄՈՍՈ - Կ, իլա ստոպ, արա, էդ ում ասիր... (Ուզում է գնալ ետևից:)

ՎԱՐՈ - Սպասի, Մոսո, թող, ամեն ախմախի համար քեզ մի կոտորի, ժամանակ չկա:

ՄՈՍՈ - Բայց լսեցիր ինչ ասեց:

ՎԱՐՈ - Ոչինչ, լավ, մոռացի: Դրան էլ թող աստված պատժի, ին ամեն բան մենք չենք անելու: Միհրան, լից:

ՄԻՀՐԱՆ - Միշտ պատրաստ:

Գալիս է Նորոն:

ՎԱՐՈ - Էս ում միլիոնատեր ախպերն ա:

ՄՈՍՈ - Փողերդ առաջ բանկից:

ՆՈՐՈ - Չէ, բանկերը լրիվ փակ են, դոներին էլ ավտոմատավոր պահակներ կան, ոնց խնդրեցի, աղաչեցի՝ չտվին: Բայց դե ոչինչ, չեկը մոտս ա, դե-յուրե՝ միլիոնատեր եմ, չէ, շեֆ:

- ՎԱՐՈ** - Բա ոնց, պարոն Նորայր:
- Հանգիստ կմեռնես, չէ:
- ՆՈՐՈ** - Հարց չի, փողատեր մեռնելը
ավելի լավ ա, քան թե քյասիբ, է-
տի՝ հարուրից-հարուր, չէ, միլիո-
նից-միլիոն:
- ՄՈՍՈ** - Ասում ես, բանկերի դեմք
ավտոմատավոր պահակներ
կա՞ն:
- ՆՈՐՈ** - Հա, էդպես ա:
- ՄՈՍՈ** - Էտի հետաքրքիր ա:
- ՆՈՐՈ** - Բայց դրա ինչն ա հետաքր-
քիր, իսկի մոտիկ չթողին:
- ՄՈՍՈ** - Եթե փողը պահպանվում ա,
ուրեմն ամեն ինչ կորած չի, ու-
րեմն ինչ-որ հոլոս կա, տղերք, հը:
- ՄԻՀՐԱՆ** - Չեմ կարծում... Թեև
տրամաբանություն կա ասածիդ
մեջ:
- ՎԱՐՈ** - Փողը աստված ա, Մոսո,
ինչ էլ լինի՝ փողը պիտի պահ-
պանվի, զոկում ես, այ, ոնց որ
հոգևորականություն՝ Էջմիածնի
տաճարը հո չի թողի անտեր...
- ՄԻՀՐԱՆ** - Հստակ ձևակերպեց մեր
եղբայրը:
- ՆՈՐՈ** - (տեսնում է դիակները): Էս
իմ բացակայությամբ դիակ ա ա-
վելացել, սպասեիք՝ գայի, էլի:
- ՎԱՐՈ** - Չէ դե, ոնց կլնի, դու միլիո-
նատեր մարդ ես, քեզ ամեն մի
պուծուր հարցով հո չե՞նք ան-
հանգստացնի:
- ՆՈՐՈ** - Ձեռ ա առնում Փարսադանի-
չը, միլիոնատեր էլ դառանք՝ էլի
ձեռ ա առնում:
- ՎԱՐՈ** - Քեզ խելոք պահի, արա,

կարող ա՞ մտքովդ հավասարութ-
յուն անցավ:

ՄԻՀՐԱՆ - Հիմա դա արդեն կարևոր
չի, Վարազդատ:

ՎԱՐՈ - Չէ, Միհրան, սա պրինցիպ
ա, մի ժամ էլ մնա՝ չեմ թողնի
խախտվի:

ՆՈՐՈ - Այ շեֆ ջան, ինչ հավասա-
րություն, դու՝ ուր, ես՝ ուր... Գի-
տես, էլի, քեզ ոնց եմ
հարգում-սիրում... Մի հատ պա-
շեմ, էլի, աշխարհը մեռնել կա,
ցավդ տանեմ:

ՎԱՐՈ - Պաչի:

ՆՈՐՈ - Վախ, մեռնեմ սրտիդ: (*Համ-
րուրում է:*)

Գալիս է Նազիկը:

ՎԱՐՈ - Մենակ սա էր պակաս: (*Նո-
րոյին.*) Աչքիս՝ սրան լավ չես
տուն հասցրել:

ՆՈՐՈ - Չէ, ցավդ տանեմ, լավ էլ
հասցրել եմ, բայց որ պետք է-
ղավ՝ մի հատ էլ կհասցնեմ,
չմտածես:

ՎԱՐՈ - Բարի երեկո, տիկին Նա-
զիկ, ինչ կաչկա, ինչի ես ծանր
տեղի թեթև արել:

ՆԱԶԻԿ - Աղջիկս ո՞ր է, ո՞ր է իմ Նա-
նեն:

ՎԱՐՈ - Աղջիկդ... Նոր էստեղ էր ոնց
որ... Սարիկի հետ կըլնեն:

ՆԱԶԻԿ - Աղջկաս տվեք, տուն տա-
նեմ, ո՞ր է Նանեն:

ՎԱՐՈ - Հա, հիշեցի, ասեց՝ մամա-
յին կարոտեցի, գնամ տուն, մենք

Էլ ասինք՝ գնա, աղջիկ ջան: Էդ-պես չէր, Մոս:

ՄՈՍՈ - Հա, ըտեսց էր, ավտոյով ձամփեցինք, գնաց: Չհանդիպեցիք:

ՄԻՀՐԱՆ - Տիկինը երևի տանից չի գալիս:

ՆԱԶԻԿ - Տանից եմ գալիս, ուր է աղջիկս:

ՎԱՐՈ - Դժվար ես հասկանո՞ւմ, տիկին Նազիկ, ասինք՝ տուն գնաց: Դու էլ գնա:

ՄԻՀՐԱՆ - Երևի արդեն հասած լինի:

ՄՈՍՈ - Հա, հաստատ հասած կըլնի:

ՆԱԶԻԿ - Սուտ եք խոսում... Ինչ եք արել աղջկաս... Տուր աղջկաս, իրեշ: (*Հարձակվում է Վարոյի վրա:*)

ՎԱՐՈ - Դե, քեզ կարգին պահի, մտավորականի կնիկ ես...

ՄՈՍՈ - Էս ա մեր մտավորականությունը, էլի:

ՎԱՐՈ - (*պոկելով իրենից Նազիկին:*) Նորն, ինչ ես նայում, վերց սրան... Տար, ու էս անգամ հանկարծ ետ չգա, թե չէ փողի չեկը ձեռիցդ կառնեմ:

ՆՈՐՈ - Ի, ընենց տանեմ, Փարսադանիչ ջան, որ մեկ էլ չերևա էս կողմերը... (*Գրկում է Նազիկին:*) Առաջ ընգի տենամ... (*Տանում է ճշացող Նազիկին:*)

ՄԻՀՐԱՆ - Հարամ արին խաշը, սառեց: Ասեմ՝ թարմացնեն:

ՎԱՐՈ - Էլ ինչ խաշ, Միհրան: (*Ժա-*

մացուցին նայելով:) Բան չմնաց: (*Մոտենալով պատուհանին:*) Լուսը բացվեց: Վերջի առավոտը: Մարդ չկա քաղաքում, ամեն մեկը մի ծակ գտել, մտել ա մեջը: Ի, էս իմ ավտո՞ն ուր ա... Թոռն ա վարորդս: Դրա երազանքն էլ կատարվեց, աչքը ավտոյիս վրա էր, միշտ ասում էր՝ տենաս կզա՞ն օրը, որ ես սենց ավտո ունենամ:

ՄՈՍՈ - Ոչինչ, ախատեր, ձեռդ քարի տակ չի, թագեն կառնես...

ՎԱՐՈ - Էս ինչ ես խոսում, այ ախմախ, ես ասում եմ՝ վերջի առավոտն ա, դու ասում ես՝ ավտո առ: Մոսո, խելքդ գցում ես արդեն:

ՄՈՍՈ - Մի մոմենտ մոռացա, ախատեր: Համ էլ խի՞ չես թողում մոռանանք, է:

ՎԱՐՈ - (*Երկնքին նայելով:*) Ո՞ր կողմից ես գալու, արա, է...

Գալիս է Տեր հայրը:

ՏԵՐ ՀԱՅՐ - Փող հնչեցրեց նաև հինգերորդ իրեշտակը, և տեսա, որ մի աստղ ընկավ երկնքից...

ՎԱՐՈ - Կամաց, հեր օրինած, վախեցանք:

ՄԻՀՐԱՆ - Աստծու սիրուն, չշարունակես, տեր հայր, տրամադրված չենք:

ՄՈՍՈ - Հա, պետք չի... Համ էլ խի՞ էկար որ, հազիվ գնացել էիր:

ՏԵՐ ՀԱՅՐ - Եկա, որ ձեր կողքին ինեմ, որոյակս: Հոգևորական խորհուրդն ապսարեց՝ գնացեք,

ձեր հոտի հետ եղեք օրիհասի պահին: Գլխավոր տաճարում օծված մոմեր եմ բերել, ահա, վառենք և աղոթենք առ Աստված, որ փրկի մեզ:

ՎԱՐՈ - Էդ քու աստվածը փրկող չի, ոնց հասկացա՝ կործանող ա, էնապես որ իզուր ես բերել էդ մոմերը:

ՏԵՐ ՀԱՅՐ - Այդպես մի ասա, որդյակ իմ, աստված բարի է, աղոթես՝ կփրկի:

ՄԻՀՐԱՆ - Բեր վառենք, օգուտ չլինի՝ վնաս էլ չի լինի:

ՄՈՍՈ - Հա դե, վառենք նավսյակի:
ՏԵՐ ՀԱՅՐ - Նավսյակի չի լինի, ամբողջ հոգով է պետք աղոթել:

ՄՈՍՈ - Ատդուշի:

ՏԵՐ ՀԱՅՐ - Այո, ատդուշի, ամբողջ հոգով, և՝ հաստատակամ, իմիջիայլոց աղոթքն Աստծուն չի հասնի: (Վարոյին.) Դու էլ արի, որդի աստծո, մի կողմ դիր գոռողությունդ:

ՄՈՍՈ - Վերց նավսյակի, Վարո ախապեր:

Վարոն էլ է մոմ վերցնում, յուրաքանչյուրը վառում է իր մոմը:

ՏԵՐ ՀԱՅՐ - Գալիս է պահը, ահա, արդեն լսում եմ ծայնը բարձրյալի: Աղոթեք ինձ հետ, զավակներս: Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո: Եկեսցէ արքայություն քո, եղիցին կամք քո որպես յերկինս և յերկրի:

Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Եվ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոնց պարտապանաց: Եվ մի տանիր զմեզ ի փորձություն, այլ փրկեա զմեզ ի չարէ: Զի քո է արքայություն և զօրություն և փառք հավիտյանս. ամէն:

Վարոն, Սիհրանը, Մոսոն գրկում են միմյանց, վախեցած սպասում են: Տեր հայրն աղոքք է մրմնջում:

ՎԱՐՈ - Ինչ էդար, արա, դե խփի, ինչքան սպասենք...

ՄԻՀՐԱՆ - (նայելով ժամացույցին): Իմով երկու րոպե անցավ:

ՄՈՍՈ - Իմով՝ իրեք:

ՎԱՐՈ - Ուշանում ա անտերը:

ՄՈՍՈ - Հո մարշրուտկա չի, ախպեր:

Լույսերը վառվում են:

ՎԱՐՈ - Չհասկացա...

ՄԻՀՐԱՆ - (հեռախոսը դնելով ականջին): Կապը վերականգնվել է:

ՄՈՍՈ - Մի հատ վոազ մտի ինտերենտ, տես ինչ են ասում:

ՄԻՀՐԱՆ - (փնտրելով հեռախոսում): Ահա... Համաշխարհային տիեզերական կենտրոնը լուր է տարածել, որ չարաբաստիկ իքս վեց գիսաստղը, որ գալիս էր ուղիղ երկրագնդի վրա, վերջին պահին, ինչ-որ անհայտ կողմնակի ուժի ազդեցությամբ, շեղել է իր ուղեգիծը... Կողքներովս է անցել, տղերք:

ՄՈՍՈ - Չեմ ջոգում... Պրծանք:

ՏԵՐ ՀԱՅՐ - Բարձրյալն այս անգամ էլ գրասիրտ գտնվեց մեղավորներիս նկատմամբ: Փառքդ մեծ, Տեր: Ընդունենք այս որպես ընծառ և որպես նախազգուշացում, գուցե՛ վերջինը:

ՄՈՍՈ - Հիմա ի՞նչ, փաստորեն, ապրում ենք...

ՄԻՀՐԱՆ - Այո, Մովսես, ապրում ենք, զվարթացիր: Վարազդան, ինչո՞ւ ես մտահոգ, չես հավատո՞ւմ:

ՎԱՐՈ - (անորոշ): Հիը...

ՄԻՀՐԱՆ - Այսօր, փաստորեն, վերածնվել ենք, տղերք, մեր երկրորդ ծննդյան օրն է, ամբողջ մարդկության ծննդյան օրը:

ՄՈՍՈ - Վախ, մորս արև, էս ինչ ուրախություն էր:

ՄԻՀՐԱՆ - Ինչ եմ ասում՝ սեղանը չթարմացնենք այս երջանիկ առիթով:

ՄՈՍՈ - Հա, բա ո՞նց, էտի նշել ապետք, թե չէ Տերը կասի՝ ես ձեզ փրկություն տվի, դուք սուսուփուս ցվովնիմ եք, ապերախտներ: Կասի, չէ, տեր հայր:

ՏԵՐ ՀԱՅՐ - Ոնց որ մանուկ լինես, տղա, չարածի մանուկ: Դեհ, ես ածապարեմ Աստծո տաճար:

ՄՈՍՈ - Բա մեր հետ չես նշի՞ էս ուրախությունը:

ՏԵՐ ՀԱՅՐ - Չեմ կարող, զավակս, գնամ պիտի, կանչված եմ:

ՄՈՍՈ - Դե, բարով գնաս:

ՄԻՀՐԱՆ - Մինչ տեսություն, տեր հայր:

ՏԵՐ ՀԱՅՐ - Բարին ընդ ձեզ: (Գնում է:)

ՄԻՀՐԱՆ - Մատուցնի:

ՄԱՏՈՒՑՈՂ - Եկա, ցավդ տանեմ:

ՄԻՀՐԱՆ - Քեզ հավաք պահի, Ալբերտ, աշխարհի վերջը պրծավ:

ՄԱՏՈՒՑՈՂ - Ամեն օր էլ աշխարհի վերջ ա, դուք եք, որ չեք նկատում:

ՄԻՀՐԱՆ - Մի փիլիսոփայիր, ինձ լաիր, թարմացրու սեղանը և օղի, չէ, շամպայն բեր, ծնունդ ենք նշում:

ՄՈՍՈ - (*հանկարծ հիշելով*): Վարն, վոազ զանգի բանկի կառավարիչն:

ՎԱՐՈ - Ինչի՞ զանգեմ որ:

ՄՈՍՈ - Ո՞նց, ախաբեր, մոռացար, Նորոյին էրկու միլիոնի չեկ ես տվել: Զանգի՝ կասեցրու, շուտ, քանի չի վերցրել:

ՎԱՐՈ - Մոռացի, մանրունք ա, Մոսո:

ՄՈՍՈ - Ո՞նց... Էրկու միլիոնը մանրունք ա՞:

ՎԱՐՈ - Մանրունք ա:

ՄՈՍՈ - Գժվավ մեր ախաբերը:

ՎԱՐՈ - Լավ չեղավ, տղերք:

ՄԻՀՐԱՆ - Ինչը:

ՎԱՐՈ - Էն, որ աստղը փուստ տվեց: Հիմա ո՞նց ենք ապրելու...

ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



ՍամՎել ԿՈՍՅԱՆ

Նյութապաշտության, ազահության, մարդկային մեղքերի
զափիչ ուժը դրախտն էր: Հիմա դժվար է հալատալ, որ
դրախտը կարող է մեղմել իշխող բացասականի հեղեղը:
Գուցե աշխարհի կործանումը պայմանավորված է հենց
դրախտի լինել-չլինելով: Գուցե...
Առաջմ վարկածը վիրուսալ տիրույթում է, սակայն
այնքան է տիպական, որ հետևանքները չզգալու և
չտեսնելու համար ուզում ես փակել աչքերդ:

ԴԵՌ ՎԵՐԶԸ ՉԵ

Զավեշտ վեց պատկերով

Գործող անձինք

ԱՊԱՄ

ԵՎԱ

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԽՔՆԵՐԻ ՊԱՀՏՈՎԱՆ - ՍԻՊ, ով կարող է
նաև դատավորը լինել**

ՏՂԱՄԱՐԴ

ԿԻՆ

ԱՊՁԻԿ ԵՐԵԽԱՎ

ԴԱՏԱՎՈՐ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Ժամանակները փոխվում են, պատմությունն ու առասպելները՝ նույն-պես: Հանդիսատեսը պիտի համոզվի, որ իր տեսածը դրախտն է: Խնձորի ծառը խնձորներով՝ պարտադիր է: Անկախ ձևավորնան պայմանականություններից՝ ռեժիսորը, դերակատարները իրենց դրախտում են զգալու: Զգացողությունը կարող են ապահովել քոչունների երգն ու համապատասխան երաժշտությունը: Դրախտում Աղամն ու Եվան են՝ թզի տերևներից պատրաստված հազուտներով: Աղամը երևակայական նիզակով փորձում է խոցել որսին: Եվան լուս հետևում է Աղամին:

ԱԴԱՄ - Որսից ուշացա:

ԵՎԱ - Խնձոր կուտենք:

ԱԴԱՄ - Խնձորով փոր չես կշտացնի:

ԵՎԱ - Չեղած տեղը, խնձորն էլ ուտելիք է...

ԱԴԱՄ - Մի անգամ արդեն կերել ես: Խնձորը դու ես կերել՝ ես չեմ կարողանում մարսել:

ԵՎԱ - Երևի մրսել ես...

ԱԴԱՄ - Խնձորն ուտելուցդ հետո սկսել եմ հածախակի մրսել:

ԵՎԱ - Ո՞վ է սառել, ճս, թե եղանակը...

ԱԴԱՄ - Խնձորը չպիտի ուտեիր:

ԵՎԱ - Տղամարդիկդ ինչքան եք սիրում նույնը հազար անգամ կրկնել:

ԱԴԱՄ - Նախկինում գազանը հարձակվեր-չհարձակվեր, կատա-

ղեր-չկատաղեր՝ պետքս չեր: Գիտեի, որ հաղթելու եմ: Գազանն է գիտեր, որ չի հաղթելու: Ի՞նչ օրեր էին:

ԵՎԱ - Օրեր էին, էլի...

ԱԴԱՄ - Հիմա ուրիշ է, անընդհատ շուրջ պիտի նայես, թաքնվելու տեղ փնտրես, ամեն խշողից զգուշանաս... Զգուշանալուց էլ եմ մրսում: Զգույշ չեղար՝ վերջ: Կար Աղամը ու էլ չկա:

ԵՎԱ - Հեշտ ես ասում՝ վերջ... Քեզ ի՞նչ կա, իո դու չես այրիանալու: Չլինի ինձանից ես հոգնել...

ԱԴԱՄ - Քեզանից հոգնելը դժվար է: Քեզ համար էլ առանց ինձ դժվար կլինի: Քեզ հեշտ է գայթակղելը... Օճը գայթակղեց, վաղը չես իմանա՝ ուրիշ ինչ գազան կհայտնվի ու հնարավոր է, որ մյուս օրն էլ խոտը գայթակղի...

ԵՎԱ - Այնքան էլ խոտի նման չես:

ԱԴԱՄ - Բայց երբեմն ինձ խոտ եմ զգում:

ՈՒՏԱՆԱՃԱՅՄԵՐ: Մի պահ թռչունների ծլվոցն ու երաժշտությունը դադարում են: Ադամն ու Եվան լարվում են, փորձում զուշակել՝ ով ու ինչ կարող է լինել:

ԵՎԱ - Ոնց որ որսն ինքն է քո մոտ գալիս...

ԱԴԱՄ - Գազանի ոտնաճայներ չեն:

ՀԱՍԱՊԱՆ ՀԱՅՄԱՎՈՒՄ Է ՄԻՊ-Ը,
ուշադիր շորջն է նայում:

ՊԱՇՏՊԱՆ - Օ՛ֆ, փնտրելուց մարդ ավելի է հոգնում...

ԵՎԱ - Գազանի նման չէ:

ՊԱՇՏՊԱՆ - (խոր շունչ է քաշում):
Ի՞նչ գազան, ի՞նչ բան... Ինձ նման գազաններ շան եք տեսել: Մարդու իրավունքների պաշտպանի մասին չեք լսել:

ԱԴԱՄ - Զենք էլ տեսել:

ՊԱՇՏՊԱՆ - Ուրեմն՝ լիազորված եմ հայտարարել, որ մարդու իրավունքների պաշտպանն էլ մարդ է և, ամենակարևորը... Մարդու իրավունքները միայն մարդը կարող է պաշտպանել:

ԵՎԱ - Հո չեք կասկածում, որ մենք էլ ենք մարդ:

ՊԱՇՏՊԱՆ - Մարդ չլինեիք, ինչո՞ւ պիտի փնտրեի: Միայն թե չեք իմացել, որ իրավունքներ ունեք ու այդ իրավունքները պիտի պաշտպանել:

ԱԴԱՄ - Ինչի՞ն մասին է ասում:

ԵՎԱ - Զեմ հասկանում:

ԱԴԱՄ - Կարո՞ղ է՞ ունեցել ենք:

ԵՎԱ - Իմ ձեռքը չի ընկել:

ՊԱՇՏՊԱՆ - Լիազորված եմ հայտարարելու, որ ունեցել եք... Լիազորված եմ զգուշացնելու... Զերկարացնեմ: Զգուշացնելու, որ Ադամի իրավունքները խախտվել են: Ու լիազորված եմ նրա իրավունքները պաշտպանելու:

ԵՎԱ - Փոլից, թե՞ առյուծից:

ՊԱՇՏՊԱՆ - Մարդուց:

- ԵՎԱ** - Աղամին Աղամից ես պաշտպանելու:
- ՊԱԾՏՊԱՆ** - Դեմագոգիա պետք չէ:
- ԵՎԱ** - Էլ ումից ես պաշտպանելու:
- ՊԱԾՏՊԱՆ** - Քեզանից:
- ԵՎԱ** - (*կոտրատվելով*): Ինձանից:
- ՊԱԾՏՊԱՆ** - Կինն էլ մարդ է:
- ԵՎԱ** - Կինն ով է:
- ՊԱԾՏՊԱՆ** - Կին չես:
- ԵՎԱ** - Ինձանից ես պաշտպանելու:
- ՊԱԾՏՊԱՆ** - Լիազորված եմ... Կարծասած, առանց Աղամին հարցնելու խնձորը չպիտի ուտեիր:
- ԵՎԱ** - Ինչ իմացար՝ կերել եմ:
- ՊԱԾՏՊԱՆ** - Դրա մասին ամբողջ աշխարհը գիտի, միլիոն տարի է՝ գիտի:
- ԵՎԱ** - Միլիոն տարի առաջ գայիր:
- ՊԱԾՏՊԱՆ** - Աղամի բողոքը չել լսել:
- ԵՎԱ** - Երբ է բողոքել:
- ՊԱԾՏՊԱՆ** - Լիազորված եմ զգուշացնելու, որ դրախտում ստելը պատմելի է:
- ԵՎԱ** - Օտարի մուտքը՝ ևս:
- ՊԱԾՏՊԱՆ** - Մի բարդացրու: Ժամանակակից տեխնիկան շատ է զարգացել: Ով ինչ ուզի, երբ ուզի, որտեղից ուզի՝ կլսի: Քիչ առաջ Աղամը չէր ասում, որ մրսում է: Լիազորված եմ հայտարարելու, որ նրա մրսելը պայմանավորված է... Մի խոսքով, մրսում է, որովհետև նրա իրավունքը խախտվել է:
- ԵՎԱ** - Աղամ, քո ի՞նչն է խախտվել:
- ԱԴԱՄ** - (*ինքն իրեն ուշադիր զննելով*): Ամեն ինչս տեղն է:
- ԵՎԱ** - Էլ ինչո՞ւ է ասում՝ խախտվել է:
- ՊԱԾՏՊԱՆ** - Էլի եմ ասում... Նրա ամենակարևոր իրավունքն է խախտվել:
- ԵՎԱ** - Թոշուններն էլ լոեցին:
- ՊԱԾՏՊԱՆ** - Դեռ կերգեն: Արդարությունը վերականգնվի՝ կերգեն: Աղամի իրավունքը խախտվել է և իմ գործը նրա իրավունքը պաշտպանելն է:
- ԵՎԱ** - Չլսեցիր, որ նրա ամեն ինչը տեղն է:
- ՊԱԾՏՊԱՆ** - Առաջին հայացքից, միայն առաջին հայացքից... Բռ արարքի ծանրությունը չես գիտակցում: Մարդուն անմահությունից զրկելը ծանր մեղք է:
- ԵՎԱ** - (*քիչ ազրեսիվ*): Քեզ Տիրոջ տիրոջ հետ ես շփոթել:
- ՊԱԾՏՊԱՆ** - Տիրոջ հետ գործ չունեմ:
- ԵՎԱ** - (*դադար*): Տիրոջ հետ գործ չունեցողը դրախտում էլ գործ չունի: Ավելի լավ է ասես՝ այստեղ ոնց հայտնվեցիր... Գոնե դուռը թակեիր:
- ՊԱԾՏՊԱՆ** - Դուռ կա՞մ, որ թակեի:
- ԵՎԱ** - Կիրթ մարդը միշտ էլ դուռ կգտնի:
- ՊԱԾՏՊԱՆ** - Պիտի լինի, որ գտնես:
- ԵՎԱ** - Հագնված էլ չենք...
- ՊԱԾՏՊԱՆ** - Մերկությամբ ո՞ւմ եք զարմացնելու: Նուդիստների մա-

սին լսել եք: Մերկ վազվում են ծովափերում:

ԵՎԱ - Ծոգ չի...

ՊԱՇՏՊԱՆ - Միշտ էլ արագ քայլելիս քրտնում եմ:

ԵՎԱ - Իրավունքի ետևից էիր գնում... Թե՞ իրավունքն էր ետևիցդ ընկել: Մեր իրավունքն է՝ դու ես խառնվել: Էլ ո՞նց կլինի, Ադամին չեմ հարցորել... Հնչ իմանայի՝ ինչ եմ հարցնելու, որ հարցնեի... Դու էլ չկայիր՝ զգուշացնեիր: Ուշացած եկել ես: Արդեն անիմաստ է քո հայտնվելը: Կարող ես նրան նորից անմահ դարձնել: Որ չես կարող, իզուր ես եկել: Այն էլ՝ վագելով... Ուշացած հայտնվելը չինելու պես է: Եղածը եղել է: Քո գալով Ադամի խախտված ինչն ես ուղղելու: Պետք չէ... Չինեի՝ Ադամը ծառերի հետ էր քնելու, ծանոն էր նրան երեխաներ նվիրելու:

ՊԱՇՏՊԱՆ - Էդ հարցն էլ է լուծված:

Պարզվում է՝ դրախտը գավառից այնքան էլ չի տարբերվում: Խավար է, անտեղյակություն... Ոչնչից տեղյակ չեք, թե չէ կիմանայիք, որ վաղուց կանայք կանաց հետ են ամուսնանում, տղամարդիկ՝ տղամարդկանց հետ: Միասեռ ամուսնությունները շատ տեղերում արդեն օրինականացված են:

ԵՎԱ - (հիստերիկ ծիծաղում է):

Տղամարդիկ սկսել են ծննդաբերել:

ՊԱՇՏՊԱՆ - Դեռ չէ:

ԵՎԱ - Բա երեխաներ ովկ է ծնում:

ՊԱՇՏՊԱՆ - Որդեգրում են:

ԵՎԱ - Զծնվածներին...

Աճապասելի խառը՝ կանանց և տղամարդկանց երգչախումբը, երգում է: Երգն ավելի բարձր է հնչում: Աղամն ու Եվան անտարբեր են, զգացվում է, որ երգչախմբի գոյությունը նրանց համար սովորական է: Պաշտպանը անհաճիք շուրջն է նայում, փորձելով երգչախմբի տեղը գուշակել:

ՊԱՇՏՊԱՆ - Երգչախումբ է:

ԱԴԱՄ - Հիանալի երգչախումբ է:

ՊԱՇՏՊԱՆ - Հիանալին՝ հիանալի, երգողները չեն երևում:

ԱԴԱՄ - Չես էլ տեսնի: Հոգիները չեն երևում: Մանավանդ, անմեղ հոգիները...

ԵՎԱ - Միայն անմեղները... Դրախտում չար բան չկա: Այնպես որ, ոչ մեկը պաշտպանության կարիք չունի:

ՊԱՇՏՊԱՆ - Միշտ են երգում:

ԱԴԱՄ - Երբ ուզում են:

ՊԱՇՏՊԱՆ - Գիշերն էլ:

ԵՎԱ - Առավոտյան էլ, կեսօրին էլ, գիշերն էլ:

ՊԱՇՏՊԱՆ - Լիազորված եմ հայտարարելու, որ գիշերվա երգելը

խախտում է մարդու հանգստի իրավունքը:

ԱԴԱՄ - Երգը չհավանեցիր:

ՊԱԾՏՊԱՆ - Նշանակություն չունի...

Օրենքն օրենք է:

ԱԴԱՄ - Բայց պիտի իմանայիր, որ դրախտում արգելված է արգելելը:
Դրա համար էլ դրախտ է...

ՊԱԾՏՊԱՆ - Լիազորված եմ...

ԵՎԱ - Իզուր: Եթե դրախտը քո տարածքը չէ...

ՊԱԾՏՊԱՆ - Երբ Ադամը բողոքը գրավոր ներկայացնի՝ իմը կդառնա:

ԵՎԱ - Ադամն իր բողոքն արդեն գրել է, ամպերի վրա է գրել:

ՊԱԾՏՊԱՆ - Ամպերը հաշիվ չեն:
Անձրևները նրա բողոքը վաղուց ջնջած կլինեն:

ԵՎԱ - Որ ջնջել են, ինչ ես ուզում:

ՊԱԾՏՊԱՆ - Դուան պես մի բան լինի... Չեմ ուզում անքաղաքավարի լինել, ուզում եմ հաջորդ անգամ դուռը թակել:

ԵՎԱ - Պատը ՞նց է... ավելի ամուր կլինի:

ՊԱԾՏՊԱՆ - Լեզվակոհիվն իմ բանը չի: Հաջորդ անգամ ավելի կոնկրետ կլինեմ: Ես երգչախումբը չ'լուս, ինչ երկար երգ է... Միայն ճնշումս չբարձրանա: Հաջորդ այցիս...

ԵՎԱ - Էլի վազելո՞ւ ես:

ՊԱԾՏՊԱՆ - Ասացի՝ լեզվակոհիվն իմ բանը չի:

Արագ շրջվում ու հեռանում է:

Նրա գնալուց հետո երգչախումբը լուս է: Ադամն ու Եվան հոգնած նստում են խոտերին:

ԵՎԱ - Հոգնեցի: Անմահության իրավունք, հանգստի իրավունք, չգիտեմ՝ էլ ինչի իրավունք... Էլի ի՞նչ իրավունքներ ունենք:

ԱԴԱՄ - Եթե չարը չկա, ո՞ւմ են պետք իրավունքները:

ԵՎԱ - Բա ինչո՞ւ էր վազելով դրախտ հասել:

ԱԴԱՄ - Հնարավոր է՝ մենք գաղաններից ենք վախենում, իրենք՝ իրենցից... Ուզում են իրավունքներով պաշտպանվել:

ԵՎԱ - Բայց ի՞նչ իրավունքով էր այս տեղ հասել... Ո՞նց...

ԱԴԱՄ - Հեշտ հարցեր տուր:

ԵՎԱ - Երբեք այսքան չէի հոգնել:

ԱԴԱՄ - Նրա հայտնվելուց աղիքներս էլ են սկսել իրենց իրավունքների համար պայքարել:

ԵՎԱ - Սիրո բացատում հիանալի հատապտուղներ եմ տեսել...

ԱԴԱՄ - Լավ բան ասա:

ԵՎԱ - Ադամ, մտածում եմ՝ չինի՞ երազ էր:

ԱԴԱՄ - Նոյն երազը երկուս չինք տեսնի:

ԵՎԱ - Քո կողը չեմ... Հնարավոր է՝ տեսել ենք: Երազահան էլ չկա: Իսկ հատապտուղներն իսկապես լավն էին: Մոռանո՞ւմ ես, որ քեզ վիտամիններ են պետք:

Բռնում է Աղամի ձեռքը, բարձրանալով՝ Աղամին էլ է բարձրացնում, գրկախառնված հեռանում են: Հեռացող Եվայի երգի ձայնը:

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Նույն տեսարանը: Եվան խոտերի վրայից զգուշորեն ինչ-ոք բան է հավաքում: Աղամը հետևում է նրան:

ԵՎԱ - Ցողն էլ է պակասել: Առավոտից հավաքած մի քանի կաթիլ է:

ԱԴԱՄ - Գետի ջրով լվացվիր:

ԵՎԱ - Գետի ջուրը մաշկս չորացնում է:

ԱԴԱՄ - Աշնան տերսի պես...

ԵՎԱ - Ադամ, ընդամենը ուզում եմ գեղեցիկ լինել:

ԱԴԱՄ - Ներիր, ծառից ընկնող տերսը հիշեցի: Վախից կլինի, մեջս անծանոթ վախ է մտել: Մեջս է, բայց ոնց որ աչքիս առաջ լինի... Տեսնում եմ՝ ծառերի մեջ, երկնքի, գազանների... Ներսս անընդհատ ոտնաձայներ են: Լսո՞ւմ ես... Լսիր... Խոտերի շշուկների մեջ էլ ոտնաձայները շարունակվում են...

ԵՎԱ - Չլինի՞ պաշտպանն էլի վազում է:

ԱԴԱՄ - Վազողները շատ են, մեկը չէ:

ԵՎԱ - Պաշտպանը ո՞նց շատացավ...

Ճագարներն էլ այդքան արագ չեն շատանում:

ԱԴԱՄ - Ոտնաձայները ավելանում են:

ԵՎԱ - Ադամ...

ԱԴԱՄ - Չես լսում:

ԵՎԱ - Մահը ոտքեր ունի:

ԱԴԱՄ - Օձի ընկերն է, չի ունենա:

ԵՎԱ - Պաշտպանի ոտքերը երկուսն էին... Ոտնաձայները ո՞նց են ավելանում: Ո՞մ ոտնաձայներն ես լսում, Ադամ... Ի՞նչ ոտնաձայներ են...

Տղամարդու և կնոջ ձայներ:

Հնչում են սկզբում աղոտ, ապա պարզ ու լսելի:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁԱՅՆ - Երկինքն էլ փլիք՝ գտնելու եմ:

ԿԱՆԱՖԻ ՁԱՅՆ - Երեխային խղճա, հոգնել է:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁԱՅՆ - Առանց տեսնելու հաշվիր, դրախտում չես եռել...

ԿԱՆԱՖԻ ՁԱՅՆ - Այդքան չէին ապրի:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁԱՅՆ - Գետնի տակ էլ կգտնեմ...

ԿԱՆԱՖԻ ՁԱՅՆ - Համառությունդ մարդ կսպանի:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁԱՅՆ - Համառությունս չլիներ՝ դրախտ չէիր հասնի:

ԿԱՆԱՖԻ ՁԱՅՆ - Որ հասել եմ, ինչս է փոխվել:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁԱՅՆ - Փոխված կլի-

նի... Եսի՞մ, քանի գազան է ուշաթափել:

ԿԱՆԱՑԻ ՁԱՅՆ - Էստեղ էլ հոգուս կպիր, էստեղ էլ հոգիս կեր:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁԱՅՆ - Եղ ուտելիքից դրախտում շատ կլինի: (*Ծիծաղում է, քիչ անց:*) Իրենք չեն... Իրենք են, էլի...

ՍԻՆ Աղամն ու Եվան փորձում են գուշակել՝ ովքեր են, տղամարդը արագաքայլ գալիս-կանգնում է նրանց դիմաց:

ՏՂԱՄԱՐԴ - (*ուշադիր նայելուց հետո*): Բարև ձեզ, պատմական արժեքներ:

ԿԻՆ - (*վազելով մոտենում է*): Իրենք են:

ՏՂԱՄԱՐԴ - Եղել է՝ փնտրեմ ու չգտնեմ: Չմեռանք, Աղամին ու Եվային էլ տեսանք:

ԿԻՆ - Հարցրու՝ իրենք են:

ՏՂԱՄԱՐԴ - Սրանց նկարները հազար անգամ եմ տեսել:

ԱԴԱՄ - Ո՞վ եք:

ԵՎԱ - Չլինի՞ պաշտպանն է ուղարկել:

ՏՂԱՄԱՐԴ - Պաշտպանն ո՞վ է:

ԿԻՆ - Զբոսաշրջիկ ենք:

ՏՂԱՄԱՐԴ - Առայժմ: Վաղը, հնարավոր է, հարևաններ լինենք, կամ... Վաղը կերևա:

ԿԻՆ - (*ուշադիր զննում է Աղամին ու Եվային*): Կթողնես՝ Աղամին ձեռք տամ:

ՏՂԱՄԱՐԴ - Ձեռքնրդ կկտրեմ:

ԿԻՆ - (*վիրավորված ետ է կանգնում*): Չիմանամ՝ իրենք են, թե չեն...

ՏՂԱՄԱՐԴ - Աչքերդ ուր են... Հետդ չեն:

ԿԻՆ - Որ հետս են՝ ինչ... Կարող է՝ միրած են:

ՏՂԱՄԱՐԴ - Միրածը մերդ է, աչքերիս առաջից չի հեռանում:

ԿԻՆ - Մորս հանգիստ թող...

ՏՂԱՄԱՐԴ - Ինքը ինձ չի թողնում: Եվային շոշափիր, Եվային թույլ եմ տալիս...

ԿԻՆ - Չախս, թե աջ կողմից:

ՏՂԱՄԱՐԴ - Ինչ իմանամ՝ ինչն ես շոշափելու:

Տղամարդն ու կինը ավելի են մոտենում Աղամին և Եվային, նրանք վախեցած ընկրկում են, ձեռքերը առաջ պարզած պատրաստվում են պաշտպանվել: Երգչախումբը նորից երգում է, տղամարդն ու կինը զարմացած կանգ են առում:

ԱԴԱՄ - (*անհանգիստ*): Հոգիները էլի երգեցին:

ՏՂԱՄԱՐԴ - Ո՞ւմ հոգիները:

ԱԴԱՄ - Անմեղների:

ՏՂԱՄԱՐԴ - Լսեցիր, ասաց՝ անմեղների: Այնպես որ, մորդ հոգին այստեղ չես գտնի:

ԿԻՆ - Էլի...

ՏՂԱՄԱՐԴ - Ուրեմն՝ անմեղ հոգիները... Տեսնես դրանց տերերը

Երկրի վրա ինչքան են իրենց ամեն ինչից զրկել: Մերդ իրեն զրկած չի լինի: Արա համար են զրկել: Գլուխներս արդուկում են՝ մի շնանար, մի գողանար, մի վայելիր, աղոթիր-մի աղոթիր... Արա համար: Որ ինչ... Որ հոգիդ դրախտում երգի: (*Ծիծաղում է:*) Դժոխքում էլ թող տխուր բաներ երգեն:

ԿԻՆ - Ասում են՝ դժոխքը փակել են:

ՏՂԱՄԱՐԴ - Բա ինչ կանեն: Ոչ մեկը չի ուզում: Որ պահանջարկ չկա, պահեն՝ ինչ անեն:

ԿԻՆ - Հիմա ձեռք չտամ Եվային:

ՏՂԱՄԱՐԴ - Ձեռքերդ լվացել ես:

ԵՎԱ - Անվա ձեռքերով ինձ չդիպչես:

ԿԻՆ - Չէ, հա... Ծնվածդ օրից երևի բաղնիքն էլ, չգիտես, ինչ է: Ոչ բաղնիք, ոչ սառնա... Կոտրատվելդ չհասկացա:

ՏՂԱՄԱՐԴ - Բացիլ-մացիլից է վախենում:

ԿԻՆ - Իմ փոխարեն ինքն է վախենում:

ՏՂԱՄԱՐԴ - Դու էլ քեզ տեսնեիր՝ կվախենայիր... Չէ, դու չէիր վախենա: Մորդ տեսնելուց հետո... Եվան մայր էլ չի տեսել:

ԿԻՆ - Այս անգամ ներում եմ, ու մի պայմանով:

ՏՂԱՄԱՐԴ - Ելի ինչ պայման:

ԿԻՆ - Եվայի շորից եմ ուզում:

ՏՂԱՄԱՐԴ - Եղ թզի տերևները:

ԿԻՆ - Ուզում եմ:

ՏՂԱՄԱՐԴ - Ուզելու բան գտար... Ավելի լավ է թուզ առնեմ՝ ուտես: (*Հոհոում է:*)

ԾՈՒՑԾ մքնում է, ամպրոպի որոտ խացնում է երգչախմբի ձայնը: Որտոք ուժգնանում է: Զգացվում է՝ տեղատարափ է լինելու:

ԿԻՆ - Երկինքը ինչի կատաղեց...

ՏՂԱՄԱՐԴ - Մորդ հիշեց: (*Լորից է հոհոում:*)

ԿԻՆ - Աղջիկս, աղջիկս կթրջվի: Լիլիթ, Լիլիթ...

ԼԻԼԻԹ - (վազելով մոտենում է՝ դաշտային ծաղիկների փունջը ձեռքին): Ինչ է, մամ:

ԿԻՆ - Ո՞ւր էիր:

ԼԻԼԻԹ - Այնքան շատ ծաղիկ կա: (*Ուշադիր նայում է Աղամին ու Եվային:*) Եվան է...

ԿԻՆ - Ոնց որ...

ԼԻԼԻԹ - Մորաքույր Եվա:

ԿԻՆ - Մորաքույր Եվայի համար արտասանիր, թող տեսնի՝ ինչ խելոք աղջիկ ունեմ:

ԼԻԼԻԹ - (ձգվում է, հանդիսավոր տեսք ընդունում):

Ծիտիկ, ծիտիկ, այ ծիտիկ,
Այ սիրունիկ, պստպատիկ,
Ինձ համար թե երգ ասես,
Լիքը հատիկ կտամ քեզ...
Քեզ շատ շորեր կկարեմ,
Ու... ու... ու...

(Չի կարողանում շարունակությունը հիշել, հուսահատ ձեռքը թափ է տալիս:) Ու... Էլ չգիտեմ:

ԵՎԱ - Աղամ... Ես քոյր ունեմ:
ԱԴԱՄ - Չեմ տեսել ու չեմ լսել:
ԵՎԱ - Փոքրիկն ինձ մորաքոյր անվանեց:
ԱԴԱՄ - Երևի ինքը տեսել է:

Ամպրոպը մոլեգնում է, կայծակ-
ները խաչփում են երկնքում:

ՏՂԱՄԱՐԴ - Սրանց երկինքը կա-
տաղած շնից կատաղած է:

ԿԻՆ - (Չոյում է աղջկա զլուխը): Մի
հուզվիր: Ուրիշ անգամ կարտա-
սանես:

ՏՂԱՄԱՐԴ - Հետո, հետո... Ծտա-
պենք, անձրևի բերանը չընկ-
նենք:

ԿԻՆ - Իբր, ինչ տեսանք, որ...

ՏՂԱՄԱՐԴ - Ինչ ես ուզում տեսնել...
Սրանց կարկ՞ութը: Բա որ ձմերու-
կի չափ եղավ: (*Աղամին ու Եվա-
յին.*) Դուք Էլ փախեք:

Երեքով վազելով հեռանում են:
Աղամն ու Եվան զարմացած
հետևում են նրանց: Օրն ինչպես
հանկարծակի մքնել էր, նույնքան
հանկարծակի լուսավորվում է: Ե-
վան ուշադիր նայում է Աղամին:

ԱԴԱՄ - Վրաս ինչ ես փնտրում:

ԵՎԱ - Կարոտեցի... Օտարներից
հետո սիրելիին ավելի ես կարո-
տում: Գրկիր ինձ:

ԱԴԱՄ - Նրանք այնքան էլ չեն հե-
ռացել:

ԵՎԱ - Միևնույն է, գրկիր... Միայն

քո գրկում եմ ինձ ապահով զգում:
ԱԴԱՄ - Այս ժամին առաջին ան-
գամ ես խնդրում գրկել: (Գրկում
է:)

Եվան փաթաթվում է Աղամին,
սկսում է նրա կողերը շոշափել:

ԱԴԱՄ - Երբեք այսպես չէիր փա-
թաթվել...

ԵՎԱ - (Չարունակելով Աղամի կողե-
րը շոշափել): Շունչս տեղը եկավ:

ԱԴԱՄ - Այսքան տարօրինակ չէիր
եղել:

ԵՎԱ - Տեղում են: Միրտս էլ տեղն
ընկավ, որ բոլորը տեղում են:

ԱԴԱՄ - Ինչն է տեղում:

ԵՎԱ - Կողերդ: Կողերդ էի հաշվում:
Մի պակաս կողը ես եմ, մյուսնե-
րը տեղում էին... (*Աղամի գրկից
ազատվելով՝ խոր շունչ է քաշում:*)

Մարմինս թուլացավ, երբ լսեցի,
որ ինձանից բացի կարող է ու-
րիշն էլ լինել...

ԱԴԱՄ - (Եվայի մազերը շոյելով):
Զկա և չի կարող լինել:

ԵՎԱ - Խոստացիր, որ միշտ ես եմ
լինելու, միայն ես: Միշտ, Աղամ,
միշտ ես եմ լինելու...

ԱԴԱՄ - Իմ միակը, անկրկնելին,
հավերժականը...

ԵՎԱ - Ասա, Էլի ասա, ուրիշ քնքա-
լից բառեր էլ գտիր:

ԱԴԱՄ - Ասում եմ, շատ եմ ասում՝

իմ մեջ, սրտիս խորքում: Առանց
քեզ ինչ էի անելու...

ԵՎԱ - Իմ ներսում էլ բառերը ծա-
ղիկների պես գունավոր են,
Աղամ, թիթեռների պես վետվե-
տուն...

ԱԴԱՄ - Վախը, Եվա, վախի մասին
մի մոռացիր: Վախը բառերին էլ է
հետապնդում, Եվա, բառերին էլ
հարկավոր պաշտպանել: Մեզ
նոր թաքստոց է պետք, ավելի
անտեսանելի, ավելի ապահով...
Որ կարողանանք մեզ ու բառերին
պաշտպանել:

ԵՎԱ - Գտել եմ, պաշտպանից
պաշտպանվելու համար եմ գտել:
Եթե միայն հավանես:

ԱԴԱՄ - Քո ամեն ինչն է սիրելի,
նույնիսկ քո թաքստոցը: (Նորից
գրկում է Եվային:) Գնանք, ցույց
տուր:

Գրկախառնված հեռանում են:

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

Տեսարանը նույնն է: Ոփրմիկ ե-
րաժշտություն: Արամն ու Եվան
պարուն են հնդկացիների ծանրոք
պարային շարժումներով, միայն
քեզ նրանց շարժումներն առավել
ոփրմիկ են: Երբեմն գրկախառն-
վում են, ապա իրարից հեռանա-
լով՝ շարունակում են պարը:
Եվան մի պահ սկսում է օճի պես
գալարվել: Աղամն սկսում է ռեայ
երգել:

ԱԴԱՄ - Սա դրախտն է,
ես Աղամն եմ ու դու՛ Եվան,

Գալարվում ես խելագարված
օճի նման,

ՄԵՐ ԹԱՅԵՐԸ ասես լրացի
եկվորյակներ՝

Տանում են մեր մարմինները
դեպի եթեր:

ՍԱ ԴՐԱԽՏՆ Է, ես Աղամն եմ,
Եվան ես դու,

Ճնշում է մեզ դատապարտյալ
մեղքը մարդու,

Վախն ու հոգաը հետևում են
ամենուրեք,

Ասես նրանց հալածական
որսը լինենք:

ՍԱ ԴՐԱԽՏՆ Է, ես Աղամն եմ,
դու է՛ Եվան,

Ովքեր, ինչո՞ւ, ո՞ր ծամկեքով
ու ե՞րբ եկան...

Ստվերները բանտել են մեզ
ծաղերի պես,

Մոռացել ես կարծես
դու ինձ ու ես էլ՝ քեզ...

ԵՎԱ - (պարը չընդատելով, շարու-
նակում է):

Ինչ էլ լինի, ինչ պատահի,

Մոռանալը ո՞րն է, Աղամ,

Ինչ էլ լինի, ինչ պատահի՝

Կանչիր, կգամ,

Կանչիր, կգամ,

Կանչիր, կգամ...

Ծափահարություններ են հնչում,
բացականչություններ՝ բռավոն,

բռավո... Ծափահարելը չընդհատելով հայտնվում են զբոսաշրջկ տղամարդն ու կինը:

ՏՂԱՄԱՐԴ - Բոավո, բռավո...

ԿԻՆ - Հրաշալի է, բռավո...

Աղամն ու Եվան պարն ընդհատում են, զարմացած, շփոթված նրանց են նայում:

ԱԴԱՄ - Էլի նրանք...

ՏՂԱՄԱՐԴ - Զձանաչեցիք: Եղ ՞ննց... ՄԵզանից բացի էլի հարազատ ունեք: Կար Աղամ ու Եվա, ավելացան Սենեքերիմն ու Զառնիշանը, կարելի է ասել՝ առաջին այլմոլորակայինները: Իմիշիայլոց, առաջիններին չեն մոռանում: (Ծիծաղում է:)

ԿԻՆ - Ինչ կիրք, ինչ հուզումներ...
Բռավո...

ԱԴԱՄ - ՄԵկն էլ կար, անունը չիմացանք...

ՏՂԱՄԱՐԴ - Անունը որ չի ասել, ուրեմն՝ չի եղել: (Ծիծաղում է:)

ԱԴԱՄ - Բայց հոտը նույն էր:

ՏՂԱՄԱՐԴ - Ծաղիկ ենք, որ հոտ ես բաշում: Ծուրջող նայիր Աղամ, շուրջող նայիր... Դրախտը ջրի ձամփա է դարձել, շուտով ասեղ գցելու տեղ չի լինի: Հոտը ո՞րն է... Գրապանների հոտը, կարևոր գրապանների հոտն է: Առնում են, ծախում են... Ես էլ եմ առել, մեծ

հոդամաս է՝ մի քանի հեկտար:

ԿԻՆ - Տասը հեկտար:

ՏՂԱՄԱՐԴ - Հորս երազանքն էր՝ դրախտում հող ունենալ: Հոգու հետ հաշտ չէր, վախենում էր՝ դժոխք էլ չընկնի: Նրա մահից առաջ խոստացա գերեզմանը դրախտ տանել: Բայց նրա ժամանակ դրախտն էլ գրին քարտ շահելու պես էր...

ԱԴԱՄ - Ինչ քարտ, ինչ առնել, ինչ ծախել...

ՏՂԱՄԱՐԴ - Խելքներդ ծառ ու ծաղկին եք տվել: Դրախտը սեփականաշնորհել են, Աղամ, դրախտը էլ ծերը չի: Մեծ բիզնես է... Կոպեկներով առած հողերը միլիոններով են վաճառում: Ուժս տասը հեկտարի հերիքեց:

ԱԴԱՄ - Հարյուրը ինչ էիր անելու:

ՏՂԱՄԱՐԴ - Եղ ինչ ասելու բան էր: Աշխարհի կոհվները հողի համար են, Աղամ, հողը շատ չի լինում: Իհարկե, գնահատելի ցուցանմուշ ես, ներիր, ուզում էի պատմական արժեք ասել, բայց զարմանալուց բացի բան չգիտես:

ԿԻՆ - Զարմանալը Աղամին սազում է:

ՏՂԱՄԱՐԴ - Զփորձես կոտրատվել:

ԿԻՆ - Աղամի մհուտ:

ՏՂԱՄԱՐԴ - Աղամը տղամարդ չի:

ԿԻՆ - Ասում էիր՝ ցուցանմուշ է:

ՏՂԱՄԱՐԴ - Պատմական արժեքը չլսեցիր:

ԵՎԱ - Սեփականաշնորհել են, վա-

ծառել են, բաժանել են... Մեզ
հարցրել են:

ՏՂԱՄԱՐԴ - Ո՞վ էր հարցնելու:

ԵՎԱ - Վաճառողը, բաժանողը:

ՏՂԱՄԱՐԴ - Աշխարհի հզորները...

Առանց հարցնելու են անում: Առասպելներին ու հեքիաթներին էլ չեն հավատում: Ոչնչի չեն հավատում: Ուզեն դրախտը վերացնել՝ կվերացնեն: Որոշեն դրախտը Մարսի վրա տեղափոխել՝ կտեղափոխեն: Ոնց ուզում, ինչ ուզում՝ անում են: Շուտով արևն էլ կբաժանեն: Մեկին էնքան արև կհասնի, որ խաշվի, մյուսի վրա ընդհանրապես արև չի ընկնի:

ԿԻՆ - Խոնավությունից զգվում եմ, այստեղ չորս կողմից արևակող է...

ՏՂԱՄԱՐԴ - Չհաշված սրանց ամպրոպն ու կատաղած որոտը:

ԱԴԱՄ - (*թիշ զայրացած*): Գալիս եք-գնում եք, առնում եք-ծախում եք, քանդում եք-շինում եք...

ՏՂԱՄԱՐԴ - Ադամ, ստիպեցիր՝ հիմա էլ ես զարմանամ: Ուժը չի հարցնում, ուժն ինքն է որոշում՝ ինչը ոնց անել:

ԱԴԱՄ - Ուժը մարդ չի...

ՏՂԱՄԱՐԴ - Մարդու մեջ է, բայց մարդուց ավելի հզոր է: Շուտով էդ ուժը քո վրա էլ կզգաս ու միամիտ հարցեր չես տա:

ԵՎԱ - Երկիր, Լուսին, Մարս... Ի՞նչ եք անելու:

ԿԻՆ - Խնձոր ենք ածեցնելու: Ասում են՝ դրախտի խնձորները համով

են: Օգնում են երկար ապրել: Ոնց դուք...

ՏՂԱՄԱՐԴ - Էլի մեջ ընկա՞ր...

ԿԻՆ - Բերանս չփակնս: Փակ ամանը որ եռաց ու միջինը թափվեց...

ՏՂԱՄԱՐԴ - Դրախտի հերը կանիծվի:

ԿԻՆ - Ուրեմն, բերանիս կափարիչ չդնես:

ՏՂԱՄԱՐԴ - Ասելիքս էլ մոռացա:

ԿԻՆ - Հիշեցնեմ, թե՞ն կիհշես:

ՏՂԱՄԱՐԴ - Հա, գիշերային ակումբ եմ ուզում բացել: Անունն է՝ Ադամ ու Եվա: Հնչում է, չէ, Ադամ ու Եվա... Ավելի լավ անուն չէի գտնի:

ԵՎԱ - Հարցո՞վ ես, ուզո՞ւմ ենք, որ քո գիշերային, թե ցերեկային ակումբը մեր անունով լինի:

ՏՂԱՄԱՐԴ - Կհասցնեմ, այստեղ օրերը սովորականից երկար են:

Հայտնվում է ՄԻՊ-ը:

ՊԱՇՏՊԱՆ - Մի րոպե, մի վայրկյան... Լիազորված եմ հայտարարելու, որ Եվայի հարցադրումը օրինական է: Հեղինակային իրավունքի խնդիր կա, օրենք կա...

ՏՂԱՄԱՐԴ - (*հեգնանքով*): Իբր, ի՞նչ ասացիր: Դրախտում չենք, այ ընկեր, դրախտում ինչ օրենք, ի՞նչ սահմանադրություն, ինչ իրավունք... Լուսնից ես իջել: Ո՞վ ես, ինչ ես... Անպոչ գդալի պես մեջ ընկնար:

ՊԱՇՏՊԱՆ - Իրավունքների պաշտ-

պանը ամենուր պարտավոր է իրավունքները պաշտպանել: Դրախտում էլ, Լուսնի, Մարսի վրա էլ...

ՏՂԱՄԱՐԴ - Քեֆդ ոնց ուզի՝ ֆոռում ես, էի... Իրավունքներ ես հնարում ու քո հնարածն է՝ աչքերդ արնակոխ, պաշտպանում ես:

ՊԱՇՏՈԱՆ - Իրավունքը իրավունք է: Լիազորված եմ հայտարարելու, որ նրանք իրաժարվելու իրավունք ունեն: Նրանց անունը շահարկելուց առաջ պարտավոր էիր հարցնել: Կանայք կան, թե չէ հեգնանքիդ համար կստիպեի շալվարդ իջեցնես:

ՏՂԱՄԱՐԴ - Ինչ ես ուզում տեսնել: (Ծիծաղում է:)

ՊԱՇՏՈԱՆ - Պոչդ:

ՏՂԱՄԱՐԴ - Լսիր, պաշտպան ես, թե կիսապաշտպան... Թքել եմ էն պաշտպանի վրա, որ ինքը պաշտպանված չի: Ուրիշինը իջեցնելու փոխարեն քոնը վերև քաշիր: Հիմա ոտքերդ քարկապ կօցեմ:

ԿԻՆ - Իզուր էլ հետը վիճում ես: Արհամարհիր, պրծիր: Հագ ու կապից չի երևում՝ նախնադարից է:

ՏՂԱՄԱՐԴ - Թեկուզ քարե դարից լինի... Առաջը երկու կոպեկ օցեմ, չի էլ իիշի՝ կնիկ կա, շալվարը կիշեցնի, մի բան էլ ավելի: (Գրպանից փող է հանում, մեկնում է պաշտպանին:) Վերցրու, որ չնավսես:

ՊԱՇՏՈԱՆ - (վանելով): Զհամարձակվես...

ՏՂԱՄԱՐԴ - (փողը գրպանը դնելով): Քեզ համար եմ ասում: Երեխեք մակարոն ուտելով ուտել են: Ուզողները շատ են: Եվային ու Ադամին գործ եմ ուզում առաջարկել:

ԱԴԱՄ - ՄԵ՞զ...

ՏՂԱՄԱՐԴ - Քեզ էլ, Եվային էլ:

ԿԻՆ - Լավ առաջարկ է, համաձայնվեք:

ԵՎԱ - Ինչին:

ՏՂԱՄԱՐԴ - (ցույց է տալիս պաշտպանին): Ես պաշտպանի, թե կիսապաշտպանի հեռանալուց հետո կբացատրեմ: (Զարմացած:) Կարո՞ղ է՝ հարձակվող ես: (Ծիծաղում է:) Չէ, հարձակվողի համար մեջդ շունչ չկա:

ՊԱՇՏՈԱՆ - Լիազորված եմ հայտարարելու...

ՏՂԱՄԱՐԴ - Որ հեռանում ես:

ՊԱՇՏՈԱՆ - Որ անհարգալից վերաբերմունքը չեմ ներելու:

ՏՂԱՄԱՐԴ - Կարո՞ղ ես հեռվից չներել: (Ծիծաղում է:) Ասենք, չես խանգարում: Հաշվենք, ես ծառերից մեկն էլ դու ես: Են էլ՝ չորացած: Հիմա՝ առաջարկս: Ուզում եմ՝ Աղամն ու Եվան իմ գիշերային ակումբում աշխատեն: Եթե համաձայն են, իհարկե...

ԵՎԱ - Ինչ աշխատել:

ՏՂԱՄԱՐԴ - Պարել, ինչպես քիչ առաջ ինչ էիր պարում... Շշմելու է-

ֆեկտ կլինի: Ուրեմն՝ դրսում Ա-դամը դիմավորում է հյուրերին: Հաճախորդներ շատ կլինեն, այնքան շատ, որ հնարավոր է՝ ես էլ դիմավորեմ: Ո՞վ չի ուզի տեսնել առասպելական Եվային, չի տենչա, չի երազի...»

ԿԻՆ - Կիսախավար, գինի, շոմպայն, իրենց կանացից ծանձրացած, գինովցած տղամարդիկ: Հարթակին Եվան է՝ ամենաառաջինը, ամենախսկականը: Տղամարդիկ չեն դիմանա, կուզենան կողքին լինել, Ադամ լինել...

ՊԱԾՏՊԱՆ - Հանցագործություն է:
ԵՎԱ - Ինձ իմ Ադամն էլ հերիք է...»

Մյուսներին քեզ վերցրու:

ՏՂԱՄԱՐԴ - Ադամին ձեռքիցդ չառան: Կնոջս էլ ուրիշը պետք չէ: Անոնս Սենեքերիմ է, բայց հարյուր Ադամ եմ մարսել:

ՊԱԾՏՊԱՆ - Հանցագործություն է...
ՏՂԱՄԱՐԴ - Այ անպաշտպան պաշտպան, այ փլավի մնացորդ, դեռ չես չքվել:

ՊԱԾՏՊԱՆ - Դրախտը անառականց սարքելը հանցագործություն է: Դրախտը տարածք չէ, դրախտը... դրախտ է, զսպող ուժ է: Առանց դրախտի հնարավոր չէ անօրինությունները զսպել: Եթե դրախտը չլինի... Եթե մտածեն, որ դրախտը չկա, դրախտում չեն լինելու՝ գազանների կվերածվեն: Հանցագործություն է...»

Երգչախումբը երգում է: Բայց երգի մեջ հնչում են կեղծ նոտաներ, բաղաձայն հնչյուններ, որոնք ավելի տիրապետող են դառնում: Մի պահ երգչախումբը լուս է, սակայն կեղծ և բաղաձայն նոտաները շարունակում են հնչել:

ՏՂԱՄԱՐԴ - Սրանց ինչ եղավ:

ԿԻՆ - Ականջներս խցանվեցին:

ՏՂԱՄԱՐԴ - Պաշտպանի դալմաղալից են գժվել:

ԵՎԱ - Անմեղը մեղավորի հետ չի կարող նոյն երգը երգել:

ՊԱԾՏՊԱՆ - Այս գործն այսպես չի կարելի թողնել:

Կրակոցներ են հնչում: Պաշտպանը մի պահ ցնցվում է, դեմքը ծամածոնելով, օրորվելով ըմկմում է: Լոռություն է տիրում: Մնացածները զարմացած նայում են ընկած պաշտպանին, չհասկանալով՝ ինչ կատարվեց: Առաջինը տղամարդն է սրափիվում, մոտենում է ընկած պաշտպանին, ուշադիր զննում է:

ՏՂԱՄԱՐԴ - Մեռել է... Հոգու բախտը բերեց, միանգամից դրախտ ընկավ:

ԿԻՆ - Մեռել է:

ՏՂԱՄԱՐԴ - Ամեն ինչ հարամեց:

ԵՎԱ - (զգուշորեն մոտենում, կունում է նրա վրա): Մեռել է... Չի շնչում... Ադամ, սա՞ է մահը:

ԱԴԱՄ - Երկի:

ԵՎԱ - (*ցնցում է պաշտպանին, հետո դիմում տղամարդուն*): Օգնիր, թող բարձրանա:

ՏՂԱՄԱՐԴ - Մեռածին ինչքան ուզում ես օգնիր...

Կրկին երկինքը մքնում է, կայծակն ու ամպրոպը շանթահարում են երկինքը:

ԿԻՆ - Ելի երկինքը գժվեց:

ՏՂԱՄԱՐԴ - Գնացինք, շառ ու փորձանքից հեռու: Պարզվում է՝ դրախտում էլ են կրակում: (*Աղամին ու Եվային.*) Առաջարկիս մասին մտածեք: Կնիկ, շարժվիր: Դրախտը երկրից էր քաղցր, իրականում մի երկիր էլ սա է:

Ծոտապ հեռանում են:

ԱԴԱՄ - Մենք էլ հեռանանք:

ԵՎԱ - (*ցոյց տալով պաշտպանին*): Բա ի՞նքը...

ԱԴԱՄ - Զգիտեմ՝ մեռածին ինչ են անում:

ԵՎԱ - Ադամ...

ԱԴԱՄ - Գուցե գոլորշիանա...

ԵՎԱ - Ադամ...

ԱԴԱՄ - Զգիտեմ, Եվա, չգիտեմ՝ ինչ անել...

ԵՎԱ - Մահը նրա մեջ չէ, Ադամ: Մարմինն ընկած է, բայց մահը մարմնից դրուս է եկել: Իմ առջև է, չի թողնում քեզ մոտենալ:

ԱԴԱՄ - Հեռանալ է պետք, Եվա, քանի դեռ մեր մեջ չի հայտնվել:

Որոտն ու ամպրոպն ուժգնանում են, մքնում է: Խավարի մեջ լսվում է Եվայի ձայնը՝ «*Չե՞ն ուզում, չե՞ն ուզում...*»:

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՉՈՐԴ

Նույն տեսարանը, սակայն շորջողորը ցանկապատ է: Ադամը զարմացած նայում է, մոտենում է, շոշափում:

ԱԴԱՄ - Ցանկապատ... ինչո՞ւ... Ո՞ւմ վրա ենք հարձակվել կամ հարձակվելու: (*Ես ու առաջ է քայլում, ցանկապատը ցնցում:*) Ամուր են, այնո՞ւ երեկ չկային...

ԵՎԱ - (*վազելով հայտնվում է*): Ադամ, Ադամ...

ԱԴԱՄ - (*գրելով փորձում է հանգստացնել*): Եվա, Եվա... Մազերդ գզգզվել են, աչքերդ՝ մշուշվել...

ԵՎԱ - Վախը, Ադամ, վախը... Զանցերով է: Լսո՞ւմ ես, ներսս ոնց է չանգոռում:

ԱԴԱՄ - Ինչ է եղել:

ԵՎԱ - (*տեսնելով ցանկապատը՝ ավելի տագնապած*): Այստեղ էլ են ցանկապատել: Ինչ է լինելու: Դրախտը լրիկ ցանկապատել են... Սարսափելի է, Ադամ: Ցանկապատը երախ չունի, բայց գաղանի պես մոնչում է: Աչքեր չունի, բայց հայացքով այրում է: Ոտքեր չունի, բայց ուր գնաս՝ ետևիցդ գալիս է: (*Դադար:*) Ծառերը, Ա-

դամ, ծառերը... Ծառերը կտրում ու ցանկապատում են: Ծառերը չեն էլ հասցնում մահանալ: Գետնին ձկների պես թպրտում են: Կտրողները... Աղամ, մորեխսից շատ են, ամեն գույնի՝ սև, կարմիր, դեղին...

ԱԴԱՄ - Հանգստացիր, Եվա, խնդրում եմ... Վախն ամեն ինչ խոշորացնում է, ամեն ինչ բազմապատկում է: Դեռ վերջը չէ, Եվա: Դեռ պետք չէ հուսահատվել...

ԵՎԱ - Գուցե վերջը չէ, բայց վերջի պես է: Քեզ էլ նախկինի պես չեմ կարողանում մոտենալ: Վերջը չի թողնում, վախը չի թողնում, ծառերի ընկճված հայացքները...

ԱԴԱՄ - Քեզ մոտենալու ուժը կգտնեմ, իմ ուժը դեռ չեն ցանկապատել:

ԵՎԱ - Մեր ամեն ինչն են խլել ու շարունակում են խլել:

ԱԴԱՄ - Մեր կյանքը դեռ մերն է:

ԵՎԱ - Աղամ, ուզում եմ կրկնես, որ մեր կյանքը դեռ մերն է: Էլի ասա, անընդիատ ասա, որ մեր կյանքը մերն է: (Դադար:) Բայց որտեղից գիտես, որ մերն է ու արդեն նրանցը չէ: Ուզում էի ծառերին պաշտպանել, չէին լսում, միայն ծիծաղում էին: Սեփականության իրավունքի վկայական էին ուզում ու ծիծաղում էին: Վկայականն ի՞նչ է, Աղամ, որ այդքան ծիծաղելի է:

ԱԴԱՄ - Հարցնեիր...

ԵՎԱ - Հարցրի, ավելի բարձր ծիծաղեցին: Ասում էին՝ հեքիաթների դարը վերջացել է:

ԱԴԱՄ - Նրանց համար է վերջացել, բայց մեր հեքիաթը շարունակվում է, մեր հեքիաթը մեր մեջ է: Նրանք իրենց հեքիաթների համար դեռ կզգան, շատ կզգան, որ կորցրել են:

ԵՎԱ - Երգչախումբն էլ չի երգում: Ոնց որ ուրիշ դրախտ են գտել:

ԱԴԱՄ - Անմեղ հոգիները միշտ էլ իրենց դրախտը կգտնեն:

ԵՎԱ - Կուզենայի՝ մեզ էլ կանչեն, Ադամ:

ԱԴԱՄ - Կկանչեն, կկարոտեն ու կկանչեն:

ԵՎԱ - Երբեք ինձ այսքան թոյլ չէի զգացել: Պաշտպանվելու ձևն էլ չգիտեմ:

ԱԴԱՄ - Ուրիշի չարությունը թուլացնում է: Չարությունը գազաններին էլ է խեղճացնում:

ԵՎԱ - Գազանը որս է, որս չեմ ուզում լինել:

ԱԴԱՄ - Հացադուլ կհայտարարենք:

ԵՎԱ - Այդ մեկը մի արա, գիտես, որ նյարդայնանալիս ավելի եմ ուզում ուտել:

ԱԴԱՄ - Կարևորը չհաշտվելն է, կարևորը բողոքելն է: (Նստում է:) Նստիր, կողքիս նստիր:

ԵՎԱ - Նստելուց ինչ օգուտ:

ԱԴԱՄ - Նստացույցն էլ բողոք է:

ԵՎԱ - (Նստում է Աղամի կողքը):

Ինչքան ենք նստելու: Կիասկանա՞ն՝ ինչու ենք նստել:

ԱԴԱՄ - Ինքներս կհուշենք:

Հայտնվում է տղամարդը:

ՏՂԱՄԱՐԴ - (տեսնելով նրանց նստած, զարմացած): Չեղա՞վ, սառը գետնին նստել եք, իագներդ էլ բան չկա:

ԵՎԱ - Լստացոյց է:

ՏՂԱՄԱՐԴ - Լստածներին ո՞վ է լսել, որ ձեզ լսեն: Հիվանդացաք, ձեր տերն ո՞վ է:

ԱԴԱՄ - Բողոքում ենք:

ՏՂԱՄԱՐԴ - Ո՞ւ դեմ:

ԱԴԱՄ - Ձեր և ցանկապատի...

ՏՂԱՄԱՐԴ - Զգուշացեք, հողին երկար նստելուց արմատ չտաք: (Ծիծաղում է:)

ԵՎԱ - Մեր արմատներն արդեն կտրել եք:

ՏՂԱՄԱՐԴ - Բարձրացեք, բարձրացեք... Ափսոս եք՝ գետնին մնաք: Հուտով եմ, առաջարկս չեք մոռացել: Առաջարկս ուժի մեջ է: Հիվանդացաք՝ ինչի՞ս եք պետք:

ԱԴԱՄ - Մենք ձերը չենք:

ՏՂԱՄԱՐԴ - Կլինեք, ո՞ւ եք գնալու:

Հայտնվում է կիճը:

ԿԻՆ - Համաձայնվեցին:

ՏՂԱՄԱՐԴ - Զայտի երևայիր... Ձեզ տեսնողը դժվար համաձայնվի:

ԿԻՆ - Սրանց սառը գետնին ինչո՞ւ ես նստացրել:

ՏՂԱՄԱՐԴ - Մուննաթ զգաս, գիրկս չեմ նստացրել: Հարցրու՝ ինչո՞ւ են նստել:

ԵՎԱ - Բողոքում ենք:

ԿԻՆ - Գիտե՞ն, որ իրենց նստած տեղն էլ է մերը:

ՏՂԱՄԱՐԴ - Կարևոր չի:

ԿԻՆ - Ո՞նց՝ չի: Էդ էլ մեր լավությունը. գործ առաջարկենք, տեղ տանք, կերակրենք... Ինչի՞ց եք բողոքում: Որ ինչ... Ոտքներդ չենք ընկել: Ուրիշները խնդրում են:

ԵՎԱ - Բա մեզանից ի՞նչ եք ուզում:

ՏՂԱՄԱՐԴ - Ինձ ծանաչողն էդ հարցը չէր տա: Խիղճը, խղճի ձեռը կրակն եմ ընկել:

ԱԴԱՄ - Միևնույն է, բողոքում ենք:

ՏՂԱՄԱՐԴ - Լավ էլ անում եք, իիմա բողոքելը նորածն է: Ով ասես՝ բողոքում է: Ես էլ եմ բողոքում: Բողոքողներից եմ բողոքում: Բայց ի՞նչ... Բողոքը, ոնց որ աղը՝ ջրի մեջ: Լուծվեց, ու վերց: (Ծիծաղում է:) Լավ էլ հանգավորեցի...

ԵՎԱ - Տիրոջից վախեցեք:

ՏՂԱՄԱՐԴ - Մենք էլ Տիրոջ ստեղծածն ենք:

ԱԴԱՄ - Կասկածելի է:

ՏՂԱՄԱՐԴ - Կասկածը, Աղամ, որդի պես է... Ազատվիր, ներսդ չլափի:

ԵՎԱ - Հաջորդը հացադուն է:

ՏՂԱՄԱՐԴ - Հացադուլը ոչինչ, մի

քանի օր չեք ուտի, հետո խելագարված ուտելիք կմուրաք:

ԵՎԱ - Մեռնենք է՝ ձեզ չենք դիմի:
ԱԴԱՄ - Գազաններն ավելի բարի են:

ՏՂԱՄԱՐԴ - Բարի են, որ վերացել են, չկան:

ԱԴԱՄ - Ագահությունն ու չարությունը ձեզ էլ չեն խնայի: Հատուցման ժամը գալու է: (*Կտրուկ ոտքի է կանգնում:*) Մենք դեռ կարող ենք պաշտպանվել: Մեր կյանքը դեռ մերն է: (*Մոտենում է ցանկապատին:*) Հատուցման ժամը գալու է: (*Ակսում է ցնցել ցանկապատը ոտքերով:* Կատաղած:) Գալու է, գալու է, գալու է... (*Ցանկապատից մեկը տապալվում է: Աղամը մեկը մյուսի ետևից շրջում է դրանք:*) Կորչի ցանկապատը... Մահ ցանկապատին...

ՏՂԱՄԱՐԴ - Ափսոս... Չհաջողվեց բարի լինել: Կարող էի ոտքերդ կոտրել, բայց...

ԿԻՆ - Ասում էի՝ հետները գործ չունես:

ՏՂԱՄԱՐԴ - Էլի չունեմ, պատիժը դատարանը կորոշի:

ԱԴԱՄ - (*Վիրօծելով շունչը տեղը բերել:*) Ձեր ուժը ցանկապատն է, նրա ներսում էիք ապահով... Էր ու չկա, տապալվել է: Տապալելու եմ, բոլոր ցանկապատերը ջարդելու եմ: Դուք էլ եք տապալվելու, ձեր

ագահության, ձեր չարության մեջ եք տապալվելու...

ՏՂԱՄԱՐԴ - Դատարանը, դատարանը կորոշի: Լսեցիր, այ պատմության խելագար մնացուկ, գոռողներդ դատարանում կշրունակես: Ասում էին, որ լավություն անողի գլուխը ծակ է...:

ԱԴԱՄ - Գլուխն էլ, աչքն էլ, ստամոքսն էլ... (*Շարունակում է ընկած ցանկապատին հարվածել:* Կինն ու տղամարդը հեռանում են: Եվան գրկում է Աղամին:)

ԵՎԱ - Աղամ, Աղամ, ոտքերդ չվնասես:

ԱԴԱՄ - Ոտքերն ինչ եմ անում, եթե տեղ չկա վագելու:

ԵՎԱ - Սարերը, սարերը դեռ չեն ցանկապատել:

ԱԴԱՄ - (*արդեն հանգստացած:*) Սարերին պիտի կարողանաս հասնել, Եվա, ցանկապատը նրա համար է, որ չհասնես: (*Գլխիկոր հեռանում է, Եվան հետևում է նրան:*)

ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Նոյն տեսարանը: Բեմի ետնամասում սեղան ու աթոռ, ինչպես դատարանում է: Սեղանին փայտեն մուրճ է: Զախս կողմում Եվան և Աղամն են, աջում՝ տղամարդն ու կինը: Երկուստեք չարացած միմյանց են նայում: Հնչում է ձայ-

- ԱԴԱՄ՝** «Ուտքի՛, դատարանն է գալիս»:
- ԱԴԱՄ** - Կարծեմ նստած չէինք:
ՏՂԱՄԱՐԴ - Դեռ կհասցնես նստել:
ՆՈՒՅՆ ԶԱՅՆԸ - Լոռություն:
- ՀԱՏԱՎՈՐ** - Հայտնվում է դատավորը՝ ինչ-որ քրեք ձեռքին: Նատում է, ուշադիր նայում է ներկաներին:
- ԴԱՏԱՎՈՐ** - Փաստաբաններն ուրեն: **ՏՂԱՄԱՐԴ** - Առանց նրանց էլ յոլա կգնանք:
ԴԱՏԱՎՈՐ - (Աղամին): Համաձայն եք:
ԱԴԱՄ - Ոնց ասեք:
ԴԱՏԱՎՈՐ - Կարող եք չհամաձայնել ու դատը հետաձգել:
ԱԴԱՄ - Մեր համաձայնել-չհանաձայնելը կապ չունի: Այլևս չունի: Մեզ չեն հարցրել, երբ դրախտով վաճառել են: Մինչև ձեր գալն այստեղ չեն դատել ու չեն դատվել:
- ԴԱՏԱՎՈՐ** - (Մուրծը խփում է սեղանին): Խնդրում եմ չշեղվել: Զգուշացնում եմ, դրախտում սա իմ առաջին դատավարությունն է և չեմ ուզում՝ շեղումներով լինի: Խնդրում եմ, ամեն ինչ ըստ էության: (Նայում է իր առջև դրված թղթերին:) Ինձ մոտ ձեր տվյալները կիսատ են: Աղամ, ձեր հայրանուն-ազգանունը:
- ԱԴԱՄ** - Չհասկացա՞ք:
ԴԱՏԱՎՈՐ - Հասկանալու ինչ կա...
- Փաստաթղթերը ձիշտ պիտի լրացվեն:
- ԱԴԱՄ** - Տիրոջ անունը գրեք:
ԴԱՏԱՎՈՐ - Անունը...
- ԱԴԱՄ** - Տեր:
ԴԱՏԱՎՈՐ - Ազգանունը:
- ԱԴԱՄ** - Տեր:
ԴԱՏԱՎՈՐ - Տերտեր է եղել...
- ԱԴԱՄ** - Անհարգալից է:
ԴԱՏԱՎՈՐ - Ձեր մայրն ովկ է:
ԱԴԱՄ - Ձեմ տեսել:
- ԴԱՏԱՎՈՐ** - Լրացնում ենք՝ միակողմանի ծնողագորկ:
- ԱԴԱՄ** - Ոնց կասեք:
ԴԱՏԱՎՈՐ - (Եվային): Ձեր հայրանունը:
- ԵՎԱ** - Տեր:
ԴԱՏԱՎՈՐ - Ազգանունը:
- ԵՎԱ** - Տեր:
ԴԱՏԱՎՈՐ - Ձեր մայրն ովկ է:
ԵՎԱ - Աղամի կողոսկրը:
ԴԱՏԱՎՈՐ - Լրացնենք՝ երկկողմանի ծնողագորկ:
- ԿԻՆ** - Բոմծ են, էլի:
- ԴԱՏԱՎՈՐ** - (Մուրծով խփում է): Լոել: Դատը լեզվակովի չվերածել:
- ԿԻՆ** - Էլ չեմ խոսի:
- ԴԱՏԱՎՈՐ** - Աղամ և Եվա, հայցվորները բողոքել են, որ ձեր կողմից իրենց սեփականության նկատմամբ ոտնձգություն է կատարվել: Կարող եք բացատրել՝ ինչու:
- ԱԴԱՄ** - Ընդամենը ցանկապատնեմ կոտրել:

ԴԱՏԱՎՈՐ - Ուրեմն՝ ընդունում եք
ձեր մեղքը:

ԿԻՆ - Կատաղել, գազան էր դարձել:

ԴԱՏԱՎՈՐ - (մուրծով խփում է): Տի-
կին, խստացաք լոել: Առանց իմ
թուլտվության արգելում եմ ար-
տահայտվել: Ստիպված կլինեմ
դահլիճից դուրս հրավիրել:

ԿԻՆ - Նրանց է պետք քշել՝ ան-
շնորհքներ...

ԴԱՏԱՎՈՐ - (երկու անգամ է խփում
մուրծով): Լոել: Ես եմ որոշում՝
ինչ անել: Եվա, հաստատում եք,
որ Ադամը վնասել է ցանկապա-
տը:

ԵՎԱ - Զգիտեմ՝ ինչ է արել: Մնում է՝
մեր ներսն էլ ցանկապատեն:

ԴԱՏԱՎՈՐ - Հարցիս պատասխա-
նեք, վնասել է, թե՞ չի վնասել:

ԵՎԱ - Փորձել է տարածքը ազատել:

ԴԱՏԱՎՈՐ - Հիմա թող Ադամն ա-
սի՝ ինչու: Ադամ, ինչո՞ւ ես ցան-
կապատը վնասել, եթե դա քոնը
չէր:

ԱԴԱՄ - Եթե թույլ կտաք...

ԴԱՏԱՎՈՐ - Արտահայտվեք:

ԱԴԱՄ - Այստեղ ցանկապատ ու
սահման չեն եղել: Այստեղ ոչ մե-
կը չի ասել՝ սա իմն է, սա քոնն է,
սա՝ նրանը: Այստեղ ապրել ենք՝
չիմանալով, որ կա իմը, քոնը,
նրանը: Երկրից էլ միայն անմեղ
հոգիներն են եկել: Խնդրում եմ
հաշվի առնեք՝ տերերը չէ, միայն
հոգիները: Հիմա նրանց երգչա-
խումբն էլ չի երգում, որովհետև

նրանց էլ են ցանկապատել: Ին-
չո՞ւ, եթե իրենցը չէ, իրենց նախ-
նիներինը չէ:

ՏՂԱՄԱՐԴ - Պարոն դատավոր,
ձեզ մոտ է սեփականության վկա-
յագիրը, ուր նշված է, որ ցանկա-
պատված տարածքն իմ սեփականությունն է: Իմ տարած-
քը կարող եմ ցանկապատել, կա-
րող եմ խոզ ու հավ պահել:
Կազինո սարքել կամ գիշերային
ակումբ:

ԴԱՏԱՎՈՐ - Առանց իմ թուլտվութ-
յան չմիջամտել: Ադամ, կարող ես
շարունակել:

ԵՎԱ - Առաջարկում են ինչ-որ ա-
կումբում պարել: Ինչո՞ւ, եթե
միայն Ադամի համար եմ պարել
և այսուհետ էլ միայն նրա համար
եմ ուզում պարել:

ԿԻՆ - Ո՞վ դիմանա...

ԱԴԱՄ - Իսկապես էլ՝ դժվար է դի-
մանալը:

ՏՂԱՄԱՐԴ - Արդարություն չկա,
արդարություն: Սրանց տանիք ու
գործ ես առաջարկում, փոխարե-
նը ունեցվածքդրդ են ավիրում:

ԱԴԱՄ - Փակ տարածքը խեղդում է,
ձնշում է: Մեր կյանքը շարժումն
չ...

ՏՂԱՄԱՐԴ - Բա իմ ասածն ինչ է:
Պարը շարժում չէ: Ամբողջ օրը
շարժվեք:

ԱԴԱՄ - Փակ տարածքում շարժվե-
լը... Մեզ մեր ազատությունն է
պետք:

ԿԻՆ - Ազատ եք, էլի... Հո ձեզ չենք կապել:

ԱԴԱՄ - Ամենուր ցանկապատ է, ցանկապատը ցանկապատի ետևից, մեկին հաջորդում է մյուսը, ինտո մի ուրիշը, էլի մի ուրիշը... Ուրիշը, էլի ուրիշը, մի ուրիշը, էլի ուրիշը...

ԵՎԱ - Աղամ, Աղամ, ինչ եղավ:

ԿԻՆ - Ցանկապատ է փնտրում, որ ջարդի:

ԴԱՏԱՎՈՐ - (*Խփում է մուրծով*):
Լոռություն: Երևոյթն աննախադեալ է: Բայց որտեղ էլ լինի, դրախտում էլ որոշողը օրենքն է: Կարծես ամեն ինչ պարզ է, ուստի դատարանը հեռանում է որոշում կայացնելու:

ՁԱՅՆԸ - Ոտքի...

Դատավորը հեռանում է:

ՏՂԱՄԱՐԴ - Է, Աղամ, Աղամ, չուզեցիր գործը մարդավարի լուծենք: Մարդանման ես, բայց մարդ չես դարձել: Կատաղելով ինչի՞ հասար:

ԵՎԱ - Կատաղածը դու ես:

ԿԻՆ - Չհամարձակվեն վիրավորել...

ԵՎԱ - Գիրք էլ չեք կարդացել: Կիմանայիք՝ ձեր նախահայրը ով է:

ԿԻՆ - Կարդացել ես, որ մինչև իհմատկլոր ես:

ՏՂԱՄԱՐԴ - Դատավորը կասի՝ ով ով է, ով ումից է: Օրենքն էդ հեքիաթ-մեքիաթները չի սիրում:

ԱԴԱՄ - Պիտի իմանայիք, որ բոլորդ էդ հեքիաթներից եք ծնվել:

ՏՂԱՄԱՐԴ - Երևաց՝ ով ումից ու ինչից է ծնվել:

ՁԱՅՆ - Ոտքի, դատարանն է գալիս:

Գալիս է դատավորը:

ԴԱՏԱՎՈՐ - (*կարդում է*): Նյութական վնասի հատուցման խնդրով դատարան է դիմել Սենեքերիմ Հայդարուդուրյանն առ այն, որ այսինչ օրը, ամսաթիվը նշված չէ, Աղամը, ազգանունը՝ Տերտեր, Հայդարուդուրյանին պատկանող տարածքում, առկա են սեփականության իրավունքի փաստաթերթերը, ոտքով հարվածելով տարածքը շրջապատող ցանկապատին, նյութական վնաս է պատճառել սեփականատիրոջը: Դատավարության ընթացքում մեղադրյալն ընդունել է մեղքը: Հաշվի առնելով, որ հողի նկատմամբ սեփականություն ունեցող անձը կարող է իր տարածքը կառուցապատել, ցանկապատել, շինություն բարձրացնել և այլն, Աղամի արարքը անօրինականություն է սեփականության իրավունքի նկատմամբ: Ելնելով վերոգրյալից և դեկավարվելով գույքի նկատմամբ իրավունքների գույքի նկատմամբ իրավունքների

մասին օրենսգրքի համապատասխան հոդվածներով, դատարանը որոշում է հայցվորի բողոքը բավարարել, վնասի հատուցման չափը հաստատելով մեկ միլիոն դրամ, որը Աղամը, ազգանունը Տերտեր, պարտավոր է հատուցել: Նկատի ունենալով, որ մեղադրյալը չի աշխատում և վճարունակ չէ, հաշվի առնելով, որ նրանց տեսնելու պահանջարկը դեռևս մեծ է, դատարանն Աղամին, ներառյալ նաև Եվային, առաջարկում է դրախտի բացօդյա թանգարանում, մինչև տուգանքի մարելը, ցուցանմուշ աշխատել: Այսքանով դատարանն ավարտում է աշխատանքը: Դատավճիռը բողոքարկման ենթակա չէ: Դատն ավարտված է:

(Մուրճը խփում է սեղանին ու հեռանում է:)

ՏՂԱՄԱՐԴ - (Ճակահարելով): Մեռնեմ օրենքին:

ԵՎԱ - Աղամ, հասկացա՞՞՝ ինչ ասաց:

ԿԻՆ - Բանան ու կիվի ուտելով ինչ էր հասկանալու:

Երկինքը մքնում է, կայծակն ու բոտր խլացնում են բոլոր ձայները: Տղամարդը կնոց ձեռքը բռնելով՝ արագ հեռանում է, քող-

նելով շփոքված Աղամին ու Եվային:

ԵՎԱ - Ցուցանմուշն ինչ է:

ԱԴԱՄ - Դեռ չգիտեմ:

ԵՎԱ - Լավ բան չի լինի:

ԱԴԱՄ - Լավ բանը մոռացիր:

ԵՎԱ - Զեմ ուզում մոռանալ: Աղամ...

ԱԴԱՄ - Ամեն ինչ իզուր է:

ԵՎԱ - Եթե վերջն է... Աղամ, չգիտեմ՝ ինչի վերջն է, բայց ինչի վերջն էլ լինի, վերջը լավ չի: Եթե վերջ է, գոնե հիմա ասա, որ ինձ սիրում ես: Երբեք չես ասել, որ սիրում ես:

ԱԴԱՄ - Ասած կլինեմ:

ԵՎԱ - Քնքուշ բառեր ասել ես, բայց չես ասել, որ սիրում ես: Խնդրում եմ, ասա, հիմա ասա... Սիրո մեջ ապահով է, սիրո մեջ վերջը չի կարող վնասել:

ԱԴԱՄ - Չի վնասի, եթե ցանկապատված չէ:

Երկինքն ավելի է մքնում, կայծակն ու ամպրոպն ավելի ուժգին են որոտում, ամեն ինչ քաղվում է խավարի մեջ:

ՊԱՏԿԵՐ ՎԵՅԵՐՈՐԴ

Նույն տեսարանը: Կողք-կողքի երկու քառակուսի պատվանդան, որոնց վրա կանգնած են Աղամն ու Եվան: Պատվանդանների ա-

բանքում մեծ ցուցատախտակ է՝
աջ և ձախ պարբերով, համապա-
տասխանաբար գրված՝ ԱԴԱՄ,
ԵՎԱ: Ցուցատախտակի կենտրո-
նում գրված է. ԶԵՇՈՋ ԶՏԱԼ, դրա
տակ՝ ՉԿԵՐԱԿՐԵԼ: Մարդկանց
խոսակցություն, ծիծառ, երեխա-
ների լացի ձայն, որոնք աստիճա-
նաբար մարում են:

ԵՎԱ - Այցելուները գնացին: (*Իջնում
է պատվանդանից, ինչ-որ շար-
ժումներ է անում:*) Մարմինս
թմբել է:

ԱԴԱՄ - (*ինքն էլ է իջնում՝ նոյն
շարժումներն անելով*): Այսօր ինչ
օր էր:

ԵՎԱ - Բոլոր օրերի պես:

ՏՂԱՄԱՐԴ - Այցելուները շատ էին:

ԵՎԱ - Քանի ամիս է՝ կանգնած ենք:

ԱԴԱՄ - Քիչ մնաց:

ԵՎԱ - Աղամ...

ԱԴԱՄ - Ինչ է...

ԵՎԱ - Որ խնձորն առանց քեզ
հարցնելու եմ կերել...

ՏՂԱՄԱՐԴ - Հիշելու բան գտար:

ԵՎԱ - Մտածում ես՝ եթե չուտեի...

ԱԴԱՄ - Հիմա քեզ ավելի եմ սիրում:

ԵՎԱ - Առաջին անգամ ասացիր, որ
սիրում ես:

ԱԴԱՄ - Երբ մտածում եմ...

ԵՎԱ - Ինչ ես մտածում, Աղամ:

ԱԴԱՄ - Մտածում եմ...

ԵՎԱ - Ասա, ասա...

ԱԴԱՄ - Խնձորը կերած չլինեիր:

Հիմա ամենաշատը ուզում եմ
մեռնել: Կանգնելուց հոգնել եմ:
Չեմ ուզում՝ մի օր էլ ծառերի պես
կտրեն...

ԵՎԱ - Խոստացիր, որ մեռնելուց հե-
տո էլ ինձ սիրելու ես: Սիրելու ես,
չէ, Աղամ, ասա, ասա, որ սիրելու
ես... Մեր փոխարեն թող մեր սե-
րը մնա...

ԱԴԱՄ - Սիրելու եմ ու քո սիրո մեջ
եմ ուզում մեռնել: (*Մոտենում է,
փորձում է Եվային գրկել, սակայն
անսպասելի մարդկային խոսակ-
ցություն, աղմուկ, ծիծառ լսելով՝
ընկրկում է:*)

ԵՎԱ - Նոր այցելուները...

ԱԴԱՄ - Կյանքն ում է պետք, եթե
սիրելիիդ չես կարողանալու
գրկել:

Վագում-կանգնում են պատվանդաններին: Մարդկանց խոսքն ու աղմուկը
բարձր են հնչում: Երգչախմբի երգի հետ բեմն աստիճանաբար մթնում է:

ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



**Կարինե
ԽՈԴԻԿՅԱՆ**

Ամեն մեկիս տունը սկսվում է սահմանից, հատկապես
մայրաքաղաքում ապրողի տունը: Ու մայրաքաղաքում
2008-ի մարտի 1-ին հնչած կրակոցներն էլ նույն կերպ
արձագանքվում են սահմանի վրա:
Ասածու ոչ ենթատեքսու ունի, ոչ էլ քարոզի է հավակնում:
Պարզապես հիշեցում է:

ՏՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԻ ՎՐԱ

Գործող անձինք

ՄԱՐԻՎՄ - մոտ 45 տարեկան

ԳՈՉ - Մարիամի որդին, 20 տարեկան,

բանակից նոր զորացրված

ՆԱՐԻՆԵ - Մարիամի դուստրը, 22 տարեկան, ուսանողուհի

ԺԻՐԱՅՐ - Մարիամի եղբայրը

ՀԱՍՄԻԿ - Ժիրայրի կինը

ԳՈՀԱՐ - Մարիամի հարևանուհին

ՍՈՒՆ - 18 տարեկան

ԿԱՐԵՆ - Նարինեի փեսացուն

Գործողությունը կատարվում է 2009 թվականի ամռանը, սահմանամեծ գյուղերից մեկում:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈԹՅՈՒՆ

Տեսարան 1

Մենյակ՝ աղքատիկ կահավորումով, բայց զգացվում է խնամքոտ տիրոջ ձեռքը: Կենտրոնում, բեմի խորքում՝ պատի ժամացույցն է, նախարեմին մոտ՝ պատի օրացույցը: (Ժամանակը ևս գործող անձ է): Օրացույցի վրա՝ «Կիրակի»: Կեսօր:

Հասմիկ, Գոհար:

ԳՈՀԱՐ - (ուշադիր զննում է Հասմիկի սուրճի բաժակը): Ճամփակած... հեռու տեղից... Դե, ձեր ժամփան է, որով եկել եք ու էլի գնալու եք:

ՀԱՍՄԻԿ - Մենակ մե՞ր ժամփան է:

ԳՈՀԱՐ - Նոր տարուց էս կողմ գյուղ եկողը դուք եք: Գիծը տեսնո՞ւմ ես, բաժակի մեջ է գնում:

ՀԱՍՄԻԿ - Համոզեցիր: Ուրիշ ի՞նչ կա:

ՄԱՐԳՈ - (խոսուն հայացք նետելով Հասմիկի կլորիկ փորին, խորամանկ ժպտում է): Դրանից ավել ի՞նչ ես ուզում, որ լինի...

ՀԱՍՄԻԿ - (չարաձճի): Որ լավ նայես՝ կտեսնես:

ԳՈՀԱՐ - (աչքերը կկոցելով՝ իբր սևովում է բաժակին): Դե, որ ա-

սում ես... Ըհը, սենյակ է... չէ, ոնց
որ մառան է:

ՀԱՍՄԻԿ - (որ այլ բան էր սպա-
սում): Ինչ է...

ԳՈՀԱՐ - Մառան... չրերը առաս-
տաղից կախ, թթուները՝ կարաս-
ներում... ինքն էլ, ըհը, կանգնած
է, ձախ ծեռ... չէ, աջ ծեռքում՝ տո-
նածառի լոյսեր...

ՀԱՍՄԻԿ - Ինչ մառան, ինչ լոյսեր...

ԳՈՀԱՐ - Չրերը մոռացար:

ՀԱՍՄԻԿ - Ո՞ւմ չրերը:

ԳՈՀԱՐ - Դունեչկայի:

ՀԱՍՄԻԿ - Գոհար...

ԳՈՀԱՐ - Զան:

ՀԱՍՄԻԿ - Դունեչկան ինչ գործ ու-
նի իմ բաժակում:

ԳՈՀԱՐ - Ուրեմն՝ ունի, նա երբ է
անգործ մնո՞ւմ որ...

ՀԱՍՄԻԿ - (ինքն էլ մտնելով խաղի
մեջ): Հասկացա: Բայց իմ բաժա-
կում ինչ է անում Դունեչկան:

ԳՈՀԱՐ - Տոնածառի լոյսերն է ու-
զում միացնի:

ՀԱՍՄԻԿ - Ինչպես գրում են դետեկ-
տիվներում՝ էստեղից՝ ավելի
մանրամասն:

ԳՈՀԱՐ - (բաժակը մի կողմ իրելով):
Հաճույքով: Դունեչկան ամեն
տարի տոնածառ է դնում:

ՀԱՍՄԻԿ - (ընդհատում է): Ինչքան
եղավ:

ԳՈՀԱՐ - Ապրիլին ութսունամյակը
նշեցինք:

ՀԱՍՄԻԿ - (համակերպված հումո-
րով): Ու տոնածառ է զարդարում:

ԳՈՀԱՐ - Էրեխոնի հավեսով: Էս տա-

րի որոշել էր տոնածառի լոյսերը
փոխել: Խանութից բերել, տուփը
բացել է ո՛ւ... (Դադար:)

ԱՆՈՒՆ - Ո՞ւ...

ԳՈՀԱՐ - Լարերից խելքը բան չի
կտրել, բայց իրեն չի կորցրել,
տուփը հենց էղպես բացած դրել է
տոնածառի տակ ու ինքն էլ՝ եր-
գանիկ, կողքը նստել:

**Մի պահ լուս նայում են իրաք ու
փոքրկացնում:**

ՀԱՍՄԻԿ - Պատմածդ ինչ ցուցանե:

ԳՈՀԱՐ - Տոնը սրտիդ մեջ պիտի լի-
նի:

ՀԱՍՄԻԿ - (դադարից հետո): Ան-
կապ էր, բայց ակնարկդ հասկա-
ցա: Ուրիշ...

ԳՈՀԱՐ - Ինձնից ինչ ես պահան-
ջում: (Բազմանշանակ:) Դուք ձեր
ուզածն արել եք, մենք էլ արդյուն-
քը շուտով կտեսնենք:

ՀԱՍՄԻԿ - (նեղ զգալով): Դե... աղ-
ջիկ է, թե՞ տղա:

ԳՈՀԱՐ - (դիմելով անտեսանելի
վկաներին): Գործը իրենք են ա-
րել, պատասխանատու հայտա-
րարությունը Գոհարը պիտի անի:
(Հասմիկին.) Բա որ սխալվեմ,
հեղինակության հարց է, չէ՞: Էխո-
յով չեք նայել:

ՀԱՍՄԻԿ - Նայել ենք, տղա է: Բայց
Ժիրայրն էնակն է սպասում տղա-
յի, որ վախենում եմ՝ հանկարծ ու
սխալված լինեն...

ԳՈՀԱՐ - (նորից դիմելով անտեսա-
նելի վկաներին): Այ, էս խելքին

ենք, չեղած տեղից մեզ ենք մեղավոր սարքում: (*Հասմիկին*.) Դո՞ւ իրենից տղա պահանջիր, էնպես պահանջիր, որ եթե աղջիկ ծնվի՝ ինքը քեզնից ներողություն խնդրի:

ՀԱՍՄԻԿ - Երբվանից ես էղան համարձակ դարձել:

ԳՈՀԱՐ - Երեկվանից: (*Ծիծաղում* է:) Լավ, Էլ հոգուդ հետ չեմ խաղա: (*Նորից շրջում, նայում է բաժակը՝ աստիճանաբար ոգևորվելով*):

Տեսարան 2

Նրանք և Գոռ:

ԳՈՀԱՐ - Ուրեմն, սրտիդ մեջ... կամ Էլ սրտիդ տակ մի բուռ լուս է...

ԳՈՌ - (առաջ գալով): Էղ լուսի մեջ տղան լմվ է երևում:

ԳՈՀԱՐ - (անսպասելիությունից ցնցվում է): Ըի՞ւ, ներշնչանքիս ամենաթունդ պահին խանգարեցիր:

ԳՈՌ - Ինչի՞ն, բաժակի էկրանը փակվեց:

ԳՈՀԱՐ - Իհ, սիրտդ չունեմ... (*Հասմիկին՝ բազմանշանակ*) Էղ խոսքիս վրա որ տղամարդ եկավ՝ լավ նշան է:

ԳՈՌ - Տեսա՞ր, ոնց գտավ:

ԳՈՀԱՐ - (բաժակը մի կողմ դնելով): Վերջ, էսօրվա սեանսը պրծավ:

ՀԱՍՄԻԿ - (տեղից բարձրանալով՝ Գոռին): Սոված կլինես:

ԳՈՌ - (մոտենում, զգույշ, բայց վծուական նստեցնում է): Ինչ-որ

պետք է՝ կգտնեմ: (*Պահարանից հաց-պանիր է հանում, բրդուծ անում, գայիս, նստում է սեղանի մոտ*) Քեռիս ո՞ւր է:

ՀԱՍՄԻԿ - Բարկենը եկավ, մեքենան է փշացել...

ԳՈՀԱՐ - Իսկ Ժիրայրը փշացած մեքենայի մասին որ լսում է, աշխարհը մոռանում է:

ԳՈՌ - Էղանքս որ չաներ, Մոսկվայի պես քաղաքում բիզնես կունենա՞ր:

Տեսարան 3

Նրանք և Մարիամ:

ՄԱՐԻԱՄ - (Գոռին): Ինչ ես ցամաք հաց ուտում: (*Մոտենում, զգվում է որդուն*): Հիմա ճաշը կտաքացնեմ: (*Գնում է խոհանոց, շեմին շրջվում է*) Էղ ո՞վ բիզնես ունի: (*Գնում է խոհանոց*)

ԳՈՌ - (բարձր, որ մայրը խոհանոցում լսի): Քեռիս: (*Գոհարին՝ հպարտությամբ*) Գիտե՞ս, ինչ գործ է անում...

ՀԱՍՄԻԿ - (կարծես տիսրելով): Լոյսը չքացված գնում է... (*Ծեմին հայտնվում է Մարիամը, ուշադիր լսում է*) Կեսգիշերին տուն է գալիս: (*Նկատելով Մարիամին՝ փորձում է ժպտալ*) Բայց օրվա մեջ մի քանի անգամ զանգում է... ասում է՝ որ չձանձրանաս, խանութներ գնա, շոպինգ արա:

ԳՈՀԱՐ - (*Հասմիկի վերջին բառերից ոգևորվելով*): Էղ մեկը

սրտովս է՝ փողն առ ու մտիր խանութ... էս խանութից՝ էն խանութ... էս ապրանքից՝ էն ապրանքը... Հրաշը:

ՀԱՍՄԻԿ - (Գոհարի տոնով): Հա, ապրանքը առնում եմ, հետո փորձում եմ Ժիրայրին ցոյց տալ, բայց նա ժամանակ ունի:

ԳՈՀԱՐ - (Չլսելու տալով՝ իրենն է շարունակում): Ոնց որ կինոյում՝ տուփերը, տոպրակները ձեռքիդ դուրս ես գալիս չքեղ խանութից...

ԳՈՌ - (ինքն էլ է խաղի մեջ մտնում): Ու հակառակի պես՝ տաքսի չկա:

ԳՈՀԱՐ - Ուրեմն՝ խանութում սրտիս ուզածը կարող եմ գնել, բայց մի քոսոտ մեքենա չունեմ... Էս է քո տրամաբանությունը:

ԳՈՌ - Ինչի՞ քոսոտ, քեզ «Մերսեղեսը» կսազի, բայց... ասենք, հենց էդ օրը «Մերսդ» վերանորոգելու ես տվել...

ՀԱՍՄԻԿ - (Ծիծաղելով): Ժիրայրի մոտ:

ԳՈՌ - Էդ դեպքում՝ ոչ թե վերանորոգելու, այլ տյունինգի...

ԳՈՀԱՐ - Ինչի...

ԳՈՌ - Հետո կրացատրեմ, իիմա մտքիս թելը չկտրես: (Ավելի ու վելի ոգևորվելով:) Ուրեմն՝ մեքենադ Ժիրայրի գարաժում է, դու՝ տուփերով ու տոպրակներով՝ փողոցի մեջտեղում... Ու երբ վերջապես հայտնվում է երկար սպասված տաքսին, մի հաբրգած տիա քեզ իրում ու ինքն է նստում՝ դուռը շրխկացնելով քթիդ առաջ:

ԳՈՀԱՐ - Գոռ ջան, ինչի՞ ես անվնաս երազանքս պրոբլեմ դարձնում, իբր կյանքի պրոբլեմները քիչ են...

ՄԱՐԻԱՄ - (Մոտենում, գրկում է Հասմիկին, հասկացող շեշտով): Ձեր խոսակցությունից մի բան հասկացա:

ԳՈՌ - Մեր խոսակցությունից հնարավիր է բան հասկանալ:

ՄԱՐԻԱՄ - (կատակին տեղի չտալով): Հասկացա, որ հարսիկս էնտեղ շատ մենակ է: (Հասմիկին՝ մտերիմ շեշտով:) Մենք էդպես ենք՝ մեզ միայն աշխատանք տուր: Հաց ուտելն էլ կմոռանանք: Իսկ դու շուտով մենակ չես լինի, հոգսդ կշատանա ու մենակությանդ հերը կանիծի:

ՀԱՍՄԻԿ - (Չկործված): Չկարծես՝ բողոքում եմ, խոսք էր՝ ասացի... Էստեղ էլ նոյն պատմությունն է, առավոտ գնում, գիշերը գալիս է: (Ինքն իրեն ուղղում է:) Զէ, էստեղ նոյնը չէ, դուք ինձ հետ եք:

ԳՈՌ - Դրա համար էլ քեզ զյուղ բերեց: Որ մենակ չլինես:

ՀԱՍՄԻԿ - Զէ... որ երեխան էստեղ ծնվի: Ասում է՝ տղաս առաջինը մեր սարերի օդը պիտի շնչի, առաջինը մեր երկինքը պիտի տեսնի: Լսած առաջին բառն էլ հայերեն պիտի լինի:

ԳՈՀԱՐ - (հուզված): Ապրի Ժիրայրս, հեռուն է տեսնում:

ՄԱՐԻԱՄ - Հա, հայրենիքի առաջին կում օդը, առաջին պատառ եր-

կինքը, հայերեն խոսքը էն զորությունն ունեն, որ ամբողջ կյանքի համար կիերիքեն.... օտարության մեջ: (*Դադար:*) Ճաշը չվառվի: (*Արագ մտնում է խոհանոց:*)

ԳՈՀԱՐ - (*կամաց՝ Հասմիկին*):

Մինչև հիմա չի համակերպվում ձեր գնալուն: Քանի տարի եղավ:

ՀԱՍՄԻԿ - Ծուտով՝ չորս:

ԳՈՀԱՐ - Իսկ էնակն է խոսում, կարծես երեկ եք գնացել:

ՀԱՍՄԻԿ - (*Գողին*): Ասել ես...

ԳՈՌ - Դեռ չի:

ՀԱՍՄԻԿ - Բա ճըրը ես ասելու...

ԳՈՀԱՐ - (*հետաքրքրված*): Ինչ պիտի ասի, որ դեռ չի ասել:

(*Երկու նայում է երկուսին, կարծես փորձում է գուշակել:*) Գո՞ն...

Հասմիկ...

Գոռը սրտնեղած դուրս է գնում:

Տեսարան 4

Հասմիկ, Գոհար:

ՀԱՍՄԻԿ - (*դժկամ*): Ժիրայրի հետ են որոշել... Գոռն ասում է՝ Էստեղ մնամ՝ ինչ անեմ: Գոնե մի քիչ փող կվաստակի, մինչև... չգիտեմ:

ԳՈՀԱՐ - Խելքներդ ճետ եք տվել...

Գոռը մորը թողնի... (*Վհատված:*) Ասենք... ինչ իմանամ, դուք՝ աշխարհ տեսած, ես՝ Էսօր-վաղը թոշակի անցնող հաշվապահ...

Ներս է մտնում Մարիամը՝ մատուցարանի վրա ափսեով ճաշն է բերում:

ՄԱՐԻԱՄ - (*տեսնելով տղայի կիսատ թողած պատառը:*) Գոռն նկա է... (Զի նկատում երկուսի շփոթությունը:) Գոհար, չէ՞ր կարող պահել... (*Լրանց խուսափուկ հայացքներից՝ զգուշավոր:*) Ինչի՞ եք լուս:

ԳՈՀԱՐ - (*փորձելով չմատնել շփոթությունը*): Դե... դու խոսում ես,

ես ինչ ասեմ... Ավելի լավ է՝ գնամ:

ՄԱՐԻԱՄ - Ո՞ր... հիմա կճաշենք:

ԳՈՀԱՐ - (*երկիմաստ*): Էսօրվան սուրճը ինձ հերիք է... (Գնում է:)

Տեսարան 5

Մարիամ, Հասմիկ:

ՄԱՐԻԱՄ - (*նստում է սեղանի դիմաց*): Մի ամիս է՝ բանակից եկել է ու տեղը չի գտնում... գործ է փնտրում: Սիրտս անհանգիստ է, չեմ հասկանում՝ մտքինն ինչ է...

ՀԱՍՄԻԿ - (*խուսափուկ*): Մի բան կմտածի, էլի...

ՄԱՐԻԱՄ - Դավիթին ուզում էր մեր ծորի այգին մեծացնել, մեծ տնտեսություն ստեղծել...

ՀԱՍՄԻԿ - Ուզում ես՝ հոր գործը շարունակի:

ՄԱՐԻԱՄ - Ինչո՞ւ չէ... հատկապես հիմա, երբ Նարինես... (*Ժպտում է:*) Նամակ է գրել:

ՀԱՍՄԻԿ - Հիմա նամակ գրո՞ղ կա: Համարը հավաքիր ու խոսիր:

ՄԱՐԻԱՄ - Ես էլ զարմացա, բայց
որ կարդացի, հասկացա, որ հե-
ռախոսով ասվելու չէր...
ՀԱՍՄԻԿ - Ի՞նչ է գրել:

Մարիամը գրանից խնամքով
հանում է նամակը, բացում,
խնամքով ուղղում է եզրերը: Այդ
ընթացքում նախաքենը լուսա-
վորվում է: Այնտեղ կանգնած է
Նարինեն:

Տեսարան 6

Նամակի ընթեցում:

Մարիամը կարդում է առաջին
տողը, որից հետո նրան է միա-
նում Նարինեն, իսկ հետո ինքն է
մենախոսում նամակի բովանդա-
կությունը:

ՄԱՐԻԱՄ - «Բարև, մամ ջան, բարև,
հարազատներս...»:

ՆԱՐԻՆԵ - (Միանալով նրան):
«Լախ՝ բարև բոլորիդ...

Մարիամն ու Հասմիկը մնում են
խավարում, քեմում միայն Նարի-
նեն է: Աստիճանաբար խոսքն ա-
րագացնում է, անգամ վերածում
շուտասելուկի մինչև կարևոր լո-
րի հայտնելը:

ՆԱՐԻՆԵ - ...ձանոթ-բարեկամներին,
մեր հարևաններին, հարցնող-
չիարցնողներին, խենթուկ ախաբե-
րիկիս, քեռի Ժիրայրին ու
Հասմիկին, ինֆորմացիայի կենտ-
րոն Գոհարին, անդադար Դունեչ-

կային, բոլորին, բոլորին... (Կարծ
դադար:) Ոչ մեկին չմոռացած... (Է-
լլի շուտասելուկով:) Մամ ջան, ես
լավ եմ, դասերս լավ են, առող-
ջությունս լավ է, քննություններս
լավ կիහնեն: Սոված չեմ, ծարակ
չեմ, թեթև հագնված չեմ ու...
(Միանգամից այլ տոնով:) Նա
աշխարհի ամենալավ տղան է
ու... սիրում է ինձ: Մամ, այնքան
երջանիկ եմ, որ գիշերն արթնա-
նում ու լաց եմ լինում: Ցերեկը լաց
չեմ լինում՝ ժամանակ չկա... Մամ
ջան, ես ու Կարենը... անունը Կա-
րեն է... մենք որոշել ենք ամուս-
նանալ, ու ես կդառնամ երևանցի:
Երբ մտածում եմ, որ դեռ ինչքան
երկար եմ ապրելու և այդքանը
պիտի ապրեմ նրա հետ... Ելի
լացս եկավ, բայց լսարանում եմ,
դասախոսն էլ գիտի՝ իր ասածն
եմ լուրջ-լուրջ գրում: Որ լաց լի-
նեմ՝ հաստատ ինձ չի հասկա-
նա... Մամ ջան, վաղը վերջին
քննությունս կհանձնեմ, բայց
կսպասեմ, շաբաթ օրը Կարենի
հետ կգանք, ու դու կծանոթա-
նաս... Ծիծաղս գալիս է, որ ասեմ՝
ապագա փեսայիդ հետ:

ՆԱԽԱՔԵՆԸ մքնում է: Լուսավոր-
վում է քեմը:

Տեսարան 7

Մարիամ, Հասմիկ:

Մարիամը մտախոհ նայում է նա-
մակին:

ՀԱՍՄԻԿ - (նրա լոռությունից զարմացած): Մարիամ, ուրախանալ է պետք:

ՄԱՐԻԱՄ - Ուրախանում եմ:

ՀԱՍՄԻԿ - Հա՞ որ...

ՄԱՐԻԱՄ - Նարինես կմնա Երևանում:

ՀԱՍՄԻԿ - Ավելի լավ: (*Ծփոթվելով:*) Աղջկա բախտը որտեղ բացվեց՝ էնտեղ էլ կմնա: Ես մինչև Մոսկվա չհասա՞մ:

ՄԱՐԻԱՄ - Հասար... (*Դադար:*)

ՀԱՍՄԻԿ - Մարիամ...

ՄԱՐԻԱՄ - (*Իր մտքի հետ:*) Մտածում էի՝ կավարտի, կօա, դպրոցում կաշխատի: Քանի տարի է՝ երեխաները ջահել ուսուցչուիի չունեն: (*Սրավիվելով:*) Ի՞նչ եմ խոսում, ե՞ս եմ որոշողը... (*Տեղից ելնում, մատուցարանի վրա դնում է նաև սուրճի բաժակները, տանում է խոհանոց, վերադառնում, կախիչից վերցնում է գլխաշորը:*)

ՀԱՍՄԻԿ- Ո՞ր:

ՄԱՐԻԱՄ - Գնամ, հորը պատմեմ...

Տեսարան 8

Մարիամ, Համբիկ, Գոռ:

Նույն սենյակն է: Երեկո: Օրացույցի վրա՝ «Երկուշաքքի»: Համբիկը, բազմոցին նստած, նորածնի «օժիտն» է դասավորում: Մարիամը պահարան-դարակներն է հավաքում՝ մաքրում, գոհարը օգնում է նրան:

ԳՈՀԱՐ - Ասում ես՝ Երբ են գալու:

ՄԱՐԻԱՄ - Ծաբաթ:

ԳՈՀԱՐ - Բա ի՞նչ ես էղակես խառնվել:

ՄԱՐԻԱՄ - Գործ շատ կա... Տղան առաջին անգամ է մեր տուն մտնում: Ել չեմ ասում մեր պատիկի մասին: Սենյակները գոնեթեթև վերանորոգենք: (*Ցույց տալով ձալված կտորը:*) Վարագույրները փոխենք...

ԳՈՀԱՐ - (*Ծնդհատելով:*) Էնպես կարեմ՝ ձևավոր, ծալքերով, որ սովետի պատուհանդ դառնա եվրառեմոնտ:

Տեսարան 9

Նրանք և Դունեչկա:

Ներս է մտնում Դունեչկան, ձեռքին՝ տոպրակ: Դժվարությամբ է քայլում:

ԴՈՒՆԵՉԿԱ - Բարով տեսանք:

ՀԱՍՄԻԿ - Վայ, Դունեչկա տատի...

(Ուզում է տեղից բարձրանալ:)

ԴՈՒՆԵՉԿԱ - Նախ՝ ոչ մի տատի, ութսուն տարի է՝ Դունեչկա եմ: Ու տեղդ նստիր... (*Մոտենում, չլմիցող համբուրում է, տոպրակից հանում է ապակյա տարան, մեկնում նրան:*) Բոլիչի թթու եմ բերել:

ԳՈՀԱՐ - (*Հասմիկին:*) Չորս երեխա է բերել, գիտի՝ ինչ է նվեր բերում:

ՄԱՐԻԱՄ - (*Ինգածությամբ նստեցնում է բազմոցին:*) Լավ ժամանակին եկար, իհմա սուրճ կխմենք: (Գնում է խոհանոց:)

ԴՈՒՏԵԶԿԱ - (Խորիմաստ): Թե որ բաժակս Գոհարը նայի...

ԳՈՀԱՐ - Երեխեքիցդ լուր չունես:

ԴՈՒՏԵԶԿԱ - Ասածիդ հավատացիր... (Գրպանից հանում է բջջային հեռախոսը): Օրինվի սրա ստեղծողը, երբ մտքովս անցնի՝ զանգում եմ: Էստեղ էի գալիս՝ փոքր հարս զանգեց: Հարցնում է՝ բայի մուրաբան ոնց եփի: Ասեցի՝ գրեց, բայց Սամարայի բալը ինչ պիտի լինի, որ դրա մուրաբան էլ ինչ լինի...

ԳՈՀԱՐ - Որ բոլորին հեռվից կառավարում ես, բաժակ նայելս ո՞րն է:

ԴՈՒՏԵԶԿԱ - (Խորամանկ ժայտալով): Երազ եմ տեսել...

ՄԱՐԻԱՄ - (սուրծ է բերում, ինքն էլ ժայտալով): Ելի...

ԴՈՒՏԵԶԿԱ - Հա, էլի սնդուկում հարսնաքողս էի փնտրում:

ՀԱՍՄԻԿ - (Գոհարին): Երազահանում ինչ է գրված, ինչ նշան է:

ՄԱՐԻԱՄ - (Հասմիկին): Նշան չէ, իրաշք է: Հարսնաքողի մասին եմ ասում: Ճակատնոցը՝ արծաթ դրամներով, քողը՝ ֆրանսիական ժանյակ... իսկական:

ԴՈՒՏԵԶԿԱ - (հոգվելով): Հերս Հայրենական պատերազմից էր բերել՝ տրաֆեյ: 45 թիվն էր, ես տասնվեց տարեկան էի... Զինվորական ուսապարկից հանեց, ինձ տվեց, թե՝ «Եվրոպայից բերել եմ, որ օյուղի ամենասիրուն հարսը

դու լինես»: Տասս էլ իր Նիկոլի արծաթներով ճակատնոց կարեց... Ճիշտը որ ասեմ՝ էլ հարսնաքողի խաթեր տասնյոթս չլրացած պակվեցի:

ԳՈՀԱՐ - Մտքինդ ասա...

ԴՈՒՏԵԶԿԱ - (բազմանշանակ): Զարբնեցի ու սնդուկից հանեցի:

ՀԱՍՄԻԿ - Մինչև հիմա կա՞:

ՄԱՐԻԱՄ - Ասում եմ, չէ, ֆրանսիական ժանյակ է, դրան մաշվել չկա, էլ չեմ ասում արծաթների մասին:

ԴՈՒՏԵԶԿԱ - (Գոհարին): Որ ասես՝ ո՞ւմ համար եմ սնդուկից հանել...

ԳՈՀԱՐ - (Հասմիկին՝ կամաց): Ըենց էլ երազը տեսնում է՝ զյուղում հարսանիք է լինում:

ՀԱՍՄԻԿ - Չէ հա...

ԴՈՒՏԵԶԿԱ - Ինչ եք էդտեղ քչփշում:

ԳՈՀԱՐ - (բարձր): Ասում եմ՝ քո երազը որ կա, իմ բաժակ նայելն ավելորդ է:

ԴՈՒՏԵԶԿԱ - (նեղացկոտ): Որ էդպես է, սուրծ չեմ խմի: (Տոպրակից հանում է շիշը, տալիս Մարիամին:) Ժիրայրիս սիրած խնձորի օղին է:

Մարիամը շիշը դնում է սեղանին:

ԳՈՀԱՐ - Քո քաշածն է:

ԴՈՒՏԵԶԿԱ - Ուրիշի ապրանքի հետ գործ չունեմ:

ԳՈՀԱՐ - Տարիքդ, իիվանդ ոտքերդ... քեզ խնայիր, էլի:

ԴՈՒՏԵԶԿԱ - Ո՞նց խնայեմ, թոռ-

ներս որ Երևանից գան, խանութի հոլյուսին են մնալու: Սեղան եմ գցում՝ ամեն ինչ իմ եփած-պատրաստածը: Մենակ տեսնեք՝ ոնց են շարվում սեղանի շուրջն ու ինչ ախորժակով են ուսում...

Տեսարան 10

Նրանք և Ժիրայր:

ԺԻՐԱՅՐ - Դունեչկա ջան, բարով տեսանք: (Գրկում, համբուրում է:) Մինչև հիմա կալվադոսիդ համը հիշում եմ:

ԴՈՒՆԵՉԿԱ - Էլի կիհշես: (Հայացքով ցոյց է տալիս շիշը:)

ԺԻՐԱՅՐ - (շիշը բացում, հոտ է քաշում): Անմահական է: (Ծուրջը նայելով, ակնարկելով իրարանցումը:) Էս ո՞վ է քոչում:

ՄԱՐԻԱՄ - (ծանր շեշտով): Մի՞շտ քո մտքին քոչեն է:

ԺԻՐԱՅՐ - (փորձում է կատակի տալ): Ինչ անեմ, իրարանցում որ տեսնում եմ, թվում է՝ Էլի մեկը ծամփա է ընկել: Ինձ համար սովորական բան է:

ԴՈՒՆԵՉԿԱ - Չորս անգամ տեսել եմ՝ ոնց են էրեխեքս հավաքվել ու գնացել: Ժիրայր ջան, գլխովդ պտիտ գամ, եղ ամեն ինչ կարող է լինել՝ սովորականից բացի: (Փորձում է ցոյց չտալ հուզմունքը:) Գնամ, մեր Սիրուշին դոշաբ եմ տանում, հազին լավ է... (Մո-

տենալով դռանը:) Էրեխեքս ասում են՝ մեզ հետ չես ուզում ապրել՝ քո կամքն է, բա չես վախենում, որ հանկարծ... ու կողքիդ մեկը չի լինի: Ասում եմ՝ մահից չեմ վախենում՝ չեն հավատում: Ո՞նց ասեմ, որ էն օրվանից, ինչ մենակ մնացի, էլ ոչնչից չեմ վախենում:

Գնում է: Ծանր լուրջում:

Տեսարան 11

Մարիամ, Ժիրայր, Հասմիկ, Գոհար:

ՄԱՐԻԱՄ - (փորձում է լարվածությունը մեղմել, Ժիրայրին): Երբ պատերը ներկենք:

ԺԻՐԱՅՐ - (թեթևացած ժպտալով): Լարինես Երբ է փեսատես կազմակերպում:

ՄԱՐԻԱՄ - (կեղծ կշտամբանքով): Բա որ փեսայից առաջ տղադ ծնվի՞:

ԺԻՐԱՅՐ - (դեմքը պայծառանում է, թևքերը վեր ծալելով): Հենց հիմա սկսում եմ: (Ոգևորված՝ իրերը տեղից-տեղ է քարշ տալիս:) Մի գիշերում տունը էնակս սարքեմ՝ Գոհարի սերիալներից էլ լավ:

ԳՈՀԱՐ - Էլի կպաք սերիալներիս...

ԺԻՐԱՅՐ - Ոչ չկպնեմ՝ գոգնոցդ կապիր ու դարձիր օգնականս:

ԳՈՀԱՐ - Դու որտեղ էիր, որ Արսենիս հետ էս ձեռքերով տուն շինեցի:

ԺԻՐԱՅՐ - (մոտենում, նստում է Հասմիկի կողքին): Եղ դեպքում ես՝ օգնական, դու՝ դեկավար, միայն կողքիս լինես:

ԳՈՀԱՐ - (Մարիամին): Տեսնում ես, չէ, ինձ ինչ է ասում, իսկ ինքը նոց է կպել կնոջը:

Տեսարան 12

Նրանք և Գոռ:

ԳՈՌ - (որ լսել է Գոհարի խոսքը):

Ոնց որ բրազիլական սերիալում:

ԳՈՀԱՐ - Էլի մեջ ընկար... բրազիլական սերիալում մարդ ու կնիկ էղ ծն իրար կողք չեն նստում:

ԳՈՌ - Բա ով է նստում:

ԳՈՀԱՐ - Սիրեկանները... (Ուշացած զղումով:) Մեղա, մեղա...

ԹԵՔԻ, անկաշկանդ մքնողրտ է:
Բայց... Գոռը հայացքով ինչ-որ
բան է հարցնում Ժիրայրին: Ժիրայրի պահվածքից զգացվում է՝
ինքն էլ ասելիք ունի և սպասում է
հարմար պահի:

ԳՈՌ - (մոտենում է մորը, նա այդ ընթացքում ինչ-որ բան է դասավորում պահարանում): Երեկ գերեզմանատո՞ւն էիր գնացել:

ՄԱՐԻԱՄ - Հա, Նարինեի նամակը կարդացի հորդ համար... Ու որոշեցի տունը նորացնել, երկար լուրջունից հետո այստեղ ծնունդ և ամուսնություն պիտի լինի: (Ծանր լրում են:) Նարինես հեռու կլինի, բայց... դու ինձ հետ ես:

Գոռը մոտենում է Ժիրայրին, սպասողական նայում: Հասմիկն ու Գոհարը հետևում են նրանց: Մարիամը թիկունքով է կանգնած, ոչինչ չի տեսնում:

Լուրջունը հանկարծ ընդհատվում է Մարիամի երգով, որն աստիճանաբար բարձրանում, լսելի է դառնում: Ներկաները լուս, զարմացած լսում են: Այդ լուրջունից սքափված՝ Մարիամը շրջվում, քիչ մեղակոր ժպտում է:

ՄԱՐԻԱՄ - Վաղուց չէի երգել...

ԳՈՌ - (Ժիրայրին): Ես պիտի ասեմ...

ԳՈՀԱՐ - (վատ կանխազգացումով,
հապշտապ ուզում է գնալ):
Գնամ... Արսենը մենակ է:

ԳՈՌ - (Ժիրայրին): Հիմա պիտի ասեմ:

ԳՈՀԱՐ - Ախր, ինչի՞ չեք թողնում՝
մարդ հանգիստ ապրի... Ոնց որ
սերիալում՝ հենց վիծակը մի քիչ
լավանում է՝ գլխին նոր փորձանք
է գալիս...

Մարիամը զարմացած նայում է
Գոհարին:

ԺԻՐԱՅՐ - (Գոռին): Ժամանակ գտար...

ՀԱՍՄԻԿ - (փորձում է թեման փոխել՝ Ժիրայրին): Խնձոր եմ ուզում, կրերեն... Չէ, ավելի լավ է՝
Գոռը բերի...

ՄԱՐԻԱՄ - (համբերությունը սպառ-

Ված, նաև՝ տագնապով): Ինչ է պատահել:

ԳՈՀԱՐ - (իրեն կորցրած): Հա, սկզբում խփում են գլխին, հետո քիչ-քիչ ուշքի է գալիս, մինչև...

ՄԱՐԻԱՄ - (խիստ): Գոռ, ինչ է պատահել:

ԳՈՌ - (օգնության հույսով նայում է՝ ժիրայրը լուր է): Մամ, որոշել եմ... էստեղ մնալուց ինչ... (Վճռական:) Քեռու հետ Մոսկվա եմ գնում:

ՄԱՐԻԱՄ - (կարողանում է իրեն զսպել, համարյա անտարբեր տեսք է ընդունում): Ինչո՞ւ:

ԳՈՌ - (մոր տոնից շփոթահար): Ինչո՞ւ են Մոսկվա գնում:

ՄԱՐԻԱՄ - Զգիտեմ, գնացողը դու ես:

ԳՈՌ - (խոսափելով մոր հայացքից): Գնացողը ես եմ, բայց... ոնց ասեմ... գիտեմ՝ ինչու եմ ուզում գնալ, բայց հիմա նայում ես ինձ, ու ես... չգիտեմ, ամեն ինչ խառնվեց... (Դուրս է նետվում):

Դադար:

Տեսարան 13

Մարիամ, Ժիրայր, Հասմիկ, Գոհար:

ԳՈՀԱՐ - Մարիամ, էղպես մի քարանա: Լաց եղիր, սիրտդ կթեթևանա:

ՄԱՐԻԱՄ - Ինչո՞ւ լաց լինեմ, իո սերիալ չէ: (Դառը ժպում է:) Տղաս

ուզում է իր կյանքով ապրել: Ուզում է լավ ապրել: (Նայում է եղբորք:)

ԺԻՐԱՅՐ - Ինչ էլ ասեմ, մեղադրելու ես: Իմ գնալը չներեցիր, հիմա՞ ինչ կասես... Միայն իմացիր, որ ես չեմ առաջարկել: Բայց չեմ էլ մերժել:

ՄԱՐԻԱՄ - (տեսնելով Հասմիկի տագնապը՝ ստիպում է իրեն ժպտալ): Հարսիկ ջան, մի հուզվիր, քեզ չի կարելի: Տեսարան չեմ սարքի, ինչ լինելու է՝ կիխի: (Ժիրայրին) Կարո՞ղ ենք հետագել այս խոսակցությունը:

ԺԻՐԱՅՐ - (խոսափուկ): Ոնց ասես...

ՄԱՐԻԱՄ - Ուրեմն, հիմա Հասմիկին տար դուրս, մի քիչ քայլեք, նրան պետք է... Լա մեր տունը ուրախություն է բերել:

Անուշն ու Ժիրայրը դուրս են գնում:

Տեսարան 14

Մարիամ, Գոհար:

ԳՈՀԱՐ - (վախվորած): Մարիամ...

ՄԱՐԻԱՄ - Ասա...

ԳՈՀԱՐ - Արսենս մի օր, վեց անգամ նարդի կրվելուց հետո, սովորականի պես ոչ գոռաց, ոչ էլ կոհիվ սարքեց... (Լոռում է:)

ՄԱՐԻԱՄ - Հետո՞...

ԳՈՀԱՐ - Ճնշումը բարձրացավ:

ՄԱՐԻԱՄ - Հոյս չունենան:

ԳՈՀԱՐ - Եղ լավ է... ուրեմն՝ կդիմանաս: Ես գնամ, մեկ էլ տեսար՝ ավել-պակաս խոսեցի: Միշտ է սխալ բան ես ասում, երբ փորձում ես միսիթարել... ասում եմ, չէ... Ես գնամ: (*Հասնելով շեմին՝ մի պահ երկմտում է:*) Բա ինչ ես անելու:

ՄԱՐԻԱՄ - (իր մտքերի հետ): Հիմա՞, թե՞ ընդիհանրապես:

ԳՈՀԱՐ - Երկուսն էլ:

ՄԱՐԻԱՄ - Ընդիհանրապես՝ դեռ չգիտեմ, բայց հիմա... Դավիթի ժամն է: Գոհար, բարի գիշեր:

ԳՈՀԱՐ - Որ ասում ես... բարի գիշեր: (*Մտամոլոր գնում է:*)

Սարիամը գնում, կողքի սենյակից բերում է կարաքինը, զցում է ուսին ու դուրս է գնում:

Տեսարան 15

ԿԵՆՈՐ. Օրացույցի վրա՝ «Երեքշարքի»: Պատուհաններից անհետացել են հիմն վարագույրները: Կարի մեքենայի առաջ նստած Գոհարը կարում է: Խոհանոցից գալիս է Սարիամը:

ԳՈՀԱՐ - (աչքի տակով հետևելով Մարիամին): Բայց դու ուրիշ ես, էլի՞...

ՄԱՐԻԱՄ - Այսինքն...

ԳՈՀԱՐ - Վախենում էի քեզ համար...

ՄԱՐԻԱՄ - Ինչո՞ւ:

ԳՈՀԱՐ - Ժիրայրը հերիք չէր, հիմա՝

Գոռը... Նարինեն էլ, փաստորեն, Երևանում է մնում:

ՄԱՐԻԱՄ - (իրը՝ անտարբեր): Հետո՞ ինչ... կյանք է:

ԳՈՀԱՐ - Զէ, մի ասա... (*Անեռուն նայելով նրան:*) Թե՛ չգիտեմ, որ սիրոտդ լցված է, բայց ցույց չես տալիս:

ՄԱՐԻԱՄ - (ηառը քմծիծաղով): Իսկ դու տեսար:

ԳՈՀԱՐ - Դրա համար աչք պետք չէ... (*Հուզվում է:*) Իմոնքն էլ, մեկը մյուսի ետևից... Տնաշեններ, գնացած տեղուն էլ մի բան լիներ՝ Եկատերինբուրգ: Նամակ նամակի ետևից են գրում՝ այ հեր, այ մեր, ելեք-եկեք... Մի երկու անգամ քաղաքավարի չեմուչում արի, տեսա՝ չեն հասկանում, ուղիղ գրեցի. «Եղ ձեր Եկատերինբուրգը Սիբիրում չէ: Ժամանակին ձեր պապին աքսորեցին Սիբիր, ինչ է, ասել էր, թե Առաջին հանրապետության օրոք՝ սովին ու պատերազմին, համալսարան հիմնվեց: Բայց ձեր վարժապետ պապին բռնի էին աքսորել: Իսկ դուք ձեզ եք աքսորել Սիբիր՝ հերիք չէ, մեզ էլ եք ուզում աքսորել: Զէ, ես իմ տունն ու բռստանը, մեր տաք արևը թողնող, եղ սիբիրյան ցրտաշունչ սառնամանիքում ապրողը չեմ: Ձեր հերն ուզում է՝ իր կամքն է, բայց ինձ տնիցս դուրս չեք հանի»:

ՄԱՐԻԱՄ - (թույլ ժպիտով): Էդպես

Էլ գրել էիր՝ սիրիոյան ցրտաշունչ...

ԳՈՀԱՐ - ...սառնամանիքում: Ու հատկապես էդ տողերի տակ Արսենս իր ստորագրությունը դրեց: Մի տնից չենք, մի հալից ենք... Չէ, քոնն ուրիշ է, գոնե Արսենը կողքիս է, իսկ դու... Դավիթը քեզ մի մատ էրեխեքով թողեց, գնաց կոփիվ:

ՄԱՐԻԱՄ - Զգնա՞ր:

ԳՈՀԱՐ - Ո՞վ է բան ասում... Գնաց, ընկերներին էլ հետը տարավ: Բոլորին տիրություն արեց, թեկուզ վիրավոր՝ տուն դարձրեց... Իսկ իրեն պահել չկարողացավ:

ՄԱՐԻԱՄ - Հրամանատարը իր մասին չի մտածում:

ԳՈՀԱՐ - Ո՞վ է բան ասում... Բայց որ կողքիդ լիներ...

ՄԱՐԻԱՄ - Դավիթիս բաժին արևը երեխաներիս լուսավորի, իսկ ինքը ինձ հետ է:

ԳՈՀԱՐ - Հատկապես գիշերային ստորգումներիդ ժամանակ:

ՄԱՐԻԱՄ - Հատկապես: Թե՞ մոռացել ես, որ սահմանի բերանին ենք ապրում ու պատերազմն էլ չի ավարտվել:

ԳՈՀԱՐ - Մոռանալ կլինի՞... Ասեմ՝ չծիծաղես, հենց վերցնում ես Դավիթի կարաբինն ու պտտվում ես թաղում՝ գիշերը հանգիստ եմ քնում:

ՄԱՐԻԱՄ - Ես գիշեր էլ հանգիստ կքնես, բայց հիմա գործդ պրծի:

Ամեն մեկն զբաղված է իր գործով: Դադար:

ԳՈՀԱՐ - Հասմիկն ուշացավ:

ՄԱՐԻԱՄ - Ժիրայրի ու Գոռի հետ է, ճորի այգում ժամանակը աննկատ է անցնում:

ԳՈՀԱՐ - Վատանգավոր չէ, վերջին օրերն են:

ՄԱՐԻԱՄ - Ասի՝ չլսեցին: (*Նմանակելով*) «Երկուսով մի Հասմիկ պահել չենք կարող»:

ԳՈՀԱՐ - Լոպազ Գոռի բառապաշարն է:

ՄԱՐԻԱՄ - Հա... (*Ինչ-որ բան որոշելով*) Գյուղի նորությունը առաջինը դու գիտես:

ԳՈՀԱՐ - (*Ճանրախոհ*): Նորություն էլ չլինի՝ ես կստեղծեմ:

ՄԱՐԻԱՄ - Ապրի արևի: Գոռս սիրած աղջիկ ունի՞:

ԳՈՀԱՐ - Եթր հասցներ, մի ամիս չկա՝ բանակից եկել է:

ՄԱՐԻԱՄ - Իսկ բանակից առաջ:

ԳՈՀԱՐ - Վարդոյի աղջկա հետ մի քանի անգամ պաշաչվել է, բայց... Եղ աղջիկը կես տարի է՝ ուրիշի հարս է:

ՄԱՐԻԱՄ - Ինֆորմացիադ փողով որ ծախեիր՝ տեղական նշանակության օլիգարխ կլինեիր:

ԳՈՀԱՐ - Փողի տեղը ուրիշ ինֆորմացիա եմ պահանջում: Մտքինդ ինչ է:

ՄԱՐԻԱՄ - Սոնային գիտե՞ս:

ԳՈՀԱՐ - Վասոյի կնո՞ջը:

ՄԱՐԻԱՄ - Չէ:

ԳՈՀԱՐ - (կարծ դադարից հետո):
Մեր Սեղայի աղջկան:

ՄԱՐԻԱՄ - Հա:

ԳՈՀԱՐ - (արագ թվարկում է): Անցած տարի դպրոցն ավարտեց, տնտեսագիտականի հեռակա բաժնում է սովորում, հալալ տան աղջիկ է:

ՄԱՐԻԱՄ - Էլ...

ԳՈՀԱՐ - Մինչև ինստիտուտն ավարտի, ես էլ թոշակի կգնամ, ու դուք ջահել հաշվապահ կունենաք:

ՄԱՐԻԱՄ - Էլ...

ԳՈՀԱՐ - Էլ ի՞նչ՝ էլ:

ՄԱՐԻԱՄ - Ամենակարևորը: Ծնողների միակ երեխան է:

ԳՈՀԱՐ - Հետո՞ ինչ:

ՄԱՐԻԱՄ - Ոչինչ:

ԳՈՀԱՐ - (կարծես հասկանալով Մարիամի մտադրությունը): Լավ ես մտածել:

ՄԱՐԻԱՄ - Ժամանակը ցույց կտա: Կարեցիր:

ԳՈՀԱՐ - (հիանալով արված աշխատանքով): Համարյա: Հրաշք:

ՄԱՐԻԱՄ - Քանդիր:

ԳՈՀԱՐ - Ի՞նչ...

ՄԱՐԻԱՄ - Հարցեր չտաս, ժամանակ չկա:

ԳՈՀԱՐ - (վիրավորված): Չհավանեցիր:

ՄԱՐԻԱՄ - Են էլ՝ ո՞նց... բայց հիմա քանդիր: (Տեսնելով, որ նա չի հասկանում, վերցնում է վարագույրներից մեկն ու արագ քանդում եղրակարերը:) Գործի

անցիր... (Նրան մեկնելով մյուսը:)

Քեզ տեսնեմ:

ԳՈՀԱՐ - (կատաղած): Հիմա կտեսնես... Էնպես քանդեմ, որ մնաս զարմացած: (Անասելի ձարպելությամբ քանդում է, հաղթական-թունոտ:) Խնդրեմ:

ՄԱՐԻԱՄ - (անվրդով իրար վրա է դասավորում կտորները): Ապրես: Վարպետը ոչ միայն լավ պիտի կարի, այլև լավ քանդի:

ԳՈՀԱՐ - (կծու): Ես էլ մտածում էի՝ էս ամենը հեշտ ես տանում... Պարզվում է...

ՄԱՐԻԱՄ - Դեռ չի պարզվել: (Դարձից վիրակապ է հանում, մոտենում է Գոհարին:) Ձեռքդ:

ԳՈՀԱՐ - Ի՞նչս...

ՄԱՐԻԱՄ - Աջ ձեռքդ:

ԳՈՀԱՐ - (այլև ոչինչ չհասկանալով՝ պարզում է ձեռքը, թունոտ): Ես էլ մտածում էի՝ էլ ձեռքս խնդրող չի լինի:

ՄԱՐԻԱՄ - Երազանքդ մի կողմ դիրու ու ոչադիր լսիր: Թիշ առաջ պատուհանի գոգից ընկար...

ԳՈՀԱՐ - Ես...

ՄԱՐԻԱՄ - Դո՞ւ:

ԳՈՀԱՐ - Ինչի՞ հատկապես պատուհանից:

ՄԱՐԻԱՄ - Որովհետև վարագույրի երկարությունն էիր չափում:

ԳՈՀԱՐ - Առավոտն եմ չափել:

ՄԱՐԻԱՄ - Առավոտվանը մոռացիր: Թիշ առաջ բարձրացար, գլուխդ պատվեց...

ԳՈՀԱՐ - Մի կոռա... Ասածը կա-

տարվում է՝ կարմա: Ո՞չ մի դեպքում:

ՄԱՐԻԱՄ - Լավ, ոտքդ սոթ տվեց, ու ընկար:

ԳՈՀԱՐ - Կյանքում ընկած չկամ...
Ինչ ես անում ծեռքս:

ՄԱՐԻԱՄ - Կապում եմ: Ընկել ես,
չէ, ցավ է առել, եզան լեզուն դրել
եմ վրան ու կապում եմ:

ԳՈՀԱՐ - Բա ո՞ւր է:

ՄԱՐԻԱՄ - (*Վիրակապելով*): Ի՞նչը:

ԳՈՀԱՐ - Եզան լեզուն:

ՄԱՐԻԱՄ - Առանց դրան յոյա
կգնաս: Կարևոր՝ քո լեզուն փակ
պահես:

ԳՈՀԱՐ - Ասածիդ հավատացիր:

ՄԱՐԻԱՄ - Դժվար հավատալու է,
բայց որ իմանաս ինչի համար է՝
լեզուդ ինքն իրեն կփակվի:

ԳՈՀԱՐ - Ինչի համար է:

ՄԱՐԻԱՄ - Ավելի ճիշտ՝ ում համար
է: (*Քարկապելով, արած գործից
գոհ*) Հրաշք:

ԳՈՀԱՐ - (*Ինքն էլ է զննում*): Վատ
չէ... Ասում ես՝ ում համար է:

ՄԱՐԻԱՄ - Գոռի:

ԳՈՀԱՐ - Զիասկացա:

ՄԱՐԻԱՄ - Կիասկանաս: (*Նայելով
պատի ժամացույցին, շուտասե-
լուկով*) Ուրեմն, գլուխդ պտտվեց,
ընկար ու ձեռքդ վնասեցիր: Տնս,
չխառնես:

ԳՈՀԱՐ - (*Նրա տոնով*): Ուրեմն՝
ոտքս սոթ տվեց, ընկա ու ձեռքս
վնասեցի: Տնս, չխառնես: (*Ար-
դեն՝ խիստ*) Իսկ հիմա բացատ-
րիր:

Դուռը բակում են:

ՄԱՐԻԱՄ - Քեզ Գոհար կասեն,
ինքդ կիասկանաս: (Գնում է դու-
ռը բացելու:)

ԳՈՀԱՐ - (քրի տակ): Գոռը դեռ
մոտն է՝ ալիքները խառնել է, բա
որ մենակ մնա, ո՞նց է դիմանալու:
(Ուղղում է վիրակապը:) Բա
մենք ոնց ենք դիմանում:

Տեսարան 16

Մարիամը գալիս է Սոնայի հետ:

ՍՈՆԱ - Բարև, տիկին Գոհար:

ԳՈՀԱՐ - (*Վիրածելով ցույց չտալ
զարմանքը*): Բարև, Սոնա ջան:

ՄԱՐԻԱՄ - (*Սոնային*): Գոհարն ա-
սաց՝ մեր Սոնային կանչիր՝ օգնի:

ԳՈՀԱՐ - Ես ասի... (*Մարիամի հա-
յացքից սթափվելով*) Հա, ասի՝
ոչ միայն կօգնի, համ էլ կփրկի:

ՍՈՆԱ - Ես...

ՄԱՐԻԱՄ - Դու: Գոհարն ասաց, որ
լավ կար ու ձև գիտես:

ԳՈՀԱՐ - Ես ասի... (*Ու նորից՝ Մա-
րիամի հայացքը*): Հա, ասի՝ ոչ
միայն կար ու ձև, արդուկ անել էլ
գիտի:

ՍՈՆԱ - (*զարմացած*): Դե... եթե ա-
սում եք:

ՄԱՐԻԱՄ - Գոհարը գիտի՝ ինչ է ա-
սում: Ինքն էլ ասաց, որ զանգեմ
քեզ:

ԳՈՀԱՐ - (թունու): Էդ երբ
զանգեցիր:

ՄԱՐԻԱՄ - (*Երկիմաստ*): Ձեռքդ
կապելուց առաջ:

ԳՈՀԱՐ - (ձեռքն այնպես է զննում, ասես նոր տեսավ): Ո՞նց էի մոռացել...

ՍՈՒԱ - Ցավիմ է:

ԳՈՀԱՐ - (թունու): Հատկապես, երբ կարում եմ:

ՍՈՒԱ - (հասկանալով ակնարկը՝ մոտենում է կարի մեքենային):

Բա որ կարերը ծնու լինեն:

ՄԱՐԻԱՄ - Կարևորը՝ կարերը լինեն:

ԳՈՀԱՐ - (հազիվ զսպելով իրեն): Ուղիղ, քանոնով գծած, շարմադ կարերս...

ՍՈՒԱ - Ի՞նչ...

ՄԱՐԻԱՄ - Ընկնելուց հետո ինքն իրեն խոսում է: Ուշադրություն մի դարձրու, դու կարիր, աղջիկս:

ԳՈՀԱՐ - (տեսնելով, թե ինչ անվարժ է աղջիկը կտորը դնում ասեղի տակ՝ փակում է աչքերը, հետո, չդիմանալով, մի աչքը բացում՝ հետևում է:) Ինչ կարեր էին...

ՍՈՒԱ - Բան ասիք, տիկին Գոհար:

ԳՈՀԱՐ - (համակերպված դառնությամբ): Ասում եմ՝ սուրճ խմեմ: Ներվերը բթացնում է:

ՄԱՐԻԱՄ - Գնանք խոհանոց, էն սուրճը եփեմ՝ ձեռքիդ ցավը մոռանաս:

ԳՈՀԱՐ - (աչքը՝ կտորեղենին): Անհնար է:

ՄԱՐԻԱՄ - (Սոնային): Քեզ չենք խանգարի:

Մարիամն ու Գոհարը մտնում են խոհանոց:

ՍՈՒԱ - (նյարդայնանում է): Թե ո՞ր օրվա կար անողն եմ... Մաման ասաց՝ Մարիամ մորաքոյրը շտապ կանչում է... ո՞ֆ, մատս ծակեցի... Մտածեցի՝ օգնելու բան կա, բայց կարել...

Տեսարան 17

Դուքը բացվում ե, ներս է ըմկնում գոռը:

ԳՈՌ - Մամ... (Տեսնելով Սոնային:) Սոնա:

ՍՈՒԱ - Ես եմ:

ԳՈՌ - Փոխվել ես, չձանաչեցի... Մաման ո՞ր է:

ՍՈՒԱ - Խոհանոցում Գոհարի համար սուրճ է եփում:

ԳՈՌ - (փլվելով աթոռին): Մտքովս ինչ ասես՝ անցավ:

ՍՈՒԱ - Մտքովդ ձիշտ է անցել...

ՎԱՀԱՆ - (տեղից վեր թռնելով): Ի՞նչ...

ՍՈՒԱ - Գոհարն ընկել, ձեռքը վնասել է:

ԳՈՌ - Գոհարը... նա կյանքում է ընկել...

Տեսարան 18

Նրանք և Մարիամ, Գոհար:

ԳՈՀԱՐ - (լսել է Գոռի ասածը): Ապրի արևդ, ես ընկնեմ... (Մարիամն աննկատ խփում է ձեռքին:) Ուրս որ սոթ չտար՝ ես ընկնողն էի:

ԳՈՌ - (Մարիամին): Հեռախոսով էնպես խոսեցիր, մտածեցի՝ բան է պատահել:

ԳՈՀԱՐ - (կեղծ բարկությամբ): Ուրեմն ձեռքս՝ հնչ...

ԳՈՌ - (Գոհարին): Ասածիդ հավատացիր:

ԳՈՀԱՐ - Կեղծավոր... որպես տուգանք՝ կրածրանաս ու պատուհանի բարձրությունը կշափես: Ամեն պատուհանը՝ առանձին:

ԳՈՌ - Չհասկացա, մեր պատուհանների բարձրությունը նույնը չէ:

ԳՈՀԱՐ - Որ ասում եմ, ուրեմն տարբեր է: Սոնային էլ կօգնես:

ԳՈՌ - Բա դո՞ւք:

ՄԱՐԻԱՄ - Մենք, համենայնդեպս, գնանք բուժակի մոտ: (Գոհարին.) Գնացինք:

ԳՈՀԱՐ - (զննելով ձեռքը): Քեզ համար հանգիստ կարում ես, ու մեկ էլ՝ պատուհանից ընկար:

ՄԱՐԻԱՄ - (նրան դեպի դրուր հրելով): Գնանք, որ շուտ գանք:

ԳՈՀԱՐ - (շեմից շրջվելով՝ բազմանշանակ): Ինչքան հնարավոր է՝ ուշ... ուզում էի ասել՝ շուտ կգանք:

Գնում եմ:

Տեսարան 19

ԳՈՌ, Սոնա:

Սենյակում լարված լուրջյուն է: Սոնան զլոխը չի բարձրացնում մեքենայից: Գոռ մեկ նրան է նայում, մեկ պատուհաններին, հետո անսպասելի քոչում է մեկի գոգին: Կանգնում, հայացքով ինչ-որ քան է փնտրում, հետո նա-

յում է Սոնային: Նա կարծես չի նկատում շուրջը կատարվողը: Լուրջյունը երկարում է: Ի վերջո, չհամբերելով, աղջկը փորձում է աննկատ նայել Գոռին ու հանդիպելով նրա հայացքին՝ շփոքվում է: Բայց դա կարճ է տևում. հաղթահարելով կաշկանդումը՝ այս անգամ ուղիղ նայում է Գոռին:

ՍՈՆԱ - Պրոբլեմ կա:

ԳՈՌ - Կա:

ՍՈՆԱ - (մեքենայի դարակից հանում է մետրաչափը, բարձրանում է տեղից, մոտենում է նրան): Սա է պրոբլեմը:

ԳՈՌ - Լավ էլ շուտ հասկացար... (Ասես նոր է տեսնում աղջկան:) Ուրեմն՝ էն Սոնան դու ես:

ՍՈՆԱ - Ո՞ր Սոնան:

ԳՈՌ - Նիհարիկ, քթիդ՝ պեպեններ...

ՍՈՆԱ - Ինչ էլ հիշում ես... (Տալով մետրաչափը:) Գործի անցիր:

ԳՈՌ - (սկսում է իրր չափումներ անել, որոնք հեռավոր նմանություն չունեն տրված հանձնարարության հետ): Բանտիկն էլ միշտ գլխիդ...

ՍՈՆԱ - (հետևելով նրա անկապ շարժումներին՝ անմիջական պարզությամբ): Գոնե հասկանո՞ւմ ես՝ ինչ ես անելու:

ԳՈՌ - Չեմ էլ պատկերացնում: Իսկ դո՞ւ:

ՍՈՆԱ - Ես պատկերացնում եմ, բայց զգիտեմ՝ ինչպես անեմ:

ԳՈՌ - (ինչ-որ բան որոշելով):
Գնանք այգի:

ՍՈՆԱ - Ո՞ւր:

ԳՈՌ - Ժիրայրն ու Հասմիկը էնտեղ
են... Մենակ տեսնես՝ ինչ գեղեց-
կություն է:

ՍՈՆԱ - Ոնց որ մենք այգի չունենք:

ԳՈՌ - Բայց մերը ձերում է: Գնանք:

ՍՈՆԱ - (զիսի շարժումով ցոյց տա-
լով կարի մեքենան): Բա սամ...

ԳՈՌ - Չի փախչի: (Ցած է թռչում,
արդեն չքաքցնելով հիացմունքը:)

Իսկ դու սիրունացել ես:

ՍՈՆԱ - Վարդոյի աղջկան չեմ հաս-
նի:

ԳՈՌ - Նրա մասին որտեղից գիտես:

ՍՈՆԱ - Ուրեմն՝ գիտեմ:

ԳՈՌ - Ուրեմն, պիտի գիտենաս, որ
նա ամուսնացել է:

ՍՈՆԱ - Ուրեմն՝ չսպասեց:

ԳՈՌ - Ուրեմն... (Ծիծաղում է, Սո-
նան միանում է նրան:) Գնա-
ցինք...

ՍՈՆԱ - (Նայում է կարի մեքենային,
Գոռին): Գնացինք:

Արագ դուրս են գնում:

Տեսարան 20

Ներս են մտնում Հասմիկն ու
Ժիրայրը:

ՀԱՍՄԻԿ - Էս ո՞ւր են:

ԺԻՐԱՅՐ - Մարիամը Գոռին կան-
չեց, երևի գործ կար... Գոհարն էլ,
հաստատ, իր Արսենին է կերակ-
րում:

ՀԱՍՄԻԿ - (մոտենալով կարի մեքե-
նային): Ոնց որ կարած ու քան-
դած է...

ԺԻՐԱՅՐ - Չէ հա...

ՀԱՍՄԻԿ - Հա, էլի... կարի տեղերը
երևում են... ըիր, էստեղ էլ թել է
մնացել...

ԺԻՐԱՅՐ - (ստուգելով պատերը:)
Ներկը չորացել է: Առավոտ շուտ
հատակը որ ներկենք, մինչև գի-
շեր կչորանա:

ՀԱՍՄԻԿ - Հա՞ որ...

ԺԻՐԱՅՐ - Ֆիննական ներկ է,
չկասկածես...

Տեսարան 21

Դուռն աղմուկով քացվում է, ներս
է խուժում Նարինեն:

ՀԱՍՄԻԿ - Նարինեն...

ՆԱՐԻՆԵ - Մամաս ո՞ւր է:

ԺԻՐԱՅՐ - Ծաբաթ չպիտի գայիր...

ՆԱՐԻՆԵ - Հա, մաման որ չզան-
գեր...

ԺԻՐԱՅՐ, ՀԱՍՄԻԿ - (միասին):
Ե՞րբ է զանգել:

ՆԱՐԻՆԵ - Դուք... չգիտե՞ք:

ԺԻՐԱՅՐ - (Հասմիկին): Գիտեիր:

ՀԱՍՄԻԿ - (Ժիրայրին): Դու էլ չգի-
տե՞ս...

ԺԻՐԱՅՐ - Բայց ինչ է ասել, որ
զիսապատառ եկել ես:

ՆԱՐԻՆԵ - (նմանակելով Մարիա-
մին): Զննությունդ կտաս թե չէ՝
էստեղ լինես:

ՀԱՍՄԻԿ - Ե՞րբ զանգեց:

ՆԱՐԻՆԵ - Գիշերը:

ԺԻՐԱՅՐ - Բա չհարցրիր...

ՀԱՍՄԻԿ - Հարցրի: Նոյնը կրկնեց:

ՀԱՍՄԻԿ - Մինչև Մարիամը չգա՝ բան չենք իմանա: Մոտ արի՝ համբուրեմ...

ՆԱՐԻՆԵ - Վայ, ծիշտ որ, բարով տեսանք... (*Պայուսակը գցում է հատակին, գրկում Հասմիկին, խանդաղատանքով ու քիչ քաշվելով ձեռքը դնում է կլոր փորին:)*) Ո՞նց է...

ՀԱՍՄԻԿ - Ամբողջ օրը տոտիկներով խփում է, ֆուտբոլ է խաղում:

ԺԻՐԱՅՐ - Տղան բա ինչ պիտի անի... (*Ձեռքերը լայն տարածելով:*) Ինձ չեմ ուզում համբուրել:

ՆԱՐԻՆԵ - Քենի ջան... (*Ընկնում է ժիրայրի գիրկը:*) Ո՞նց էի քեզ կարոտել...

ԺԻՐԱՅՐ - Էնքան, որ նոր հիշեցիր...

Ուրախ քաշընց, գրկախառնորդում:

Տեսարան 22

Նրանք և Մարիամ, Գոհար:

ԳՈՀԱՐ - Էս Նարինեն է...

ՆԱՐԻՆԵ - (*նետվում է մոր կողմը:*) Ի՞նչ է պատահել:

ՄԱՐԻԱՄ - (*գրկում, համբուրում է աղջկան, հանդարտ:*) Որ համբերես՝ կիմանաս, հիմա թող, նայեմ քեզ... (*Աղջկան զննում է՝ անկարող թաքցնել մայրական հպարտությունը:*) Չես նիհարել... ի՞նչ ստացար:

ՆԱՐԻՆԵ - 8:

ԳՈՀԱՐ - Ի՞նչ...

ՆԱՐԻՆԵ - Ձեր ժամանակ դա 4-ն էր:

ԳՈՀԱՐ - Ինչ ասես՝ չեն հորինի...

Արի, էդ սիրուն աչքերդ մի հատ պաշեմ... (*Համբուրում է:*) Գեղեցկուին:

ՆԱՐԻՆԵ - 1 մետր 65 սանտիմետրանոց գեղեցկուին չի լինում:

ԺԻՐԱՅՐ - Գեղեցկությունը որ բոյով չափվեր, էլ ինչ կուգեինք... Մեր փեսան ո՞ւր է:

ՆԱՐԻՆԵ - Ծաբաթ կգա, ոնց պայմանավորվել էինք: (*Անհանգիստ հայացքը մորից չի կտրում:*) Մա, Գոռն ո՞ւր է:

ԳՈՀԱՐ - (*նոր հիշելով՝ շուրջն է նայում:*) Էս... Սոնա՞ն ուր է...

Բոլորը, Մարիամից քացի, զարմացած նայում են Գոհարին:

ՀԱՍՄԻԿ - (*նոր նկատելով Գոհարի վիրակապը:*) Էս... ձեռքի՞ն ինչ է պատահել:

ԳՈՀԱՐ - (*Մարիամին:*) Ի՞նչ է պատահել:

ՄԱՐԻԱՄ - (*նոյն հանդարտությամբ:*) Հոդացավ է, կանցնի:

ԳՈՀԱՐ - Որ ասում ես՝ հոդացավ է, ուրեմն կանցնի, թե չէ՝ ցավ է առել... Քանդիմ:

ՄԱՐԻԱՄ - Բայց ինչո՞ւ ես կապել, որ ինձ ես հարցնում...

ԳՈՀԱՐ - (*լրիվ շինթահար, ինքն իրեն:*) Էսօր ի՞նչ երազ եմ տեսել:

ԺԻՐԱՅՐ - Կանանց բատայոնը որ հավաքվեց՝ իմ գնալու ժամանակն է:

ՀԱՍՄԻԿ - Ո՞ր...

ԳՈՀԱՐ - Մեկնումեկի մեքենան վերանորոգելու:

ԺԻՐԱՅՐ - Գոհարը երբեք չի սխալվում: (*Համբուրում է Հասմիկին, կամաց:*) Իմացիր՝ ինչու է կանչել Նարինենին:

ՀԱՍՄԻԿ - (կամաց, իբր՝ վրեժիննդիր): Կիմանամ ու չեմ ասի:

ԺԻՐԱՅՐ - (բարձր): Էրեխեն ճամփա է եկել, հաց տվեք, Հասմիկի

վիտամիններն ել չմոռանաք... (Դուն մոտ շրջվելով, Գոհարին:)

Եղ կարում-քանդում եք, որ նորից կարեք-քանդեք...

ՄԱՐԻԱՄ - (կանխելով Գոհարին): Պրոֆեսիոնալ գաղտնիք է:

ԳՈՀԱՐ - (քանդելով վիրակապը): Դե, որ ասում ես...

ԺԻՐԱՅՐ - (Մարիամին, ծանր շեշտով): Թե իմանաս, ոնց է դուրս գալիս էդ քո անբնական հանգստությունը: (Դուրս է գնում:)

Լուրջուն է տիրում, բոլորն ասես խուսափում են իրար նայել:

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Տեսարան 23

Նույն օրը: Խոհանոցում ճաշի պատրաստություն են տեսնում Մարիան ու Նարինեն:

ՆԱՐԻՆԵ - Մամ...

ՄԱՐԻԱՄ - Գոհը Մոսկվա է գնում:

ՆԱՐԻՆԵ - Ո՞նց թե...

ՄԱՐԻԱՄ - Գնում է:

ՆԱՐԻՆԵ - Գոյցե ժամանակավոր է... կաշխատի, մի քիչ փող կհավաքի ու կզա:

ՄԱՐԻԱՄ - Դու քո ասածին հավատացիր: Գյուղից ով գնացել՝ չի եկել: Ընտանիքն էլ հետն է տարել:

ՆԱՐԻՆԵ - Մի կողմից էլ... էստեղ որ մնա՝ ինչ... ոչ կարգին գործ կա,

ոչ... (Տեսնելով մոր հայացքը:) Դե, խոսում ենք...

ՄԱՐԻԱՄ - Թեզ չեմ կանչել, որ նրա գնալը արդարացնես: Էստեղ դրա պակասը չկա, քեոիդ հերիք է:

ՆԱՐԻՆԵ - Ես ինչ կարող եմ անել:

ՄԱՐԻԱՄ - Զգիտեմ... Մտածեցի՝ կանչեմ, խելք-խելքի տանք... Հորդ տունը քանդվում է:

ՆԱՐԻՆԵ - (գրկում է մորը): Ինչ ես ասում...

ՄԱՐԻԱՄ - Մտածում էի՝ տղաս բանակից կգա, տանը տեր կկանգնի...

ՆԱՐԻՆԵ - Կարող է՝ ինձ էլ ես մեղադրում, որ ես...

ՄԱՐԻԱՄ - Ծատ կուզեի, որ դու էլ

մոտս լինեիր, բայց աղջկա բախ-
տը ուրիշ է... (Խորամանկ նայելով
աղջկան:): Քեզ շատ է սիրում:

ՍԱՐԻՆԵ - Մամ...

ՄԱՐԻԱՄ - Զան: Խենթի պիտի:

ՍԱՐԻՆԵ - Մամ, հիմա ով է էդ բա-
ռերն ասում:

ՄԱՐԻԱՄ - Էդ բառերը բոլոր ժամա-
նակների համար են: Ու էդ էր
պակաս, որ իմ գեղեցկուհուն խե-
լագարի պես չփրի:

ՍԱՐԻՆԵ - Հանգստացիր, սիրում է:

ՄԱՐԻԱՄ - (ηավադիր տոնով): Ա-
ռանց քեզ չի կարող... թեկուզ մի
ծր...

ՍԱՐԻՆԵ - Իհարկե, չի կարող:

ՄԱՐԻԱՄ - Ուր որ գնաս, կիետնի
քեզ:

ՍԱՐԻՆԵ - (գուշակելով մոր միտքը):
Հո տնինսա չե՞ն ուզում բերել:

ՄԱՐԻԱՄ - Ինչո՞ւ տնինսա... Գյու-
ղում քանի ազատ տուն կա՝ մեկը
մեկից լավը:

ՍԱՐԻՆԵ - Չեղավ... Նոր չասիր, որ
աղջկա բախտն ուրիշ է: Էնպես
որ, զբաղվենք Գոռի պրոբլեմով:

ՄԱՐԻԱՄ - (կասկածելի խոնար-
հությամբ): Ոնց կասես:

ՍԱՐԻՆԵ - Մամ, ինձ շանտաժի են-
թարկեցիր, որ միասին խանգա-
րենք Գոռի գնալը, հա՞...

ՄԱՐԻԱՄ - Էսօրվա քննությունդ
ի՞նչ էր:

ՍԱՐԻՆԵ - Տրամաբանություն:

ՄԱՐԻԱՄ - Հոնց դասախոսիդ գլխին:
10-ից պակաս չպիտի նշանակեր:

Ծիծաղելով ուտեստեղեն են տա-
նում սենյակ:

Տեսարան 24

Սարիամն ու Նարիմեն սեղան են
բացում: Գոհարն ավարտում է
կարք: Հասմիկը նստած հետևում
է նրանց:

Ներս են նստնում Սոնան ու Գոռը:
Այդքան մարդ տեսնելով՝ հան-
կարծակի են գալիս: Սոնան
շփորփած նետվում է դեպի կարի
մեքենան:

ՍՈՆԱ - Ես հիմա... հիմա կկարեմ...

ԳՈՐ - (Հասմիկին): Մենք էլ այգում
ենք ձեզ փնտրում:

ՄԱՐԻԱՄ - Գոռ, տես, ով է եկել:

ԳՈՐ - (տեսնելով խոհանոցից դուրս
եկող Լարինեին): Լարինչոն...
(Գրկախառնվում են:)

Գոհարը գրպանից հանելով վի-
րակապը՝ հայացքով հարցնում է
Մարիամին՝ կապե՞մ: Սոնան
տեսմելով, որ կարճ արված է՝
զարմացած նայում է մենք
Գոհարին, մենք Մարիամին, ոքը
հետևում է զավակների հանդիպ-
մանը:

ՄԱՐԻԱՄ - (Գոհարին): Վերջապես
կողմնորոշվիր՝ հոդացած է, թե՞
բան չկա: (Սոնային.) Ապրես,
աղջիկս, շատ լավ ես կարել: Իսկ
հիմա նստեք ձաշելու:

Բոլորը, ասես իրամանով, մոտե-
նում են սեղանին ու... բարձր ծի-
ծաղում: Սենյակում աթոռ չկա:

Տեսարան 25

Օրացույցի վրա՝ «Հիջարքի»:
**Կեսօրն անց: Նարինեն ու Սո-
 նան վարագույրներն են կախում:**

ՆԱՐԻՆԵ - Ինչո՞ւ ես հեռակա սովո-
 րում:

ՍՈՆՍ - Երկրորդ ինֆարկտից հետո
 մամայիս ո՞ւմ թողնեի... Պապան՝
 ի՞նչ... ասենք, կարտոֆիլ տապա-
 կեց կամ ձու խաշեց... բա արդուկ,
 լվացք, այգի... Ո՞ր մեկն անի, ա-
 ռանց էդ էլ մորս հիվանդությունից
 հետո շատ է խեղճացել...

ՆԱՐԻՆԵ - (*իր «գիճն» է առաջ տա-
 նում*): Բայց ամբողջ կյանքդ
 նրանց հետ չեմ ապրելու:

ՍՈՆՍ - Միակ երեխան լինել էլ սա է:

ՆԱՐԻՆԵ - Միակ երեխան էլ մի օր
 պիտի սիրի, ամուսնանա ու...
 (*Բջջայինը զանգում է: Նայում է
 էկրանին, ուզում է պատասխա-
 նել, բայց մտածելով, որ խոսակ-
 ցությունը չարժի ընդհատել,
 անջատում է ձայնը, բայց ապա-
 րատը պահում է ձեռքում: Սոնա-
 յի հետ խոսելու ընթացքում
 հեռախոսն անընդմեջ զանգում է,
 Նարինեն նոյն կերպ նայում է էկ-
 րանին ու անջատում է:) Ու՝
 թըռո... հայրական տնից:*

ՍՈՆՍ - Զգիտեմ, հիմա կարևոր
 մամայիս առողջությունն է:

ՆԱՐԻՆԵ - Քեզ պես աղջիկ որ ունի,
 ամեն ինչ լավ կլինի:

ՍՈՆՍ - Դու իմ տեղը լինեիր՝ նոյնը
 չէ՞ր անի:

ՆԱՐԻՆԵ - (*հանկարծակիի գալով*):
 Զգիտեմ...

ՍՈՆՍ - Ոչ մեկն էլ չգիտի, բայց երբ
 դա պատահում է, հասկանում ես,
 որ այլ կերպ վարվել չես կարող:
 Ես էլ կուզենայի ուսանողական
 կյանքը վայելել... Բայց չեմ ափ-
 սոսում:

ՆԱՐԻՆԵ - (*ակամա հարգանքով*):
 Ինչ լավն ես, Սոնա:

ՍՈՆՍ - (*շիոթվելով*): Իսկ դու գե-
 ղեցկուիի ես, հագուստդ էլ ուրիշ
 է... մեզ համար անսովոր: (*Նայում
 է պատի ժամացուցին:*)

ՆԱՐԻՆԵ - Ծտապում ես:

ՍՈՆՍ - Մի քիչ... ծաշը պիտի եփեմ:

ՆԱՐԻՆԵ - Իսկ... եթե սիրահարվեմ:

ՍՈՆՍ - (*հանկարծակիի եկած*):
 Երբ...

ՆԱՐԻՆԵ - Ասենք՝ վաղը... Ու նա քեզ
 վերցնի ու տանի:

ՍՈՆՍ - Ո՞րի...

ՆԱՐԻՆԵ - Ինչո՞ւ չես հարցնում՝ ով,
 միանգամից ծշտում ես՝ ո՞ր:

ՍՈՆՍ - (*շիոթված*): Ես գնամ, համար...

ՆԱՐԻՆԵ - (*անտեսելով նրա շիո-
 թությունը*): Բա որ քեզ վերցնի ու
 տանի:

ՍՈՆՍ - (*պայթում է*): Ճամպրուկ չեմ,
 որ վերցնի ու տանի, ու, հետո, ես
 ոչ մի տեղ գնալ չեմ կարող, չեմ
 հասկանում... (*Դուք է նետվում:*)

ՆԱՐԻՆԵ - (*ինքն իրեն*): Դու նոյնիսկ
 չես պատկերացնում, թե ո՞նց եմ
 հասկանում: (*Գոհ ժպտում է, հե-
 ռախոսի համար է հավաքում:*)
 Կարեն, ներիր, չէի կարող պա-
 տասխանել... Պատկերացրու,
 շատ կարևոր խոսակցություն էր...
 Հա, ընդհատել չէի կարող... Ում
 հետ... Միայն չփորձես խանդի

տեսարան սարքել, թեև ուշքս գնում է, երբ խանդից աչքերդ ճակատդ են թռչում... Լավ, լավ, լրջացա... Սոնայի հետ էի խոսում: Ով է Սոնան... Ինձ թվում է՝ եղբօրս ապագա կինը: Ասացի՝ ապագա, լավ չես լսի՞մ: Բայց ովկ ասաց, որ Գոռն ամուսնացած է... (Համակերպված լսում է, բայց հանկարծ զայրանում է:) Ինչ, ում եմ հանդիպել... ինչ առաջին սեր... Կարեն, վերջ տուր, ես մեր տանն եմ ու մենակ: Հա, ոչ ոք չկա: Ասում եմ՝ մենակ եմ... Բանոր ում հետ էի խոսնիմ, եթե մենակ եմ... Կարեն, լսիր... Կարեն... (Այն կողմում հեռախոսն անջատում են: Նարինեն մի քանի անգամ համար է հավաքում՝ պատասխանող չկա: Տագնապած հեռախոսն անջատում, գնում է դեպի դուռը: Ծեմին բախվում է Մարիամի հետ:)

ՄԱՐԻԱՄ - Ինչ ասաց Սոնան:

ՆԱՐԻՆԵ - Չես սխալվել, Սոնան էս տեղից գնացողը չէ:

ՄԱՐԻԱՄ - Բա ինչո՞ւ ես գույնդ գցել:

ՆԱՐԻՆԵ - Եթե չեմ սխալվում, Կարենն էլ էստեղ եկողը չէ: (Արագ դուրս է գնում:)

Մարիամն ուզում է հետևել, դրսից լսում է Նարինեի ճայնը:

ՆԱՐԻՆԵ - Մամ, ամեն ինչ նորմալ է, քիչ հետո կզամ:

Հասկանալով, որ աղջիկն ուզում է մենակ մնալ, մտագրաղ նստում է:

Տեսարան 26

ՄԱՐԻԱՄ - (ներս մտնող Գոռին):

Ո՞ր էիր:

ԳՈՐ - Գոհարի անտենան դգեցի, իսկ ինքը Հասմիկի սուրճի բաժակն է նայում: (Դադարից հետո:) Էս... ո՞ր է:

ՄԱՐԻԱՄ - Ո՞վ:

ԳՈՐ - Նարիննեն:

ՄԱՐԻԱՄ - Դրսում է: Իսկ Սոնան լավ աղջիկ է:

ԳՈՐ - (իրը՝ անտարբեր): Ըետո՞ ինչ:

ՄԱՐԻԱՄ - Ոչինչ:

ԳՈՐ - Այսինքն...

ՄԱՐԻԱՄ - Կարծեմ՝ պատրաստվում ես գնալու...

ԳՈՐ - Լավ իիշեցրիր: (Գնում է դեպի դուռը:)

ՄԱՐԻԱՄ - Ո՞ր:

ԳՈՐ - Պատրաստվելու:

Գոռը գնում է: Մարիամը քևաթափ գլուխն առնում է ձեռքերի մեջ:

Տեսարան 27

Նոյն օրը, երեկոյան: Գոհարն ու Հասմիկը նորածնի օժիտով են զրադիված: Մարիամը աշակերտական տեսրերն է ստուգում: Նարինեն եղունգներն է հարդարում, աչք՝ սեղանիկին դրված հեռախոսին, որն համառորեն լրաւ է:

ԳՈՀԱՐ - Չորս թոռ ունեմ, չորսն էլ՝ հեռակա: Մարդ էլ գյուղի բոլոր էրեխեքի լողացնողը լինի ու գոնե

սեփական մի թոռին չլողացնի:
ՀԱՍՄԻԿ - Դուք էլ մի անգամ գնացեք, էի...»

ԳՈՀԱՐ - Չէ, մեկ որ գնացինք,
 կմտածեն՝ հա գնալու ենք: Իսկ էսպիս՝ գիտեն, որ իրենք պիտի գան:

ՄԱՐԻԱՄ - Աչքիս՝ չեն շտապում գալ:

ԳՈՀԱՐ - Ոչինչ, մեր համբերությունը ծով է, որ չմեռնենք՝ հաստատ կսպասենք:

ՄԱՐԻԱՆ - Ախր, ն ձեզ եք տանջում, և իրենց:

ԳՈՀԱՐ - Գիտեմ, իերն էլ էնտեղ է անխոս մղկտում, բայց դիմանում ենք: Իրենց չկարողացանք զյուղում պահել, մեզ էլ որ չպահենք, քանի գրոշ արժենք:

ՄԱՐԻԱՆ - (*զարմացած հարգանքով*): Մտքովս չեր անցնի, որ դուք... (*Բառն է փնտրում*)

ԳՈՀԱՐ - Էծի պես համան եմ:

ՄԱՐԻԱՆ - Չէ, ուրիշ եք:

ՀԱՍՄԻԿ - Թե ովէ է հնարել էս օտարությունը:

ՄԱՐԻԱՄ - Մարդու մեջ նստած օտարը:

ՄԱՐԻԱՆ - Լավ է հնչում, ոնց որ՝ դպրոցում, բայց ոչինչ չի ասում:

ՄԱՐԻԱՄ - Թեզ չի ասում, իսկ Գոհարին ասում է:

ՀԱՍՄԻԿ - (*կամաց*): Ինձ էլ է ասում...

Ծանր լրություն:

ՄԱՐԻԱՄ - Էս ի՞նչ լրջացաք: (*Տեսրերը հավաքելով*): Հիմա լրտո կխաղանք՝ դեմքներդ բացվի:

(Դարակից հանում է լոտոյի տոպրակը:) Փողով ենք խաղում:
ՄԱՐԻԱՆ - Ո՛վս, սադիդ կրեմ...

Աշխույժ իրարանցում: Սեղանը մաքրում են, շարվում շորջը: Մարիամը տոպրակը տալիս է Գոհարին: Նա վարպետորեն խառնում է տոպրակի միջի քարերը: Մյուսները դասավորում են քարտերը:

Տեսարան 28

Ներս են մտնում Սոնան ու Գոռը: Սի պահ բոլորը նայում են նրանց, ինտո շարունակում իրենց գործը, ասես նրանց՝ երկու սովորական բան է:

ԳՈՌ - Էս ի՞նչ գործի եք:

ՀԱՍՄԻԿ - Լոտո ենք խաղում:

ԳՈՀԱՐ - Ճիշտ ժամանակին եկաք:

ՄԱՐԻԱՆ - (*ձեռքերը շփելով*): Ձեզ էլ եմ կրելու:

ԳՈՌ - Եղ իետո կերևա...

Աքոռներ են բերում, իրար կողք նստեցնում նորեկներին: Սկավում է խաղը: Կանայք աշխատում են չմայել Գոռին ու Սոնային, բայց իրար ուղղված նրանց հայացքներում համբ խոսակցություն է ընթանում:

Տեսարան 29

Նրանք և Ժիրայր:

Ժիրայրը, դեռ չնկատված՝ հետևում է խաղաղողներին: Նրա դեմքին խորանանկ ժախտ է հայտնվում:

ԺԻՐԱՅՐ - (*առաջ գալով*): Շատ չեմ ուշացել:

ՀԱՍՄԻԿ - Ճիշտ ժամանակին եկար:

ԺԻՐԱՅՐ - Քեֆի հոտը կիլոմետրի վրա եմ առնում: (*Երկիմաստ:*) Վաղուց խնամախոս չեմ գնացել:

ՄԱՐԻԱՄ - (*հայացքով փորձում է լոեցնել եղբորը*): Տրամադրությունի լավ է:

ԺԻՐԱՅՐ - Տրամադրությունը կապ չունի, կարևորը՝ Գոռը ժամանակին կողմնորոշվեց:

ՄԱՐԻԱՄ - (*իզոր փորձելով փոխել թեման*): Ավելի լավ է՝ խաղա: Նարինեն խոստացել է բոլորին հաղթել:

ԺԻՐԱՅՐ - (*անտեսելով ասվածը*): Խաղը հետաձգվում է: Լավ պատվեր ենք ստացել, պիտի գնամ: Առանց ինձ չի լինի: Գոռը ինձ հետ կգա, իսկ աշնանը կգանք ու...

ՀԱՍՄԻԿ - (*անսպասելիությունից բացում է ափը, լուրու հատիկները շրխկոցով թափվում են հատակին*): Ո՞նց թե՝ գնում ես... Բա ե՞ս...

ԺԻՐԱՅՐ - Դու՝ ինչ...

ՀԱՍՄԻԿ - Մոտս չես լինելու, երբ...

Սոնան հայացքը չի բարձրացնում:

ԺԻՐԱՅՐ - Կաշխատեմ գոնե երկու օրով գալ... (*Կամաց:*) Հասկացիր, էդ տեսակ պատվեր ամեն օր չեմ ստանում:

ՀԱՍՄԻԿ - Բայց դու խոստացել էիր...

ՄԱՐԻԱՄ - Եթե խոստացել է կկատարի, դու միայն չհուզվես: (*Ժի-*

րայրին.) Գոռին էլ ես խոստացել:

ԺԻՐԱՅՐ - Ինչ:

ՄԱՐԻԱՄ - Դու լավ գիտես՝ ինչ:

ԺԻՐԱՅՐ - Նորից քո էշն ես քշում...

Ինքն է խնդրել, հասկանո՞ւմ ես, ինքը:

ՄԱՐԻԱՄ - Ու դու համաձայնվեցիր:

ԺԻՐԱՅՐ - Իսկ ինչ պիտի անեի:

ՄԱՐԻԱՄ - Պիտի ասեիր, որ գնալու իրավունք չունի:

ԺԻՐԱՅՐ - Դո՞ւ ես որոշել էդ իրավունքը:

ՆԱՐԻՆԵ - (*տեսնելով, որ Սոնան փորձում է աննկատ գնալ*): Սպասեք... մի րոպե լոեք... Քեոի, ամեն ինչ փշացրիր:

Սոնան գնում է, Գոռը, մի պահ երկմտելուց հետո, հետևում է նրան: *Լուրջուն:*

Տեսարան 30

ՄԱՐԻԱՄ - (*փլվում է աթոռին*): Տեր Աստված, ինչո՞ւ է ավերվում տունս:

ՆԱՐԻՆԵ - Մամ, ժամանակից շուտ մի ողբա:

ԳՈԾԱՐ - Վախենամ՝ ողբը ուշացած է:

ՀԱՍՄԻԿ - (*Ժիրայրին*): Քո՞ գարածը, քո՞ բիզնեսը, քո՞ փողերը... Գոնե հասկացա՞ր, թե հենց նոր ինչ արեցիր:

ԺԻՐԱՅՐ - (*անկեղծ զարմանքով*): Բայց ինչ արեցի...

ՀԱՍՄԻԿ - Իսկապէս չես հասկանում:

ՄԱՐԻԱՄ - (*Հասմիկին*): Նրան ձեռնտու չէ հասկանալը: (*Ժիրայրին*.) Հորդ տունը որ փակեցիր ու գնացիր, չմտածեցիր, ինչ կլինի հետո, ծնողներիդ գերեզմանին մետրաչափ խոտ կածի, ես եմ, ու՝ չկամ: Մի քանի շաբաթով կնոշդ բերել ես օյուղ, քեզ... չէ, մեզ համոզելու, որ դեռ հիշում ես, լրիվ չես օտարացել: Դու լրիջ հավատում ես, որ էստեղ ծնված տղայիդ մի քանի ամսվա օդն ու ջուրն են հայ պահելու: Բայց հետո նա օտարի մանկապարտեզ է գնալու, օտարի դպրոց, ընկերներն էլ օտար են լինելու... Լավ, դա քո ընտրությունն է, բայց իմ տունն ինչու ես քանդում...

ՀԱՍՄԻԿ - Մարիամ, պետք չէ... քիչ հետո կզղաս ասածիդ համար, լոիր, խնդրում եմ...

ՄԱՐԻԱՄ - Չէ, հարսիկս, այսքան լոել եմ, էլ չեմ կարող:

ԺԻՐԱՅՐ - Դե, ասա՞ վերջապես, տեսնենք, ինչ է ասածդ:

Տեսարան 31

Նրանք և Գոռ:

ԳՈՌ - (*Ներս է մտնում, ոչ մեկին չնայելով, բայց խոսքն ուղղված է Ժիրայրին*): Ե՞րբ ենք գնում:

ԺԻՐԱՅՐ - (*Դադարից հետո*): Լուսաբացին:

ԳՈՌ - Մամ, քիչ առաջ իրավունքից էիր խոսում, ես իմ իրավունքից եմ օգտվում: Թե՞ դեմ ես:

ԳՈՀԱՐ - (*Սեղից ելնելով*): Ես գնամ:

ԳՈՌ - Ո՞ւր, բա չտեսնե՞ք, թե էս ա-

մենք ինչով է վերջանալու:

ԳՈՀԱՐ - Երկու անգամ տեսել եմ: Ինձ հերիք է: (*Դուրս է գնում*:

Տեսարան 32

ՄԱՐԻԱՄ - (*կամաց՝ Գոռին*): Սոնան ինչ ասաց:

ԳՈՌ - (*բարձրածայն*): Բարի ծանապարի: Դա ել նրա իրավունքն է:

ՄԱՐԻԱՄ - Իրավունքը լավ գիտես, բայց մի բառ էլ կա՝ պարտավորություն:

ԳՈՌ - Ո՞նց էի մոռացել... Պարտավորություն: Հայրենիքի հանդեպ... ո՞ր հայրենիքի:

ՄԱՐԻԱՄ - Գոռ, լոիր...

ՄԱՐԻԱՄ - Թող խոսի: (*Գոռին*.) Ո՞ր օրվանից ես հայրենիք բառը կասկածի տակ դրել:

ԳՈՌ - Վերջացնենք, միևնուն է՝ իրար չենք հասկանա:

ՄԱՐԻԱՄ - Ոչինչ է ապրելս, եթե հարազատ որդուս հասկանալ չեմ կարող: Ինչո՞ւ ես քմծիծաղում:

ԳՈՌ - Դարոցում շարունակո՞ւմ ես գրական հերոսներիդ օրինակով դաստիարակել աշակերտներիդ, ու նրանք հայրենիքը գրում են մեծատառով, ոնց որ ես էի գրում ժամանակին:

ՄԱՐԻԱՄ - Լոիր, լակոտ...

ԳՈՌ - (*ծանր դադարից հետո*): Լոեմ... ոնց որ լոել եմ: Որ չիմանաս... (*Լսում է, գլուխն առնում ձեռքերի մեջ*):

ՄԱՐԻԱՄ - Ի՞նչ չիմանամ...

ՄԱՐԻԱՄ - Լոեք, հա՞ զգում եմ, հիմա վատ բան է լինելու...

ՄԱՐԻԱՄ - (*մոտենում է Գոռին, վա-*

<p>Խով: Ի՞նչ ես արել, որ հիմա ամաչում ես ասել:</p> <p>ԺԻՐԱՅՐ - Գոյզ... աչքովս տեսնեմ՝ չեմ հավատա: Ու փակենք էս խոսակցությունը, բոլորս էլ ներվայնացած ենք: Մինչև առավոտ ժամանակ կա...</p> <p>ԳՈՌ - Ես էլ էի կարծում, որ ժամանակ միշտ կա, ու կարելի է մոռանալ...</p> <p>ԺԻՐԱՅՐ - (Դաժանանալով): Որ էդպես է՝ ասա:</p> <p>ՄԱՐԻԱՄ - Ինչո՞ւ ես լոել մի ամբողջ տարի:</p> <p>ԳՈՌ - (Նայում է մորը): Վստահ ես, որ ուզում ես իմանալ:</p> <p>ՄԱՐԻԱՄ - (Նստելով Գոյի դիմաց): Եթե չասեն՝ կրադարեմ քեզ հարգել:</p> <p>ԳՈՌ - Դա քո ամենամեծ պատիճն է, չ՞։ Կշարունակես սիրել, բայց չես հարգի:</p> <p>ԺԻՐԱՅՐ - Արդեն չափներդ անցաք...</p> <p>ԳՈՌ - Չէ, քեզի, ձիշտ չափի մեջ է: Զույր ու եղբայր չորս տարի չէիք կարողանում անկեղծ խոսել... Վերջը խոսեցիք: Հերթը իմն է: (<i>Մարիամին.</i>) Էլ երբեք հայրենիք բառը մեծատառով չեմ գրի: Ու չնայեն էդպես: Հայրենիքի համար զինվոր դարձա, որ պաշտպանեմ քեզ, հորս գերեզմանը...</p> <p>Քո խոսքերն են: Եղ միամիտ մողերով էլ բանակ զնացի, սնայպեր դարձա, որ սահմանի վրա թշնամուն վերացնեմ: Սահմանի փոխարեն մեզ երևան տարան: Մարտի մեկին երևանի փողոց-</p>	<p>ներում կանգնած զինվորներից մեկն էլ ես էի...</p> <p>ՄԱՐԻԱՄ - Ի՞նչ...</p> <p>ԳՈՌ - Ինչո՞ւ ես զարմանում: Ասենք, պիտի զարմանաս, ինձ ուղարկել էիր քո ասած հայրենիքի մարդկանց պաշտպանելու, ի՞նչ մտքովդ անցներ, որ տարելկանգնեցրել էին այդ նոյն մարդկանց դեմ:</p> <p>ՆԱՐԻՆԵ - (Նետվում, գրկում է Գոյին): Խեղճ ախաբերիկս... (Իր մտքից զարհուրած՝ ետ է քաշվում:) Ես էլ էի էնտեղ... արձանից քիչ վերևս... Մենք չէինք հավատում, որ զինվորներին մեր դեմ կհանեն... Մինչև վերջ չէինք հավատում: (<i>Կոտրված:</i>) Ու ոչինչ չէինք հասկանում:</p> <p>ԳՈՌ - Ես էլ չէի հասկանում, տղերքից ոչ մեկը ոչինչ չէր հասկանում: Մեզ գիշերով նստեցրին մեքենաներն ու բերեցին երևան: Հետո... նայում էինք իրար, նայում էինք մեր դեմ կանգնած մարդկանց ու... ոչինչ չէինք հասկանում: Ինչո՞ւ էին մեզ բերել էդտեղ, մենք ի՞նչ էինք անելու... Տղերքը, չգիտեմ՝ ոնց, ես Աստծուց մի բան էի խնդրում՝ կրակելու հրաման չտան: Աստծուց էի խնդրում, մամ, որովհետև մարդուց սպասելիք չունեի:</p> <p>ՆԱՐԻՆԵ - Մենք երկուսս էլ էնտեղ ենք եղել, գուցե իրար շատ մոտիկ... (<i>Զարհուրած:</i>) Միայն չասես, որի...</p> <p>ԳՈՌ - Եթե չեմ կրակել, ոչինչ չի փոխվում, ես անպաշտպան</p>
--	--

մարդկանց դեմ էի կանգնած:

ՄԱՐԻԱՄ - (գրկում է որդուն): Խեղձ
տղաս...

ԳՈՌ - Հայրս մահացավ զենքը ծեռ-
քին, որովհետև հայրենիքն էր
պաշտպանում: Իմ ծեռքին էլ
զենք կար, բայց ես ում էի պաշտ-
պանում, ում դեմ էի ելել...

ԺԻՐԱՅՐ - Բայց դու չես կրակել,
չէ...

ԳՈՌ - Մեր դիմաց մի կին էր կանգ-
նած, նայում էր մեզ ու լալիս էր:
Գեղեցիկ, լավ հագնված, քո
տարիքին, մամ... Ձեռքով մաք-
րում էր արցունքները, սանրված-
քը գգօվված... Նայում էր մեզ ու
լալիս էր: Մեկ էլ Աշոտն ասաց.
«Տղերք, ինքը մեզ վրա է լաց լի-
նում, տղերք, ինքը մեզ համար է
լաց լինում...»:

ԺԻՐԱՅՐ - (Մարիամին): Հիմի էլ ես
եմ մեղավոր:

ՄԱՐԻԱՄ - (ηաժանացած): Հիմա՝
ավելի շատ: Եթե դու չգնայիր,
քեզ նմանները չգնային՝ տղաս էդ
դժոխքը չէր տեսնի:

ԺԻՐԱՅՐ - Չհասկացա՞...

ՄԱՐԻԱՄ - Ամեն մեկդ որ թողնի-
գնա՞՝ մեր վիճակը էս կիխնի:

ԺԻՐԱՅՐ - Կարո՞ղ է՝ քենեդու մահ-
վան մեղավորն էլ ես եմ:

ՄԱՐԻԱՄ - Կատակնմ ես... Բայց
դու գիտես, որ մեղավոր ես:

ԺԻՐԱՅՐ - Դե, հերիք է, կուշտ եմ քո
քարոզներից, քո ծիշտ ապրե-
լուց... զոհված մարդուդ կարաբի-
նով սահման ես պահում, համ, իսկ
իրական սահման պահողները
գնում են, ու պիտի գնան,

փախչում են անհեռանկար տա-
րածքից: Մեկը ես՝ կովեցի, հաշ-
մանդամ դարձա, և ինչ... Ինքս
ինձ պահել չի կարող, հայրենի-
քիդ տված թոշակով ընտանիք
ոնց պահեի: Ու էլ բառ չասես, էս-
տեղ քո դպրոցը չէ: (*Տարիներով
կուտակվածը դուրս է ժայթքում:*)
Դու կարող ես միայն մեղադոել,
իսկ ես ապրել եմ ուզում, մարդա-
վարի ապրել... թեկուզ օտարութ-
յան մեջ: Ու ոչինչ չասես, ոչինչ
չեմ ուզում լսել, էս տանն էլ մի
րոպե չեմ մնա... (*Հասմիկին.*) Ծո-
րերդ հավաքիր:

ՀԱՍՄԻԿ - Քեզ ինչ եղավ:

ԺԻՐԱՅՐ - Զկրկնեմ: Հինգ րոպեից
մեքենայի մեջ լինես: (*Մարիա-
մին.*) Ո՞նց չես հասկանում, որ էս
հողը կորցրել է մարդուն պահելու
ուժը: Որովհետև ինձ չի պատկա-
նում, ինձ նմաններին չի պատ-
կանում, մենք ավելորդ ենք: Գոռ,
թե գալիս ես, քեզ էլ հինգ րոպե
ժամանակ: (*Արագ դուրս է գնում:*)

ՄԱՐԻԱՄ - Մամ, մի բան արա... ի՞նչ
ես լուսում... մամ...

ՄԱՐԻԱՄ - (անգոյն ծայնով): Ճա-
նապարիի ուտելիք դիր: (*Կանխե-
լով աղջկան:*) Արագ, դու էլ հինգ
րոպե ժամանակ ունես: (*Համրու-
րում է Հասմիկին, հետո գրկում է
Գոռին...* Գնում է իր սենյակը, ա-
նալմուկ փակում դրուը:)

Գոռն ու Հասմիկը՝ ամեն մեկը
գնում է իր սենյակը: Նարինեն
մտնում է խոհանոց: Քիչ անց

դուրս է գալիս Հասմիկը՝ փոքրիկ ուղեպայուսակով, նույն պահին գալիս է Գոռը՝ ուսապարկով: Գոռը մտնում է Հասմիկի սենյակը, այնտեղից դուրս է բերում ճամպրոկ, տանում է դուրս, վերադարձնում է: Խոհանոցից գալիս է Նարինեն, քոքե տոպրակը տալիս է Հասմիկին: Գրկում են իրար: Հասմիկը դուրս է գնում:

Տեսարան 33

Նարինեն և Գոռը նայում են նոր սենյակի փակ դռանը, իրար... Լուրջունը երկարում է:

ՆԱՐԻՆԵ - Եթե այդ օրը չլիներ, չէ՞ր գնա:

ԳՈՌ - Ինչ ես ուզում ասել:

ՆԱՐԻՆԵ - Ձո՞ գնալու պատճառը միայն դա է:

ԳՈՌ - Ուզում ես ասել, որ պատճառ եմ գտել գնալս արդարացնելու համար:

ՆԱՐԻՆԵ - Էղքան ցինիկ չեմ, բայց ուզում եմ լսել քո պատասխանը:

ԳՈՌ - Գուցե էլի գնայի, բայց... էսքան համոզված չէի գնա:

ՆԱՐԻՆԵ - Երկուսս էլ այնտեղ ենք եղել, թեկուզ՝ տարբեր կողմերում: Հիմա դու գնում ես, իսկ այդ օրվա ամբողջ ծանրությունը թողնում ես ինձ:

ԳՈՌ - Էղ ծանրությունը միշտ ինձ հետ կլինի:

ՆԱՐԻՆԵ - Չեմ հավատում, որովհետև հեռվում մոռանալը ավելի

հեշտ է: Ես չեմ, որ պիտի քեզ խրատ կարդամ, բայց մի բան գիտեմ՝ ամենահեշտը գնալն է: Դժվարը կարարինը մորս ուսից վերցնելն է: Թեկուզ ժամանակավոր գնաս՝ ամեն գիշեր ոնց ես քնելու, իմանալով, որ մայրդ քո փոխարեն քո տունն է հսկում:

ԳՈՌ - Իսկ դու գիտես, որ բանակից եկել եմ ու չգիտեմ՝ ինչ անեմ, ոնց ապրեմ... Գործ չկա, հոյս չկա... Գոնե ես չեմ տեսնում:

ՆԱՐԻՆԵ - Ժիրայրը որ չլիներ, գուցե տեսնեիր:

ԳՈՌ - Զգիտեմ... արդեն ուշ է: Մամային մենակ չթողնես, գոնես սկզբում...

ՆԱՐԻՆԵ - Չեմ թողնի, բայց որ մտածում եմ՝ ամեն գիշեր ոնց պիտի քնի, չիմանալով, թե դու որտեղ ես, ոնց ես...

Նարինեն գրկում է եղբորը՝ ուսերը ցնցվում են լացից: Այդպես գրկված դուրս են գնում: Գոռը մինչև վերջին պահը աչքը չի կտրում նոր սենյակի դրմից:

Դրսում լսվում է հեռացող մեքենայի ձայնը: Գալիս է արտասվող Նարինեն, մոտենալում է նոր դռանը, ականջը հպում, լսում է, հետո մտնում է իր սենյակը:

Տեսարան 34

Քիչ անց դուրս է գալիս Մարիամը:

ՄԱՐԻԱՄ - Գնացեք... Աստված անփորձանք տեղ հասցնի... Գնա-

ցեք: Ո՞չ առաջինն եք, ո՞չ վերջինը: Գնալու եք, վիրավորված, փնովելով կամ լալով, ետ նայելով կամ վերջին անգամ չշրջվելով՝ գնալու եք: Օտարի մեջ ձեր տեղն եք փնտրելու՝ ամեն վայրկյան վախենալով, որ հիշողությունը հանկարծ կխեղի ձեր կոկորդը ու որ չխեղիվեք՝ պիտի լաց լինեք: Բայց քանի որ արցունք ցույց տալու իրավունքը կորցրել եք՝ արցունքը պիտի ներս գնա, հասնի սրտին ու մրմուցնի: Տղաս, ներիր ինձ, որ զինվորի պատիվն են ապականել, բայց դեռ ջահել ես ու չես տարրերում հայրենիքը իշխանությունից: Ներիր, որ չկարողացա քեզ կողքիս պահել այնքան, մինչև կհասկանայիր, որ հայրդուանց աթոռի համար չզրիվեց: Ինչ արեցիր, տղաս, ինձ երբեք չեմ ների, որ երկրիցդ նեղացած գնացիր...

Տեսարան 35

ՍՈՒԱ - (Ներս մտնելով): Գնաց...

ՄԱՐԻԱՄ - Գնաց: Իսկ դու ծիշտ ժամանակին եկար: (*Մտնում է սենյակը, դուրս գալիս կարարինով:*) Գնացինք:

ՍՈՒԱ - Ո՞ւր...

ՄԱՐԻԱՄ - Ամեն գիշեր ստուգում եմ...

ՍՈՒԱ - Գիտեմ:

ՄԱՐԻԱՄ - Հա, սահմանը մոտիկ է, պատերազմն էլ չի ավարտվել:

ՍՈՒԱ - (դառն հեղնանքով): Իսկ սահմանը մեր հույսին է:

ՄԱՐԻԱՄ - Մինչև կոիվ գնալը Դավիթն էր, իետո՛ ես: Կարծում էի՝ տղաս կշարունակի...

ՍՈՒԱ - Հասկացա: Համաձայն եմ, բայց մի պայմանով: Ինձնից հեռու չգնաք:

Մարիամը հայացքով հարցնում է՝ ինչու:

ՍՈՒԱ - Մթից վախենում եմ:

Դուրս են գնում:

Տեսարան 36

Հեռախոսը զանգում է: Սենյակից դուրս է գալիս Նարինեն, վերցնում է հեռախոսը:

ՄԱՐԻԱՄ - Գո՞ռ, ինչ է պատահել...

Հասմիկը... (Հեռախոսը շպրտում ու դուրս է նետվում:) Մա, մամա...
Հասմիկը...

Տեսարան 37

Կեսօր: Օրացույցի վրա՝ «Ուրբար»: Տանն իրարանցում է: Գոհարն ու Մարիամը օրորոցն են հարդարում, Նարինեն ու Սոնան փուշիկներ են փչում, ամրացնում պատերին:

ԳՈՀԱՐ - Այ, էսպես... բարձն էլ տուր... էս էլ թագավորի շան տեղը... մնաց՝ գա ու իր տեղը պառկի:

ՄԱՐԻԱՄ - Տեսանք՝ ինչ արեց զարմիկս... Ո՞նց թե՝ ինձ տանեք, որ հյուսիսներում ծնվեմ, բա իմ

կամքը հարցնող չկա՞... Ու ձանապարհին ծնվեց:

ՄԱՐԻԱՄ - Լավ է, իիվանդանոցը մոտ է եղել, թե չէ որ մտածում եմ...

ԳՈՀԱՐ - Իսկ դու մի մտածիր, ծնվողը ծնվում է՝ ինքնաթիռում լինի թե եղբօրդ մաջերոյում...

ՆԱՐԻՆԵ - Պաշերո, տիկին Գոհար:

ԳՈՀԱՐ - Նոյնն է՝ չորս անիվ ու մի դեկ: Մնացածը՝ թիթիզություն է: Զանգիր, իմանանք՝ ոնց են:

ՆԱՐԻՆԵ - Նոր չխոսեցի՞: Նորածինն ու մայրը մուշ-մուշ քնած են, երջանիկ հայրը նրանց կողքին է, ինչի մասին այդպես երազում էր Հասմիկը: Իսկ Գոռը ուր որ է՝ կգա: (Համար է հավաքում, պատասխանող չկա: Մոայլզում է, դա չի վրիպում Մարիամի աչքից:)

ԳՈՀԱՐ - Ճամփի կեսից ետ գալը լավ նշան է՝ իլ չի գնա:

ՆԱՐԻՆԵ - Հասմիկի ցավերը որ ճամփին չբռնեին, էղպես էլ գնալո՞ւ էին:

Սոնան գնում է դեպի դուռը:

ՄԱՐԻԱՄ - Ո՞ւր:

ՍՈՆԱ - Գնամ:

ՄԱՐԻԱՄ - Բայց վաղը նոյն ժամին՝ ստուգելու...

ՍՈՆԱ - (իբր՝ զինվորի հանգի): Ճիշտ այդպես, վաղը՝ ստուգելու: (Գնում է:)

Տեսարան 38

ՄԱՐԻԱՄ - Ո՞նց կծեծեի իմ անխելք տղային:

ԳՈՀԱՐ - Կարո՞ղ է՝ անկյուն էլ կանգնեցնես:

ՆԱՐԻՆԵ - Չէր խանգարի: Եվ, ընդհանրապես, դրանց ցեղին միշտ անկյունում պիտի պահես:

ՄԱՐԻԱՄ - Նարիենք...

ՆԱՐԻՆԵ - (այլևս չկարողանալով թաքցնել վիրավորանքը): Բան էլ չի պատահել: Բայց որ պատահի, առաջինը դու կիմանաս:

ԳՈՀԱՐ - (Մարիամին): Քո կտորն է:

ՆԱՐԻՆԵ - Ես պապայի կտորն եմ:

ՄԱՐԻԱՄ - Այ, իիմա ավելի նմանվեցիր... (Մոտենում, գրկում է:) Ամեն ինչ լավ կլինի, չմտածես:

ՆԱՐԻՆԵ - (երկիմաստ, թունոտ): Դու չես էլ պատկերացնում, թե ինչքան լավ է լինելու: (Գրանից հանում է հեռախոսը, նայում մութ էկրանին ու նորից դնում գրպանը:) Այդ մեկը քեզ խոստանում եմ:

Մոտեցող մեքենայի ճայն: Մայր ու աղջիկ սպասումով քարանում եմ:

ԳՈՀԱՐ - (պատուհանից նայելով):

Փառքդ շատ, Աստված, երանի ամեն գնացողի կապես արագ վերադարձնես:

Տեսարան 39

Ներս է մտնում Գոռը, մոտենում իրար կողք կանգնած մորն ու քրոջը: Գրկում է երկուսին:

ԳՈԴ - Մամ, շատ անխելք եմ:

ՄԱՐԻԱՄ - Եթե հարցնում ես, ունեմն խելքի ես գալիս:

ԳՈՌ - Մամ, սխալ է... միայն գնալս չէ, շատ բան է սխալ: Երբ անցանք գերեզմանատան կողքով, հասկացա, թե ինչ էիր ասում քեռուն: Նա որ մնար, տեր կանգներ իր հաղթած պատերազմին, երևանցի կինը ինձ համար լաց չէր լինի:

ՆԱՐԻՆԵ - Որ իշխում եմ, քիչ է մնում՝ սիրտս պայթի:

ԳՈՌ - Կարծում էի, էդ օրվանից դաժան բան լինել չէր կարող, բայց... (Նարինեին.) Ջո բախտը բերել է, դու գիտեիր՝ ինչի համար էիր էնտեղ: Ես չգիտեի: Կարծում էի՝ գնալն է դժվար, բայց մնալը ավելի դժվար է: Եթե կոհիվ ունեմ, պիտի կովեմ, որ ես ու դու նոյն փողոցի տարբեր կողմերում չհայտնվենք: Բայց դու դեմք ես, քոյրիկս, ոնց ասի՞ր...

ՆԱՐԻՆԵ - (արցունքի միջից ժպտալով): Ո՞ր մեկը...

ԳՈՌ - Դու լավ գիտես: (Մարիամին.) Հորս կարարինը ինձ տուր:

ՄԱՐԻԱՄ - (առաջին անգամ ցոյց տալով հուզմունքը): Ո՞նց էի կարոտել քեզ:

ՆԱՐԻՆԵ - Իսկ ես քեզ անկյուն կկանգնեցնեի:

ԳՈՌ - Ուրիշ թեկնածու չկա՞:

ՆԱՐԻՆԵ - Կիխի: Ոչ միայն անկյուն կանգնեցնելու համար:

Տեսաքան 40

Ներս է մտնում Կարենք:

ՆԱՐԻՆԵ - (նրան դեռ չի տեսել): Այդ խանդոտ ապուշին ոչ մի բառ չեմ

ասի, ոչ մի բացատրություն, միայն կնայեմ աչքերին, բայց այնպես կնայեմ, որ...

ԿԱՐԵՒ - (դիմելով իրեն զննող Գոհարին): Չէի՞ք ասի, ում մասին է խոսքը:

ԳՈՀԱՐ - Ինչ-որ խանդոտ ապուշի:

ԿԱՐԵՒ - Պարզ է: (Ուղեպայուսակը դնում է հատակին, մոտենում է Նարինեին:) Նայեցիր, հետո՞...

ՆԱՐԻՆԵ - (դեռ չհավատալով տեսածին): Մի օր քեզ կխեղդեմ: (Փարզում է Կարենին:)

ԳՈՀԱՐ - (ինքն իրեն): Փաստորեն, հիմա Դեզդեմոնան է խեղդում Օթելլոյին:

ԳՈՌ - (Կարենին): Բարով եկար: (Բարձում են, հետո ողջագորվում:)

ՆԱՐԻՆԵ - Մամ, Կարենն է:

ՄԱՐԻԱՄ - Ուրախ եմ, տղա:

ԳՈՀԱՐ - Ես էլ Գոհարն եմ, բայց կարող ես ասել տիկին Գոհար:

ԿԱՐԵՒ - Պարզում է՝ գոքանչանց ասվածը շատ էլ հաճելի տեղ է:

ԳՈՀԱՐ - Սկզբնական շրջանում: Ծատ մի ոգևորվիր:

ՄԱՐԻԱՄ - (Գոհին): Գնա, Սոնային ասա, որ պոստը հանձնում եմ քեզ:

ԳՈՌ - Մամ...

ՄԱՐԻԱՄ - (Լեղծ դժգոհությամբ): Թե չէ մենք ենք ստիպված սահման պահում:

ԳՈՌ - Գնամ, բայց խոսելու շատ բան ունենք:

ՄԱՐԻԱՄ - (Երկիմաստ): Արդեն ժամանակ ունենք:

ՆԱՐԻՆԵ - Ճուտիկը որ չծնվեր, էդ-պես էլ գնալո՞ւ էիք:

Գոռն ուզում է պատասխանել,
բայց կարծ երկմտանքից հետո
գնում է: Ծանր լրություն:

Տեսարան 41

ՆԱՐԻՆԵ - Հիմա մնաց, բայց...

ԳՈՀԱՐ - Ինչ՝ բայց:

ՆԱՐԻՆԵ - Հիմա որ Ժիրայրի տար-
բերակը դուրս եկավ, գուցե ժա-
մանակավոր... գուցե գործ գտնի,
ինչ-որ բան մտածի... Հետո ա-
մուսնանա, երեխա ունենա, բայց
մի օր էլի կգնա՝ ընտանիք պահե-
լու խնդիրը կա ու կա...

ԳՈՀԱՐ - Մի՞ կռոա:

ՆԱՐԻՆԵ - Ծատ կուզեի սխալվել:

ԿԱՐԵՆ - Ո՞ւր է կորել համառ լավա-
տեսությունդ:

ՄԱՐԻԱՄ - (*Կարենին*): Երկու օրում
էնքան բան կատարվեց... (*Լարի-
նեին*.) Հետո գուցե քո ասածը լի-
նի, բայց հիմա արեցի՝ ինչ կարող
էի: Ու թեման փակենք, մինչև...

ՆԱՐԻՆԵ - Մինչև...

ՄԱՐԻԱՄ - (*կատակի անցնելով*):
Մինչև նորից չզանգեմ ու դու
գլխապատօն չգաս: (*Կարենին*.)
Ճիշտ ժամանակի եկար, թեև քեզ
շաբաթ էինք սպասում:

ԳՈՀԱՐ - Իսկ ուրբաթը, ինչպես
միշտ, էս անգամ էլ շաբաթից
շուտ եկավ: Դրա համար էլ էսօր

տոլմայի ախորժակ չունենաս:
ԿԱՐԵՆ - Մինչև վաղը կդիմանամ:

Տեսարան 42

Ներս է մտնում Դունեչկան՝
հարսմաքողը քկին գցած:

ԳՈՀԱՐ - Մարիամ, տես, ինչ է բե-
րել Դունեչկան:

ՄԱՐԻԱՄ - Որտեղից իմացար:

ԴՈՒՆԵՉԿԱ - Ուշ-ուշ եմ տնից դուրս
գալիս, բայց ամեն ինչին տեղյակ
եմ: (*Խորամանկ ժպիտով*) Գո-
ռին ու Սոնային միասին տեսնող
է եղել... Ես էլ պարապ երազ
տեսնողը չեմ:

ԳՈՀԱՐ - (*իբր ինքն իրեն*): Էղքան
ինքնավստահ լինելն էլ մի բան չէ:

ԴՈՒՆԵՉԿԱ - (*ակնարկը հասկանա-
լով*): Ասածդ ո՞նց հասկանամ:

ԳՈՀԱՐ - Ոնց կուզես, բայց դու ա-
սա, թե մի հարսնաքողը երկու
հարսի ո՞նց ես բաժանելու:

Կարենը ցուցադրաբար ձեռքը
դնում է **Նարինեի ուսին**, ասես
ուտքը լուսանկար լինի:

ԴՈՒՆԵՉԿԱ - (*շփոթված, բայց վեր-
ջին խոսքը իրեն վերապահելու*
վզուականությամբ): Զեր երազը
դեռ չեմ հասցրել տեսնել, էսպես
որ, ջահելներ ջան, պիտի սպա-
սեք: *Ըերթնվ*:

ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



Արտաշես ՇԱՀԲԱԶՅԱՆ

Երբ պատրաստվում էի գրել այս մի քանի տողը, մտածում էի, որ պետք է շեշտել հոդի գաղափարը: Հոդի, որ պորտալը է մարդու և հայրենիքի միջև, հոդի, որ հայրենիք է, հոդի, որ պատկանում է ամենաշատ սիրողին ու տենչացողին: Հետո հիշեցի, որ այնաք գրելիս ասելիքին առանցքում պտտվել է, այսպես կոչված, հայ-թուրքական հարաբերությունների գաղափարը այն ողբերգությունների, առելությունների, անհանդուրժողության և կողք-կողքի գոյատևելու ճակատագրականության, որոնք կարծես հավերժորեն շաղկապել են մեզ:

Այսուհետև հիշեցի, որ գրելիքին նպատակը մարելն էր մի փոքր բաժինը այն մեծ պարտքի, որ ապրողներս ունենը չապրածների հանդեպ: Մարելու այն պարտքը, որ ունենը անցյալի, ներկայի ու, մանավանդ, ապագայի նկատմամբ: Ապագայի այն տեսականի, առանց որի արժեզուրկ են ն' ներկան, ն' անցյալը:

ՄԵՆՔ ԿՎԵՐԱԴԱՌԱՆԱՔ

Դրամա երկու գործողությամբ

Գործող անձինք

ՎԱԽՈՒՀԻ

ԱՐԱՄ - Վաճուհու քոռը

ՎԱՀԱԳ

ՀՐԱՅՐ - Վահագի ընկերը

ԿԱՐԻՆԵ

ՆՎԱՐԴ - Կարինեի մորաֆույրը

ՀԱՅԿՈՒՀԻ - Կարինեի ընկերուհին

ԳՐԻԳՈՐ ԲԱԼՅԱՆ - Մատենադարանի աշխատակից

ԷՐՍԵՐՁՅԱՆ - քանաստեղծ

ԱԲԵԼ ԻԱՋՐԻԿ

ՎՈԼՏԵՐ ԱՂԱԽԱՎԵՅԱՆ - գործարար

ՎԻԿՏՈՐԻԱ - Վոլտերի կինը

ՏԻԿԻՆ ԱՍՎԱՅԱ - տջայցի կազմակերպիչ

ԳԱՎԻԿ - զբոսաշրջության մեմենայի վարորդ

ԷԼԶԻՆ ԳՅՈՒՆԵՅՅԻ - սահմանային անցակետի

Պատասխանատու, կարդիտան

Գնդաղետ ՂԱՐԱՎԱԿՅԱՐՈՎԻՈՐ - Էլին Գյունեյի վերադաս
առ

Սերժանտ ԾԱՐԱՖ - Էլին Գյունեյի օգնականը

ՍԵԼՎԻ - գնդաղետ Ղարավակյարովուի կինը

Սահմանային անցակետի աշխատակիցներ

Այլ հայ զբոսաշրջիկներ

Իրադարձությունները տեղի են ունենում քուրքական սահմանային
անցակետում:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Առաջին տեսարան

Ներկայացումը սկսվում է անընդմեջ հեռախոսազանգերով: Բացվում է
վարագույրը՝ մքության մեջ շարունակում են հնչել տագմապալի հեռա-
խոսազանգերը: Հեռվից լսվում է տղամարդու խոպոտ ձայն:

ԳՆԴԱՊԵՏ - Գալիս եմ, գալիս եմ... ընդմիջմանն էլ հանգիստ չեն տալիս... (Հուսավորվում է գնդապետի առանձնասենյակը: Նա ներս է խուժում, վերցնում լսափողը:) Գնդապետ Ղարաասկյարօղուն լսում է:

ԿԱՊԻՏԱՆ - Պարոն գնդապետ, կապիտան Էլզին Գյունեյն է՝ սահմանային 1004 անցակետից: Անհանգստացնում եմ անպատեհ ժամի, բայց չէի զանգահարի, եթե անհրաժեշտ չլիներ ձեր...

ԳՆԴԱՊԵՏ - Կապիտան, գեկուցեք հակիրծ և ըստ էության: Արտակարգ միջադե՛ա է տեղի ունեցել:

ԿԱՊԻՏԱՆ - Պարոն գնդապետ, ինչպես ասեմ... և այս, և ոչ: Երեսուն րոպե առաջ անցակետին մոտեցավ հայ գրոսաշրջիկների ավտորուսը: Համապատասխան համարանիշի տրանսպորտային միջոցը 13 օր առաջ էր հատել 1004 անցակետը և մոտք գործել Թուրքիայի Հանրապետության տարածք: Մուտքի արտոնագիր էր ստացել 19 անձ, նոյնքան մարդ այժմ ցանկանում է վերադառնալ...

ԳՆԴԱՊԵՏ - Ինչ են արել նորից այդ հայերը, ասացեք միանգամից, առանց ծամծմելու:

ԿԱՊԻՏԱՆ - Կարծես թե ոչինչ, պարոն գնդապետ:

ԳՆԴԱՊԵՏ - Կապիտան, եթե ոչինչ չի պատահել, այդ դեպքում ինչո՞ւ եք վատնում իմ ժամանակը:

ԿԱՊԻՏԱՆ - Պարոն գնդապետ, այդ հայերը մեր երկրից հող են տանում:

ԳՆԴԱՊԵՏ - Հո՞յ են տանում... ուզում եք ասել՝ հողի հետ ինչ-որ բան են տանում: Թմրադե՞ղ եք հայտնաբերել, հրաշալի, հրաշալի...

ԿԱՊԻՏԱՆ - Ոչ, ոչ, միայն հող, ամենասովորական հող: 19 անձ, ընդհանուր հաշվով, իրենց հետ տանում են 113 կիլոգրամ հող: Իսկ օրենսդրությունը այս մասին ոչինչ չի ասում, ես չեմ կարող արգելել:

ԳՆԴԱՊԵՏ - Ասում եք՝ 113 կիլոգրամ հո՞յ են տանում... Երբեք չես հասկանա, թե ինչ է մտքներին: Դե լավ, թող տանեն, միևնույն է, չեն կարող ամբողջ հողը հետնորդ վերցնել:

ԿԱՊԻՏԱՆ - Միանգամայն ճիշտ եք, պարոն գնդապետ: Եվ, այնուամենայնիվ, եթե կենտրոնում ծանոթանան գրանցամատյանի օրվա գրառումներին, մեզ չե՞ն մեղադրի գգոնության բացակայության մեջ: Պարոն գնդապետ, առաջարկություն ունեմ այս առիթով՝ եթե թոյլ կտաք:

ԳՆԴԱՊԵՏ - Ասեք, տեսնեմ՝ ինչ եք մտածել:

ԿԱՊԻՏԱՆ - Գուցե հարցաքննենք այդ հայերին և արձանագրությո՞ւն կազմենք: Եթե հրամայեք՝ անմիջապես գործի կանցնեմ:

ԳՆԴԱՊԵՏ - Հրամայում եմ հարցաքննել Թուրքիայի Հանրապետության սահմանը հատող գրոսաշրջիկներին և արձանագրություն կազմել: Կապիտան,

հարցաքննությունը հարցաքննության տպավորություն չպետք է թողնի, առանց քրեական գործ հարուցելու դրա իրավունքը չունենք: Իսկ դրանց գիտեք, եթե ձեն-ձենի տվեցին՝ ամբողջ աշխարհում աղմուկը կլսվի: Ասացեք, թե ցանկանում եք զրուցել հետները: Հերթով իրավիրեք ու խոսեցրեք: Եվ անպայման ժպտացեք, բոլորին այդտեղ ասացեք՝ թող ժպտան: Ժպտացեք ու թեյ հյուրասիրեք: Անուշեղեն հյուրասիրեք թեյի հետ. հայերը սիրում են, երբ իրենց խարում են քաղցր-մեղցր բաներով:

ԿԱՊԻՏԱՆ - Ճիշտ այդանո՞ւ՝ իբրև թե զրուցել, իրականում՝ հարցաքննել, և անընդհատ ժպտալ: Թոյով տվեք կատարել, պարոն գնդապետ:

ԳՆԴԱՊԵՏ - (վայր դնելով լսափողը): Կատարիր, վախեցած հիմար:

Երկրորդ տեսարան

Ընդարձակ քակ: Ծինուքյում՝ ճակատին գրված է ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑԱԿԵՏ ՄԱՔՍԱՏՈՒՆ: Նատարաններ, ինչ-որ շինուքյունների հատվածները: Մարդիկ՝ նստած, կանգնած ու աննպատակ այս ու այն կողմ քայլող, ճամպրուկներ, պայտասակներ: Վահագր կիրառով հայկական երգ նվագելով ու երգելով պտտվում է հավաքվածների շորջ, նրան ուղեկցում է Հրայրը:

Նրանք մոտենում են նստարանին նստած Կարինեին ու Հայկուհուն: Աղջկները տեղից բարձրանում, հեռանում են: Տղաները հասնում են ճամպրուկները քրքրող Վիկտորիային ու Վոլտերին: Ամուսինները իբր չեն նկատում: Տղաները շարունակում են քայլել:

ՎՈԼՏԵՐ - Երանի սրանց, լույսը բացվում է՝ երգում են, գիշերը երգում են, ոչ դարդ ունեն, ոչ՝ ցավ: Կարծես Երևանը ծախել են, Փարիզն էլ վարձով են տվել:

ՎԻԿՏՈՐԻԱ - (կտրվելով գործից): Վոլտ, Փարիզից բերած կաշվե բաձկոնն էլ աչքիս չի երևում, կառո՞ղ է՝ մոռացել ենք:

ՎՈԼՏԵՐ - Վիկա, դու տես՝ ոսկին ուր ես խոձկել, այս ձգձգելը սրտովս չի: Պետք է մաքսազերծեինք անտերը:

ՎԻԿԱ - Եթե ամեն ինչ օրենքով անես՝ գիշերը քոնդ չի տանի:

ՎՈԼՏԵՐ - Կամաց, հազար աչք ու ականջ կա շուրջներս: Օրենքով որ ապրեմ՝ իսկի քո պահանջները չեմ բավարարի:

Գալիս են կապիտանն ու Շարաֆը:

ԿԱՊԻՏԱՆ - Հարգելի հայ բարեկամներ, ուշադրություն եմ խնդրում: Սահմանի հատման հետ կապված միջոցառումներն ավարտվում են: Զեզ բարի ծանապարի մաղթելուց առաջ մի փոքրիկ մանրութ ևս: Ցանկանում

Եմ զրուցել յուրաքանչյուրիդ հետ,
մեր երկիր այցելության շուրջ:

ԾՐԱՅՐ - (կամաց): Ձեր երկիր երբ
ենք այցելե՞լ որ...

ՎՈԼՏԵՐ - Ասացի, չէ՞, վատ բան եմ
կանխազգում:

ՆՎԱՐԴ - Առաջին անգամ եմ տես-
նում, որ սահման հատելիս զրու-
ցում են:

Տիկին ԱՄԱԼՅԱՆ - Ժողովուրդ, կա-
րիք չկա ամեն փոքր հարցի հա-
մար քննարկում սարքել: Ամեն օր
այս սահմանով գնում-գալիս եմ,
կարող եմ վկայել, որ սա արարո-
ղակարգային պարզ պահանջ է:
Ժողորքիան կարգ ու կանոնի եր-
կիր է: Համոզված եմ, որ ամեն
բան կարգին է, չէ՞ պարոն սպա:

ԿԱՊԻՏԱՆ - Այո, խնդիր չկա: Զրու-
ցենք և բաժանվենք: Իսկ որպեսզի
չձանձրանաք՝ թեյ եմ առաջար-
կում: Նաև քաղցրավենիք, խնդրում
եմ չմերժեք: (*Դուրս է գնում:*)

ԱԲԵԼ հայրիկ - Ես բան չհասկացա,
սիրտը զրուցե՞լ էր ուզում... Ա-
սենք, կտրված տեղ է, երսի մար-
դու կարոտ են մնում:

ԾԱՐԱՖ - Հարգարժան պարոն, գու-
ցե դուք է առաջինը զրուցեք: Հա-
մեցեք:

Երրորդ տեսարան

Գյումեյի առանձնասենյակը:
Նրա թիկունքում թուրքիայի
դրոշն է, կողքի պատիմ՝ Աքա-
քուրքի նկարը, աճեյունում կի-
սանդրին: Ներս է մտնում Աքել
Հայրիկը:

ԱԲԵԼ հայրիկ - (նայում է նկարին,
կիսանդրուն, մեկուսի): Ես նոյն
մարդն է: Հա, էլի, նոյն մարդն է:

Կապիտանը հրավիրում է նստե-
լու: Ներս է մտնում զինվորը՝
սկսուելով, քեյն ու քաղցրավե-
նիքը դնում է սեղանին:

ԿԱՊԻՏԱՆ - Համեցեք, պարոն, թեյ
խմեք, անուշեղենից համտեսեք:
Կուզեկի պատմեիք՝ ինչպես ան-
ցավ ծամփորդությունը, երկիրն
ինչպես տեսաք:

ԱԲԵԼ հայրիկ - Հավ էր, չմեռա՝ Էր-
գիրը տեսա: Ասում ես՝ Էրգիրը
ո՞նց տեսա, ընկեր կապիտան:
Ճիշտ էնպես տեսա, ոնց որ
պատկերացնում էի:

ԿԱՊԻՏԱՆ - Մինչ տեսնելը պատկե-
րացնո՞ւմ էիք:

ԱԲԵԼ հայրիկ - Հա, երազիս տես-
նում էի:

ԿԱՊԻՏԱՆ - Եվ վաղո՞ւց եք այդպիսի
երազներ տեսնում:

ԱԲԵԼ հայրիկ - Որ սուտ չասեմ՝ օրո-
րոցից տեսնում եմ: Երևի կաթի
հետ է մեջս մտել: Ողորմած
պապս, հերս, հորողբերս ամեն
օր երգից էին պատմում: Ցոթ
ախատեր էին եղել՝ զուլումի ժամա-
նակ երեքը կոտորվել էին, մեկն էլ
գաղթի ծամփին էր մարել՝ չէր դի-
մացել...

ԿԱՊԻՏԱՆ - Իսկ ծամփորդությունն
ինչպես անցավ: Որևէ բան չե՞ք

տանում մեր երկրից, ասենք, որպես հուշանվեր:

ԱԲԵԼ հայրիկ - Ի՞նչ պիտի տանեմ, ընկեր կապիտան, փառք Աստծո, երկու տղես էլ գործի տեր են՝ բանի կարիք չունեմ: Մեծս Գերմանիայում է՝ էս եղավ ութ տարի: Փոքրս էլ դերասան էր՝ զնաց Երևան, իո զյուղում դերասանություն չէր անելու: Մեր ցեղում դերասան չի եղել, դա ում քաշեց՝ չգիտեմ...

ԿԱՊԻՏԱՆ - Ասում եք՝ ոչինչ չե՞ք տանում ձեզ հետ:

ԱԲԵԼ հայրիկ - Չէ, բանի կարիք չունեմ:

ԿԱՊԻՏԱՆ - Այսինքն՝ հո՞ղ էլ չեք տանում:

ԱԲԵԼ հայրիկ - Որպես հուշանվե՞ր, ընկեր կապիտան... Հա, հող տանում եմ: Տանեմ, շաղ տամ անցավորիս շիրիմներին: Հորս պատգամն ի կատար ածեմ: Մուշում էինք, ժամանակ եղավ՝ մեքենա բռնեցի, բարձրացա Սասուն: Վարորդը ջահել տղա էր՝ խնուաից: Ճիշտ է, եղ կողմերում չէր եղել, բայց իմ բացատրելով քշեց, Գեղաշենը գտավ:

ԿԱՊԻՏԱՆ - Ներեցեք, Գեղաշենը որտե՞ղ է:

ԱԲԵԼ հայրիկ - Շուշնամերիկի կողքը, երկու զյուղը մի առու է բաժանում:

ԿԱՊԻՏԱՆ - Իսկ Շուշնամերիկը որտեղ է:

ԱԲԵԼ հայրիկ - Շուշնամերիկը... Գլեգուզանից քիչ ներքև է:

ԿԱՊԻՏԱՆ - Ճանապարհը որտե՞ղից գիտեիք:

ԱԲԵԼ հայրիկ - Երազիս տեսել էի: Մենք արմատներով Գլեգուզանից ենք, Գլեգուզանը կիմանաս, ֆերայիների կենտրոնն էր: Արել պապիս հայրը ֆերայիների կապավորն է եղել: Երբ կասկածի տակ է ընկել, ընտանիքն առել, հեռացել է Գեղաշեն՝ որ տոհմը չկոտորեն: Նոյն օդն ու ջուրն է՝ տարբերություն չկա:

ԿԱՊԻՏԱՆ - Ինչքա՞ն հող եք վերցրել, կրավարարի հարազատների շիրիմների համար:

ԱԲԵԼ հայրիկ - Մեր մեջ ասած, մի բան էլ շատ եմ վերցրել: Որ տեղ հասա՝ զյուղացիք էլ են ուզելու, չէ՞: Քեզի Գրքեի համար էլ փայ կուղարկեմ: Որ ճիշտն ասեմ՝ մի քիչ էլ ջուր եմ վերցրել Մեղրագետից՝ էր մեկից ոչ ոքու բաժին չեմ հանելու, պահելու եմ՝ կում-կում խմեմ:

ԿԱՊԻՏԱՆ - Դուք թեյը չխմեցիք, համեցեք, խնդրեմ:

ԱԲԵԼ հայրիկ - Ինչ անուշ բուրմունք ունի: Տրապիզոնի թեյն է, չէ՞: (Հոյ է քաշում թեյից:)

ԿԱՊԻՏԱՆ - (Չփորված): Տրապիզոնի՞... այն, այն:

Արել հայրիկը չխմած բաժակը դնում է սեղանին և ուղղվում դեպի դուռը:

ԿԱՊԻՏԱՆ - Ինչպես էր կոչվում այդ զյուղը, որտեղից հող էիք վերցրել:

ԱԲԵԼ հայրիկ - Ծուշնամերի՞կը...

ԿԱՊԻՏԱՆ - Ոչ...

**ԱԲԵԼ հայրիկ - Ծուշնամերիկից էլ եմ
վերցրել, Գեղաշենիից էլ եմ
վերցրել: (Մինչև դուրս գնալը:)
Հնկեր կապիտան, մի քան էլ ես
հարցնեմ՝ Տաճկաստանը փոխվել
է, չէ՞:**

ԿԱՊԻՏԱՆ - Ի՞նչ նկատի ունեք:

**ԱԲԵԼ հայրիկ - Ասում եմ՝ էս հարյուր
տարում Թուրքիան շատ է փոխ-
վել, չէ՞:**

**ԿԱՊԻՏԱՆ - Փոխվել է, իհարկե,
շատ է փոխվել:**

**ԱԲԵԼ հայրիկ - Ասում եմ՝ փոխվել է,
ինձ չեն հավատում: Դե, լավ է,
փառք Աստծո: Թե չէ դուք էլ մեղք
եք: (Դուրս է գնում:)**

**ԿԱՊԻՏԱՆ - Չտեսած երկրի երա-
գողներ... Հեքիաթասացներ...
(Պատի քարտեզի վրա փնտրե-
լով:) Շարաֆ:**

**ԾԱՐԱՖ - (որ արձանագրում էր
զրոյցը): Լսում եմ, պարոն կա-
պիտան:**

**ԿԱՊԻՏԱՆ - Լսե՞լ ես Գլեգուզան,
Գեղաշեն, Ծոշ... Ծոշ... գյուղերի
մասին: Մեղրագետ լսե՞լ ես... որ-
տեղ են գտնվում:**

**ԾԱՐԱՖ - Չեմ լսել, պարոն կապի-
տան, գուցե Թուրքիայո՞ւմ չեն
գտնվում:**

**ԿԱՊԻՏԱՆ - Ինչպես ես համար-
ձակվում... (Լսում, հոտ է քա-
շում թեյից: Շարաֆին:) Խմիր:**

ԾԱՐԱՖ - Ի՞նչ, պարոն:

ԿԱՊԻՏԱՆ - Ինչ-ինչ... Խմիր թեյը:

Շարաֆը խմում է թեյը:

ԿԱՊԻՏԱՆ - Որտեղի՞ թեյ է:

**ԾԱՐԱՖ - Անկարայի, պարոն կա-
պիտան:**

**ԿԱՊԻՏԱՆ - Անկարայում թե՞յ է ա-
ծում:**

**ԾԱՐԱՖ - Ո՞չ: Այդին Սիրինօղլուն է
արձակուրդից վերադարձել: Մայ-
րը ծխախոտ, մեղր ու մի քանի
տուփ թեյ էր դրել հետը: Այդինը
ցանկացել էր ծեզ էլ հյուրասիրել,
լավ թեյ է:**

**ԿԱՊԻՏԱՆ - (բարկացած): Հաջոր-
դին կանչիր:**

Չորրորդ տեսարան

Անցակետի առջևի հրապարակը:

**Նոյն մարդիկ: Երիտասարդ զին-
վորը սկսուելով թեյ ու խմորելեն
է հյուրասիրում: Ոճանք չեն հրա-
ժարվում, մյուսները մերժում են:
Կիրառը ճեռքին՝ Վահագը մոտե-
նում է Կարինեին:**

**ՎԱՀԱԳ - Կարինե, ծեզ հետ խոսել
եմ ուզում:**

**ԿԱՐԻՆԵ - Դարձյալ: Իսկ եթե ես չեմ
ցանկանում:**

Հայկուիին քիչ կողմ է քաշվում:

**ՎԱՀԱԳ - Համառում եմ, բայց ուրիշ
ելք չունեմ, շուտով կրաժանվենք
ու հնարավոր է, այլս չհանդի-
պենք:**

**ԿԱՐԻՆԵ - Սպանեցիք: Այս մարդիկ
եկել էին ինչ-որ քան փնտրելու,**

հայտնաբերելու համար, իսկ ձեզ ոչինչ չգրավեց այս օրերին:

ԿԱՀԱԳ - Հետաքրքիր բաներ շատ տեսա, բայց ամենից շատ դուք գրավեցիք:

ԿԱՐԻՍԵ - Դուք նաև ցինիկ եք:

ԿԱՀԱԳ - Մտածեք՝ ինչ կուզեք, ժամանակ չի մնում ու ես հենց հիմա պիտի ասեմ, որ դուք ինձ դուր եք գալիս:

ԿԱՐԻՍԵ - Սպանեցիք: Իսկ եթե դուք ինձ դուր չեք գալիս:

ԿԱՀԱԳ - (ηաղարից հետո): Ինչ հեշտ եք ասում սպանել բառը... Գոնե պատկերացնո՞ւմ եք, թե դա ինչպես է լինում:

ԿԱՐԻՍԵ - Չեմ պատկերացնում, իսկ դուք գիտե՞ք...

Վահագը ինքնաբերաբար ճախ ձեռքը քաքառում է թիկունքում, որի վրա սևեռվել էր Կարինեի հայցքը: Նրա թևիմ՝ դաստակից մինչև քազուկը ճգվող խոր սպի է, ձեռքը կիսափակ է: Լուռ նայում են իրար: Կարինեն համարյա վազքով գնում է Հայկուհու և Նվարդի մոտ:

Հինգերորդ տեսարան

Գյունեյի առանձնասենյակ է մտնում Նվարդը, նրան հետևող Շարաքը փակում է դուռը: Գյունեյը նրանց չի նկատում. մատիւրը ձեռքին քարտեզի վրա փնտրում է: Գոռան փակվերաց հետո շրջում է:

ԿԱՊԻՏԱՆ - Բարև ձեզ, նստեք, մի փոքր զրուցենք:

ՆՎԱՐԴ - (նայելով գրիչը պատրաստ սպասող Շարաֆին): Եվ պետք է արձանագրվի՝ մեր զրոյցը:

ԿԱՊԻՏԱՆ - Դա հենց այնպես... հետո կկարդամ, կվերհիշեմ մանրամասները, բայց եթե դուք չեք ցանկանում... Շարաֆ...

ՆՎԱՐԴ - Ինձ համար միևնույն է:

ԿԱՊԻՏԱՆ - Ծնորհակալ եմ: Կուզեի իմանալ, ճամփորդության ընթացքում ինչը ամենից շատ դուր եկավ:

ՆՎԱՐԴ - Ամեն բան էլ դուր եկավ, մենք ունեինք կոնկրետ ծրագիր և հստակ էր, թե ինչ ենք ցանկանում տեսնել:

ԿԱՊԻՏԱՆ - Նախապես որոշել էիք, թե ինչ պետք է տեսնեք:

ՆՎԱՐԴ - Որոշել էինք, թեև իմ նպատակը միայն շրջագայելը չէր: Որոշակի աշխատանք ունեի կատարելու:

ԿԱՊԻՏԱՆ - Աշխատա՞նք պետք է կատարեիք: Թուրքիայի տարածքո՞ւմ: Եթե գաղտնիք չէ, չե՞ք ասի՝ ինչ աշխատանք...

ՆՎԱՐԴ - Ես Հայաստանի ազգային ակադեմիայի աշխատակից եմ: Տարբեր վայրերից հողի նմուշներ եմ վերցրել մեր ինստիտուտում ուսումնասիրելու համար:

ԿԱՊԻՏԱՆ - Թուրքիայի հո՞ղը պետք է ուսումնասիրեք ձեր ինստիտուտում:

ՆՎԱՐԴ - Որոշակի տարածքների հողը պետք է ուսումնասիրենք, մնացած մեր հետաքրքրությունից դուրս է:

ԿԱՊԻՏԱՆ - Իսկ չե՞ք ասի, հատկապես ո՞ր տարածքների հողն է ձեզ հետաքրքրում:

ՆՎԱՐԴ - Գաղտնիք չէ: Հողի նմուշներ եմ վերցրել Արդահանից, Կարսից, Մուշից, Վանից, Բասենի դաշտից, Երզնկայի գավառից...

ԿԱՊԻՏԱՆ - Երզնկայի գավա՞ն... չե՞ք ասի, դա որտեղ է:

ՆՎԱՐԴ - Կարծում եմ, Երզրումի տեղը կիմանաք: Երզրումի նահանգից դեպի արևմուտք, իսկ մյուս կողմից Խարբերդին է սահմանակից:

ԿԱՊԻՏԱՆ - Դուք հավանաբար Էրգինջա՞նը նկատի ունեք:

ՆՎԱՐԴ - Մեզ համար Երզնկան է:

ԿԱՊԻՏԱՆ - Ձեզ համար Երզնկան է... Իսկ Էլազիգը, ուրեմն, Խարբերդն է: Իսկ կարո՞ղ եք ասել, թե ինչի համար է որոշակի տարածքների հողերի ուսումնասիրությունը:

ՆՎԱՐԴ - Նպատակը հողի հիշողության վերականգնումն է: Ավելի ստույգ՝ ցանկանում ենք հասկանալ, թե տեղի բնիկ ժողովուրդը հազարամյակներ շարունակ ինչո՞ւ է զբաղվել հատկապես այդ և ոչ՝ այլ մշակաբույսերի մշակությամբ:

ԿԱՊԻՏԱՆ - Ասում եք՝ հողը հիշողությո՞ւն ունի:

ՆՎԱՐԴ - Այո, պարոն, հողը օժտված է հիշողությամբ ու եթե նաև լեզու ունենար, բաներ կպատմեր, որոնք կցնցեին մարդկանց: Պատկերավոր ասած, հողն ուսումնասիրելով դու մտնում ես նրա հոգու մեջ, բացում ես հիշողության ծալքերը և բացահայտում իրականությունը:

ԿԱՊԻՏԱՆ - Իսկ... ներեցեք... դա ձեր ինչին է պետք:

ՆՎԱՐԴ - Իրականության վերականգնումը բնական անհրաժեշտություն է: Առանց անցյալի ծշմարիտ պատկերացման ապագա չես կառուցի: Դուք այդ կարծիքին չեք:

ԿԱՊԻՏԱՆ - Ծշմարտության մասին պատկերացումները հաճախ տարբեր են լինում: Ծնորհակալություն, շատ հետաքրքիր էր ձեզ լսելը: (*Ժպտալով ոտքի է կանգնում:*)

ՆՎԱՐԴ - (*քարծրանում է տեղից, երկու քայլ է անում ու կանգնում է:*) Ավելացրեք, խնդրեմ, որ հողը լավագույն վկան է փաստելու համար, թե ինչու և ինչպես է ընդհատվում զարգացման բնականոն ընթացքը: (*Դուրս է գնում:*)

Վեցերորդ տեսարան

Անցակետի առջևի հրապարակը: Վոլտերը գնում-զալիս է Վիկոնտիայի առջև:

ՎԻԿՈՆՌԻԱ - Ի՞նչ ես ետ ու առաջ

անում՝ վանդակն ընկած գազանի պես: Նստիր, սպասիր, ոնց որ բոլորը:

ՎՈԼՏԵՐ - Ասում էս, Էլի... «Ոնց որ բոլորը»: Բա բոլորի գործն ու իմ գործը նո՞յնն է: Մինչև տեղ հասնեմ՝ աշխատողներն ամեն ինչ թալանած կլինեն, ոչ մեկին չես կարող վստահել:

ՎԻԿՏՈՐԻԱ - Բա ախառո՞րս:

ՎՈԼՏԵՐ - Ախառերդ ի՞նչ: Ախառորդ կարելի է վստահել: Վիկ, գիտե՞ս, ինչ եմ մտածում. Էս մարդու մոտ ձիշտ կլինի միասին մտնենք:

ՎԻԿՏՈՐԻԱ - Ինչո՞ւ, ինչից ես վախենում:

ՎՈԼՏԵՐ - Դե... չեմ ուզում՝ իրար հետ մենակ մնաք: Ի վերջո, տղամարդ է, զինվորական, էն է՝ արտասահմանցի:

ՎԻԿՏՈՐԻԱ - Չհասկացա՛ տեղը չես բերո՞ւմ: Ախառու չես վստահում՝ քիչ է, իհմա էլ որոշեցիր ի՞նձ խանդել: Չլինի՝ սարերի օդը վրադ վատ է ազդել:

ՎՈԼՏԵՐ - Վիկ, ինձ ձիշտ չհասկացար: Մտածում եմ՝ խուճուծ-մուծուծ հարցեր կտա, գուցե ոսկու մասին գլխի ընկնի: Դրա համար ձիշտ կլինի, որ միասին ներս մտնենք: Թե չէ ես քեզ ընդիանրապես չեմ խանդում:

ՎԻԿՏՈՐԻԱ - Որ սիրեիր՝ կխանդեիր: Գնա հարկայինի քարտուղարուիիներին խանդիր...

Հայկուիի և Կարինե

ՀԱՅԿՈՒԾԻ - Կարինե, մի բան եմ ուղարկում հարցնել, Վահագը քեզ դո՞ւր է գալիս:

ԿԱՐԻՆԵ - Ինչո՞ւ ես կարծում, որ պետք է դուր գա:

ՀԱՅԿՈՒԾԻ - Ինձ այդպես թվաց: Կարծես թե նրան դուր ես գալիս:

ԿԱՐԻՆԵ - Դրանք նոյն բանը չեն: Վահագը փորձեց բացատրվել հետո, ես մերժեցի:

ՀԱՅԿՈՒԾԻ - Ճիշտ ես արել: Իմ հոգին էլ թեթևացավ:

ԿԱՐԻՆԵ - Ի՞նչ կա լեզվիդ տակ, որ թաքցնում ես ինձանցից:

ՀԱՅԿՈՒԾԻ - Հիմա կարող եմ ասել: Երկուշաբթի գիշերը, երբ ծննդյանս տարեդարձն էինք նշում, դու շուտ գնացիր՝ գլուխդ ցավում էր: Հետո մյուսները գնացին, սենյակում մնացինք ես ու Հրայրը: Պարզվեց, նկարիչ է, բայց գրեթե չի գրադվել մասնագիտությամբ: Գիտես, այս օրերին մի ուժ կարծես մոտեցնում էր մեզ իրար: Մենք պարեցինք, նա համբուրեց ինձ... Հետո Վահագի մասին հարցրի: Ասաց՝ մանկության ընկերներ են, միասին սովորել են դպրոցում, գեղարվեստի ուսումնարանն են ավարտել, լող են պարապել: Հարցրի Վահագի ծեռքի մասին: Ասաց՝ կին է հարվածել դանակով: Հետո ծիծաղելով ավելացրեց. «Դե ոչինչ, Վահագը ծեծեց նրան»: Լուրջ չվերաբերվեցի ասվածին...

ԿԱՐԻՆԵ - Հետո...

ՀԱՅԿՈՒԾԻ - Հետո՞: Հորաքոյրդներս մտավ: Հեռախոսն էր մոռացել, բայց ինձ թվաց՝ միտումնավոր է վերադարձել ու ոտքը կախգուց, մինչև Հրայրը գնաց: Նվարդի շնորհիվ մեր երեկոն այդպես ավարտվեց: Այն ժամանակ շատ էի նեղսրտել:

ԿԱՐԻՆԵ - Ինչո՞ւ իիմա ես պատմում այդ մասին:

ՀԱՅԿՈՒԾԻ - Կարծում էի՝ Վահագին համակրում ես, ուրախ եմ, որ սխալվել եմ: Նրանք վտանգավոր մարդիկ են, ես այն երեկոյից հետո խոսափում եմ Հրայրից: Կարինե, չէի ցանկանա, որ այս դիպվածը ազդեր մեր հարաբերությունների վրա:

ԿԱՐԻՆԵ - (Դառը քմծիծաղով): Արտառոց ոչինչ տեղի չի ունեցել:

Յոթերորդ տեսարան

Գյումեյի առանձնասենյակի դուռը բացվում է, շեմին Արամն է:

ԱՐԱՄ - Գա՞մ:

ԿԱՊԻՏԱՆ - Գա՞ք... իսկ ինչ եք ցանկանում:

ԱՐԱՄ - Մի քիչ զգրուցնք:

ԿԱՊԻՏԱՆ - Այո, այո, համեցեք, զրուցենք: (Ուժի կանգնելով և բռնելով Արամի ձեռքը:) Ի՞նչ է ձեր անունը, երիտասարդ:

ԱՐԱՄ - Արամ է իմ անունը:

ԿԱՊԻՏԱՆ - Արամը լավ անուն է, ասեմ՝ ինչու են ձեր անունը Արամ դրել: Որովհետեւ ձեր պապիկի

անունն է: Ճիշտ է:

ԱՐԱՄ - Ճիշտ է, թեև տատիկս ասում է, թե ինքը ցանկացել է, որ այդ անունը կրելով Արամ Մանուկյանին նմանվեմ:

ԿԱՊԻՏԱՆ - Արամ Մանուկյանն ո՞վ է:

ԱՐԱՄ - Ո՞նց թե՝ Արամ Մանուկյանն ով է: Արամ Մանուկյանը Հայաստանի Հանրապետությունն է հիմնադրել: Դուք իսկապես չգիտեք՝ Արամ Մանուկյանն ով է, թե՞ իսաբում եք ինձ:

ԿԱՊԻՏԱՆ - Տես, է, իսկ ես նրա մասին չէի լսել: Այսուհետ չեմ մոռանա... Արամ... Արամ, իսկ խաբելը լավ բան չէ: Ես երկու դուստր ունեմ ու նրանց երբեք չեմ խաբում: Արամ, իսկ ծամփորդությունը հետաքրքի՞ր էր, շատ վայրերում եղար:

ԱՐԱՄ - Ամենահետաքրքիրը Այգեստանն էր: Գիտե՞ք, Այգեստանում մեր տունը գտանք: Մի ժամանակ այնտեղ տատիկիս հարազատներն են ապրել, իսկ այժմ քուրդ ընտանիք է բնակվում: Լավ մարդիկ էին այդ քողերը, ստիպելով մեզ հյուր տարան: Ասում էին. «Զօգացեք ձեզ, ինչպես ձեր տանը»:

ԿԱՊԻՏԱՆ - Այո՞... հետաքրքիր է: Իսկ քո տունը որտե՞ղ է, Արամ:

ԱՐԱՄ - Իմ տո՞նը... Այգեստանում:

ԿԱՊԻՏԱՆ - Հասկանում եմ, այդ տունը դու համարում ես քոնք, որովհետև նախնիներդ են ապրել,

բայց հիմա այնտեղ քրդեր են բնակվում: Իսկ որտեղ ես ապրում դո՞ւ:

ԱՐԱՄ - Ասացի, չէ՞ Այգեստանում:
ԿԱՊԻՏԱՆ - Դու Երևանից ես եկել, թե՞ որտեղից:

ԱՐԱՄ - Ես եկել եմ Երևանից:

ԿԱՊԻՏԱՆ - Ուրեմն ապրում ես Երևանո՞ւմ:

ԱՐԱՄ - Իսկ ես ինչ եմ ասում: Ես ապրում եմ Երևանի Այգեստան թաղում, որտեղից էլ եկել եմ Վանի Այգեստան: Տատիկիս հետ որոշել ենք ամառները շրջել Հայաստանում: Անցյալ տարի, օրինակ, հանգստացանք Լոռիում, իսկ այս տարի ցանկացանք Վանը տեսնել:

ԿԱՊԻՏԱՆ - Ուրեմն՝ շրջագայում եք Հայաստանում... Արամ, ասացիր, Երևանում էլ Այգեստան կա:

ԱՐԱՄ - Կա, բա ո՞նց: Երբ Վանի այգեստանցիները տեղափոխվել են Երևան, իրենց նոր թաղը անվանել են Այգեստան: Գիտե՞ք, տատիկս ասում է՝ այդ մարդիկ առանց Այգեստանի չեին կարող ապրել:

ԿԱՊԻՏԱՆ - Այդպե՞ս է ասում տատիկդ: Արամ, իսկ ինչ գնեցիք կամ վերցրիք ձեզ հետ տուն տանելու համար:

ԱՐԱՄ - Այդ քուրդ լավ մարդկանց տանը շատ իին ու գեղեցիկ իրեր կային, մի արծաթազարդ լամակ կար, հետո գունաթափ սնդուկ, գեղեցիկ զարդաքանդակներով

պահարան կար, իսկ պատին գորգ էր... Եզրերը մաշված գեղեցիկ գորգ էր՝ կարմիր խաչերով: Երբ տատիկս սկսեց հերթով շոշափել այդ իրերը, տան տերերն ասացին. «Ինչ ցանկանում եք՝ կարող եք տանել ձեզ հետ»: Բայց տատիկս պատասխանեց, թե այլս իմաստ չոնի: Տատիկս ասաց, որ եթե թոյլ տան՝ բակի ընկույզենու մոտից մի բուռ հող կվերցնի: Իհարկե, նրանք չմերժեցին, սրտաբաց մարդիկ էին այդ քրդերը:

ԿԱՊԻՏԱՆ - Լավ տղա ես դու, Արամ, կուզենայի քեզ նման տղա ունենալ:

ԱՐԱՄ - Դուք էլ լավ մարդ եք Երևում, մի օր իյուր եկեք մեր տուն: Հայրս սիրում է իյուրեր ընդունել ու հետները քեֆ անել մինչև կեսգիշեր: Հայրս ասում է, որ աշխարհում ոչ ոք վատը չի ծնվում, հանգամանքներն են մարդկանց մեջ չար բնագրներ արթնացնում ու երբեմն նրանք վերածվում են զագանների: Իսկ կարելի է, մի բան էլ ես հարցնեմ: Եթե այդքան լավն էր Վանը, ինչո՞ւ են մերոնք հեռացել այնտեղից: Մեր տանը այս հարցին ոչ ոք չի ուզում պատասխանել, ասում են՝ «Կմեծանաս, ամեն ինչ կիմանաս»: Իսկ դուք գիտե՞ք ծշմարտությունը:

ԿԱՊԻՏԱՆ - Չէ, Արամ, ես էլ չգիտեմ ողջ ծշմարտությունը:

ԱՐԱՄ - Ափսոս... ինչ արած, կսպա-

սեմ, չէ՞ որ աշխարհում ոչ մի բան հնարավոր չէ անվերջ թաքցնել, այդպես չէ՞...

Արամը գնում է: Էլիհն Գյումեյը անշարժացել է մտքերի մեջ:

ԾԱՐԱՖ - Լավ երեխա էր: Ինչ հարգանքով էր խոսում օտար մարդկանց մասին:

ԿԱՊԻՏԱՆ - Այո, խելացի երեխա էր: Շարաֆ, դու ի՞նչ ազգից ես:

ԾԱՐԱՖ - Սահմանադրության մեջ գրված է, որ բոլորս թուրք ենք, պարոն կապիտան:

ԿԱՊԻՏԱՆ - Հաջորդին հրավիրիր:

Շարաֆը բացում է դրուը, դրսից լսում է տիկին Ամալյայի ճայնը:

ԱՄԱԼՅԱ - Ժողովուրդ, արագացրեք, գործերը մնացին...

Ներս է մտնում Հայկուին:

ՀԱՅԿՈՒԾԻ - Բարև ձեզ:

ԿԱՊԻՏԱՆ - Լստեք, օրիորդ: Շատ հաճելի է ձեր հայրենակիցների հետ զրուցելը: Չեք ասի, դո՞ւք ինչեր եք փնտրել ու հայտնաբերել ձեզ համար:

ՀԱՅԿՈՒԾԻ - Ծոշափելի չէ հայտնաբերածն, նախնիներս այս կողմերից չեն, ես արևելահայ եմ: Համակուրսեցիս՝ Կարինեն, մորաքրոջ հետ մասնակցելու էր ուխտագնացությանը, առաջարկեց միանալ:

ԿԱՊԻՏԱՆ - Ուխտագնացությո՞ւն... ասում եք: Զեր նախնինե-

րը արևելահայե՞ր են, այսինքն՝ Արևմտահայաստանից չեն: Այդ դեպքում ի՞նչն է ստիպել միանալ այս ձամփորդությունը, չէ՞ որ երիտասարդները գերադասում են ծով գնալ կամ լինել Եվրոպայում՝ Հոռմն ու Փարիզը տեսնել:

ՀԱՅԿՈՒԾԻ - Չեմ կարող ասել: Զեր հարցի պատասխանը չգիտեմ: Հավանաբար, ենթագիտակցության մեջ է պատասխանը:

ԿԱՊԻՏԱՆ - Իսկ թե ինչու եք հոդվերցրել ձեզ հետ, պատասխանը նոյնպե՞ս ենթագիտակցության մեջ է:

ՀԱՅԿՈՒԾԻ - Այդպես է հավանաբար:

ԿԱՊԻՏԱՆ - Եվ ուրիշ ոչինչ չեք ցանկացել մեր երկրից տանել ձեզ հետ:

ՀԱՅԿՈՒԾԻ - Ոչ, ինչո՞ւ... նաև գիրք եմ գնել:

ԿԱՊԻՏԱՆ - Մեր գրողները լավ սիրավեպեր են գրել:

ՀԱՅԿՈՒԾԻ - Գնածս գիրքը Թուրքիայի ազգային-ազատագրական պայքարի մասին է: Լաև ապագա Թուրքիայի քարտեզն եմ գնել:

ԿԱՊԻՏԱՆ - Եվ այդ ամենը ձեզ հետաքրքրում է: Պրայտելու ծգոտում ունեք դրուք: Իմ տպավորությամբ, հայերը պատմությամբ ամենաշատ հետաքրքրվող ժողովուրդն են: Անգամ ձեր արական անուններն են շաղկապվում անցյալի հետ:

ՀԱՅԿՈՒԾԻ - Ոչ միայն արական ա-

նունները, իմ անվան հիմքում, օրինակ, Հայոց տոհմապետի անունն է:

ԿԱՊԻՏԱՆ - Իսկ ի՞նչ գործերով է հոչակվել այդ տոհմապետը:

ՀԱՅԿՈՒՀԻ - Հայկական թագավորությունն է հիմնադրել՝ միավորելով երկիրը և հաղթելով ասորի արքա Բելին:

ԿԱՊԻՏԱՆ - Չե՞ք ասի, դա երբ է տեղի ունեցել:

ՀԱՅԿՈՒՀԻ - Բելի հետ պատերազմը տեղի է ունեցել Զրիստոսի թվարկությունից երկուառութեազար տարի առաջ, Վանա լճից հարավ ընկած դաշտավայրում, որը տոհմապետի անվամբ կոչել են Հայոց ձոր:

ԿԱՊԻՏԱՆ - Նոր թվարկությունից երկուս ու կես հազար տարի առաջ, Վանա լճի մոտ: Եվ այդ մասին վկայություններ կան... ծանր չէ՝ պատմության բեռը կրելք:

ՀԱՅԿՈՒՀԻ - Իսկ ի՞նչ անել պատմության բեռան հետ: Հետո, ես պատմականում եմ սովորում:

ԿԱՊԻՏԱՆ - Ձեզ հետաքրքրում է նաև Թուրքիայի պատմությունը:

ՀԱՅԿՈՒՀԻ - Ձեր և մեր պատմությունները շատ աղերսներ ունեն:

ԿԱՊԻՏԱՆ - Ստացվում է՝ ձակատագրորեն շաղկապված ենք: Եվ հավերժորեն ծգտելու ենք իրար ապացուցել ինչ-որ ծշմարտություններ: Դժվար է պատկերացնել, իհարկե, որ կողմերից մեկը

երբսէ կընդունի, թե արդարությունն իր կողմը չէ:

ՀԱՅԿՈՒՀԻ - Այնուամենայնիվ, ծշմարտությունը մեկն է:

ԿԱՊԻՏԱՆ - Իսկ ով պետք է որոշի, թե որ կողմն է ծշմարիտ: Ինչպես որոշել բացարձակ ծշմարտությունը:

ՀԱՅԿՈՒՀԻ - Դուք ցանկանում եք, որ ես պատասխանեմ այդ հարցին:

ԿԱՊԻՏԱՆ - Ոչ, իհարկե, երանի ամեն ինչ այդքան հեշտ լիներ: Ես ու դուք նստեինք միասին ու որոշեինք ամեն բան: Կարծում եմ, այդ դեպքում ամեն ինչ կընկներ իր տեղը և աշխարհը կդառնար ներդաշնակ: Ցավոք, դա մեր ուժերից վեր է:

ՀԱՅԿՈՒՀԻ - Ես կարո՞ղ եմ գնալ:

ԿԱՊԻՏԱՆ - Այո, իհարկե:

Ութերորդ տեսարան

Նատարանին նատած են Հրայրն ու Վահագը: Վահագը նվազում է ու ցածրածայն երգում:

ՀՐԱՅՐ - Ուրեմն՝ չուզեց խոսել հետդ: (Վահագը չի պատասխանում:) Հայկուիին էլ ինձնից է խուսափում: Լսիր, կարո՞ղ է՝ համը հանել եմ, տարեղարձի օրը շատ էի խմել: Անկեղծ ասած, մինչ վերջերս մտքումս լուրջ բան չկար: Հիմա, երբ հետս խոսել չի ուզում, մեջս ինչ-որ բան շուտ է եկել:

ՎԱՀԱԳ - Մի վախեցիր զգացմունք-ներից:

ՀՐԱՅՐ - Ի՞նչ:

ՎԱՀԱԳ - (երգն ընդհատելով):
Չհանձնվես:

ՀՐԱՅՐ - Բան ասա՝ բան հասկանամ: Ինչ ես հանելուկներով խոսում:

ՎԱՀԱԳ - (կիրառը մի կողմ դնելով):
Ասում եմ՝ սրտիդ դեմ մի գնա:
Կոյիվ տուր երջանկության համար:

ՀԱՅԿ - Պահ, ով է խորհուրդ տալիս:
Բա դու ինչո՞ւ չես պայքարում:
Մտածում էիր, առաջարկություն անես թե չէ՝ նետվելու է վգրվի:

ՎԱՀԱԳ - Չէ, իմ դեպքն ուրիշ է: Եթե մարդուն դուր չես գալիս՝ ծանր հրետանին էլ չի օգնի: Իսկ Հայկուիին անտարեր չէ քո նկատմամբ:

ՀԱՅԿ - Ինչ անհեթեթ է կյանքը: Ով պատրաստ է վազել ետևից՝ նրան դու չես նկատում, իսկ ում ետևից ինքդ կարող ես գնալ մինչև աշխարհի ծայրը՝ այդպիսի փափագ բոլորովին չունի: Է, սա կյանք չի, իմ արև, կյանք չի:

ԳԱԳԻԿ - (մոտենալով ու լսելով Հայկի վերջին բառերը): Ապրես, ցավդ տանեմ, ես կյանքը կյանք չի: Ախապեր ջան, տեսաք, էլի, ցերեկը քշում եմ, գիշերը քշում եմ, անձրկին ու փոթորիկին քշում եմ: Սար չկա՝ չբարձրանամ, ձոր չկա՝ չիջնեմ: Բայց, հազար ներողություն, ինչ է նշանակում մեքե-

նան, վարորդով հանդերձ, կաթիլայինի տակ պահես: Քանոնով ձանապարհն ուղիղ գծում է՝ բենգինի գումար է հաշվում, հետն էլ ասում է, թե. «Հաճախորդին պիտի հարմարվես՝ բիգնեսի օրենք է»: Ախր, մեքենան էլ քարից չի՝ փշանում է, մեքենայի տերն էլ երկաթից չի՝ սիրտը ինչ-որ բան է ուզում: Երկու շաբաթ ձամփեքին եմ, բա մի բան չառնեմ, ծեռքս բռնած մտնեմ տուն, երեխսքա ասեն. «Պապան գործի էր գնացել»:

Լավում է Անայայի գոտոցը:

ԱՄԱԼՅԱ - Զեր Աստծուն մեռնեմ, նոր խումբը պատրաստ ինձ է սպասում, արագացրեք: Գագիկ, որտեղ ես, այ տղա, ստամոքսս քայքայվեց խաշած հավից, դու իմ մասին հեշ չես մտածում:

ԳԱԳԻԿ - Ո՞նց չեմ մտածում, շեֆ ջան, էս պահին հենց էդ հարցն եմ քննարկում: Հիմա վազեցի, շեֆ ջան:

Իններորդ տեսարան

Կապիտանի դիմաց նատած է Էքմեքչյանը:

ԿԱՊԻՏԱՆ - (նկատելով՝ ինչպես է դիմացինը խաղում ծխախոտի հետ): Կարող եք ծխել:

ԷՔՄԵՔՉՅԱՆ - Ուշադրություն մի դարձրեք, պարզապես շոշափում եմ գլանակը: Այսպես ծխելու ցանկությունը ինչ-որ չափով մա-

րում է: Ըստ էության, զբաղված եմ ինքնախաբեությամբ, և պատկերացրեք, օգնում է:

ԿԱՊԻՏԱՆ - Այո, ինքնախաբեությունը հաճախ ցանկալի է դառնում: Շատ եք ծխում:

ԷՔՄԵՔՉՅԱՆ - Այո, հատկապես զիշերները:

ԿԱՊԻՏԱՆ - Անքնությամբ եք տառապում, հավանաբար:

ԷՔՄԵՔՉՅԱՆ - Ոչ, գործիս բնույթն է պահանջում, բանաստեղծ եմ, եթե կարելի է այդպես ասել:

ԿԱՊԻՏԱՆ - Ինչո՞ւ վերապահումով, համեստ մարդ եք երևում:

ԷՔՄԵՔՉՅԱՆ - Խնդիրը համեստությունը չէ, պարզապես, երբ մտածում ես, որ բանաստեղծներ են եղել Բայրոնը, Գյորեն, Պուշկինը, Ուիթմենը, Վարուժանը՝ մեծամտություն է ինքդ քեզ բանաստեղծ համարելը:

ԿԱՊԻՏԱՆ - Ինչպես ասացի՞ք... Վերջին անունն անհայտ էր ինձ:

ԷՔՄԵՔՉՅԱՆ - Ուիթմեն:

ԿԱՊԻՏԱՆ - Ոչ, վերջինը:

ԷՔՄԵՔՉՅԱՆ - Եթե չեմ սխալվում, Դանիել Վարուժանի անունը տվեցի: Հայ բանաստեղծ է Վարուժանը, մեծ բանաստեղծ: Հիմա ստեղծագործելուց ավելի կարևոր գործով եմ զբաղված՝ Վարուժանի պոեզիան եմ թարգմանում ֆրանսերեն:

ԿԱՊԻՏԱՆ - Վարուժանը ժամանակակից բանաստեղծ է:

ԷՔՄԵՔՉՅԱՆ - Ոչ, նա մեր դասա-

կաններից է, 15 թվականին է մահացել: Մեծ տարերքի, մեծ հոյզերի բանաստեղծ է Վարուժանը:

ԿԱՊԻՏԱՆ - Հետաքրքիր է... դուք, ուրեմն, ֆրանսերենին եք տիրապետում: Լախանձում եմ, ով կարող է հարազատ լեզվով Բալգակու Էյուար կարդալ: Իմ գիտեցած օտար լեզուն գերմաներենն է: Սույնպես հածելի է, երբ կարող ես բնագրով կարդալ «Ֆառատ» կամ թե սեփական ականջի համար շշուկով Հայնե արտասանել: **ԷՔՄԵՔՉՅԱՆ** - Դուք ևս մշակույթի մարդ եք երևում: Գուցե նոյնպես բանաստեղծ եք:

ԿԱՊԻՏԱՆ - Ցավոք, ոչ: Ճարտարագետ շինարար եմ, մասնագիտությունն էլ պատճառ դարձավ, որ մի օր հայտնվեի ծառայության մեջ: Կինս ասում է՝ սխալ մասնագիտություն եմ ընտրել, արվեստն ինձ ավելի է հոգեհարազատ: Բայց ես ստեղծագործող չեմ: Ստեղծագործությունը մեջդ կծնվի, անկախ նրանից՝ դիպլոմ ստացել ես, թե ոչ: Իհարկե, այս խոստովանությունը կնոցս մոտ չեմ անի, որ չիհասթափեցնեմ: Հաճախ գեղեցիկ հեքիաթները գերադասելի են իրականությունից: Սա ևս ինքնախաբեության ոլորտից է:

ԷՔՄԵՔՉՅԱՆ - Մեր կյանքի մեծ բաժնը կազմում է հեքիաթը: Ի վերջո, ի՞նչ է արվեստը, ի՞նչ է կրոնը, ինչի համար են ավանդույթներն ու ծեսերը:

ԿԱՊԻՏԱՆ - Եթե ավելի խորանանք, գուցե նաև հիշողությունները:

ԷՔՄԵՔՅԱՆ - Գուցե նաև հիշողությունները:

ԿԱՊԻՏԱՆ - Իսկ ձեզ համար ինչ են հիշողությունները:

ԷՔՄԵՔՅԱՆ - Ես ատում եմ դրանք:

ԿԱՊԻՏԱՆ - Ձեզ ինչն է բերել այս ձամփորդությանը, պարուն եք մեքյան:

ԷՔՄԵՔՅԱՆ - Միայն ոչ հիշողությունները: Հիշողությունները նրանց համար են, ովքեր սեփական կյանքը կաղապարում են անանձնական մտասնեռումներով: Ես ցանկանում եմ իմ կյանքով ապրել:

ԿԱՊԻՏԱՆ - Այնուամենայնիվ, այս ձամփորդությունից ձեզ հետ մի բուռ հող եք տուն տանում, որ հածախ նայեք դրան, և արթնանան հիշողությունները: Այդ հիշողություններն արթնացնեն այլ հիշողություններ, և ուրիշների պարագը տեղափորեք ձեր կյանքի մեջ:

ԷՔՄԵՔՅԱՆ - Ես հող չեմ տանում հետս: Չեմ տանում մոտավորապես նոյն պատճառով, ինչ դուք նշեցիք:

ԿԱՊԻՏԱՆ - Գիտեք, ուրախացա, երբ ասացիք, թե բանաստեղծ եք՝ հաձույքով կզրուցեի այդ թեմայով: Ցավով պիտի ավարտեմ մեր զրոյցը և հայցեմ ձեր ներողամտությունը, այնքան հարցեր տվեցի, որ խոսակցությունը նմանվեց հարցաքննության:

ԷՔՄԵՔՅԱՆ - (ոտքի կանգնելով և ուղղվելով դեպի դուռը): Կյանքն անակնկալներով լի է, ով գիտե, գուցե մի օր հանդիպենք ինչ-որ մի տեղ, գինի խմենք, բանաստեղծություններ արտասանենք ու չմտածենք ուրիշ բանի մասին:

ԿԱՊԻՏԱՆ - Պարոն եքմեքյան, դոք պատահաբար տվեցիք բանաստեղծ Վարուժանի անունը:

ԷՔՄԵՔՅԱՆ - Ձեզ չեմ հասկանում:

ԿԱՊԻՏԱՆ - 1915 թվականին հայ բանաստեղծները սեփական մահով չէին մեռնում, այո՞... Մտքերի այդ ընթացքին էիք ցանկանում մղել ձեր ակնարկով:

ԷՔՄԵՔՅԱՆ - Բնավ ոչ, պարզապես փաստն է այդպիսին:

ԿԱՊԻՏԱՆ - Պարոն եքմեքյան, ձեր ազգանունը թուրքական հիմք ունի...

ԷՔՄԵՔՅԱՆ - Նախնիներս Մալթիայից են: Պապերս տոհմիկ հացթուխներ են եղել: Այստեղից է՝ եքմեքյան ազգանունը: Պապս հագել է ֆրակը և գեղեցկուի տիկնոց հետ տարին մի քանի անգամ մեկնել է Փարիզ՝ Կոմեղի Ֆրանսեզում ներկայացումներ դիտելու: Երբ մի օր, ամեն ինչի հետ, կորցրել է նաև ոտքի տակի հողը, ընկերներն առաջարկել են բնակություն հաստատել Փարիզում: Նա նամակով պատասխանել է. «Փարիզի համար ես մալաթիացի հացագործ Գասպար էքմեքյանն եմ եղել: Այլս

որպես ով պետք է գամ»: Հաստատվել է Հունաստանում՝ մորաբրոց որդիների մոտ, նրանք նարինջ էին աժեցնում: Բայց այնտեղ էլ հոգեկան անդորր չի գտել ու ներգաղթել է Խորհրդային Հայաստան: Ծատ չանցած, այստեղից աքսորել են Սիրիի: Սիրիում, թոքախտից տառապելով, թշվառության մեջ ավարտել է կյանքը: Նրա ողջ մնացած միակ որդին, ժառանգած հիվանդությունները չհաղթահարելով, մահկանացուն կնքեց Երևանում: Նա էլ իր հերթին զավակներին ժառանգություն թողեց միայն դառը հիշողությունները: Ես ատում եմ հիշողությունները:

ԿԱՊԻՏԱՆ - (*Էքմեքչյանի դուրս գալուց հետո*): Ես ատում եմ հիշողությունները:

Նստած է փակ աչքերով: Ջիշ անց, երբ բացում է աչքերը, դիմացը կանգնած է գրիգոր Քալյանը՝ մեծ պայուսակը ձեռքին:

ԿԱՊԻՏԱՆ - Ինչ եք ցանկանում:

ԲԱԼՅԱՆ - Դուք չեք հրավիրել:

ԿԱՊԻՏԱՆ - Այո, իհարկե: Իսկ... այդ ինչ պայուսակ է:

ԲԱԼՅԱՆ - Այս պայուսակը: Հող է պայուսակում: Ձեզ հողն է հետաքրքրում:

ԿԱՊԻՏԱՆ - Պայուսակում հող է:

ԲԱԼՅԱՆ - Միայն հող: (*Պայուսակը դնում է սեղանին և այնտեղից դուրս է բերում հողով լցված ցելո-*

ֆանե տոպրակներ:) Այս հողը Կարսում եմ հավաքել, այս տոպակը Անիի հողով է լցված, այս մեկը երգրումից է...

ԿԱՊԻՏԱՆ - Սպասեք, սպասեք... Ես նշումներ չեմ տեսնում տոպրակների վրա, դուք ինչպե՞ս եք տարբերում, թե որը որտեղից է...:

ԲԱԼՅԱՆ - Մեծ գաղտնիք չէ: Այս հողը հավաքել եմ Կարսի Առաքելոց վանքի մոտից: Իհարկե, վանքը վերածվել է մզկիթի... ինչպես գիտեք: Եկեղեցու արևմտյան պատը գտնվում է ընկուզենու ստվերի ներքո, պատի տակ հողը խոնավ է՝ սև ու խոնավ: Այս մեկի պարունակությունը լրիվ հակառակն է, որովհետեւ երգրումի բերդից է: Անձրևն ու արևը, մշտական քամին այս հողը վերածել են շիկավուն ավազի: Իսկ այս մեկը, որ դեղին է և ավելի շատ կավ է հիշեցնում՝ Սեմրութ լեռան խառնարանից է: Այս մեկում... Երեխան էլ գլխի կընկնի, տեսնում եք, կարմիր քարի կտորտանք է: Սրանք Անիի մայր տաճարի քանդված առաստաղի բեկորներն են: Մեծ քարերն անհետացել են, իսկ բեկորները խառնվել են հատակի հողին: Սա նոյնպես հեշտ ճանաչելի է, ինչպես տեսնում եք, հող չէ, այլ ավազ: Այս ավազը Արածանի գետից է՝ ծիշտ Սոլուխի կամրջի տակից: Գիտեք, նմուշ եմ վերցրել նաև Արաքս ու Մուրց գետերի միախառնման վայրից՝ նոյնպես կամրջի տակից, բայց,

ի տարբերություն Արածանու ա-
վազի, ավելի գորշ է, քանի որ
միախառնման տեղում ջուրը
մշտապես պղտոր է: Հիմա ձեզ
ցոյց կտամ...

**Այս ընթացքում Գրիգոր Քայլա-
նը պայտասակից հանում ու սեղա-
նին է շարում տոպրակներ:** Ելչին
**Գյումեյը ապշահար նայում է մեկ
նրան, մեկ՝ տոպրակներին:**

**ԲԱԼՅԱՆ - Գտա... տեսեք, սրա ու այս
մեկի տարբերությունը:** (*Ոգևորված
գլխից վեր է պարզում երկու տոպ-
րակներ:*)

ԿԱՊԻՏԱՆ - (ընդհատում է նրան):
Ձեր ինչին են անտք տարբեր վայ-
րերի հողի նմուշները, հավանա-
բար դուք նոյնպես գիտաշխատող
եք:

**ԲԱԼՅԱՆ - Կոռահեցիք, Մատենադա-
րանի գիտաշխատող եմ: Մատե-
նադարանը...**

**ԿԱՊԻՏԱՆ - Տեղյակ եմ, շարունա-
կեք:**

ԲԱԼՅԱՆ - Գիտեք, ինչ եմ մտածել:
Փոքրիկ տուփերի մեջ կլցնեմ հո-
ղի այս պտղունցներն ու կշարեմ
աշխատասենյակում: Այցելողնե-
րը հայացք կգտնի դրանց վրա ու
շոշափելիորեն կպատկերացնեն
տվյալ տարածքը: Հողը նաև է-
ներգիա է պարունակում, համա-
ձայն եք:

**ԿԱՊԻՏԱՆ - Դուք բավարարեցիք իմ
հետաքրքրասիրությունը, շնոր-
հակալություն:**

ԲԱԼՅԱՆ - Խնդրեմ:

**Ելչին Գյումեյը ապշահար նա-
յում է փակվող դրանը: Զանգում
է հեռախոսը, մեխանիկորեն
վերցնում է լսափողը:**

**ԿԱՊԻՏԱՆ - Այո, լսում եմ... Կապի-
տան Ելչին Գյունեյը 1004 սահմա-
նային անցակետից լսում է,
պարոն գնդապետ:**

**ԳՆԴԱՊԵՏ - Ինչ եղավ այդ հայերի
հետ, կապիտան:**

**ԿԱՊԻՏԱՆ - Այդ հայերը հողը ծա-
նաչում են, պարոն գնդապետ:**

**ԳՆԴԱՊԵՏ - Կապիտան, պարզ ա-
սեք, ինչ եք ուզում ասել:**

**ԿԱՊԻՏԱՆ - Այդ հայերը նայում են
իրենց հավաքած հողին ու ասում
են, թե որը որտեղից է:**

**ԳՆԴԱՊԵՏ - Ինչպես... նոյնիսկ ես
չեմ կարող... Ես՝ զտարյուն թուրք
ու տոհմիկ զինվորական, գնդա-
պետ Ղարաասկյարօղլուս չեմ
կարող նայել իմ հողին ու հասկա-
նալի, թե որտեղից է բերված: Այդ
հողի ազատագրության համար
մեր արյունն ենք հեղել, ինչպես
կարող է ինչ-որ մեկը ավելի լավ
ծանաչել այն:**

**ԿԱՊԻՏԱՆ - Պարոն գնդապետ,
նրանք ոչ միայն գիտեն մեր երկ-
րի ծանապարհները, լեռներն ու
ծորերը, որոնք երբեք չեն տեսել,
այլ կարծես ենթագիտակցութ-
յամբ զգում են այդ ամենը:**

**ԳՆԴԱՊԵՏ - Ինչ... Խելագարվել եք,
ինչ է, կապիտան: Լրտեսներ են**

դրանք, ոչ թե զբոսաշրջիկներ: Ու մենք դրանց առաջ պիտի փունք մեր երկիրը: Մատուցենք սուրբ հողը որպես մի անառակ կնո՞ց: Ինչպես կարելի է հանդուրժել...

ԿԱՊԻՏԱՆ - Ինչ կիրամայեք անել, պարոն գնդապետ:

ԳՆԴԱՊԵՏ - Ինչ անել... ինչ անել: Մտնել... Եվրոպա: Եվրոպականանալ: Լինել բոլորի համար բաց ու ձգող: Ինչ անել... Շարունակեք հարցաքննությունը և զգոն եղեք: (Նետում լսափողը:)

Տասներորդ տեսարան

ԳՆԴԱՊԵՏ - Եվրոպա են մտնում... Կարծամիտներ: Տեսքք, տեսքք, Եվրոպան ինչ կասի: Տոհմիկ զինվորական, կողիվների մեջ կյանքը մաշած գնդապետ Ղարաասկյարողուն թող փոտի ժանդարմական գրասենյակում, իսկ օտարները քթները խորեն ամեն տեղ, և Ալլահը միայն գիտենա, թե ինչ մտքեր են դրանց գլուխներում: (Հեռախոսազանգ: Զայրացած:) Էլի ինչ պատահեց այդտեղ, կապիտան: Վերջապես տիրապետում եք իրավիճակին, թե՞ ոչ:

ՍԵԼՎԻ - Զայրացած ես, Ահմադ, բան է պատահել:

ԳՆԴԱՊԵՏ - Ո՞վ է այդտեղ, բարձր խոսք:

Լուսավորվում է քեմի այն մասը, ուր նստած է գնդապետի կիմը:

ՍԵԼՎԻ - Իմ ծայնն էլ արդեն չես ծանաչում:

ԳՆԴԱՊԵՏ - Սելվի... դո՞ւ ես, սիրելիս, հեռախոսագծերի մեջ ինչ աղմուկ է՝ չեմ հասկանում:

ՍԵԼՎԻ - Զվիրավորվես, բայց երազում եմ այն ժամանակի մասին, երբ թոշակի կանցնես: Վերջապես դու էլ խաղաղ կյանք կունենաս ու մենք այլս չենք բաժանվի:

ԳՆԴԱՊԵՏ - Ալլահը վկա, քեզանից բացի ոչ ոքի երեսը չեմ ուզում տեսնել:

ՍԵԼՎԻ - Աղելին էլ չես ուզում տեսնել: Միթե չես կարոտել քո փոքրիկ արտույտին:

ԳՆԴԱՊԵՏ - Մտածում եմ՝ արձակուրդ վերցնեմ սեպտեմբերին, մեկնենք Բեռլին: Սեպտեմբերը վատ ամիս չէ Բեռլինի համար: Կզբունենք, ուստորան ու թատրոն կհածախենք: Ինչ կասես, Սելվի, լավ չեմ մտածել:

ՍԵԼՎԻ - Այսպես, թե այնպես, երսի մոտ ժամանակներս անհրաժեշտ լինի մեկնել Բեռլին:

ԳՆԴԱՊԵՏ - Ինչո՞ւ: Աղելն ինչ-որ խնդիրներ ունի: Հիվանդ ին չէ դստրիկս:

ՍԵԼՎԻ - Ո՛չ, ոչ, առողջ է ու համալսարանում էլ ամեն ինչ լավ է: Ամեն օր խոսում եմ հետը, ինչպես պատվիրել ես:

ԳՆԴԱՊԵՏ - Սելվի, ինչ-որ բան ես թաքցնում ինձանից:

ՍԵԼՎԻ - Ահմադ, սիրահարվել է մեր դուստրը:

ԳՆԴԱՊԵՏ - Սիրահարվել է: Իսկ

քեզ հետ խորհրդակցել է նախապես:

ՍԵԼՎԻ - Քեզ սիրելու համար ինձ ուղարկեցիր ծնողներիս հետ խորհրդակցելո՞ւ:

ԳՆԴԱՊԵՏ - Դա ուրիշ էր... իմ մտադրությունը լուրջ էր: Եվ, հետո, այն ժամանակ ես արդեն գլխավոր շտաբում պատասխանատու հանձնառություններ էի կատարում: Իսկ նա այնտեղ միայնակ...

ՍԵԼՎԻ - Խնայիր նյարդերդ, Ահմադ ու մի մոռացիր, որ Ադելն այլևս երեխս չէ:

ԳՆԴԱՊԵՏ - Երեխս չէ, իսկ ո՞ւմ է ընտրել, ինչ ծագում ունի... ո՞վ է ընտրյալը...

ՍԵԼՎԻ - Խնայիր նյարդերդ, սիրտդ էլ առաջվանը չէ: Ադելը հավատացնում է, որ Երկար կշոադտել է մինչև որոշում կայացնելը: Տղան Երեք տարի առաջ է համալսարանն ավարտել: Մեծ եղբօր իրավաբանական գրասենյակի փոխտնօրենն է: Գիտե՞ս, Դիարբեքիրում է ծնվել:

ԳՆԴԱՊԵՏ - Բայց ինչ-որ խնդիր կա, այն... ինչ ես թաքցնում ինձանից, Սելվի:

ՍԵԼՎԻ - Ոչինչ էլ չեմ թաքցնում, ասացի, չէ, Դիարբեքիրում է ընտրյալը: Միայն թե այդ տղան ասորի է: Ադելն ասում է՝ ավանդապաշտ ընտանիքի զավակ է, Եվրոպական բարեկրթությամբ:

ԳՆԴԱՊԵՏ - Ղարաասկյարօղունե-

րի ընտանիքի միակ ժառանգը սիրահարվել է ասորին... Իմ զավակը չի գիտակցում՝ ինչ է նշանակում ծնվել թուրք: Ասորի, Եվրոպական բարեկրթությամբ... Սպասիր-սպասիր, այդ տղան երևի քրիստոնյա՞ն: Առողջ քեզ ավանդապաշտություն: Ու աղջկաս չի հետաքրքրել իմ կարծիքը: Գուցե քեզ է հարցրել: Դու համաձայնություն ես տվել... Սելվի, ինչպես կարող էիր...

ՍԵԼՎԻ - Ինձ համար էլ անակնկալ էր... Ես ասացի Ադելին, թե վախենամ՝ շատ վշտացնես հորդ, բայց նա կարծես թե սիրահարվել է մինչև ականջների ծայրը: Ահմադ, իսկ եթե պարզվեր, որ ես թուրք չեմ, ինձ չէիր սիրի:

ԳՆԴԱՊԵՏ - Ինչպես կարող էիր թուրք չինել... ինչեր ես խոսում... Այն, հետաքրքիր օր եղավ:

ՍԵԼՎԻ - Միայն մի հոգվիր: Դու քաջ ես, դու հերոս ես, դու կարող ես ամենաբարդ իրավիճակում որոշում կայացնել: Երեկոյան կզանգեմ: Իսկ դու մի բարկանա... հանգստացիր, Ահմադ, հանգստացիր, սիրելիս...

Միաժամանակ ցած են դնում լսափողները:

ԳՆԴԱՊԵՏ - Հանգստացիր, Ահմադ... Հեշտ է ասելը: Ղարաասկյարօղուների թուրքական երակներում՝ ասորական արյուն... Թեև... լուսահոգի տատս

հո՞յն էր: Գուցե այստեղից է սկսվում Աղելի շեղումը: Գեղեցկուի Ապողինարիա տատիկը: Քիչ էր խոսում, քթի տակ կամաց երգում էր: Մեզ անհասկանալի մեղրածոր երգեր էր երգում: Գուցե ցավ ուներ ներսում: Իզմիրից էր: Մերոնք ժամանակին, անհնազանդության համար, հոյներին դաս էին տվել Իզմիրում: Նաև հայերին, նաև հայերին... Պապս կովել էր այնտեղ: Հոյսերը գրում են, իբր Զմյուռնիայում կոտորածներ են եղել, թալան, կանայք ու աղջիկներ են բռնաբարվել... Դա ե՞րբ է եղել: Իզմիրի դեպքերը տեղի են ունեցել 1922 թվականի սեպտեմբերին: Հայրս ծնվել է 1923 թվականի մայիսին: Սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր,

դեկտեմբեր, հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս՝ ինն ամիս: Մի՞թե Իզմիրի այդ դեպքերի օրերին է տեղի ունեցել հանդիպումը և սերը, սե՞րը... Այսինքն, կարող է պատահել, որ այդ դեպքերի ժամանակ պապս տատիկիս... Ինչպես շատերը՝ շատերին... Ինչ հիմարություններ են անցնում մտքովդ, Ահմադ: Մյուս կողմից՝ ինչ է մարդկության պատմությունը և ով ում կարող է մեղադրել: Պատմությունը դատարան քարշ չես տա: Իսկ եթե քարշ տաս... Պատմությունը ենթարկվում է ուժեղների կամքին, ու թող ոչ ոք չփորձի վախեցնել ինչ-որ ծշմարտություններով: Թուրքիան հաղթող է, Թուրքիան մեծ է, երանի նրան, ով թուրք է ծնվել...

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

**Խավար քեմում լսվում է տիկին
Ամալյայի ձայնը:**

ԱՄԱԼՅԱ - Ժողովուրդ, արագացրեք, իրավիրվեք, ով նստելու է՝ թող տեղը նստի, ով պիտի գրուցի՝ զրուցեք-ավարտեք, գնանք-հասնենք մեր գործերին: Դուք էլ տուն ու տեղ ունեք, մեծ ու փոքր ունեք, չէ... Գագիկ, անխիղձ, կծուն վառեց կոկորդս, էղքան շնորհք չունե՞ն՝ մի շիշ կոլա ճարես: Բա դու իմ մասին հեշ չես մտածում:

Տասնմեկերորդ տեսարան

**Գյունեյի առանձնասենյակ են
մտնում Վոլտերը և Վիկտորիան:**

ՎՈԼՏԵՐ - Մենք միասին... Ինչպես ասում են՝ այր ու կին, մեկ մարմին:

ԿԱՊԻՏԱՆ - Կարող եք նստել, ուրախ եմ:

ՎՈԼՏԵՐ - Բա մենք ինչքան ենք ուրախ:

ԿԱՊԻՏԱՆ - Ցանկացել եք ծամփորդել մեր երկրում:

ՎՈԼՏԵՐ - Ճիշտն ասած՝ ոչ: Անցած

տարի Փարիզում եղանք, դրանից առաջ Լոնդոնի ժամացույցը գնացինք-տեսանք, այս տարի էլ բուրգեր էինք ուզում տեսնել, բայց Վիկան՝ Վիկտորիան շոգին չի դիմանում, ասաց. «Մի գով տեղ գնանք»:

Վիկտորիան խեթ նայում է ամուսնուն:

ԿԱՊԻՏԱՆ - Այսինքն՝ հատուկ նպատակ չեք ունեցել...

ՎՈԼՏԵՐ - Չէ, ինչ հատուկ նպատակ, ծիշտն ասած, շատ ժամանակ էլ չունեմ, գործարար մարդ եմ: Լավ կլիներ՝ մյուսներից մի փոքր շուտ ժանապարհ ընկնեի: Պարոն կապիտան, ձեզ մոտ մի քիչ շող է, օդափոխիչը չէր խանգարի: Իհարկե, ամեն հարց պետական բյուջեով չի լուծվի, պետությունն էլ մեղք է, բա գործարարներն ինչի՞ համար են... Կողքից օգնությունը չէր խանգարի...

ԿԱՊԻՏԱՆ - Պատուհանը բացեմ:

ՎԻԿԱ - Ուշադրություն մի դարձրեք, ամուսինս անհանգիստ մարդ է:

ԿԱՊԻՏԱՆ - Շատ լավ: Այնուամենայնիվ, ինչ-որ հետաքրքիր բաներ տեսաք հավանաբար:

ՎԻԿԱ - Իհարկե, մի քանի հետաքրքիր խանութներ տեսանք...

Վոլտերը խեթ նայում է նրան:

ԿԱՊԻՏԱՆ - Իսկ դուք իոդ վերցրե՞լ եք ձեզ հետ:

ՎԻԿԱ - Չէ, շատ փող չենք վերցրել, այնքան, որ ճանապարհածախսին հերիքեր, ինչ-որ բան առնելու հատուկ նպատակ չունեինք...

ՎՈԼՏԵՐ - (Կրկին խեթում է կնոջը): Պարոն կապիտան, հողը մեր ինչին է պետք, մենք մեր եղածի ծեռքն ենք կրակն ընկել: Քաղաքից դուրս մի երկու հեկտար հողամաս ունեմ: Երեք հարկանի թեթև տուն եմ սարքել, պտղատու ծառեր եմ դրել, բայց մշակող չկա, աշխատող էլ վարձես, ուրեմն բերքիցդ պիտի ձեռք քաշես: Բայց ես ձեզ հարգեցի, պարոն կապիտան... (Երկիմաստ դադար:) Եթե կարողանայի օգտակար լինել, թե չէ շոգը խեղում է, գործերս էլ մնաց... Ուզում եմ Հայաստան բանջարեղեն ներմուծել՝ մեզ մոտ բանջարեղենի դեֆիցիտ կա, վստահելի գործնկեր լիներ՝ համատեղ բիզնես կազմակերպեինք:

ԿԱՊԻՏԱՆ - Դե լավ, ես ձեզ շատ չեմ գրադաւունի:

ՎՈԼՏԵՐ - Վիկա, մի բան ասա, ուշադրությունը գրավի... (Ծշնջում է ականջին:)

ՎԻԿԱ - Զհասկացա... կարո՞ղ է՝ գմվել ես, ինձ ովմ տեղն ես դրել: Պարոն կապիտան, շատ հետաքրքիր զրուցեցինք: Սարը սարին չի հանդիպում՝ մարդը մարդուն հանդիպում է: Կգաք Հայաստան, անպայման հյուր համեցեք: Եթե իմանանք՝ Երևանում

Եթ եղել ու մեզ չեք այցելել՝ կ թուրքիա չենք գա: Ընտանիքով կգաք ու ուղիղ մեր տուն: Երևանում մեր անոնը ում մոտ տաք՝ տան տեղը ցուց կտան:

Վղողերք գրապանից ծրաբ է հանում և աննկատ դնում է կապիտանի սեղանին: Միրայիր իրաժեշտ են տալիս, ամուսինները գնում են: Դրսից լսկում է Ամալյայի ձայնը:

ԱՄԱԼՅԱ - Հաջորդն ո՞վ է... ժողովուրդ, շարժվեք: Անխիդներ, բա դուք տուն չունեք, տանը ձեզ սպասող չկա...

Տասներկուերրորդ տեսարան

Գյութեյի առանձնասենյակ է մտնում տիկին Վանուիկն:

ՎԱՆՈՒՀԻ - Խոսել էիք ցանկանում: ԿԱՊԻՏԱՆ - Համեցեք, տիկին: Եթե չեմ սխալվում, դուք այն լավ տղայի տատիկն եք: Ինչպես էր անոնը... Արամ: Ուրախ, անհոգ երեխա է Արամը:

ՎԱՆՈՒՀԻ - Երեխա է, այդ պատճառով էլ անհոգ է:

ԿԱՊԻՏԱՆ - Իսկ ես երկու դուստր ունեմ:

ՎԱՆՈՒՀԻ - Աստված պահի:

ԿԱՊԻՏԱՆ - Մարդիկ երեխաների հետ են կապում անկատար երազանքների իրականացումը:

ՎԱՆՈՒՀԻ - Մեծ են...

ԿԱՊԻՏԱՆ - Ավագը տասներկու տարեկան է, փոքրը՝ տաս տարե-

կան: Մեծը բնության սիրահար է, մասնակցում է խմբակների, բնապահպանների հետ արշավների է մեկնում: Իսկ փոքրս նկարում է, զարմանում եմ, թե այդ տարիքում ինչ ուրույն ներաշխարհ ունի: Զեր թոռնիկն էլ հետաքրքիր պատմություն էր պատմում՝ ինչպես եք քուրդ ընտանիքի այցելել: Ասում էր՝ առաջարկել են վերցնել տնից՝ ինչ կցանկանաք, իսկ դուք մերժել եք:

ՎԱՆՈՒՀԻ - Այդ մասին էլ գիտե՞ք: Այո, իրաժարվել եմ, բայց գողություն եմ արել:

ԿԱՊԻՏԱՆ - Ինչպես... գողություն եք արել:

ՎԱՆՈՒՀԻ - Այո:

ԿԱՊԻՏԱՆ - Եթե խոստովանեցիք, նաև չեք թաքցնի՝ ինչ եք գողացել:

ՎԱՆՈՒՀԻ - Սա եմ գողացել: (Գրպանից հանում, սեղանին է դնում արձաթաջրած, ծաղկազարդ, կենտրոնում հայերեն թռչնաձեւ փորագրված ե տառով ապարանջանը:) Քանի օր երկվորյան մեջ եմ՝ գողություն էր արածս, թե իրավունքիս հաստատում: Այգեստանում քուրդ տանտերը մեզ հյուրընկալել էր մեր տան մեջ: Տան իրերը կարծես ոչ թե ուրիշների պատմածով էին դրոշմվել ուղեղիս մեջ, այլ իմ անցյալի հիշողություններ էին: Ճնշող էր այդ ամենը ու ես այգի դուրս եկա: Տան կողքով առվակ էր հոսել ժա-

մանակին, հիմա հունը խոտով էր ծածկված: Ընկուզենին այնպես կանաչ էր ու պտղակալած, ասես դար չէր անցել գլխով: Բարդիները անցած-գնացած գաղտնիքներ էին փսփսում իրար: Տասնվեց-տասնյոթ տարեկան մի պատանի տան ետևում վարդերի չորացած թփերն էր կտրատում, որոնք տարածվել էին զառիթափի եզրին, ձուլվել էին ցանկապատին: Աչքերիս առջև վերականգնվեց գարնանային վարդաստանը, որտեղից մեր տան հարսները նուրբ թերթիկները հավաքում, անուշահամ մուրաբա էին եփում: Զմոնան երկար գիշերներին, ծյան պես սպիտակ, ասեղնազործ սփոռցի վրա շարվում էին մրգի չիրը, ընկույզն ու փշատը և թեյի համար մատուցվում էր վարդի մուրաբան... Այս մտքերի հետ էի, երբ քուրդ տղան փտած ցողունի հետ արմատախիլ արեց, մի կողմ նետեց թփի ծյուղակոր բունը: Հողի շուռ գալու հետ մի բան պսպղաց աչքիս առջև ու կորավ խոտերի մեջ: Տղան ոչինչ չնկատեց: Մոտեցա, շոշափեցի թփերը, մատներիս մեջ հայտնվեց այս ապարանջանը, կենտրոնում՝ թռչնակերպ Ե տառով: Կապույտը խամրել էր, արծաթը՝ քայքայվել, բայց կասկած չկար, որ ձեռքիս Երանուին մորաքրոջս թևնոցն էր: Հայրն էր նվիրել, տասներորդ տարեդարձի

առթիվ: Մինչ մեծերը տանը ծնունդ էին տոնել, երեխաները վազվել էին այգում՝ Երանուին շրջապատած: Ու ոչ ոք չէր զացել, որ վերջն արդեն սկսվել է: Ինչ դաժան է ասված

Ծառը պիտի հատեն:

Եվ սակայն անհոգ

թռչուններն այնտեղ

Դեռ բույն են հյուսում:

ԿԱՊԻՏԱՆ - Հայ բանաստեղծ է գրել 1915 թվականին:

ՎԱՆՈՒՃԻ - Ենթադրեցիք...

ԿԱՊԻՏԱՆ - Դժվար չէր կոահելը:

ՎԱՆՈՒՃԻ - Միջնադարի ճապոնացի բանաստեղծի թանկա է: Բայց չեք սխալվում, ցավի լեզուն ամենուր նույնն է: Թաղը իրարանցման մեջ է եղել, իսկ քեֆ անողները պարել ու երգել են: Ըեղափոխականների փնտրող գինվորական խմբերից մեկը ներխուժել է տուն: Փնտրածը չգտնելով՝ սևեռվել են այգուց լսվող երեխաների աղմուկի վրա: Խմբի ղեկավարի աչքը շլացրել է Երանուին ապարանջանի փայլը՝ երկի թանկարժեք մետաղ է թվացել: Ծողոքորթությամբ թևից հանել, տնտղել է: Երանուին անսպասելի հարվածով նրա ձեռքից թոցրել, հեռու է շպրտել հոր նվերն ու վազել դրա ուղղությամբ: Դիմացը կանգնած գինվորը թուրը դեմ է արել զառիվայրով վագող աղջկան... Արդեն հարյուր տարի մեր տանը վիճում են. «Ան-

ծանոթ զինվորը ինչո՞ւ պիտի այդ-պես վարվեր երեխայի հետ: Միթե կարող էր հրաման գրվել, որ եթե փոքրիկ Երանուիին կամակորություն թույլ տա՝ թրատե՞ք»: Ես մտածում եմ, որ երիտասարդ ասկյարը, բնազդորեն, ասկյարավարի արձագանքել է երեխայի կտրուկ շարժումին: Երանուիին չի պատկերացրել, թե ինչ կարող է պատահել: Դուք ինչ կարծիքի եք, զինվորը գիտակցաբար սրի՞ է քաշել երեխային, թե՞ միամտաբար է ստացվել: Ասացեք, ինչտեղ է անմեղ երեխայի սպանելը:

ԿԱՊԻՏԱՆ - Ես որտեղից իմանամ...

ՎԱՍՈՒԾԻ - Այո, իհարկե... Հետո մեծ հայրս հարձակվել է զինվորի վրա, բայց հրացանի խզակոթով գետնել են, հարվածել մինչև ուշագնացություն, արնաշաղախ մարմինը քարշ տալով տարել են հետները: Ամեն ինչ այնքան անսպասելի է կատարվել, մարդիկ չեն հասցրել ընկալել, որ սա հերթական դժբախտ միջադեպ չէ, այլ մեծ, չտեսնված արհավիրքի սկիզբ: Ամիս ու կես հետո կիլիկիայի կողմերից նամակ է ստացվել մեծ հորիցս: Գրել է, թե բանվորություն է անում ձանապարհի շինարարությունում: Բանվորները հիմնականում հայեր են: Շատերը՝ պատերազմի սկզբում զորակոչված երիտասարդներ: Գրել է, թե շինարա-

ռության ավարտից հետո տուն են թողնելու: Դա Հովսեփի Սուքիասյանից ստացված առաջին ու վերջին նամակն է եղել: Կինը երկար սպասել է: Ամուսնուն հավատացել ու սպասել է: Հովսեփի Սուքիայանը եղել է Վանի հայտնի լուսանկարիչը և խոսքի տեր մարդ: Տասոս զավակներին Կովկաս է ծանապարհել հարազատների հետ, իսկ ինքը վերջին հեռացողների հետ է լքել Վանը: Լրա գաղթը երկար չի տևել, 10 հազար փախստականների գաղթն ավարտվել է Բերկրիի դաշտում...

Սա այն ապարանջանն է: Եվ ինչո՞ւ վերցրի... Ասում են՝ խմբապետը երկար վնտրել է ապարանջանը սրախողիսող արված երեխայի ու գանահարված հոր արյամբ շաղախված խոտերի մեջ... Վերցրեք, այս իրն ինձ չի պատկանում: (Ապարանջանը դնում է էլքին Գյունեյի առջև:)

ԿԱՊԻՏԱՆ - Ինչ եք անում, տիկին, ես ուրիշի ունեցածի վրա աչք չունեմ: (Հրում է ապարանջանը Վանուիու կողմը:)

ՎԱՍՈՒԾԻ - Կտաք ձեր կրտսեր աղջկան, նա իւ տաս տարեկան է, Երանուիու տարիքին: (Ապարանջանը հրում է կապիտանի կողմը:)

ԿԱՊԻՏԱՆ - Ինչ եք անում... Ես ու կինս ուզում ենք, որ մեր երեխաները մարդկանց նայեն ջինջ հա-

յացքով, որ չիմանան աշխարհի հակասությունների ու դառնությունների մասին:

ՎԱՆՈՒՀԻ - Մինչև նոր դա ձեզ կհաջողվի: Մի օր նրանք դուրս կթռչեն վանդակից ու կտեսնեն կյանքն՝ ինչպիսին կա... Բայց պետք չէ, որ երեխան իմանա... նվիրեք նրան ու մի սուս հորինեք: Եվս մեկ ստով կեղծիքի բեռը հազիվ այնքան մեծանա, որ երկրագունդը փոլ գա դրա ծանրությունից:

Այդ ընթացքում նրանք իրաք կողմ են իրում ապարանջանը:

ԿԱՊԻՏԱՆ - Ինչո՞ւ եք այդքան դաժան, տիկին: Ցանկանում եք, որ արյունոտ իրին առնչվի մի երեխա, ում չեք էլ ծանաչում: Վրեժ եք լուծում:

ՎԱՆՈՒՀԻ - Վրեժի պես է ստացվում, բայց ես այդպիսի մտադրություն չունեմ... Լավ, ինչպես կամենաք: Ասում եք՝ կին ունեք և դուստրեր, որտեղ եք ապրում:

ԿԱՊԻՏԱՆ - Ընտանիքս Վարդոում է, Մոլից ոչ հեռու:

ՎԱՆՈՒՀԻ - Զեր ընտանիքը վաղուց է բնակվում Վարդոում:

ԿԱՊԻՏԱՆ - Ես Բաթմանից եմ: Ապագա կնոջս հետ ծանոթացել եմ, երբ սովորում էինք Ստամբուլում: Կինս ընտանիքի միակ ժառանգն էր, ամուսնությունից հետո հաստատվեցինք նրանց տանը:

ՎԱՆՈՒՀԻ - Իսկ նրանց ընտանի-

քը... երբվանից է ապրում այդտեղ:

ԿԱՊԻՏԱՆ - Կնոջս պապը երիտասարդ տարիքում է Տրապիզոնից տեղափոխվել: Մի չերքեզ առևտրական ծովափնյա սրծարանում պատմել է, թե ցանկանում է ժամանակ Վարդոյի տունն ու տեղափոխվել Կովկաս՝ պապերի հայրենիք: Ապագա կնոջս հայրը, ով ուշ թե շուտ պետք է հեռանար բազմանդամ ընտանիքից, գնի շուրջ սակարկել է չերքեզի հետ: Չերքեզը բացատրել է, թե սիրտը չի ցավում տան համար, որովհետև այն իր հորն առանց մեկ լիրայի է բաժին հասել: Ահա այդպես կնոջս ընտանիքը հայտնվել է հարավում:

ՎԱՆՈՒՀԻ - Իսկ նոր տանտիրոջը չի հետաքրքրել, թե այդ ինչպես տունը, հենց այնպես, բաժին է հասել մի չերքեզի: Չի հետաքրքրել, ովքեր են ապրել Վարդոում: Ապրել են առհասարակ, թե՞ ոչ: Կարող է մի տուն, մի երկիր նախապես որևէ մեկին չպատկանել ու հենց այնպես բաժին հասնել ուրիշին:

Վաճուհին դուրս է գնում:

ԿԱՊԻՏԱՆ - (Նկատելով նրա թողած ապարանջանը): Տիկին... Շարաֆ:

ԵԱՐԱՖ - Լսում եմ:

ԿԱՊԻՏԱՆ - Վերցրու սա...

ԵԱՐԱՖ - Ի՞նչ անեմ:

ԿԱՊԻՏԱՆ - Ինչ ուզում ես...

ԾԱՐԱՖ - Պարոն կապիտան, թույլ տվեք հրաժարվել:

ԿԱՊԻՏԱՆ - Կորցրու գրողի ծոցը: (Շարաֆը մատների ծայրերով ապարանջանը վերցնելով ուղղվում է դեպի դուռը:) Ծարաֆ, ինչ ծրար է սեղանիս:

ԾԱՐԱՖ - Այս ծրարը:

ԿԱՊԻՏԱՆ - Այդ ծրարը:

ԾԱՐԱՖ - Պարոն կապիտան, ծրար այն պարոնը թողեց:

ԿԱՊԻՏԱՆ - Ո՞ր պարոնը:

ԾԱՐԱՖ - Որ կնոջ հետ էր այստեղ:

ԿԱՊԻՏԱՆ - Ինչո՞ւ թողեց... ինչ սրա մեջ:

ԾԱՐԱՖ - Պարոն կապիտան, համարձակվում եմ ենթադրել, որ փող է ծրարի մեջ:

ԿԱՊԻՏԱՆ - Փո՞ղ... գուցե մոռացնել է...

ԾԱՐԱՖ - Թույլ տվեք չհամաձայնել, նա միտումնավոր հանեց ծրար գրանից ու դրեց սեղանին:

ԿԱՊԻՏԱՆ - Բայց ինչի՞ համար... (Բացում է ծրարը՝ դոլարներ են:) Ինչ նպատակով է թողել այս գումարը:

ԾԱՐԱՖ - Չէ՞ որ ուզում էր մյուսներից շուտ գնալ այստեղից: Լաև ասում էր, թե ուզում է Թուրքիայից բանջարեղեն ներկուել և ուրախ կլիներ, եթե գործընկեր գտներ այստեղ:

ԿԱՊԻՏԱՆ - Չլինի՞ կաշառք է, Ծարաֆ:

ԾԱՐԱՖ - Կարծում եմ, այդպես է, պարոն կապիտան:

ԿԱՊԻՏԱՆ - Ու դու տեսա՞ր, ինչպես ծրարը դրեց սեղանին:

ԾԱՐԱՖ - Այո, տեսա:

ԿԱՊԻՏԱՆ - Ինչո՞ւ ինձ չասացիր:

ԾԱՐԱՖ - Ինձ թվաց՝ դուք էլ նկատեցիք:

ԿԱՊԻՏԱՆ - Նկատել եմ ու ձայն չեմ հանել... այսինքն՝ մտածել ես, թե ուզում եմ կաշառքը վերցնել:

ԾԱՐԱՖ - Չեմ իհշում՝ ինչ եմ մտածել, ավելի շուտ, ոչինչ էլ չեմ մտածել, պարոն կապիտան:

ԿԱՊԻՏԱՆ - Վերցրու ծրարն ու գնա այստեղից:

Ծարաֆը վերցնում է ծրարը:

ԿԱՊԻՏԱՆ - Ծրարը թող սեղանին:

Տասներեքերորդ տեսարան

Մաքսատան հրապարակը:

ՀԱՅԿՈՒԾԻ - Կարինե, ինչ ես մտածում:

ԿԱՐԻՆԵ - Հենց այնպես...

ՀԱՅԿՈՒԾԻ - Հոգիդ խաղաղ չէ:

ԿԱՐԻՆԵ - Զգիտեմ ինչու այս օրերին ամենատարբեր դեպքեր ու պատկերներ ժապավենի պես պտտվում են գլխում: Չեմ կարողանում հասկանալ դրանց կապը: Թեհրանի թանգարանում ապակե գեղեցիկ սրվակ եմ տեսել, դարերի պատմություն ունեն այդպիսի սրվակները, անվանում են արցունքի սափոր: Ասում են՝ երբ սիրոած տղամարդը պատերազմ է գնացել կամ հեռավոր ծամփորդության, կինը արցունքով լցրել է այդ սափորը: Տղամարդու վերադին որքան լիքը լիներ սա-

փորը, այն չափով կինը կիավաստեր իր սիրո, տառապանքի, կարոտի, հավատարմության մասին։ Այն ժամանակ սափորի առափելն ինձ թվաց միամիտ ու ծիծաղելի։ Իսկ իմա կուգեի այդպիսի սափոր ունենալ։

ՀԱՅԿՈՒԾԻ - Կարինե, ինձ թվում է՝ մեղավոր եմ քո առաջ։

ԿԱՐԻՆԵ - Ենթադրություններով մի տանջիր քեզ, երբ ինքս չգիտեմ, թե ինչ եմ ուզում։ Ինչ-որ բան շրջվել է ներսում, հոգիս սկսել է ընդվզել միօրինակ կյանքի դեմ։ Անակնկաներ եմ ուզում, երազանք ու տենչ եմ ուզում։ Ուզում եմ... Ինչ եմ ուզում, ինքս էլ չգիտեմ... Չգիտեմ, այս ծամփորդությունն ինչու այսպես տակնուվրա արեց ինձ։

**Հրապարակում հայտնվում է
Էլին Գյունեյը, հայացքով
փնտրում գտնում է Վոլտերին։**

ԿԱՊԻՏԱՆ - Պարոն, այս ծրարը թողել էիք իմ սեղանին։

ՎՈԼՏԵՐ - Հա, իսկապես... բայց ոչինչ, թող մնար։

ԿԱՊԻՏԱՆ - Ինչպես թե՝ մնար։ Դուք միտումնավոր եք թողել։ Պարոն, հայրս դպրոցի տնօրեն է, նա ասում է. «Էլին, Աստծուն երկնքում չորոնես, այնտեղ նրան չես տեսնի ու կկարծես, թե Աստված էլ քեզ չի տեսնում։ Արարչին փնտրիր քո մեջ։ Էլին, երբեք չխարես քո միջի Աստծուն»։ Պա-

րոն, դուք ինձ խարենության եք դրդում։ Վերցրեք ծրարը։

ՎՈԼՏԵՐ - Լավ, լավ... ինչպես ցանկանաք... ես անկեղծ սրտով... ձեզ մոտ տոթ էր։

Վոլտերը մոտենում, ձեռքը մեկնում է, դոլարները քափվում են ծրարի միջից։ Նա կրանում, գետնից հավաքում է։ Էլին Գյունեյը շրջվում, հեռանում է։ Բոլորը զարմացած հետևում են։

ՀՐԱՅՐ - Ասում են՝ վաս նշան է ծամփորդությունից փող տուն տանելը։ Եթե ծախսելու տեղ չկա, պետք է նվիրես պատահած մարդու։

ԱՄԱԼՅԱ - Ասել եմ, չէ, հարցեր կունենաք, դիմեք՝ ես կլուծեմ։ Ես հայ ժողովուրդն ինչի է չսքան չլսող։

ՎԱՀԱԳ - Տիկին Ամայա, որ հասնենք Երևան, ես էլ աչք քաղցրացնելու հարց եմ ունենալու։ Եթե այդ գործի վարպետ եք, պիտի խնդրեմ, որ մի կաշառքի գործ էլ ինձ համար գլուխ բերեք։

ԱԲԵԼ հայրիկ - Կաշառք, ինչ կաշառք... (Մոտենում է Վոլտերին։) Տղա ջան, ինչի համար ես կաշառք տվել։

ՎԻԿԱ - (Մոտենում է ամուսնուն, շշուկով)։ Ինչ ես պապանձվել, ինձ պարտավոր ես ասել, ինչո՞ւ էիր կաշառք տալիս։

ԷԶՄԵԶՋՅԱՆ - Ինչո՞ւ ենք այսպիսին... ինչո՞ւ չենք կարող ապրել, ինչպես բոլորը։

ԲԱԼՅԱՆ - Ամոթալի է, այո, շատ է ամոթալի: Մանավանդ, երբ օտարներին ենք ի ցուց դնում մեր վարքը:

ԷՔՄԵՔՅԱՆ - Հանգիստ ապրելը մեզ համար չէ: Բգրգել, հրահրել, խնդիրներ հարուցել... Փորձանք ենք բերում գլխներիս, հետո ողբում ենք հայի բախտը, վերամբարձ ու զգայացունց բաներ ենք գոռում աշխարհի ականջին: Արդարություն ենք պահանջում ուրիշներից՝ ինքներս արդար չլինելով:

ԲԱԼՅԱՆ - Հետաքրքիր է, որոշակիացրեք ձեր միտքը:

ԷՔՄԵՔՅԱՆ - Որոշակիացնեմ, եթե ցանկանում եք: Ինչեր որ խոսել ենք այս օրերին՝ անվիճելի է մեզ համար: Բայց անաշառությունը չի պահանջում լսել նաև հակառակ կողմին, և անգամ հակառակորդ կողմին: Քննել նրա փաստարկները: Անշուշտ, դրա համար քաջություն է հարկավոր: Իրական ու հաճախ դառը ծշմարտությունը որոնելու համարձակություն...

ԲԱԼՅԱՆ - Կարծես սկսել եմ ձիշտ հասկանալ ձեզ, շարունակեք:

ԷՔՄԵՔՅԱՆ - Մեր ողջ պատմության տրամաբանական հանգուցալուծումն էր այն՝ ինչ տեղի ունեցավ հարյուր տարի առաջ: Տեղի ունեցավ մի երկրում, ուր հայությունը գրավում էր աչքի ընկնող դիրքեր: Ուներ հարստանալու, մշակույթը զարգացնելու

հնարավորություն: Բայց այդ նոյն ժողովուրդը, կամ նրա չափազանց անհանգիստ հատվածը հանկարծ որոշեց հեղափոխություն անել: Հեղափոխություն, այն էլ ձիշտ ամենաանպատեհ պահին, երբ պետությունը ներքաշվել էր համաշխարհային պատերազմի մեջ: Բնականաբար, կատարվածը մեկնաբանվեց որպես հարված թիկունքին՝ անջատողական հավակնություններով: Ինչ եք կարծում, պետությունը, որ մտածում է իր անվտանգության մասին, պետք է դիմի ինքնապաշտպանական միջոցառումների, թե՞ ոչ:

ԲԱԼՅԱՆ - Պարոն Էքմեքյան, կարելի է թվերն ու իրողությունները ցանկալի ծևով շարել իրարեսենից ու ստանալ ուզածդ արդյունքը: Բայց պատմությունը հաշվապահությունից տարբերվում է նրանով, որ չի առաջնորդվում փաստերի մեխանիկական շաղկապումով: Ասելիքը հիմնավորելու համար դուք ելակետ դարձրիք առաջին համաշխարհային պատերազմի իրողությունը, բայց մի՞թե այդ ժամանակ են սկսվել կոտորածն ու հալածանքները: Իսկ ինչ բացատրություն ունեք 1909 թվականի Աղանայի ջարդերի վերաբերյալ: Չէ որ դրանցից ընդամենը մեկ տարի առաջ նոյն հայ հեղափոխականները ողջունել էին երիտթուրքերի իշխա-

նության գալը: Եղբայրություն էր ու հավասարություն: Պարոն Էքմեքչյան, մի՞թե մոռացել եք նախորդող ջարդերի մասին: Ասում եք՝ 15 թվական: Մի՞թե նոյն հեղափոխականները խորհուրդ չտվեցին երիտթուրք պարագլուխներին՝ չներքաշվել նոր պատերազմի մեջ, որը կործանարար կդառնար կայսրության համար: Իսկ եթե, այնուամենայնիվ, մեղավորներն այլոք էին, ինչն էր պատճառը, որ իշխանությունից երիտթուրքերին հեռացնող քեմալականները առաջինը դատապարտեցին նրանց որպես պետական հանցագործների և հայության ջարդարանների: Ասում եք՝ մեր ողջ պատմությունը, մինչև 15 թվական ու դրանից հետո, պայմանավորված է ցեղասպանության տրամաբանությամբ: Սխալ ապրածի համար հատուցել ենք կոտորածով, բայց այնուինտ էլ շարունակում ենք նոյն կերպ: Սա է մեր պատմությունը և մեր հեռանկարը՝ այս: Ինձ միշտ զարմացրել են նրանք, ովքեր այդպես հեշտորեն կարողանում են պատմությունը հավատաքննության ենթարկել ու հարյուրավոր սերունդների ապրածը սխալ դուրս բերել: Հավակնոտ չէ արդյոք: Փորձեք նաև խորհել, թե մի փոքրաթիվ ժողովուրդ այդ ինչ ուժի շնորհիվ է հաղթահարել այդքան փորձանք ու փորձություն: Այդ ինչ

գաղափարի, գերբնական հավատի շնորհիվ է բնաջնջված ժողովրդի մնացորդացը ոտքի կանգնել ու մի ափ հողակտորի վրա հազարամյա երազն է կյանքի կոչել: Ու նոր հազարամյակ է մուտք գործել կորցրածը մի քիչ ետ քերած, մի քիչ վերականգնած արդարությունը:

Դուք ասում եք՝ գահավիժում, ես ասում եմ՝ վերելք, դուք ասում եք՝ սխալ, ես ասում եմ՝ իմաստնություն, դուք ասում եք՝ կործանում, ես ասում եմ՝ փրկություն... փորձեք նաև այս տեսանկյունից կատարել ձեր գլոբալ ընդհանրացումները, պարոն Էքմեքյան:

ՆՎԱՐԴ - Պատերազմի ժամանակ պետությունը պարտավոր էր մտածել իր ներքին անվտանգության մասին: Այո, իհարկե: Ինչպես վարվել, երբ, օրինակ, պետության գոյությանը սպառնում են մանուկները՝ նրանց կենդանի նետել ծովը կամ թունավորել՝ փամփուշտ չվատնելու նպատակով: Իսկ եթե պետական կարգի համար խիստ վտանգ են ներկայացնում ծերունիներն ու կանաչք՝ քշել նրանց մահվան անապատների: Եթե վտանգ են ներկայացնում գրքերն ու եկեղեցիները՝ հրկիզել ու ավերել... Եվ ինչպես էին կարողացել պատերազմը չսկսած գուշակել, որ հայերը կդավաճանեն ու բնաջնջան ծրագիր էին կազմել: Պարոն

Էքմեքյան, չե՞ք զարմանում, որ ձեր փաստարկներն այդպես համընկնում են դեռ ջարդերից առաջ իթթիհաթ վե թերաքի կուսակցության թխած տեսության հետ:

ԷՔՄԵՔՅԱՆ - Կարևոր ինձ հակադարձելը չէ, այլ փաստերն անաշառ քննելը:

ԱՄԱԼՅԱ - Ժողովուրդ, արագ շարժվեք, նոր խումբս Օպերայի մոտ կհավաքվի շուտով: Մարդիկ դարդից սիմֆոնիա չեն լսելու, մինչև տեղ հասնեմ:

Հայտնվում է Ծարաֆը: Վահագը կիսաճայն երգում է կիրառի նվագակցությամբ:

ԾԱՐԱՖ - (Վահագին): Համեցեք, պարոն:

Վահագը երգը չընդհատելով՝ գլուխը բացասարար շարժում է: Ծարաֆը հայացքն ուղրում է Հրայրին:

ՀՐԱՅՐ - Մենք իրար հետ ենք:
(Ցույց է տալիս Վահագին:)

ԿԱՐԻՍԵ - Ես կգամ: (Զայրալից հայացք նետելով տղաների կողմը՝ գնում է, իլնթացս նետելով:)
Վախկնտ:

Տասնորսերորդ տեսարան

Գյումեյի առանձնասենյակը: Հեռախոսազանց: Կապիտան Գյումեյը վերցնում է լսափողը, ուսքի է կանգնում, շրջվում է ու չի նկատում Կարինեի ներս մտնելը:

ԿԱՊԻՏԱՆ - Կապիտան Էլչին Գյումեյը լսում է:

Լուսավորվում է գնդապետ Ղարաասկյարօղուի առանձնասենյակը:

ԳՆԴԱՊԵՏ - Կապիտան, ի՞նչ կա այդտեղ, ի՞նչ եղավ հողի հարցը:

ԿԱՊԻՏԱՆ - Պարոն գնդապետ, ես կարող եմ ինչ-որ պատրվակով թույլ չտալ, որ նրանք հող տանեն իրենց հետ:

ԳՆԴԱՊԵՏ - Ասում եք՝ քանի հոգով, որքան հող են տանում:

ԿԱՊԻՏԱՆ - 19 մարդ տանում է 113 կիլոգրամ հող:

ԳՆԴԱՊԵՏ - Իսկ քանի խումբ է տարեկան գալիս թուրքիա:

ԿԱՊԻՏԱՆ - Միջին հաշվով 40 այսիսի խումբ, բայց տարեցտարի թիվը մեծանում է:

ԳՆԴԱՊԵՏ - 40 անգամ 113 կիլոգրամ... ու դեռ թիվը մեծանում է: Այդ, մտածելու բան կա:

ԿԱՊԻՏԱՆ - Պարոն գնդապետ, կարևոր երկրից տարվող հողի տոպրակները չեն, այդ հողը, հողի գաղափարը նրանց գլխի մեջ է:

ԳՆԴԱՊԵՏ - Իսկ հարցաքննություններն ի՞նչ եղան:

ԿԱՊԻՏԱՆ - Ես այրեցի հարցաքննությունների սղագրությունը:

ԳՆԴԱՊԵՏ - Ինչպես թե՝ այրեցիք, ինչո՞ւ այրեցիք...

ԿԱՊԻՏԱՆ - Հայերի հարցաքննությունը վերածվեց թուրքերիս դեմ մեղադրական եզրակացության:

ԳՆԴԱՊԵՏ - Ինչ... գժվել եք... բոլորդ գժվել եք: Կապիտան Գյունեյ, Երկուշաբթի առավոտյան, ոչ, վաղն առավոտյան 8-ին լինեք ինձ մոտ:
ԿԱՊԻՏԱՆ - Լսում եմ, պարոն գնդապետ:

ԳՆԴԱՊԵՏ - Այս երկրին թշնամիներ պետք չեն՝ ինքն իր ամենամեծ թշնամին է: Բոլորը դարձել են մի մեծ դավադրության մասնակիցները: Քաղաքական խաղերի ետևից ընկած փլուզում են երկրի հիմնայուները, փլուզում են թուրքական կառույցը, թուրքական հոգեկերտվածքը, թուրքական գաղափարը, թուրքական գաղափարը... (Դնում է լսափողը:)

ԿԱՊԻՏԱՆ - (Դնելով լսափողը՝ նկատում է Կարինեին): Դուք այստեղ եք... չի նկատել: Եթե չեմ սխալվում, շրջագայում եք ձեր մորաքրոջ հետ: Նա Հայաստանի գիտությունների ակադեմիայի աշխատակից է, իսկ դուք ուսանողութիւն եք, ապագա պատմաբան՝ հայ և հարևան ժողովուրդների պատմության մասնագետ: Տեսնո՞ւմ եք, ինչքան բան գիտեմ:

ԿԱՐԻՆԵ - Դուք ինչ-որ բան էիք ցանկանում պարզել:

ԿԱՊԻՏԱՆ - Դուք շատ նման եք ձեր մորաքրոջը:

Ներս է մտնում Շարաֆը՝ չնկատելով Կարինեին:

ԾԱՐԱՖ - Պարոն կապիտան, ձեզ մոտ հրավիրեցի խմբի երկու անդամներին, բայց նրանք հրաժարվում են: Ասում են՝ զրուցելու ցանկություն չունեն:

ԿԱՊԻՏԱՆ - (Ժպտում է): Գնանք, օրիորդ: Շարաֆ, գնանք:

Մեղանից վերցնում է հարցաքննությունների քրապանակը, միասին դուքս են գնում:

Տասնինգերորդ տեսարան

Հրապարակում հայտնվում են Էլիմ Գյունեյը, Շարաֆը, Կարինեն:

ԿԱՊԻՏԱՆ - (Հրայրին ու Վահագին): Դո՞ւք չուզեցիք զրուցել ինձ հետ:

ՀՐԱՅՐ - Զրուցել բառը մեզ հեռուներն է տանում:

ԿԱՊԻՏԱՆ - Զրուցի հրավերը հեռուներն է տանում:

ՎԱՀԱԳ - Ոչ մի տեղ էլ չի տանում, զրուցելու ցանկություն չունենք:

ԿԱՐԻՆԵ - Երսի կանանց հետ միայն կարող են համարձակ զրուցել: Վախոնտ: (Վահագը նայում է Կարինեին:)

ՀՐԱՅՐ - Վախոնտ ես դու:

ՎԱՀԱԳ - Ինչ ես ասում, Հրայր:

ՀՐԱՅՐ - Բա ինչո՞ւ չես պատասխանում: Դու խելառ Վահացն ես, ում մասին ասում էին, թե տեղեկացված չեք, որ փամփուշտը սպանում է: Թե՞ ուրիշ մարդ է դիմացս կանգնած:

ՎԱՀԱԳ - Այնտեղ հեշտ էր...

ՀՐԱՅՐ - Ասա՝ ով ես դու: Պատմիր, ինչպես Երևանի Գեղարվեստի ուսումնարանի սաների հետ Ծուշիի ձորում նկարելիս անհայտ անձիք մոտեցան ու հրավիրեցին զրուցելու: Պատմիր, ինչպես են տանջել Ծուշիի բանտում, ինչպես դարձար ազատամարտիկ:

ՎԱՀԱԳ - Կարիք չկա, մի շարունակիր:

ՀՐԱՅՐ - Կարիք կա, մանավանդ, ոմանք ինչ-ինչ ենթադրություններ են անում: Պատմիր, ինչպես որոշեցիր ողջ-ողջ բռնել ադրբեցանցի դիպուկահարին: Դիպուկահար կինը, օգտվելով քո անգառությունից, դաշունահարեց քեզ ու դու բռունցքով խփեցիր նրան:

ՎԱՀԱԳ - Լեյլան լավ աղջիկ էր, նա մեղավոր չէր... ներշնչել էին, թե դիմացը հրեշներ են: Հիշո՞ւմ ես, հետո ինչպես էր ատում պատերազմը:

ՀՐԱՅՐ - Պարոն կապիտան, կարծում եմ, պարզ դարձավ, ինչու չենք ոգևորվում միակողմանի նախաձեռնվող զրույցներից:

ԿԱՊԻՏԱՆ - Նաև պարզ դարձավ, որ անձնական վլեժից դրոված՝ որոշել եք պատերազմել ու մարդ սպանել: Դուք նկարիչ եք: Արվեստագետը կարո՞ղ է դաժան լինել:

ՎԱՀԱԳ - Ես էլ էի կարծում, թե չի կարող, բայց դաս տվողներս

Զանք չխնայեցին կարծիքս փոխելու համար: Իսկ պատերազմի մասնակցելուն դրդել է սեփական բաժին բեռը կրելու գիտակցումը:

ԿԱՊԻՏԱՆ - Եվ բոլոր հայերը կրում են պատասխանատվություն՝ ապրողների ու վաղուց նահատակվածների համար:

ԲԱԼՅԱՆ - Ընդունենք, թե այդպես է, ինչն է ծեզ մտահոգում:

ԿԱՊԻՏԱՆ - Քավ լիցի, դա ծեր կյանքն է և իրավունքը: Թեպետ ծեր հավաքական մտայնությունների թիրախում հաճախ մենք ենք հայտնվում:

ՆՎԱՐԴ - Այսօրվա զրույցները նման եզրակացության հանգերին:

ԿԱՊԻՏԱՆ - Այսօրվա զրույցները ամրապնդեցին համոզմունքս:

ՆՎԱՐԴ - Ենթադրում եմ, որ վատ զրուցարան չի ստացվել:

ԿԱՊԻՏԱՆ - (Նայելով թղթապանակին): Այո, հետևություններ կատարելու համար բավական խոսուն է: Գիտեք, որն է մեր ու ծեր տարբերությունը: Մենք ապրում ենք վաղվա օրով, փորձում ենք այդ վաղը դարձնել մերը, իսկ դուք ձգտում եք ծեր ծշմարտությունները հաստատել երեկվա օրվա մեջ: Իսկ ժամանակային երեք չափումներից միայն անցյալն է, որ հնարավոր չէ փոխել: Միևնույն է, դուք համառորեն ձգտում եք շրջել այդ անցյալը, աշխարհով

մեկ փաստաթղթեր եք պրայտում, գրքեր եք հրատարակում: Ձեզ թվում է, թե աշխարհը անտեղյակ է ու ձեր առաքելությունն է մարդկությանը լուսավորելը: Հարցեք ձեր քաղաքակիրթ բարեկամներին, նրանք կցանկանան վերանայել պատմությունը, քանդել ու վերակազմել նորովի: Անցյալի հետ բոլորն իրենց հաշիվներն ունեն ու ձեր համառությամբ ոչ թե մեր դեմ եք դուրս եկել, այլ աշխարհի: Հայտարարել եք Դոն Քիշոտի պատերազմ, զինվել եք գրքերով ու փաստաթղթերով: Ինչ է այս ամենը (*ցոյց է տայիս թղթերը*). իրադարձություններ, կենսագրություններ, փաստներ, մեղադրանքներ... ոչ, մրոտած թուղթ, հեքիաթ, անիրական մի բան, այսինքն՝ ոչինչ: (*Զայրութով թղթերը նետում է օդ, դրանք սփոռում են բեմով մեկ:*) Ու սրանցով պատերազմի եք եկել մեր դեմ, աշխարհի դեմ: Թղթով հրանոթների, ոռոմբերի ու ոմբակոծիչների դեմ: Ինչո՞ւ չեք հաշտվում պատմության հետ, ինչո՞ւ եք փորձում անցյալի մարած արժեթղթերով այսօրվա առևտուրն անել: Ինչո՞ւ եք մղջավանջի վերածում ձեր և ուրիշների կյանքը: Ինչո՞ւ չեք ուզում ուրիշների հետ հարաբերվել խաղաղված հոգով, խոսել ներկայի ու ապագայի մասին՝ ա-

ռանց ետին մտքի, առանց պայմանի ու նախապայմանի: Ինչո՞ւ հանգիստ չեք տալիս ձեզ և ուրիշներին:

ԱԲԵԼ ԻԱՅՐԻԿ - Խաղաղվիր, կապիտան ջան, ջահել ես, սիրտդ չի դիմանա: Ինչի՞ ես քեզ տանջում, դու ինչ մեղք ունես:

ԿԱՊԻՏԱՆ - Հարցերի տերն այսօր ես եմ:

ԱԲԵԼ ԻԱՅՐԻԿ - Ես էլ ասում եմ՝ չէ: Այ մարդ, ինչո՞ւ ես խղճիդ վրա մեղք բարդում: Հոգիդ ազատիր էդ շղաներից: Ոչ հրաման տվողն ես եղել, ոչ՝ կատարողը: Քեզնից հեռացրու, մաքրվիր մեղքից: Էդ ծնով քանի հարյուր տարի ես ինքդ քեզ հետ կոհիվ տալու:

ԿԱՐԻՆԵ - (մոտենալով Վահագին): Ինձ ինչ-որ բան էիք ցանկանում ասել:

ՎԱՀԱԳ - Այո, ցանկանում էի:

ԿԱՐԻՆԵ - Ամուսնության առաջարկություն էիք անում:

ՎԱՀԱԳ - Այո, բայց...

ԿԱՐԻՆԵ - Ես համաձայն եմ:

ՎԱՀԱԳ - Բայց դուք մերժեցիք...

ԿԱՐԻՆԵ - Ես ձեզ չեմ մերժել: Ուրիշ մարդու եմ մերժել: Գուցե այլս չեք ցանկանում...

ՎԱՀԱԳ - Ո՛չ, ոչ, ցանկանում եմ...

ԿԱՐԻՆԵ - Այդ դեպքում մեկ պայման ունեմ:

ՎԱՀԱԳ - Ինչ պայման:

ԿԱՐԻՆԵ - Պատառադությունը պետք է տեղի ունենա Ախթամարի

Սուրբ Խաչ Եկեղեցում: Քահանայի օրինությամբ, կնքահորով ու խաչեղբորով, հարսնահանդեսի մասնակիցներով, պարով ու երգով:

ՆՎԱՐԴ - Այդ ինչ հապճեա որոշում ես կայացնում, Կարինե, իո խճնթ չես:

ԿԱՐԻՆԵ - Խենթ եմ, մորաքոյր: Դու չէ՞ր ասում, թե Կարինեն խենթ է ինձ նման: Եթե հիմա չանեմ այս խենթությունը, ամբողջ կյանքում ինձ չեմ ների: Երբ Սուրբ Խաչ Եկեղեցում մոմ վառում ու շարական էինք երգում, հանկարծ ինձ տեսա հարսանեկան սպիտակ զգեստով: Քահանան խաչը պարզած հարցնում էր. «Տեր ես»: «Տեր եմ, տեր եմ», - շշնջում ու նայում էի խաչին: Խաչի վրայով նայում էի խաղաղ ծփացող ջրերին: Կապուտ ջրերը կապուտ երկնքին էին նման: Հոգիս պարուրում էին իրենց մեջ ու օրորում էին ալիքների վրա: Ծուրջս խոնվել էին ուրախ, ոգեշնչված մարդիկ: Միթե նախախնամության կամքն էր այդ ամենը: Վահագ, ընդունում ես պայմանը:

ՎԱՀԱԳ - Համաձայն եմ, ու որքան շուտ, այնքան լավ:

ԿԱՐԻՆԵ - Կարծում էի, այս երկիրը մեռած է: Կարծում էի, այցելում եմ մի մեծ գերեզմանատուն, մոյսրացած մոլորակ: Այնինչ երկիրը կա, շնչում է, արթնանում է ամեն օր ու լցում է հազարավոր ծայներով, կանաչում ու ծաղկում է... ու բոլոր ծանապարհները տանում են ինչոր տեղ, հասցնում են ինչոր հանգրվանների: Ցանկանում եմ, որ իմ զավակի կենսագրությունը սկսվի այստեղից: Որ նրա համար երկիրը ոչ թե ուրիշների հեռավոր հիշողություն լինի, այլ իր սկիզբը, իր անցնելիք ծանապարհի սկիզբը: Համաձայն ես, Վահագ: Գիտեմ, որ դու էլ դեմ չես լինի, մորաքոյր:

ՎԱՀԱԳ - Այ, սա դուրս եկավ: Նորից արյունը խաղաց երակներում: Հարկավոր է ձանապարհ ընկնել: Գործերը կազմակերպել է պետք ու շուտ վերադառնալ: Բոլորին կիրավիրենք մեր հարսանիքին: Համաձայն եք, Հրայր, Հայկուիի, դուք բոլորդ... Դե, գնացինք: Մենք վերադառնալու ենք:

**Բոլորը դուրս են գնում: Լսվում է՝ «Մենք կվերադառնանք,
մենք կվերադառնանք...»:**

**Դատարկ քեմում կանգնած է Էլին Գյունեյր: Շարաֆը հավաքում է քեմով
մեկ քափված քրերը, քերում-դնում է քարացած Գյունեյի ափի մեջ:**

ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



Հովհաննես ԹԵՔԳՅՈՒՅՑԱՆ

Դժվար է գրել վերապրածների
ապրումների մասին,
մանավանդ, եթե նրանք
ամենամոտ հարազատներդ են:
Ինչ-որ տեղի արդար էլ չէ: Նման
դեպքերում զարմանայիռեն
կարող են կորցնել
իրականության զգացումը և ընկնել պաթետիկ
անմոռուկացավի և ողբերգության հետ որևէ ուժալ կապ
չունեցող իշխանական շոու-ծրագրի կեղտաջրերը:
«Արխիկ մարդիկ» պիեսը երկար սպասում արդյունք է:
Ցեղասպանության թեման իմ ներսում եռացել է երսի
գիտակցական տարիքից սկսած, սակայն այդ մասին
կարողացա «խոսել», երբ զարմանալի շերտով
1915 թվականը վերապրած նախնիներին ցավը
միախառնվեց 2008-ի մարտի 1-ի իմ ապրումների հետ:

ԱՐԻՍԻՎ՝ ՄԱՐԴԻԿ

Գործող անձինք

ՊԱՀԱՎ

ԱՐԻՍԻՎԱՐԻՈՒՄ

ՓՈՍՏԱՏԱՐ

Իրադարձությունները իրավես կարևոր են:

Գործող անձանց սեռը և տարիքը կարևոր չեն:

Կարծում եմ, պարտադիր է, որ այինքի երկու գործողություններում դերակատարները չփոխվեն:

Պատկեր չկա, դեկոր չկա, բեմ չկա, տեղանքը փակ դաշտ է կամ սենյակ, որը դաշտի 3D շերտերն ունի: Ոչ մի վարագույր: Մինվոլներ չկան, եթե նույնիսկ կան, ապա աղճատված, աղավաղված ձևով են արտահայտվում: Պիեսում առկա հնչյուններն ու աղմուկը (հեռուստացույցի, ռադիոյի ձայն, գովազդային ընդհատումներ, կենցաղային աժոտաժ) խիստ կարևոր գործողություններ են:

Երկու դարակից գուրկ կոմոդ: Կոմոդի աջ անկյունում ոլորող, մետաղյա բռնակ կա: Բնմից մի քանի տարրալուծվող, համարյա չերևացող արողներ են աճել: Արողներից մեկի կողքին երեք լիտրանոց ապակյա տարա կա: Արխիվարիուսը և Պահակը տեղանքում են, բայց՝ անշարժ: Միայն երկուսի ցուցամատերը տեղակած աջ ձեռքերն են շարժվում, ասես ինչ-որ մեկին ճանապարհ են ցույց տալիս: Ներս է մտնում Փոստատարը՝ ուսին պարկը: Նկատում է Արխիվարիուսին և Պահակին, հետևում է վերջիններիս շարժումներին, նույնիսկ փորձում է նրանց մատնացույց արված հակադիր ուղղություններով շարժվել: Դադար: Տարածքը հայտնվում է լուսային 3D կոնտրաժուրի մեջ: Միայն Փոստատարն է լուսավորված:

ՓՈՍՏԱՏԱՐ - Գործ համարյա չկա...

(Պայուսակն է քրքրում:) Էսօր ընդամենը երկու նամակ ունենք... Ըիր... Մոր նամակը՝ որդուն...

(Պայուսակից հին լրագիր է հանում:) Մոր նամակը որդուն...

Մո՛ր... Խնդալու է... Երկու տարի է՝ անընդհատ նամակներ է ու-

դարկում... Բա պատասխանն ո՞ւր է... Կորցրեցի՞... Չէ... Ի՞նչ եղավ: Լավ, կգտնեմ: Էսօր ամսի քանին է... Քսանաչորսը ապրիլի... Էս տարեթվերը ինչի՞ լավ չեն տպում...

Էլեկտրական սղոցի սուլոց:
Հեռուստահաղորդումներին հա-

Սույկ ծայներ: Ալիքները փոխտխսվելով՝ կանգ են առնում մեկի վրա:

**ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ԶԱՅՆ - ...Մարդը
ամենաթանկ կապիտալն է...**

Ալիքը փոխվում է:

**ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ԶԱՅՆ - ...Լվացքի
փոշի, որն ընդունակ է մաքրել
նույնիսկ ամենա...**

Ալիքը փոխվում է:

**ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ԶԱՅՆ - ...Թագա-
վորական ընտանիքի անդամնե-
րը որոշում են կայացրել...**

Ալիքը փոխվում է:

**ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ԶԱՅՆ - ...Վատի-
կանը բացում է արևիկները...
Ինկվիզիցիայի և Հայոց մեծ ե-
ղեռնի...**

Ալիքը փոխվում է:

**ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ԶԱՅՆ - ...Լվացքի
փոշի, որն ընդունակ է մաքրել
նույնիսկ ամենա...**

Զայնն անջատվում է:

**ՓՈՍՏԱՏԱՐ - Զկա... Էս տարեթվե-
րը ինչի լավ չեն տպում... Էս ո՞ր
դարն ա... Ուֆ... Ինչքան գիծ կա՝
իմ գլխին է հավաքվում... Ասա՝
տուն-տեղ չունեք, որ զավակիդ
ուղղված նամակը արխիվ ես ու-
ղարկում... Լավ, պատասխան
նամակն ինչ արեցի... Մոր նա-**

մակը կա, տղայինը՝ չկա... Չի էլ
եղի... Է, ո՞նց չի եղել... Ինչ տղա,
ինչ մայր... Հորինեցի... Ապուշ եմ,
էլի...

**ՓՈՍՏԱՏԱՐԸ պայտսակից պա-
րան է հանում, ծայրը կապում է
կոմոդից, որի աջ անկյունում ոլո-
րող մետաղյա բռնակ կա:
Պարանը գետնին է փռում: Անմի-
ջապես ազդանշանի ձայն է
հնչում:**

**ԱԶԴԱՆԵԱՆԻ ԶԱՅՆ - (Զայնը հա-
մակարգչային-ոռորոտային է):
Հաղորդագրությունը ուղարկված
է, հաղորդագրությունը ուղարկ-
ված է...**

**ՓՈՍՏԱՏԱՐ - Մոր նամակը տեղ
հասավ... Մո՞ր... (Ծիծաղում է:)
Վերջ... Կառնավալը սկսվեց՝ ես
գնացի... (Ինքն իրեն.) Տղայի նա-
մակն ինչ եղավ: (Դուրս է գնում:)
Տղա-տղա... Դու աղջիկ ես, թե՞
տղա...**

**Արխիվարիուսը իր իսկ ցուցանա-
տի մատնանշած ուղղությունը
տեսնելով՝ ակտիվանում, սկսում
է տեղաշարժվել:**

**ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Չեմ գտնում, ազ-
գանունը չեմ գտնում... Թե ինչի՞
արխիվ մտա... Ինձնից ինչ ար-
խիվարիուս... Լավ, էդ անտեր
ծննդականն ո՞ւր դրեցի... Ինչ ա-
րեցի... Վրան ոչ թիվ կար, ոչ
բան...**

Արխիվարիուսը դեպի կոմոդն է

գնում: Կենցաղային սովորական աղմուկ է սկսվում, ասես ինչ-ոք մեկը հեռուստացույցի ալիքներն է փոխում: Երաժշտության պատառիկ, սարսափ-ֆիլմի ճայն, լուրերի հաղորդումներ, էլեկտրական սղոցի սուլոց: Հեռուստացույցի ալիքները փոփոխվելով՝ կանգ են առնում մեկի վրա:

ՀԱԴՐՈՒԱՎԱՐԻ ՁԱՅՆ - Մարդը ամենաթանկ կապիտան է... Լուրեր: Այսօր, մարտի մեկին, մեր բազմաչարչար երկրի պոպոր Կառավարությունը որոշում ընդունեց ցրել Մաշտոցի պողոտայում (դա քաղաքի կենտրոնում է) հավաքված ցուցարարներին: Պաշտոնական տվյալներով տասը մարդ է զոհվել: Կան վիրավորներ:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Էս ամեն ինչը նրբ է ավարտվելու... Տասը զոհի... Լավ, ծննդականն ինչ եղավ...

Միանում է ապահովագրական ազդանշանը:

ԱԶԴԱՆԵԱՆԻ ՁԱՅՆ - (Զայնը ոռրոտային է): Արխիվը բացված է, արխիվը բացված է:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Էլի փչացել է...

ԱԶԴԱՆԵԱՆԻ ՁԱՅՆ - (Զայնը ոռրոտային է, էլ ավելի բարձր: Զայնը ուղեկցվում է էլեկտրական սղոցի բարձր սուլոցով): Արխիվը բացված է, արխիվը բացված է:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (նյարդայնանալով): Լավ, հասկացանք...

ԱԶԴԱՆԵԱՆԻ ՁԱՅՆ - (Զայնը ոռրոտային է, էլ ավելի բարձր: Զայնը ուղեկցվում է էլեկտրական սղոցի բարձր սուլոցով:) Արխիվը բացված է, արխիվը բացված է:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (բարկացած): Ո՞նց անջատեմ... (Կոմոդի վրայի ծանծասպանը վերցնում, սկսում է աջ ու ձախ հարվածել, ասես ծանծ սպանի: Մի քանի հարվածներն ապարդյուն են անցնում: Հանկարծակի շեշտակի հարվածից ձայնը ծևախեղվում է, ասես ժապավենը ծամկում է:)

ԱԶԴԱՆԵԱՆԻ ՁԱՅՆ - (Զայնը ոռրոտային է, խեղված): Արխիվիիի իիիվըըը բացված է...

Արխիվարիուսը ևս մեկ անգամ հարվածում է նոյն տեղը, ձայնը կտրվում է: Ծանծասպանը մի կողմ է դնում:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Իսկական սկլերոտիկ եմ, սկլերոտիկ ապուշ... Թե ինչի՞ արխիվ մտա... Լավ, էդ մարդը ինչ եղավ... Չեմ գտում, ծննդական ուներ, գրանցում: Թուղթը չկա, մարդն է՝ հետը: Օդ դարձավ, կորավ...

Փակվող դարպասի գմիոց, միացող սքայպի ճայն:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Չեմ գտնում...

Սքայպի ճայնն ահագնանում է: Արխիվարիուսը աջ ու ձախ է անում, ապա նստում է արոտին: Անշարժ կանգնած Պահակն ակտիվանում է:

ՊԱՀԱԿ - Զգտաք...
ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (*ցնցվում է*): Վախեցա...
ՊԱՀԱԿ - Ինչից...
ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Զգիտեմ, հանկարծակի էր...
ՊԱՀԱԿ - Ծննդականս գտաք...
ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ոչ...
ՊԱՀԱԿ - (*բարկանում է*): Տիկին Արխիվադիուս...
ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Տիկին...
ՊԱՀԱԿ - Բա ինչ ասեմ, պարզն...
ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (*ձաղրական*): Չէ մի չէ՝ պահակ...
ՊԱՀԱԿ - Հա, ինչ...
ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Հեք... Ձեր դեմքը ծանոթ է...
ՊԱՀԱԿ - Ես էս արխիվի պահակն եմ...
ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Հա՛... (*Ծփոթվում է*): Հիշեցի... Փաստորեն... Ձեր ծննդականն եմ փնտրում... Հասկանո՞ւմ եք, մի քանի օր էլ պետք... (*Փոխում է թեման*): Գիտե՞ք, պահակ լինելու համար շատ եք ջահել...
ՊԱՀԱԿ - Իրո՞ք... Լավ է չասացիք՝ պահակ լինելու համար շատ եք տղամարդ...
ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Համենայնդեպս, կին...
ՊԱՀԱԿ - (*ընդհատում է*): Մի խոսքով... Էդ ձևականություններին վերջ տանք... Մի շաբաթ կլինի, ամեն օր գործից հետո մնում եմ, որ ձեզ բռնացնեմ... Մի թուղթն ինչ է, որ չեք գտնում...
ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Լավ, եթե ուզում

եք՝ ասեմ ծշմարտությունը... Ձեր ծննդականը ոչ մի տեղ չկա...
ՊԱՀԱԿ - Էդ երբվանից...
ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Մարտի մեկից...
ՊԱՀԱԿ - Բայց այսօր ապրիլի քսանչորսն է, մի ամիս քսանչորս օրում ծննդականիս պատճենը չգտաք:
ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Այսօր ապրիլի քսանչորսն է...
ՊԱՀԱԿ - Հա...
ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Բա հեռուստացուցով ասացին՝ մարտի մեկն է...
ՊԱՀԱԿ - Երբ մարդկանց սպանում են, միշտ էլ ապրիլի քսանչորսն է...

Կրկին սարսափ-ֆիլմի ճայն, լուրերի հաղորդումներ, էլեկտրական սղոցի սուլոց: Հեռուստացույցի ալիքները փոփոխվելով կանգ են առնում մեկի վրա:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - ...Այսօր մեր բազմաչարչար երկրի պոպորք Կառավարությունը որոշում ընդունեց Ապրիլի քսանչորսին մեծ հանդիսավորությամբ նշել Հայոց Մեծ Եղեռնի հարյուրամյա տարելիցը: Այդ ոճագործության...

Դադար: Տարածքը հայտնվում է լուսային 3D կոնտրածուրի մեջ: Ամեն ինչ միանգամից փոխվում, ասես հնանում է: Սփրբնած լույս: Արխիվարկուսը անշարժանում է, միայն ուղեցույց մատն է շարժ-

վում: Պահակը մոտենում է կոմո-
դից կապված պարանին: Անմի-
ջապես ազդանշանի ձայն է
լսվում: Տարածքը շատ լուսավոր
է դառնում:

**ԱՉԴԱՆՇԱՆԻ ՁԱՅՆ - (Զայնը հա-
մակարգչային-ոռորոտային է):**
Դուք հաղորդագրություն ունեք,
դուք հաղորդագրություն ունեք...

ՊԱՀԱԿ - Զգվում եմ... Ուզում եմ համ
քեզ մոռանալ, համ է՝ ազգա-
նունս... Մոռանամ... Իմ խեկա-
կան ազգանունը գիտեմ, որ
մոռանամ... Հազար ասել եմ՝ ինձ
նամակ մի ուղարկիր... Մեկ է՝ չեմ
պատասխանելու:

Կրկին միանում է հեռուստացույ-
ցը: Սակայն հաղորդավարի ձայ-
նը փոխված է, ասես սարսափ
ֆիլմից լինի:

ՀԱՐՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - ...Այսօր
մեր բազմաչարչար երկրի պո-
պոք Կառավարությունը որոշում
ընդունեց Ապրիլի քսանչորսին
մեծ հանդիսավորությամբ նշել
Հայոց Մեծ Եղեռնի հարյուրամյա
տարելիցը: Այդ ոճրագործութ-
յան...

Հաղորդավարի խոսքին համըն-
թաց ասես զարբնած Արխիվա-
րիուսը փուչիկ է փշում: Փուչիկն
ուժգնորեն տրաքացնում է: Հա-
ղորդավարի ձայնը կտրվում է:
Էլեկտրական սղոցի սուլոց: Ար-
խիվարուսը ցնցվում, մի քանի

վայրկյան պայթած փուչիկին
նայելուց հետո խոսում է դան-
դադ, ասես խմած լինի: Լուսային
կոնտրաժուրը քորում է:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (գլուխը բռնելով):

Ի՞նչ է կատարվում... Որտեղ եմ
ես... Ո՞վ եմ ես... Ասես անկշոե-
լիության մեջ հայտնված լինեմ...
Ծննդականը... Ես այս փաս-
տաթղթի դեմ ի՞նչ կարող եմ ա-
նել... Ճշմարտությունն ասել...
Հիմար խոսքեր... Թունավոր
խոսքեր... Բուտովիզմ են ասում,
ի՞նչ են ասում... Թունավորվել
մեռնել... Չէ, թաքնվելու տեղ էլ
չկա... Դե ի՞նչ, սկսենք... Ճշմար-
տությունը բացահայտելու ժամ...

**Միանում է ապահովագրական
ազդանշանը:**

**ԱՉԴԱՆՇԱՆԻ ՁԱՅՆ - (Զայնը ոռոր-
տային է):** Ձեր արխիվը բացված
է, ձեր արխիվը բացված է, ձեր
արխիվը բացված է, ձեր արխիվը
վվկվութեաը բացված է...

Խավարում: Կոնտրաժուրն ա-
նեանում է: Դադար: Սքայափ
ձայնը ուժգնի միանում է: Արխի-
վարիուսը ակտիվ է, կենսուրախ:
Նրա ձայնի մեջ պաթետիկ-թա-
տերային շեշտեր են հայտնվում:

**ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (այնպիսի զգա-
ցողություն է, ասես սքայառվ է
շփում):** Սարսափելի է... Ապրիլի
քսանչորս... Ապրիլի քսանչորսից
հետո քեզ չեմ տեսել... Տղաս...

Ինձ լրիվ մոռացել ես, նամակներիս չես պատասխանում: Թվում է՝ դեմքդ ջնջվել է, տեսնեմ՝ չեմ հիշի: Տղաս... Երկրորդ գարունն էլ անցավ, ու ոչ մի պատասխան: Ինչո՞ւ ես ինձ հետ այդպես վարվում: Ասենք, իրավունք ունես: Մտածում ես՝ եթե ծնող էի, ինչո՞ւ լրեցի քեզ: Լրեցի... Զգիտեմ... Դու չգիտես, թե ինչ ժամանակներ էին... (Աթոռի հարևանությամբ դրված ապակե տարան վերցնում, գրպանից մի բանալի է հանում, սկսում է բացել:) Դու իրոք չգիտես, թե ինչ ժամանակներ էին... Տղաս... Տեսնես հիմա ի՞նչ ես անում, որտեղ ես, ո՞նց ես, իո սոված չեմ... Հաց կերել ես...
ՊԱՀԱԿ - Դու պահած չես ուսում...

Լուսային 3D կոնտրաֆուրճ անեանում է:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (ցնցվում է, տարան շուր է գալիս): Վախեցա...

ՊԱՀԱԿ - Ինչի՞ց...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Զգիտեմ, հանկարծակի էր... (Դեմքը լուսավորվում է, ուրախ): Տեր աստված, եկա՞ր... Հազիվ ձանաչեցի... (Մոտենում, գրկում է:) Տղաս...

ՊԱՀԱԿ - Տղան...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (մի քիչ պաթետիկ): Էս ո՞նց ես մեծացել... Տղաս...

ՊԱՀԱԿ - Տղան...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (քիչ պաթետիկ): Երկու գարուն է՝ քեզ չեմ տեսել, երկու գարուն...

ՊԱՀԱԿ - Ի՞նչ գարուն...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Թող նայեմ քեզ, տղաս...

ՊԱՀԱԿ - Տղան... Ի՞նչ տղա... Լրիվ ցնդեցիր...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Զգիտեմ... Եթե դու ես ասում, ուրեմն ցնդել եմ... Ուրախությունից... Ի՞նչ նման ես հորդ...

Ելեկտրական սղոցի բարձր սուլոց:

ՊԱՀԱԿ - Ի՞նչ հայր...

Սղոցի ձայնը կրկվում է:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Դաժան ես...

ՊԱՀԱԿ - Ես...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Իրավունք ունես... Ապրիլի քսանչորսին, հորդ սպանությունից հետո...

ՊԱՀԱԿ - Տիկին...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Տիկին...

ՊԱՀԱԿ - Բա ի՞նչ ասեմ, պարո՞ն...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Մայրիկ ասա...

ՊԱՀԱԿ - Դու երևի... Ծփոթում ես... Ծննդականս տուր՝ գնամ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Տղաս...

ՊԱՀԱԿ - (կտրուկ) Ես մանկատանն եմ մեծացել:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Գիտեմ...

ՊԱՀԱԿ - Իմ ընտանիքից միայն ազգանունն է մնացել, որը ոչ մի կերպ չեմ գտնում... Ամբողջ կյանքս կեղծ ազգանունով եմ ապրել... (Դադարի:) Հոգնել եմ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ճանապարհից...

ՊԱՀԱԿ - Չե, վաղուց է, ինչ էս, էս

անհջյալ տեղից դուրս չեմ եկել... Զզվում եմ... Բոլորից, նոյնիսկ՝քեզնից... Քեզնից, որ կյանքումն ընդամենը մի երկու անգամ եմ տեսել...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ես երեք տարի պահել եմ քեզ...

ՊԱՀԱԿ - Լսիր, դու գիծ ես... Զզվում եմ ամեն ինչից...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Հանգստացիր...

ՊԱՀԱԿ - Հանգստանամ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Հանգստացիր...

Արձագանք է հնչում:

ԱՐՁԱԳԱՆՔ - Հանգստացիր, հանգստացիր, հանգստացիր...

Դադար:

ՊԱՀԱԿ - Ասում ես՝ հանգստանամ...

Բայց... Վատ չէր լինի, գիտե՞ս... (Հետզհետև աշխուժանալով:) Ուզում եմ ուրախանալ, վազել, պարել, գոռալ, թռնել, լիցքաթափել... Փտեցինք էս արխիվում...

Սղոցի ճայնք կրկվում է: Ապա՝ կրկին սարսափ-ֆիլմի ճայն, լուրերի հաղորդումներ:

ՀԱՇՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - ...հնչպես երեկ հայտարարեցինք, այսօր մեր բազմաչարչար երկրի պոպոք Կառավարության որոշումով հայտարարվել է կառնավալի օր... Հիացքաթափեք, փոխեք ձեր իմիջը, նոյնիսկ դեմքը, դեն նետեք ձեր տարիքը, մոռացեք սեռը, այլ

կերպարով մոտեցեք դիմացինին: Խաղացեք, պարեք, ուրախացեք... Ձեր սրտի դռները բացեք... Ոչ մի լրջություն: Ոչ մի պատասխանատվություն: Մի վախեցեք... Չէ՞ որ մարդը ամենաթանկ կապիտալն է... Զվարծացեք... Կառնավալ է, կառնավալ...

Պահակը լուրը լսելով՝ Ժախտով նայում է Արխիվարիուսին: Կառնավալին հատուկ երաժշտություն և լույս:

ՊԱՀԱԿ - Կառնավալ... (Արխիվարիուսին.) Կառնավալ... Հա՛... Ես էլ ասում եմ՝ էս ի՞նչ է խոսում... (Հանկարծակի փոխվում, կենասասեր է դառնում:) Գիտե՞ս, ես ամեն ինչ հասկացա... Ավելին՝ ես ծանաչեցի քեզ: Ինձ երբեք ոչ ոք «տղաս» չի ասել, դրա համար շփոթվեցի... Փաստորեն, դու գիտե՞ս իմ իսկական ազգանունը...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (ավելի ակտիվորեն): Իհարկե, գիտեմ... (Գրկում է:) Տղաս... Երկու գարուն... Ուղիղ երկու գարուն քեզ չեմ տեսել: Այսօր ամսի քանին է:

ՊԱՀԱԿ - Ապրիլի քսանչորսը...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ապրիլի քսանչորսը... Հազար ինն հարյուր տասնհինգ թվականի ապրիլի քսանչորսը...

ՊԱՀԱԿ - (ծիծառելով): Չէ... Երկու հազար տասնհինգ թվականի ապրիլի քսանչորսը...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ծա՛տ կատականերն ես...

ՊԱՀԱԿ - Դու էլ, հայրիկ...

Ծիծաղում են:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Հայրիկ...

ՊԱՀԱԿ - Իհարկե, հայրիկ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ես քո մայրն եմ...

Սղոցի սուլոցի ձայն:

ՊԱՀԱԿ - Լավ կառնավալ է, բան
չունեմ ասելու... Ասում ես՝ այօր-
վա տոնախմբությանը ի՞նչ
դիմակով ես ներկայանալու...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Դիմակ... Ի՞նչ
դիմակ...

ՊԱՀԱԿ - Դու իմ մայրն ես...

Արխիվարիուսը գրպանից սովիչ
է հանում, սկսում է սովել: Պահա-
կը ծիծաղում է:

ՊԱՀԱԿ - Այսօր իմ մայրն ես...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Վաղուց...

ՊԱՀԱԿ - Ուրեմն, մի քիչ պատմիր
իմ մասին...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ես քո մասին հա-
մարյա ոչինչ չգիտեմ... Մինչև ե-
րեք տարեկան դառնալդ չէիր
խոսում, նոյնիսկ մայրիկ չէիր ա-
սում: (Դադար:) Կինը, ով քեզ որ-
դեգրեց, դանիացի բարոնուիի էր,
միսիոներուիի... Որբեր էր հավա-
քում: Ամեն որբի համար մի ուսկի
էր վճարում:

ՊԱՀԱԿ - Ես ինչքան արժեի...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Քեզ համար իո
փող չէի՞ վերցնելու...

ՊԱՀԱԿ - Ճիշտ ես, սեփական երե-
խան ձրի է... (Ծիծաղում են:) Ե-

րեք տարեկան էի, չէ, երբ ինձ
որբանոց տարան:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Հա, երեք... Ճիշտ
հազար ինն հարյուր տասնհինգի
ապրիլի քսանչորսին:

ՊԱՀԱԿ - Էղ օրն էլ էր կառնավալ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Զէ... (Ծփոթվում
է:) Ոչինչ չեմ հիշում...

ՊԱՀԱԿ - Հիշում եմ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ի՞նչ...

ՊԱՀԱԿ - (մոայլվելով): Հիշում եմ,
որ... Կրակում էին... Երևի սպա-
նում... (Դադար:) Զէ, հաստատ
սպանում էին... (Դադար:) Բայց...
Արի այսօրվա կառնավալը վատ
հիշողություններով չիշացնենք...
Հիշենք միայն լավը...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Արի... Էլ ոչինչ չեմ
հիշում...

ՊԱՀԱԿ - Զէ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Նոյնիսկ երեխա-
յի հիշողության մեջ ինչ-որ բան
մնում է, հագուստի գույն, մոր
ժպիտ...

ՊԱՀԱԿ - Հիշում եմ՝ տանելուց ա-
ռաջ ինձ տղայի շորեր հագցրին:
Երևի դա պատճառը, որ մինչև
հիմա ինձ տղա են ասում:

Ծիծաղում են:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Իսկ լնտանիքդ...
Հիշում ես ինձ, քույրերիդ...

ՊԱՀԱԿ - Զէ... Մամ, արի խաղ խա-
ղանք...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Արի...

ՊԱՀԱԿ - Թվաբանական խաղ...
Համաձայն ես...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Կյանքում չեմ
խաղացել... (Ծիծաղում է:)

ՊԱՀԱԿ - Ավելի լավ... Ասա... Եթե
երկու տարի առաջ ես երեք տա-
րեկան էի, ապա հիմա...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ճիշտ քսան ես...

ՊԱՀԱԿ - Ճիշտ է... Իսկ դո՞ւ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ես չգիտեմ, ապ-
րիլի քսանչորսից հետո տարիքս
կորցրել եմ...

ՊԱՀԱԿ - Երեսունից ավելի չես
երևում...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Այդքան ծնն եմ...

Ծիծաղում եմ:

ՊԱՀԱԿ - Եթե քսան չինեի, կասեի,
որ դու տասնութ տարեկան ես...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Դու անտանելի
ես...

ՊԱՀԱԿ - Դու էլ...

Ծիծաղում եմ:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (սեթնեթելով): Ե-
րեսունիինգ տարեկան կին...

ՊԱՀԱԿ - Ես ասացի՝ կին... Լավ,
գուցե պատմես մեր ընտանիքի
մասին...

Ստոպ: Տարածքը հայտնվում է
լուսային 3D կոնտրաժուրի մեջ:
Հին երաժշտություն է հնչում,
խոպտած ձայն: Ռադիոյի խո-
նացած հնչյուններ:

ՈԱՂԻՈՅԻ ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ԶԱՅՆ

- ...Անտանտի եղակը լուրջ և
ջախջախիչ հարձակումների ռազ-
մավարություն է մշակել, քանի որ...

Գնացքի անիվների չխկչխկոց:

ՈԱՂԻՈՅԻ ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ԶԱՅՆ

- Սեռական առաջընթացի
իրանման առումով...

**Գնացքի անիվների չխկչխկոցն
ահագնանում է:**

ՈԱՂԻՈՅԻ ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ԶԱՅՆ

- Օսմանյան Թուրքիան... (Ղա-
ղոյի ալիքները խառնվում,
վայրկյան անց վերականգնվում
են:) Երիտրուրքական կառավա-
րությունը... (Ղաղոյի ալիքները
կրկին խառնվում են:)

Անիվների չխկչխկոց:

ՈԱՂԻՈՅԻ ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ԶԱՅՆ

- Ռուսաստանը թեև թոթափել է
Ճորտատիրական լուծը, բայց...

**Գնացքի անիվների չխկչխկոցն
ահագնանում է:**

ՈԱՂԻՈՅԻ ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ԶԱՅՆ

- Ծոտակեր... Կարծ շրջազգեստ-
ների բումը փաստում է, որ...

**Գնացքի անիվների չխկչխկոցն
ահագնանում է:**

ՈԱՂԻՈՅԻ ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ԶԱՅՆ

- Մարդը ամենաթանկ կապի-
տալն է...

**Գնացքի անիվների չխկչխկոցն
ահագնանում է:**

ՈԱՂԻՈՅԻ ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ԶԱՅՆ

- Պաշտոնական հայտարարութ-
յուն... Երիտրուրքական կառա-

վարության հրամանով ապրիլի քսանչորսը հայտարարվել է չեղյալ օր: Այդ օրվա հետ առնչություն ունեցող բոլոր անձանց նամակները և փաստաթղթերը համարվում են մեռած: Արխիվի դրները...

Ստոպ: Լուսային վիճակը փոխվում է: Ականջակալներն ականջներին՝ Պահակը և Արխիվարիությունը կանգնում են դեմ-դիմաց, տեքստերը ձեռքներին: Ասես ուղղոյի հաղորդավարներ լինեն:

ԱՉԴԱՆԾԱՆԻ ՁԱՅՆ - (Ձայնը ոռութային է): Լուսայուն... Լուսայուն... Հինգ, չորս, երեք, երկու, մեկ... Ձայնագրություն... Ձայնագրություն: Ստարտ... Ձեր արխիվը բացված է, ձեր արխիվը բացված է, ձեր արխիվը բացված է, ձեր արխիվը բացված է...

Դադար, խոր դադար:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (դանդաղ, հազիվ է խոսում): Մենք հինգ հոգի էինք...

ՊԱՀԱԿ - Հինգ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Այո... Դու, ես, երկու քոյրերդ... (Դադար:) Երբ փոքր էիր...

ՊԱՀԱԿ - Հինգերորդն ով էր...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Դու էիր, ես, քոյրերդ... Երկու...

ՊԱՀԱԿ - Հորս անունը չես տալիս... Ամուսնացած ես...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Այո...

ՊԱՀԱԿ - Ազգանունդ ինչ է... Ուզում եմ լսել իմ իսկական ազգանունը:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ինչ ես կաել իմ ազգանունից... Փոխել եմ... Նրա ազգանունը ուրիշ էր...

ՊԱՀԱԿ - Նամ... Փաստորեն, նա իմ հայրը չէր...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ոչ...

ՊԱՀԱԿ - Իսկ ով էր...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Մարդ, ով աղջիկներիս տվեց իր ազգանունը...

ՊԱՀԱԿ - Իսկ հայրս ինչ եղավ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Քո ծննդականը...

ՊԱՀԱԿ - Հայրս ինչ եղավ...

Դադար:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Պաշտոնական հայտարարությամբ...

ՊԱՀԱԿ - (ընդհատում է): Հորս ինչ արեցին...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (ակիերից դուրս է գալիս): Սպանեցին... Հորդ սպանեցին... Ճիշտ ապրիլի քսանչորսին, իր տան առաջ... (Դադար: Փորձում է իրեն հավաքել:) Մարսակելի է... Երբ ապրում ես, տեսնում ու տարիներ հետո ես հասկանում, որ ապրիլի քսանչորսին ապրել ես...

ՊԱՀԱԿ - Հորս սպանեցին...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Հա... Ընկած էր մեր տան դռանը: Մարդասպանը կոշիկներից բռնել, քաշում էր: Ուզում էր հանել... Քեզ թվաց՝ քնած է, էդ անասունն էլ փորձում է ոտքերից բարձրացնել, հորդ տուն բերել: Հազիվ քայլել էր սովորել, բայց մոտեցար, որ օգնես...

ՊԱՀԱԿ - Ոչինչ չեմ հիշում... Ամուսնուդ ազգանունը ինչ էր...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Նոյնը... Նոյն ազգանունը, ինչը որ աղջիկներս ունեն...

ՊԱՀԱԿ - Դու հորս սպանողի հետ ես ամուսնացել...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ես ուզում էի քեզ փրկել...

ՊԱՀԱԿ - Դու հորս սպանողի հետ ես ամուսնացել...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Աղջիկներիս թաքցնելու տեղ չունեի, նրանց կսպանեին...

ՊԱՀԱԿ - Ինչի՞ չես ասում, ո՞վ սպանեց հորս... Ինչ ազգից էր...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Մենք ապրելու շանս չունեինք...

ՊԱՀԱԿ - Ինչ ազգից էր հորս սպանողը...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Նրանք քեզ էլ կսպանեին...

ՊԱՀԱԿ - Վերջ, էս կառնավալին ուզում եմ վերջ տալ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ինձ էլ կը...

ՊԱՀԱԿ - Էլ չեմ ուզում խաղալ... Ստոպ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Հենց էդ ժամանակ իմացա, որ դանիացի միսիոներուիհն որբեր է հավաքում: Մեկ որբին՝ մեկ ոսկի...

ՊԱՀԱԿ - Վերջ տուր... Ստոպ տվեք... Զայնագրությունը վերջացրեք...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Մանկատուն էր տանելու...

ՊԱՀԱԿ - (գոռում է): Ստոպ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ու ես համաձայն վեցի...

ՊԱՀԱԿ - Ես ի՞նչ կառնավալ ես սարքել... Խեղկատակություն... Ազգանունի ես փոխել, ազգի էլ, մնում էր՝ մենակ սեռդ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (ընդհատում է): Քեզ մանկատուն նամակներ էի գրում...

ՊԱՀԱԿ - Հիշում եմ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (վերցնում է ապակե դատարկ տարան, շուր է տալիս): Չէիր պատասխանում...

ՊԱՀԱԿ - Ես ի՞նչ գժանց է...

Պահակը ճեռքի քղթերը շարտում, մոտենալում է կոմողից կապված պարանին: Անմիջապես ազդանշանի ձայն է լսվում:

ԱԶԴԱՆՃԱՆԻ ՁԱՅՆ - (Ձայնը համակարգային-ոռորոտային է): Դուք հաղորդագրություն ունեք, դուք հաղորդագրություն ունեք...

ՊԱՀԱԿ - Զգվում եմ... Ուզում եմ համ քեզ մոռանալ, համ էլ՝ ազգանունս... Մոռանալ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (շոյում է տարան): Նամակների վրա օրիորդական ազգանունով էի ստորագրում...

ՊԱՀԱԿ - Մոռանալ... Իմ իսկական ազգանունը գիտեմ, որ մոռանամ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Մի անգամ պատասխան ստացա...

Պահակը շտապով շրջվում է:

ՊԱՀԱԿ - Ես պատասխան չեմ ուղարկել...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ- Երկու չոր ու ցամաք տող. «Մայրիկ, լավ եմ, ձիթապտուղ եմ ուսում, գրաբար սովորում»:

ՊԱՀԱԿ - Ես քեզ չեմ պատասխանել...

Պահակը բարկացած՝ պարանը վերցնում, Արխիվարիուսին է մտենում:

ՊԱՀԱԿ - Լսիր, ինչքան էլ կառնավալ սարքես, տարիները շփոթես, գլխի վրա կանգնես, մեկ է, իմացի՝ ես քեզ նամակ չեմ գրել: Ինձ նայիր, վերջ տուր... Չեմ ուզում քեզ տեսնել, հասկանո՞ւմ ես...

Պարանը կապում է Արխիվարիուսի ոտքից:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Հայերեն էիր գրել...

ՊԱՀԱԿ - Քեզ հազար ասել եմ՝ ինձ նամակ մի ուղարկիր... Մեկ է՝ չեմ պատասխանելու:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Գիտեմ... Բայց քեզնից մի նամակ ստացել եմ...

Պահակը մոտենում է կոմոդին, մետաղյա բռնակը սկսում է պտտել: Պարանը ձգվում, Արխիվարիուսին դեպի կոմոդն է քաշում:

ՊԱՀԱԿ - Ստում ես...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (պարանը ոտքին ետ-ետ՝ դեպի կոմոդն է սողում): Չեմ ստում...

ՊԱՀԱԿ - Դու իմ մայրը չես...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ուրիշ հնարավորություն չունեի, միայն այդպես կարող էի փրկել քեզ, քո տեսակը...

ՊԱՀԱԿ - (րոնակը պտտելով): Էղպես՝ հնց... մանկատուն ուղարկելով...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (ետ սահելով): Մայրիկ, ձիթապտուղ եմ ուսում, գրաբար սովորում...

ՊԱՀԱԿ - (րոնակը պտտելով): Սուտ... Ես ձիթապտուղ չեմ սիրում, զգվում եմ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ես քեզ սիրում էի, բայց ինչ կարող էի անել...

ՊԱՀԱԿ - (րոնակը պտտելով): Պահեիր մոտդ, մայրիկ... Դու չգիտես՝ ինչ է նշանակում որք մեծանալը:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (ետ-ետ սողուվ): Դու չգիտես՝ ինչ է նշանակում որք երեխա ունենալը...

ՊԱՀԱԿ - Ես նույնիսկ չգիտեմ՝ քանի տարեկան եմ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ես էլ չգիտեմ... Իմ կյանքն էլ էր կանգ առել...

ՊԱՀԱԿ - (րոնակը պտտելով): Ծննդականն ինչ է, էդ էլ չունեմ... Ո՞վ եմ ես, որտեղից, ոչ ծնողներս կան, ոչ ազգությունս, ոչ էլ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (ետ սահելով): Իսկ ազգանուն փոխելը կարծում ես իմշտ է...

ՊԱՀԱԿ - Չեմ ուզում, էլ ոչինչ չեմ ուզում լսել...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Սպասիր... Նամակդ...

ՊԱՀԱԿ - Վերջ, ձայնագրությունը
ավարտված համարենք...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (պոռթկալով):
Նամակդ... Դանիացի բարոնու-
հին էր գրել...

Դադար: Արխիվարիուսը գրեթե
կոմոդին է հասել:

Դադար:

ՊԱՀԱԿ - Դու... Մարդ չես...

Արխիվարիուսը սուլիչով սուլում
է:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ես կասեմ քո իս-
կական ազգանունը...

ՊԱՀԱԿ - (Արխիվարիուսին տեղա-
փորում է դարակի մեջ): Դու թուղթ
ես... Ընդամենը փաստաթուղթ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (հևլով խցկում
է դարակի մեջ): Դու ինձ չես կա-
րող ջնջել...

ՊԱՀԱԿ - Դու արխիվի պատճեն
են... Մեռած, կորած ծննդական...

Ստոպ: Տարածքը հայտնվում է
լուսային 3D կոմտրաժուրի մեջ:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - ...Մարդը
ամենաթանկ կապիտալն է...
Մարդը ամենաթանկ կապիտալն
է... Մարդը ամենաթանկ կապի-
տալն է...

ՔԱՐԱՑՈՒՄ ՔԱՐԱՑՈՒՄՆ ԱՎԱՐՏՎՈՒՄԷ

ԱՐԽԻՎ՝ ՄԱՐԴԻԿ-1

Գործող անձինք

ՊԱՀԱԿ

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ

ՓՈՍՏԱՎԱՐ

Իրադարձությունները իրավես կարևոր են:

Գործող անձանց սեռը և տարիքը կարևոր չեն:

Կարծում եմ, պարտադիր է, որ այենի երկու գործողություններում դե-
րակատարները չփոխվեն:

Պատկեր չկա, դեկոր չկա, բեմ չկա, տեղանքը փակ դաշտ է կամ սեն-
յակ, որը դաշտի 3D շերտերն ունի: Ոչ մի վարագույր: Մինվեներ չկան,
եթե նույնիսկ կան, ապա աղճատված, աղավաղված ձևով են արտա-
հայտվում: Դիեսում առկա հնչյուններն ու աղմուկը (հեռուստացույցի,
ռադիոյի ձայն, գովազդային ընդհատումներ, կենցաղային աժոտած)

խստ կարևոր գործողություններ են:

Երկու դարակից զուրկ կոմոդ: Կոմոդի աջ անկյունում ոլորտ մետաղյա բռնակ կա: Բեմից մի քանի տարրալուծվող, համարյա չերևացող արռո- ներ են ամել: Աքոռներից մեկի կողքին երեք լիտրանոց ապակյա տարա կա: Արխիվարիուսը կուշ է եկել կոմոդի մեջ: Պահակը տեղանքում է, բայց՝ անշարժ: Միայն ցուցանատը տնկած աջ ձեռքն է շարժվում, ասես, ինչ-որ մեկին ճանապարհ է ցույց տալիս: Ներս է մտնում Փոստատարը՝ ուսին պարկը: Չի նկատում Արխիվարիուսին և Պահակին: Ստոպ: Տա- րածքը հայտնվում է լուսային 3D կոնտրաժուրի մեջ: Միայն Փոստա- տարն է լուսավորված:

ՓՈՍՏԱՏԱՐ - Էսօր մի նամակ կար- դացի: Փոքրիկ երկտող էր՝ ար- խիվ էին ուղարկել... (*Պայուսակն է քրքրում:*) Զեռագրից երևում էր, որ գրողը կին է, ավելի ծիցտ՝ աղ- ջիկ: Զեռագրից... Կի՞ն էր... Չէ, աղջիկ... (*Ծիծաղում, շարունա- կում է պայուսակը քրքրել:*) Նա- մակը ինձ չէր ուղղված... Բա ինչի կարդացի... Վրան ոչ հասցե կար, ոչ բան... (*Լյարդային պայուսակն է քրքրում:*) Ինչ արեցի... Ո՞ւր որեցի... Պատասխան էլ կար... Չէ... Բայց սիրուն մեսից էր... (*Մի քիչ պաթետիկ:*) Սիրելի՞ս, վաղը գարուն է: Էղ գարունը դու ես բե- րել ինձ համար... (*Պայուսակի գրապաններն է քրքրում:*) Սիրելի՞ս, վաղը... Էղ անտերն ինչ արեցի... Կորա՞վ...

ՓՈՍՏԱՏԱՐ պայուսակի պա- րունակությունը շուրջ է տալիս հա- տակին: Պայուսակից սպիտակ բմբուզներ են քափառ: Բնմբուզնե- րի առատությունից տեղանքը ճերմակում է:

ՓՈՍՏԱՏԱՐ - ...Վաղը գարուն է... Էղ

գարունը դու էս բերել ինձ հա- մար... (*Դադար:*) Բայց... Մի րո- պե... Երկտողի տակ տարեթիվ կար... Հազար ինն հարյուր տասնհինգ թվական... Բա... Ո՞նց էր ինտերնետով ուղարկել, Էլ. փոստով... Էղ թվերին ինտեր- նետ կա՞ր...

Լվացքի աշխատող մեքենայի անտաճելի բարձր ձայն, որն ու- ղեկցվում է հեռուստահաղորդում- ներին հատուկ հնչյուններով: Ազրեսիկ գովազդի աղմուկ: Ալիք- ները փոփոխվելով՝ կանգ են առ- ում մեկի վրա:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - ԳՈՎԱԳԴ...
Պավլիկ Մորոզով... Անտեսանելի
գովազդ... Պավլիկ Մորոզով...

Հեռուստաալիքները փոփոխվե-
լով՝ կանգ են առնում մեկի վրա:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - ...Լուրեր:
Այսօր, մարտի մեկին, մեր բազ-
մաչաշարք երկրի պոպոր Կառա-
վարությունը Հայոց Մեծ Եղենի
անվան հրապարակ կառուցելու

որոշում ընդունեց... Հրապարակը կառուցվելու է Մաշտոցի անվան պողոտայի և Լուսավորչի փողոցի հատման կետում...

Լվացքի մեքենայի ճայն: Հեռուստաալիքները փոխականություններին հատուկ աղմուկ է լսվում:

ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ -

...Մեր ռադիոկայանի վրա ահաբեկչական գործողությունները շարունակվում են: Ահաբեկիչներին հատկապես շփոթեցնում է մեր ռադիոկայանի որդեգրած ազատ խոսքի...

Ուղիղամիքը խեղդվում է լվացքի մեքենայի և գովազդի ճայների մեջ: Միանում է հեռուստացույցը:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - ...Գնեք չծամվող մաստակ, որը կօգնի ձեզ չակտիվացնել ձեր ստամոքսի...

Լվացքի մեքենայի ճայն: Հեռուստաալիքը փոխականում է: Ուղիղամիքը վերականգնվում է:

ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - ...Փրկենք ցեղասպանվող եզրի երեխաներին...

Ուղիղամիքը խեղդվում է լվացքի մեքենայի և գովազդի ճայների մեջ: Միանում է հեռուստացույցը:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - ...Այսոր մեր բազմաչարչար երկրի ան-

քիծ, լվացված Նախագահը մասնակցել է Սիրահարների այգում կազմակերպած Սուրբ Անգլուխ Զիավորի տոնին: Նստարանին նստած համբուրվող սիրահար զոյգին նայելիս Նախագահը մեղմ ժպտում էր:

Լվացքի մեքենայի ճայն: Հեռուստաալիքը փոխականում է:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - ...Հայրենի և որդիների բազմադարյա խնդիրը մեկընդմիշտ լուծելու համար առաջարկում եմ Ազգային Ժողովում օրինագիծ ընդունել, ըստ որի յուրաքանչյուր մարդ, ծնվելուց հետո, ձկան նման պարտավոր է մոռանալ իր ծնողներին...

Լվացքի մեքենայի ճայն: Ուղիղամիքը վերականգնվում է:

ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - ...Ղրիմում շարունակվող դաժան պատերազմի արդյունքում...

Ուղիղամիքը խեղդվում է լվացքի մեքենայի և գովազդի ճայների մեջ: Միանում է հեռուստացույցը:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - ...Նա ուսումնասիրում է մեռած նամակների պրոբեմը...

Չայն անջատվում է: Փոստատարը խոր շունչ է քաշում:

ՓՈՍՏԱՏԱՐ - Էս ի՞նչ դաժան էր... Ի՞նչ էր ասում... Մեռած նամակ...

Մեռած... Զէ մի չէ... Էղ ապուշությունը ովք հորինեց... Ինչքան գիծ կա՝ հեռուստացույցով ցոյց են տալիս... (Դադար:) Բայց երկտողը լավն էր: Ասա՝ պատասխանի, էլի... (Լվացքի մեքենայի ձայն:) Ի՞նչ ես անսրտություն անում... (Լվացքի մեքենայի ձայնը կրկնվում է:) Հարյուր տարվա նամակի... Էղ գրողն ու հասցեատերը հիմա երևի... (Լվացքի մեքենայի ձայնը կրկնվում է:) Սրանց լվացքը սկսվեց... Ամբողջ օրը դոդոացնելու են... Արխիվը բացված-չբացված՝ լվացք են անում... (Չայնն անտանելի է դառնում:) Չեմ էլ հասկանո՞ւ ով է, Պահանկը, թե՛ Արխիվարիուսը...

Լվացքի մեքենայի ձայն:

ՓՈՍՏԱՏԱՐ - Վերջացրեք, էլի...

Չայնն անջատվում է:

ՓՈՍՏԱՏԱՐ - Էժան պրծանք...
(Փոքր-ինչ պաթետիկ:) Սիրելի՞ն, վաղը գարուն է... Էղ գարունը դու ես բերել ինձ համար:

Փոստատարը պայուսակը նետում է ուսին, որ գնա: Հեռախոսի հաղորդագրության ձայն է հճչում:

ՓՈՍՏԱՏԱՐ - (կանգ առնելով): Էս ի՞նչ էր... Մեսի՞ջ... (Թեթևակի ժայխով:) Չի կարող պատահել... Տեսնես ովք է ինձ հիշել... Հավ... Երևի ինչ-որ հիմար հաղորդագ-

րություն է. կոշիկի խանութում գներն են իջեցրել, կամ Օպերայում համերգ է...

Պատրաստվում է դուրս գնալ,
երբ հաղորդագրությունը առավել ուժգին ձայնով է կրկնվում:

ՓՈՍՏԱՏԱՐ - (գրաններն է քրքրում):

Էղ անտերը ովք եմ դրել: Խնքան չեմ զանգում, որ... (Հաղորդագրությունը կրկնվում է:) Էս ինչ տեղատարափ է: (Հաղորդագրությունը կրկնվում է: Բարկանում է:) Հավ, հասկացանք... (Չեռքը ծոցագրապանն է տանում:) Գտա... (Ծրար է հանում, բացում, երկտող է հանում, կարդում է:) Կորսված տեքստ... Կորսված տեքստ... (Ուշադիր կարդում է:) Որ տուն գաս, հետդ հաց բեր, տղաս... (Զարմացած:) Որ տուն գաս, հետդ... Հաց... (Ծրարի հասցեի հատվածն է զննում:) Մորս հեռախոսի համարն է... Բայց, չի կարող պատահել... Մայրս երկու տարի առաջ է մահացել... Էս ի՞նչ կատակ էր... (Նորից է կարդում:) Որ տուն գաս, հետդ հաց բեր... Չեմ էսպիսի բան չի կարող լինել... (Ծրարի ներսն է տնտղում:) Երեք տարի առաջ է ուղարկել... Բա ի՞նչ եմ հիմա ստանում... Չեմ են առնում... Էս պիտի պարզել... Անասին են դրանք, մարդկանց զգացմունքների հետ են խաղում... (Ծուապ դուրս է գնում:)

Լուսային 3D կոմտրաժուրն ան-

հետանում է: Պահակը դեռ անշարժ է: Միայն ցուցամատը տնկած աջ ձեռքն է շարժում, ասես ինչ-որ մեկին ճանապարհ է ցույց տալիս: Արխիվարիուսը կոմղից դուրս է գալիս, մեջքն է ուղղում:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Էս զիբիլ ավտոբուսով մինչև արխիվ հասա՝ մեջքս կտրվեց... Ուշ էլ է... Կիասցնեմ ետ գնամ... Հա, չմոռանամ ծննդականիս պատճենը վերցնել... (Գրպաններն է տնտղում:) Դուռը բացեմ...

Գրպանից Ռուրիկ-կուրիկ է հանում, սկսում է պատել:

ԱՉԴԱՆԾԱՆԻ ՁԱՅՆ - (Ձայնը ոռրոտային է): Արխիվը փակ է, արխիվը փակ է:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Չհասկացա... Երեկ էի յուղել...

Զարմացած Ռուրիկ-կուրիկին է նայում: Կրկին պտտում է: Լվացքի մեքենայի ձայնն ահազնանում է: Ազդանշան:

ԱՉԴԱՆԾԱՆԻ ՁԱՅՆ - (Ձայնը ոռրոտային է, էլ ավելի բարձր): Արխիվը փակ է, արխիվը փակ է:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Ո՞նց թե՝ փակ է... (Լյարդայնանլով:) Մարդ չկա... Էս պահակն ո՞ր է...

Ռուրիկ-կուրիկը կրկին պտտում է: Լվացքի մեքենայի ձայն:

ԱՉԴԱՆԾԱՆԻ ՁԱՅՆ - (Ձայնը ոռրո-

տային է, էլ ավելի բարձր): Արխիվը փակ է, արխիվը փակ է:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Զի՞ լսում... Լվացք է անում, ինչ է անում...

Ռուրիկ-կուրիկը նյարդայնացած շուռումուն է տալիս: Պահակը հանկարծակի ակտիվանում, կոմորի վրայից ճանճապանը վերցնում, հրացանի նման պահում է Արխիվարիուսի վրա:

ՊԱՀԱԿ - Կանգնիր, թե չէ կկրակեմ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - (հանկարծակի գալով): Հայրիկ ջան... (Ուրախ:)

Հայրիկ ջան, ես եմ, դուռը բաց...

ՊԱՀԱԿ - Ոչ մի դեպքում... Շարքային...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - (Ծնդհատում է): Արդեն սերժանտ եմ... Հայրիկ ջան... Դուռը բաց, ծննդականս պիտի վերցնեմ:

ՊԱՀԱԿ - Մոռացիր, դու ծննդական չունես...

Դադար:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - (ականջ է դնում): Հայրիկ ջան...

ՊԱՀԱԿ - Համարիր՝ խոլ եմ, չեմ լսում... Համ է՝ ես տղա չունեմ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Լսիր, հայրիկ ջան, դուռը բաց, գործս անեմ՝ գնամ...

ՊԱՀԱԿ - Էստեղ մարդ չկա...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Հայրիկ ջան... (Իրեն հազիվ տիրապետելով:)

Հայ-րիկ ջան...

ՊԱՀԱԿ - Ինչ ես կպել, հայրիկ, հա, հայրիկ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Բա ինչ ասեմ, մայրիկ, տատիկ, նահապետ, թե սպարապետ...

ՊԱՀԱԿ - Զէ մի չէ՝ Անգլիայի թագուհի... (*Մի պահ մտածում է:*) Բայց սպարապետը վատ չէր, գիտե՞ս...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ինչ ուզում ես, կասեմ՝ պարոն սպարապետ, զորքերի գերագույն հրամանատար, ընկեր կաթողիկոս, պարոն ծովակալ...

ՊԱՀԱԿ - Զե՞ն ես առնում, քսան տարեկան ադմիրալ որտե՞ղ ես տեսել...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (*ափերից դուրս է գալիս*): Լսիր, դու գի՞ծ ես...

ՊԱՀԱԿ - Հա, բա ինչ եմ... (*Ծաղրով*): Երեք տարի առաջ խելագարության նոպա եմ ունեցել...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ինչ ուզում ես եղիր, մենակ դրուը բաց... Աշխատանքի եմ, հասկանո՞ւմ ես...

ՊԱՀԱԿ - Հա, ես էլ էստեղ մուկ եմ տշում...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Բաց...

ՊԱՀԱԿ - (*ձանձասպանը նրա վրա պահելով*): Մի քայլ էլ անես՝ կսատկացնեմ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ճանճ եմ, ինչ եմ, որ սատկացնես...

ՊԱՀԱԿ - Հա, չե՞ս տեսնում՝ քանի սին եմ բմբական արել...

Արխիվարիուսը զարմացած շուրջն է նայում: Սպիտակ բմբուլները թերևակի շարժվում են: Ռադիալիքների ձայներ:

ՌԱԴԻՎԱՐՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - ...մինչև հիմա թուրքիայից արտաքսված ու ցեղասպանված հայերի ուկորները հանգչում են Սիրիայի Դեր էլ Չորի անապատում...

Ռադիոալիքը խեղդվում է լվացքի մեքենայի և գովազդի ձայների մեջ: Ի վերջոն միանում է հեռուստացույցը:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - ...թոթափեք ընտանեկան այդ զարհուրելի սովորությունը: Զկա ծնող և չկա երեխա: Կա միայն հայրենիք և գործող Նախագահ... Նախագահն է մեր հայրենիքն ու մայրաքաղաքը: Ուրիշ ծնող մենք չունենք...

Լվացքի մեքենայի ձայն: Հեռուստաալիքը փոխվում է: Ռադիոալիքը վերականգնվում է:

ՌԱԴԻՎԱՐՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - ...Կառավարությունը Մաշտոցի անվան պողոտայում խմբված ցուցարարներին ցրելու նպատկով...

Ռադիոալիքը խեղդվում է լվացքի մեքենայի և գովազդի ձայների մեջ: Միանում է հեռուստացույցը:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - Գովազդ... Պավլիկ Մորոզով... Անտեսանելի գովազդ... Պավլիկ Մորոզով...

Գովազդի ձայների ազրեսիլ հարձակում՝ ուղեկցված լվացքի

մեքենայի չդադարող քարձը դրուցով: Արիսիվարիուսը, նյարդայնացած, ռուբիկ-կուբիկը ետու առաջ է պտտում: Անսպասելի լուրջուն:

Լուրջուն...

Լուրջուն...

Լուրջուն...

Լուսային 3D կոնտրաժուր: Խորդադար:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Էս ի՞նչ լուրջուն է...

Դադար:

ՊԱՀԱԿ - Ի՞նչ լուրջուն... (Ականջ է դնում:) Կրակում են...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Միշտ էլ կրակում են...

ՊԱՀԱԿ - Չէ, էսօր սպանում էլ են...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Այսօր ամսի քանիս է...

ՊԱՀԱԿ - Ապրիլի քսանչորսը...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Ո՞նց, մարտի մեկը չի...

ՊԱՀԱԿ - Երբ սպանում են, միշտ էլ ապրիլի քսանչորսն է...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Հազար ինն հարյուր տասնինգ թվականի...

ՊԱՀԱԿ - Չէ, երկու հազար ութի...

Լվացքի մեքենայի ճայն: Լուսային կոնտրաժուրն անհետանում է:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Ապրիլի քսանչորսը... Բայց չէ... Չի կարող պա-

տահել... Հրամանս էսօր են տվել... (Գրպանից ուսադիր է հանում, ուշադիր զննում է, ասես կարդում է:) Երկու հազար ութթվական, մարտի մեկ: Զինվորական կարգապահության և առաջնթացի համար սերժանտի կոչում շնորհել Մաշտոցի անվան պողոտայում տեղակայված արխիվի արխիվարիուս...

ՊԱՀԱԿ - (ընդհատում է): Էսօր Մաշտոցի պողոտայում մարդ չկար...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Ի՞նչ գիտես...

ՊԱՀԱԿ - Ախմախ... Մեր արխիվը էդ փողոցի դիմաց չի...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Բա ցոյցի մասնակիցները...

ՊԱՀԱԿ - Լուսավորչի փողոց գնացին:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Լուրջ... (Կրկին կարդում է ուսադիրի վրա գրվածը:) Իրավիճակը վերահսկողությունից դուրս գալու դեպքում, Երկրի Գերագույն հրամանատարի անունից հրամայում եմ՝ ամեն գնով ցրել Մաշտոցի պողոտայում հավաքված...

Լվացքի մեքենայի ճայնն ահագնանում է:

ՊԱՀԱԿ - Էդ ի՞նչ ես կարդում...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Կարևոր չէ...

ՊԱՀԱԿ - Ճիշտ ես, երբ սպանում են՝ տեղը կարևոր չէ...

Լվացքի մեքենայի ճայնն ահագնանում է:

ՊԱՀԱԿ - Էղ մեքենադ անջատիր...
ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Մեքենայով չեմ...
ՊԱՀԱԿ - Լվացքը նկատի ունեմ...
 Ծննդականներն են լվանում...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Չէ, հորս գլուխը...
ՊԱՀԱԿ - Քեզնից հեռու չի, հա, ի-
 միջիայլոց, կոչմանդ հրամանը
 կարող են չեղյալ համարել...
ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (ծաղրով): Շատ
 կատակասերն ես...
ՊԱՀԱԿ - Համ... Դու, փաստորեն,
 հեռուստացույց չես նայում...

Լվացքի մեքենայի և ազքեսիվ
 գովազդի ձայները: Ինչ-որ մեկը
 հեռուստացույցի ալիքներն են փո-
 խում: Ի վերջո ալիքը կանգնում է
 մեկի վրա:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ԶԱՅՆ - Պաշտո-
 նական հայտարարություն... Մեր
 պոպոր Կառավարության հրա-
 մանով մարտի մեկը հայտար-
 վել է չեղյալ օր: Այդ օրվա հետ
 առնչություն ունեցող բոլոր ան-
 ձանց նամակները, փաստաթղթե-
 րը և հրամանները համարվում են
 մեռած: Արխիվի դռները...

Զայնն ընդհատվում է: Լոուրյուն:
 Լոուրյան մեջ անընդմեջ փակ-
 վող դրսների ձայներ են լավում:

Փակվող դրան ձայն:
 Փակվող դրան ձայն:
 Փակվող դրան ձայն:

Ազդանշան:

ԱԶԴԱՆՇԱՆԻ ԶԱՅՆ - (Զայնը ոորո-
 տային է, էլ ավելի բարձր): Արխի-
 վը փակ է, արխիվը փակ է,
 արխիվը փակ է...

Պայծառ լույս: Պահակը տեղան-
 քում է, քայց անշարժ: Սիայն ցու-
 ցամատը տնկած աջ ձեռքն է
 շարժվում, ասես ինչ-որ մեկին
 ճանապարհ է ցույց տալիս: Ար-
 խիվարիուսը նստել է աքորին: Ա-
 պակե տարան ծնկներին է: Արխիվարիուսը լազերով աջ ու
 ձախ լույսեր է գցում:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Սիրունս, երկ-
 րորդ նամակն եմ գրում, ու ոչ մի
 պատասխան... Էսօր դժվար թե
 քեզ տեսնեմ: Գործը շատ-շատ է:
 Էղ ամեն ինչը քիչ էր՝ ստիպված
 եղա արխիվ մտնել: Գիտես՝
 ծննդականիս հարցով: Կոչումիս
 համար պետք եղավ: (Ծարունա-
 կում է լազերով աջ ու ձախ լույսեր
 գցել:) Ասացին՝ առանց ծննդա-
 կանի սերժանտ չես կարող լինել:
 Խնդալու է, չչ... Ասացի՝ չունեմ,
 հայրս երեք տարի առաջ խելա-
 գարության նոպայի մեջ
 պատոեց: Զարմացած երեսիս
 նայեցին: Իրենց թվաց՝ ես էլ եմ
 գիծ... Սիրունս... Գիծ եմ, քա ինչ
 եմ... Գիծ եմ, որ առանց քեզ չեմ
 կարողանում... Ինչի մեսիցներիս
 չես պատասխանում: Էսօր չենք
 կարող հանդիպել... Համբուրում
 եմ քեզ... Հա, ծիշտ երեկվա
 նման... Երեկ Սիրահարների այ-

գում լավ էր, չէ... Սուրբ Անգլուխ ծիավորի տոնին: Տեսա՞ր... Նախագահը մեզ նայում ուժպտում էր... Լավ, անուշ, եսթռա... Սպասում եմ մեսիջիդ...

Արխիվարքուսը լազերը դնում է ապակե տարայի մեջ: Ներս է գալիս Փոստատարը:

ՓՈՍՏԱՏԱՐ - Էսօր ընդունելություն չի լինելո՞...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (*հանկարծակիհ է գալիս*): Ի՞նչ...

ՓՈՍՏԱՏԱՐ - Ասում եմ՝ ընդունելություն լինելո՞ է...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Չէ... Ես... Հիմա գնում եմ... Մարդ էր հարցնում...

Արխիվարքուսը տեղից վեր է կենում: Ապակե տարան դնում է արքուի վրա: Աքոռի ոտքերի մոտ ընկած կափարիչը փակելու, այլ կերպ ասած՝ պահածոյացնելու համար նախատեսված սարքը վերցնում, դնում է տարայի բերանին ու սկսում է պտտել, պահածոյացնել:

ՓՈՍՏԱՏԱՐ - Հա...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ներկայացածվ...

ՓՈՍՏԱՏԱՐ - Չէ, բայց ոնց որ Պավլիկ Մորոզովն էր...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (*փոթէկալով*): Ո՞վ էր...

ՓՈՍՏԱՏԱՐ - Են, էլի... Պավլիկ Մորոզովը...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Դու դրան որտեղից գիտես...

ՓՈՍՏԱՏԱՐ - Մոռանո՞ւմ ես՝ ով եմ, ինչ մասնագիտություն ունեմ: Մեռա դրանց նամակներն ու մատնագրերը տանել-բերելով...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Չէ, գծերի հավեսը չունեմ... Ասս՝ գնացել եմ, էստեղ չեմ...

ՓՈՍՏԱՏԱՐ - Իմացա, որ սերժանտի կոչում ես ստացել, շնորհավորում եմ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ծնորհակալ եմ... (*Շարունակում է լազերը պահածոյացնել:*)

Լվացքը մեքենայի ձայն:

ՓՈՍՏԱՏԱՐ - (*ցնցվում է*): Փաստորեն, դու չես... (*Ուեռուն նայում է Արխիվարիուսի դեմքին:*) Նկատի ունեի լվացքը...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (*քմծիծաղ է տալիս*): Ինձ էլ թվաց՝ դու ես...

ՓՈՍՏԱՏԱՐ - Լսիր, լվացք ասացի՝ հիշեցի... Ծննդականդ վերցրիր...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Չէ, չհասցրի... (*Պահածոյացված տարան մեկնում է Փոստատարին:*) Ըհը, պատրաստ է, վերցրու...

ՓՈՍՏԱՏԱՐ - Էս մեկն է...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Հա...

ՓՈՍՏԱՏԱՐ - Ուրիշ նամակ, փաստաթուղթ, մատնագիր, ուղերձ չկա՞...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Չէ, էսօր մեռած օր է...

ՓՈՍՏԱՏԱՐ - (*ժպիտով տարային նայելով*): Անձնական է, թե՛ պետական...

- ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Անձնական...**
- ՓՈՍՏԱՏԱՐ - (Ժպիտով):** Լսիր, էսօր մի նամակ եմ գտել, կարող է՝ քոնդ լինի...
- ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Դժվար, ես իմ նամակները ապահով պահում եմ...**
- ՓՈՍՏԱՏԱՐ - Համենայնդեպս,** կարդամ՝ լսի...
- ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Չէ, ժամանակ չունեմ, առանց էդ էլ շատ ուշացա... Վաղուց պետք է Մաշտոցի պողոտայում լինեի...**
- ՓՈՍՏԱՏԱՐ - Փակ է...**
- ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Գիտեմ...**
- ՓՈՍՏԱՏԱՐ - Էդ ուղղությամբ էսօր երկու նամակ ունեի, չկարողացա տեղ հասցնել:**
- ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ի՞նչ նամակներ էին:**
- ՓՈՍՏԱՏԱՐ - Մեկը հոր նամակն էր՝ ուղղված Պավլիկ Մորոզովին, մյուսը Պավլիկ Մորոզովի նամակն էր՝ ուղղված իր հորը... Հասկացար, էլի, նախագահին...**
- ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Կարդացել ես...**
- ՓՈՍՏԱՏԱՐ - Չէ... (Լվացքի մեքենայի ձայն:) Սկսվեց... Լավ, փոստը վերցնեմ, գնամ... (Ապակե տարան թևի տակ դնելով՝ դեպի դուռն է գնում: Կանգ է առնում, շրջվում է Արխիվարիուսի կողմը:)** Երբեք Մեռած նամակ ստացել ես...
- Լվացքի մեքենայի ձայն:**
- ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Ի՞նչ ես հիմար- իմար խոսում...**
- ՓՈՍՏԱՏԱՐ - Հա, մեկ էլ տեսար՝ կառավարությունը որոշում ընդունեց, որ վաղը չկա... Էսօրվա նման...**
- Արխիվարիուսը թեթևակի ժպտում է:**
- ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Մեծ մարդ ես՝ ա- պուշությունների ես հավատում...**
- ՓՈՍՏԱՏԱՐ - Ապուշություն չի... (Փոքր-ինչ հուզվելով:) Էսօր... է- սօր մորիցս նամակ եմ ստացել...**
- ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Բայց մայրդ...**
- ՓՈՍՏԱՏԱՐ - Հա, երկու տարի ա- ռաջ է մահացել... Հասկանո՞ւ ես... Երբ նամակը կարդացի...**
- Արխիվարիուսը ներողամտարաք թիրվացնում է Փոստատարի ու- սը:**

ՓՈՍՏԱՏԱՐ - Ճիշտ եմ ասում...
ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Հաջողություն...

Արխիվարիուսը դուրս է գնում:
**ՓՈՍՏԱՏԱՐԸ շտապում է նրա
 և տևկից:**

ՓՈՍՏԱՏԱՐ - Չես հավատում... Չես հավատում... Որ տուն գաս, հետդ հաց բեր, տղաս... (Կանգ է առնում: Արխիվարիուսը անհետացել է:) Չլսեց... Ախր, էս նամակը հաստատ իրան էր հասցեագրված... (Փոքր-ինչ պաթետիկ:) Սիրելի՞ս, վաղը գարուն է: Եղ գարունը դու ես բերել ինձ համար:

ՓՈՍՏԱՏԱՐԸ պայուսակի պարունակությունը շուր է տալիս հատակին: Պայուսակից սպիտակ բմբուճեր են քափում: Բմբուճերի առատությունից տեղանքը ևս մեկ անգամ սպիտակում է: ՓՈՍՏԱՏԱՐԸ դուրս է գնում: Տարածքը հայտնվում է լուսային 3D կոմտրաժուրի մեջ: Պահակը տեղանքում է, քայլ անշարժ: Սիրյան ցուցանատը տնկած աջ ձեռքն է շարժվում, ասես ինչ-որ մեկին ճանապարհ է ցույց տալիս: Լվացքի աշխատող մեքենայի անտանելի քարձը ձայն, որն ուղեկցվում է հեռուստահաղորդումներին հատուկ հնչյուններով: Ազրեսիվ գովազդի աղմուկ: Ալիքները փոփոխվելով՝ կանգ են առնում մեկի վրա:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - Գովազդ...
 Պավլիկ Մորոզով... Անտեսանելի գովազդ... Պավլիկ Մորոզով...
 Չդադարող գովազդ... Հնդմիշտ՝ Պավլիկ Մորոզով... Եղանակի տեսություն՝ Պավլիկ Մորոզով...

Հեռուստացույցի ալիքները փոփոխվելով՝ կանգ են առնում մեկի վրա:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - ...Հուրեր:
 Այսօր, մարտի մեկին, մեր բազմաչարչար երկրի պոպոք Կառավարությունը Հայոց Մեծ Եղեռնի անվան հրապարակ կառուցելու որոշում ընդունեց... Հրապարակը կառուցվելու է Մաշտոցի անվան պողոտայի և Լուսավորչի փողոցի հատման կետում...

Լվացքի մեքենայի ձայն: Հեռուստաալիքները փոփոխվում են: Ռադիոհամախականություններին հատուկ աղմուկ է լսվում:

ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - ...Մաշտոց-Լուսավորիչ պողոտաների հատման կետում խմբված ցուցարարների վրա կրակ...

Ռադիոալիքը խեղդվում է լվացքի մեքենայի և գովազդի ձայնների մեջ: Սիրնում է հեռուստացույցը:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - ...Հայրերի և որդիների բազմադարյա խնդիրը մեկընդմիշտ լուծելու համար առաջարկում եմ Ազգային Ժողովում օրինագիծ ընդունել,

ըստ որի յուրաքանչյուր մարդ, ծնվելոց հետո, ձկան նման, պարտավոր է մոռանալ իր ծնող-ներին...

Լվացքի մեքենայի ճայն: Հեռուստավալիքը փոխվում է: Ռադիոալիքը վերականգնվում է:

ՈԱԴԻՌԱՎՈՐԴԱՎԱՐԻ ԶԱՅՆ -
...Ցուցարարները ետ են քաշվել, դեպի քաղաքապետարանի շենքի մոտ տեղակայված օսարերկյա դեսպանատներին հարող տարածք: Կան զոհեր և...

Ռադիոալիքը խեղդվում է լվացքի մեքենայի և գովազդի ճայների մեջ: Լվացքի մեքենայի ճայնն անտաճելի է դառնում և նմանվում է կրակահերքի: Լուսային կոնտրաժուրը թռռում է: Անհույս խուճապն ուղեկցվում է հեռուստահաղորդավարի ազրեսիլ գոռգոռոցով:

լուրեր Մաշտոց-Լուսավորիչ խաչմերուկից...

Ռադիոալիքը խեղդվում է լվացքի մեքենայի և գովազդի ճայների մեջ: Լվացքի մեքենայի ճայնն անտաճելի է դառնում և նմանվում է կրակահերքի: Լուսային կոնտրաժուրը թռռում է: Անհույս խուճապն ուղեկցվում է հեռուստահաղորդավարի ազրեսիլ գոռգոռոցով:

Ուժգին պայքչուն: Խավարում: Վառ լույս: Արխիվարիուսը կուչ է եկել կոմոդի չեղած դարակների հատվածում:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (զլուխը բռնելով):

Հետո ինչ է կատարվում... Որտեղի եմ ես... Ո՞վ եմ ես... (Լվացքի մեքենայի ճայն:) Ծննդականս... Երեք տարի առաջ հայրս խելագարության նոպայի մեջ պատուց... Նոպա... Հետո նամակ էր գրել... Հոր նամակը՝ որդուն... Հոր նամակը՝ որդուն... Որդի բառը, լավ երևում էր, հայրը ջնջել էր... Նամակում ասում էր, որ ինքը ինձ չի ծնել... Թո ծնողը... Ասում էր՝ քեզ ծննդական պետք չէ, դու չկաս, գոյություն չունես... Չես էլ ունեցել... Ինչի՞... Ի՞նչ էի արել... Ընդամենը՝ իմ գործը... Բա ո՞նց չանեի... Հատուկ Նախագահականից էր հրամանն իշեցվել... (Լվացքի մեքենայի ճայն:) Ասենք, ինձ ո՞վ էր բանի տեղ

ՀԱԴԻՌԱՎԱՐԻ ԶԱՅՆ - Պաշտոնական հայտարարություն... Մեր պոպոր Կառավարության հրամանով մարտի մեկը հայտարարվել է չեղյալ օր: Այդ օրվա հետ առնչություն ունեցող բոլոր անձանց նամակները, փաստաթղթերը և հրամանները համարվում են մեռած...

Լվացքի մեքենայի ճայն: Ռադիոալիքը վերականգնվում է:

ՈԱԴԻՌԱՎՈՐԴԱՎԱՐԻ ԶԱՅՆ -
...Եթե ժամանակին հազար ինն հարյուր տասնինգ թվականի Հայոց Մեծ Եղեռնը դատապարտվեր, կարծում եմ, Հրեական Ողջակիզումը չէր լինի... (Լվացքի մեքենայի ճայն:) Ծտապ

դնում... Արածս էլ մի կարևոր բան լինե՞ր... Դրանց հրամանով մի քանիսի ծննդականները գտեցի լվացքի մեքենայի մեջ, էնքան ֆոռացրի՝ մինչև պատառութվեցին, վերացան... Ո՞ւմն էին էղ ծննդականները... Զգիտեմ...

Անսպասելի միանում է հեռուստացույցը:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - Գովազդ...
Պավլիկ Մորոզով... Անտեսանելի գովազդ... Պավլիկ Մորոզով...

Արխիվարիուսը նյարդայնացած Ռուբիկ-կուբիկն է պտտում:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Էս ո՞նց են անջատում...

Ազրեսիվ գովազդը շարունակվում, հալածում է Արխիվարիուսին:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - Չղադարող՝ գովազդ՝ ընդմիշտ Պավլիկ Մորոզով... Եղանակի տեսություն՝ Պավլիկ Մորոզով...

Բարկացած Արխիվարիուսը շարունակում է Ռուբիկ-կուբիկը անխնա շուտումուտ տալ:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Հերիք է, վերջ տվեք... Վերջ տվեք...

Ազրեսիվ գովազդը շարունակվում, հալածում է Արխիվարիուսին:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻ ՁԱՅՆ - Գովազդ...

Սուրբ Պավլիկ Մորոզովի տոն...
Համընդհանուր գովազդ... Պավլիկ Մորոզով...

Արխիվարիուսը շարունակում է Ռուբիկ-կուբիկը անխնա շուտումուտ տալ: Լվացքի մեքենայի անտանելի դրդոց...

Լվացքի մեքենայի դրդոց...

Լվացքի մեքենայի դրդոց...

Լվացքի մեքենայի դրդոց...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Վերջ տվեք...
(Հուսահատ ծչում է:) Մի կրակեք... Դուռը բացեք... Մի կրակեք... Մի կրակե՞ք...

Գովազդն անսպասելի անջատվում է: Արխիվարիուսը հևասպառ է ու ընկնված: Հանկարծակի լուրջում:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Մի կրակեք...
(Թևաթափ, անուժ:) Դուռը... Բացեք...

Անշարժ կանգնած Պահակը հանկարծակի ակտիվանում, կոմոդի վրայից ճանճասպանը վերցնում, հրացանի նման պահում է Արխիվարիուսի վրա:

ՊԱՀԱԿ - Կանգնիր, թե չէ կրակեմ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - (ցնցվում, հանկարծակիի է գալիս): Հայրիկ

ջան... (*Ուրախ:*) Հայրիկ ջան, ես եմ, դուռը բաց...

ՊԱՀԱԿ - Ոչ մի դեպքում... Շարքային...

ԱՐԻՎՎԱՐԻՈՒՄ - (*ընդհատում է:*) Սրբեն սերժանտ եմ...

ՊԱՀԱԿ - Ի՞նչ ես...

ԱՐԻՎՎԱՐԻՈՒՄ - Տղադ եմ... Հայրիկ ջան... Դուռը բաց...

ՊԱՀԱԿ - Ի՞նչ ես ուզում...

ԱՐԻՎՎԱՐԻՈՒՄ - (*կակազում է:*) Ծ... Ծծծննդականս պիտի վերցնեմ:

ՊԱՀԱԿ - Մոռացիր, դու ծննդական չունես...

Դադար:

ԱՐԻՎՎԱՐԻՈՒՄ - (*ականջ է դնում:*) Հայրիկ ջան...

ՊԱՀԱԿ - Համարիր՝ խոլ եմ, չեմ լսում... Համ է, ես տղա չունեմ...

ԱՐԻՎՎԱՐԻՈՒՄ - Լսիր, հայրիկ ջան, խնդրում եմ, դուռը բաց...

ՊԱՀԱԿ - Էստեղ մարդ չկա...

ԱՐԻՎՎԱՐԻՈՒՄ - Հայրիկ ջան... (*Լացը հազիկ զսպելով:*) Հայ-րիկ ջան...

ՊԱՀԱԿ - Ի՞նչ ես կպել, հայրիկ, հա, հայրիկ...

ԱՐԻՎՎԱՐԻՈՒՄ - Բա ի՞նչ ասեմ, մայրիկ...

ՊԱՀԱԿ - Զէ մի չէ՝ Անգլիայի թագուի հի...

ԱՐԻՎՎԱՐԻՈՒՄ - Մայրիկ ջան, դուռը բաց...

ՊԱՀԱԿ - Գնա էնտեղ, որտեղից եկել ես...

ԱՐԻՎՎԱՐԻՈՒՄ - Կրակում են...

ՊԱՀԱԿ - Նախագահ հորդ, պապիկիդ կամ տատիկիդ դիմիր...

ԱՐԻՎՎԱՐԻՈՒՄ - Ինձ կսպանեն...

(Դողալով, համարյա արտասվելով:) Պարոն սպարապետ, գորքերի գերագույն հրամանատար, ընկեր կաթողիկոս, պարոն ծովակալ...

ՊԱՀԱԿ - Ձե՞ո ես առնում, քսան տարեկան աղմիրալ որտեղի ես տեսել...

ԱՐԻՎՎԱՐԻՈՒՄ - (*ափերից դուրս է գալիս:*) Պապ, դու գիծ ես...

ՊԱՀԱԿ - Հա, բա ի՞նչ եմ... (*Ծաղրական:*) Երեք տարի առաջ խելագարության նոպա եմ ունեցել, ծննդականդ եմ պատռել... Քանի տարեկան ես...

ԱՐԻՎՎԱՐԻՈՒՄ - Զգիտեմ... Երևի տասնինը...

ՊԱՀԱԿ - Փաստորեն, քեզ մի տարեկանում եմ ունեցել...

ԱՐԻՎՎԱՐԻՈՒՄ - Պապ...

Պահակը դեպի կոմողն է գնում: ճանճապան-իրացանը դմում է կոմողի վրա: Կոմողի վերևի դարակը բացում, երկու բարձ է հանում, վերադառնում, մեկը պահում է իր մոտ, մյուսը նետում է Արխիվարիուսին:

ՊԱՀԱԿ - Առ...

ԱՐԻՎՎԱՐԻՈՒՄ - Ի՞նչ ես անում...

ՊԱՀԱԿ - Ուրիշի գլխի տակ փափուկ բարձ կդնես...

ԱՐԻՎՎԱՐԻՈՒՄ - Պապ...

ՊԱՀԱԿ - (*ծաղրական:*) Ես քո սիրող մայրն եմ...

ԱՐԽՎԱՐԻՈՒՄ - Մամ, դուռը
բաց...

ՊԱՀԱԿ - ...Սիրելի մայրդ, ում երկու
տարի առաջ մատնեցիր... (Բար-
ձով հարվածում է Արխիվարիու-
սին:)

ԱՐԽՎԱՐԻՈՒՄ - Ո՞ւմ մատնեցի...

ՊԱՀԱԿ - Ձեր մի թափի... Նախա-
գահին բաց նամակ են էր գրել առ
այն, որ ես՝ քո սիրող հայրը, այն-
քան եմ լկտիացել, որ արդեն մի-
տինգների եմ մասնակցում ու
համարձակվել եմ Նրան.... Նրա՞ն
չընտրել...

ԱՐԽՎԱՐԻՈՒՄ - Պապ, դու չգի-
տես, թե ինչ ժամանակներում
ենք ապրում... (Բարձր շպրտում է
Պահակի վրա:)

ՊԱՀԱԿ - Իմ նամակը ստացել ես...

ԱՐԽՎԱՐԻՈՒՄ - (գլուխը կախում
է): Չէ...

ՊԱՀԱԿ - Ստում ես... (Բարձով
խփում է:) Հոր նամակը՝ որդուն...

ԱՐԽՎԱՐԻՈՒՄ - Զեմ ստում...
(Բարձով պատասխան հարված է
հասցնում:)

ՊԱՀԱԿ - Դու գիտե՞ս՝ ինչ է Մեռած
նամակը...

Ներս է մտնում Փոստատարը:
Նրա ներկայությունը Պահակն ու
Արխիվարիուսը չեն նկատում, ե-
թե նույնիսկ նա խոսում է:

ՓՈՍՏԱՏԱՐ - Էսօր մի նամակ կար-
դացի: Փոքրիկ երկտող էր՝ ար-
խիկ էին ուղարկել... Սիրուն
մեսից էր...

ԱՐԽՎԱՐԻՈՒՄ - Մեռած նամակ...

Լսել եմ, բայց...

ՊԱՀԱԿ - (բարձով խփում է): Բայց
մեռած նամակից բացի ուրիշ մի
ահավոր բան կա...

Պահակն ու Արխիվարիուսը
սկսում են բարձերով կռվել:

ԱՐԽՎԱՐԻՈՒՄ - Երբ մեռած նա-
մակը ստանում ես ու...

ՊԱՀԱԿ - (հարվածով ընդհատում
է): Ոչ... Երբ պատասխանն է մե-
ռած...

ԱՐԽՎԱՐԻՈՒՄ - Մեռածների
փաստաթղթերի հետ շատ եմ
գործ ունեցել, բայց...

ՊԱՀԱԿ - (ընդհատում է): Մարդը
մեռած չէ էնքան ժամանակ,
մինչև նրա փաստաթղթերը, նա-
մակները կան... (Բարձով հար-
վածում է:) Չեն լվացվել...

Լվացքի մեքենայի անտանելի
բարձր ճայն:

ԱՐԽՎԱՐԻՈՒՄ - Էլի սկսեցին...

ՊԱՀԱԿ - Լսիր, դու մեր տան տեղը
որտեղից իմացար...

ԱՐԽՎԱՐԻՈՒՄ - Կրակում էին...
Մի կողմում ժողովուրդն էր, մյու-
սում՝ մենք...

ՊԱՀԱԿ - Ո՞նց իմացար...

ԱՐԽՎԱՐԻՈՒՄ - Փախա... (Ղա-
դար:) Ծենք էր... Մուտքը մոլթ-
մութ էր... Աստիճաններով վերև
վազեցի... Դոներն էի ծեծում...
Փակ էին... Ոչ մի ճայն չկար...

Ոնց որ գերեզմանոց լիներ... Ինձ թվաց, թե էդ շենքում եղել եմ... Բայց ո՞ւմ հետ...

Քարձերով կրիվը շարունակվում է:

ՓՈՍՏԱՏԱՐ - Սիրելիս, վաղը գարուն է...

Լվացքի մեքենայի ճայն:

Լվացքի մեքենայի ճայն:

Լվացքի մեքենայի ճայն:

Պահակի ու Արխիվարիուսի կրիվը շարունակվում է: Քարձերը պատռվում են: Պարունակությունը քափվում, խառնվում է հատակի բնորոշերին: Թերե քանի է բարձրանում: Փոստատարը դեպի կոմոդն է գնում, սկսում է կոմոդի անկյունում ամրացված մետաղյա բռնակը պտտել: Պտտելուն զուգընթաց, կինոնատոքաֆիական ռապիդի մեջ, Արխիվարիուսը և Պահակը իրար հետ կռվելով, զգվածվելով, բնրութերի մեջ քափալ տալով, դանդաղորեն ետ-ետ՝ դեպի կոմոդն են գնում: Ֆանտասմագորիկ մքնողութ:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Ո՞ւմ էի հանդիպել...

ՓՈՍՏԱՏԱՐ - Սիրելիս, վաղը գարուն է, էդ գարունը դու ես բերել ինձ համար...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - (ետ-ետ գնալով, կռվելով): Դուող չէր բացում...

ՊԱՀԱԿ - (ետ-ետ գնալով, կռվելով): Ո՞վ, սիրած աղջիկդ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - (ետ-ետ գնալով, կռվելով): Չէ... Մայրս...

ՊԱՀԱԿ - (ետ-ետ գնալով, կռվելով): Մայրդ վաղուց չկա... Արխիվում պառկած է... Մատնագրերի բաժնում...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - (ետ-ետ գնալով, կռվելով): Դրսում մսաղաց էր...

ՊԱՀԱԿ - (ետ-ետ գնալով, կռվելով): Մսաղաց... Էն աղջիկն էլ մսաղացին զոհ գնաց...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - (ետ-ետ գնալով, կռվելով): Զգիտեմ... Լուր չունեմ... (Դադար:) Հա... Մոտեցա էս դրանը, զանգը տվեցի...

ՊԱՀԱԿ - Ես զանգ չունեմ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - Խոսեցի՞ր...

ՊԱՀԱԿ - (ետ-ետ գնալով): Շան լակոտ...

Փոստատարը շարունակում է բռնակը պտտել:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - (ետ-ետ գնալով): Զայնդ նման էր հորս ծայնին...

ՊԱՀԱԿ - (ետ-ետ գնալով): Մ՞նրդ...

ՓՈՍՏԱՏԱՐ - (բռնակը պտտելով): Որ տուն զաս, հետդ հաց բեր, տղաս...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ - (ետ-ետ գնալով): Որ տուն զաս, հետդ հաց բեր, տղաս...

ՊԱՀԱԿ - (ետ-ետ գնալով):/ Ես քո սիրող մայրն եմ, տղաս... (Անհնա հարվածելով:) Զգոյշ

կլինես... Քեզ լավ կնայես... Հան-
կարծ քեզ չկպնի... Դրսում կրա-
կում են, տղաս...

Լվացքի մեքենայի ձայն:

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (Ետ-ետ գնալով)
Չէ, մամ, էսօր սպանում էլ են...

ՊԱՀԱԿ - (Ետ-ետ գնալով): Այսօր
ամսի քանիս է...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (Ետ-ետ գնալով):
Ապրիլի քսանչորսը...

ՊԱՀԱԿ - (Ետ-ետ գնալով): Ո՞նց,
մարտի մեկը չէ...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (Ետ-ետ գնալով):
Պապ, դու չէիր ասում, երբ սպա-
նում են, միշտ էլ ապրիլի քսան-
չորսն է...

ՊԱՀԱԿ - (Ետ-ետ սահելով):
Ծննդականդ ո՞լր է...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ-Զգիտեմ...

ՊԱՀԱԿ - Լվացել ես...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Զեմ իիշում...

**ՊԱՀԱԿ - Այսօր Մարտի մեկի Ապ-
րիլի քսանչորսն է... (Գրկում է:)**
Պավլիկ Մորոզով, տղաս...

**Պահակն ու Արխիվարիուսը կո-
մոդի մոտ հասնելով՝ դանդաղ կո-
մոդի վրա են բարձրանում, ասես
կառափնարան են բարձրանում:**

**ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - Երեք տարի ա-
ռաջ հայրս խելագարության նո-
պա ունեցավ...**

Լվացքի մեքենայի ձայն:

ՊԱՀԱԿ - Դու... Մարդ չես...

**ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (ուժասպառ, ծեծ-
ված, մեռնողի նման):** Պապ, դու-
ռը բաց...

**ՊԱՀԱԿ - (տեղավորում է կոմոդի
վրա):** ...Մեռած նամակ ես...

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՄ - (հևալով): Դու
ինձ չես կարող ջնջել...

**ՊԱՀԱԿ - Դու արխիվի պատճեն
են... Կարդացվող ուսադիր...
Լվացքի ծննդական...**

Ստոպ: Տարածքը հայտնվում է
լուսային 3D կոնտրաժուրի մեջ:
Արխիվարիուսն ու Պահակը կո-
մոդի վրա են: Փոստատարը դա-
դարեցնում է բռնակը պտտել:
Զամին վերանում է, բայց բրուլ-
մերը շարունակում են օդում խա-
ղալ:

**ՓՈՍՏԱՏԱՐԻ ՁԱՅՆ - Սիրելիս, վա-
ղը գարուն է, էղ գարունը դու ես
բերել ինձ համար...**

Արձագանք:

Արձագանք:

Արձագանք:

ԶԱՐԱՑՈՒՄ



ՆԻՆԱ ՄԱԶՈՒՐ

ԱՄՈԿ (P. S.)

**Ըստ Ստեֆան Ցվեյգի համանուն նովելի
Պիես մեկ դերասանի համար**

Սենյակ (սև կամ սպիտակ «կարինետ»)՝ սեղան, աթոռ, հնարավոր է՝ մահ-
ճակալ: Ամենուրեք նավերի մանրակերտեր են: Մյուս սենյակ տանող են-
բարձրվող դուռը վարագույրով փակ է:

**ՆԱ - (ինչ-որ բան է սարքում սեղանի
մոտ նստած):** Պարտք, պարտա-
կանություն... Օգ-նել... Այս բառով
դուք ստիպում եք շատախոսել: Է,
չէ, տիրուիհս, շնորհակալ եմ:
Խնդրում եմ, չերևակայեք, որ ավե-
լի հեշտ է ձեր առջև բացել իմ ներ-
քին օրգանները՝ մինչև աղիքներս:
Կյանքը ավերված է ու ոչ մեկը այն
չի վերականգնի: Լսո՞ւ եք, տիրու-
իի: (Մոտենում է վարագույրին, ա-
կանջ է դնում:)

**Երաժշտություն է հնչում: Նա գոհ
ժապում է:**

ՆԱ - Ուրախ եմ, որ ինձ լսում եք:
(Ղեմքը մոհայլվում է:) Միայն այս ե-
րաժշտությունը, դուք մի բառ չեք
ասի: (Դադար: Դահլիճին.) Իսկ
ձեզ շնորհակալություն՝ ինձ այցե-
լելու ձեր սիրալիր ցանկության հա-
մար: Արդեն ծանոթներ եմ գտել իմ
նավախցիկում: (Ձեռքի շարժումով
ընդգրկում է սենյակը: Դեպի վա-
րագույրը:) Երկու-երեք շիշ իին ու
բարի վիսկին էլ որ լիներ...

Դռան ետևից անսպասելի ուրախ մեղեղի է հնչում:

ՆԱ - Դե լավ, տիրուիի, մի նեղվեք:
Վաղեմի ընկեր ունեմ, ում, ցա-
վոք, ժամանակին չեմ դիմել...
(Բացում, նայում է սեղանի դա-
րակի մեջ:) Իմ փառապանծ
բրաունինգը... Սա ցանկացած
շատախոսությունից ավելի լավ
կօգնի... (Դեպի դուռը:) Չեր կա-
նացի շատախոսությունից ավելի
քան լավ... (Մտախոհ:) Թեև... քեզ
շատախոս անվանել՝ դժվար է:
(Դահլիճին.) Դուք չեք տեսել նրա
դեմքը: Վախենո՞ւմ եք նայել:
Ճիշտ եք վարվում: Կան այդպիսի
դեմքեր՝ անթափանց... Նրանց
գեղեցկությունը տարիքից կախում
չունի: Մոխրագոյն, շատ հան-
գիստ աչքերը, բայց... որոնք կա-
րող են բաքցնել կրակոտ
հայացքը... Բարակ, ամուր սեղմ-
ված շուրթեր, որոնք կարողանում
են պահել գաղտնիքը... (Դեպի
դուռը:) Չէ որ դու կարողանում ես
պահել գաղտնիքը:

Լուրջում:

ՆԱ - (բացելով հին լրագիրը): Իսկ
հետո կգրեն. «Մեծ դժվարութ-
յամբ փրկեցին...»: (Հնդհատում է
ընթերցումը:) Կամ էլ սա՝ «Լա-
վահանգստում հոսանքը ափ է
դուրս բերել անհայտ քառասուն-
ամյա տղամարդու դիակ»: Դիակ:
(Նայում է հայելու մեջ:) Դիակ.
Հա-հա-հա... (Շարունակելով

գործը:) Հիմա հասկանում եք...
հասկանո՞ւմ եք... ինչու չեմ կարող
տեսնել մարդկանց, տանել չեմ
կարող նրանց ծիծաղը... Երբ
նրանք տրվում են սիրախաղի ու
մերձեցման են տենչում: Որով-
հետև այնտեղ՝ նավախցիկում,
թեյի ու կոկոսյան ընկոյզի պար-
կերի արանքում... Իսկ այստեղ
նվազում են վալս կամ տանգո...

Հնչում է տանգը:

ՆԱ - Խնդրեմ: (Դեպի դուռը:) Գի-
տեմ, գիտեմ, ինչ ես ուզում ինձ-
նից: Գիտեմ, ես դեռ պարտք եմ...
Բայց երբ է ավարտվում այդ
պարտքը: Երևի այնտեղ, որտեղ
մեր ուժերի սահմանագիծն է...

Տանգոյին փոխարինում է վալսը:

ՆԱ - Պարահանդես... պարահան-
դես: Հիշո՞ւմ ես, քո դեղին պա-
րազեստը լայն բացվածքով...
Սեղ, սքանչելի ուսերը ողորկ
փայլում են: Փղոսկրի պես... Իսկ
այդ ժահտը՝ սիրալիր ու սառը-
քաղաքավարի, որ կեղծ է, սար-
քովի ու վիրտուոզ խաղացկուն:
(Դեպի դուռը՝ զայրույթով ու
պոռթկուն:) Ինչպես կարողացար
այդպես ժպտալ: Այդպես ան-
փոյթ խաղալ հովհարով՝ հուզ-
մունքից այն ձմրթելու փոխարեն:
Օտար մեկը տառապում է, դողում
սպասումից՝ չէ որ շաբաթ ժամա-
նելու է նավը, իսկ նա հանգիստ
պարում է սպայի գրկում...

Երաժշտությունը լուսն է:

ՆԱ - Սպա... Ոչ, ինքը չէր: Այն մեկը, իսկականը, շատ ջահել էր: Կեսերեխա... Մաքուր, նուրբ դեմք... Շատ շվիթահար, շատ գունատ... Նա այնպես էր ճգնում թաքցնել հուզմունքը, բայց ակնհայտ էր, թե ինչ ցավ է պատառուսում նրա սիրտը, երբ...

Լավում են «Ուրբարեմի» առաջին հնչյունները: Նա ձեռքի շարժումով լացնում է երաժշտությունը:

ՆԱ - Սպասիր: Ավելի լավ է բացատրիր ինձ, թե ինչ էիր մտածում, երբ հայտնվեցիր այդ անհիջյալ ծակուում, որտեղ դժբախտ եվրոպացի բժիշկը, օրեր շարունակ նստած տանը իր դեղնադեմ կանանց ու իր շոտլանդական վիսկիի հետ, մաշվում է հայրենիքի անզոր կարոտից: Ինչպես կարողացար պաղ անտարբերությամբ նրան գործարք առաջարկել, երբ խոսքը կյանքի ու մահվան մասին էր... Լո՞ւմ ես: Ես պարզորոշ տեսնում եմ այդ տեսարանը: Դու՝ գոռողամիտ, վուալի տակից՝ «Ինչ հարմարավետ է ձեզ մոտ, դուկուրո: Ինչպիսի սքանչելիք՝ գրքեր: Ա՛հ, դուք ֆլորեր ունեք: Իսկ ես անցնում էի այս կողմերով և...»: Զարմանալի չէ, որ նա կարծ կապեց քո շատախոս, անտարբեր տոնն ու տեղը դրեց քեզ. «Հանեք վուալը, հանգիստ թողեք գրքերն ու այդ ձևերը: Անկեղծ խոսենք: Դուք ուզում եք, որ ձեզ ազատեմ ուշաթափություննե-

րից ու սրտխառնոցից՝ վերացնելով պատճառը»:
Դու ամեն ինչ էիր հաշվարկել՝ և գումարը, և՝ վճարման ձևը, ինչը կստիպեր նրան մեկնել այստեղից: Դու նրան գնահատեցիր ու գնեցիր: Ինչպես եմ պատկերացնում այդ ամուր սեղմված բերանը, որ չի ցանկանում խնդրել: Խոնարիվել չցանկացող այդ գոռող ծակատը... Բայց գոլֆ խաղալով երեխաներ չեն ծնվում, այդպես չէ...

Դուան եւուից՝ մեղմ երաժշտություն:

ՆԱ - Այո, այո... (Գոռոցով խլացնում է երաժշտությունը և ավելի է «ոգևորվում»:) Այն: Դու պառկած էիր անկողնում, տղամարդու հետ, գուցե տնքում էիր հածոյթից, ու ձեր մարմիններն այնպես էին ծովվել իրար, ինչպես շուրթերը՝ համբուրվելիս...

Երաժշտությունը լընդիատվում է, նրա վերջին բառերն անսպասելի բարձր են հնչում:

ՆԱ - Ինչ էր մնում խեղծ բժշկին՝ ընդամենը ցանկանալ հաղթել քո հապատությունը: Ինչ: (Մոտենում է դրանը:) Ասում ես՝ նա խենթացել էր քեզ ստորացնելու ցանկությունից: Թող, ի սեր աստծո: Վերջին երկու բառը պատրանք է, քո և նրա պատրանքը: Պարզապես՝ խենթացել էր ցանկությունից: Դու՝ ատելությամբ ու

արհամարհանքով լեցուն, որ ծաղրում էիր քո գաղտնիքով, դեռ չինացած կրքի հիշեցումով ու նա՝ միայնակ, աշխարհից կտրված, յոթ տարի առանց սպիտակամորթ կնոջ... Նա էլ ասաց՝ «Միայն՝ ոչ փողով»:

**Դռան ետևից հճում է Ռավելի
«Բոլերոն»:**

ԱԱ - Վերջ տուր: Պետք չէ: (Փակում է ականջները: Հետո կտրուկ ձեռքերն իջեցնում ու դիմում է դահլիճին:) Դուք գիտե՞ք, ինչ է «ամոկը»: Դա ավելին է, քան արբեցումը, դա կատաղության տեսակ է: Նստած է մեկը, հասարակ ու բարեհոգի մի մարդ, ու հանկարծ տեղից վեր է թռչում, ձանկում է դանակն ու դրւում է թռնում փողոց... Ու վազում է՝ ուր աչքը կտրի, առաջ ու առաջ... չիմանալով՝ ուր: Նրան կանգնեցնող ուժ չկա: Մարդիկ հեռու են փախչում, գոռալով՝ «Ամոկ: Ամոկ»: Իսկ նա սլանում է՝ սպանելով ձանապարհին հանդիպողներին, փրփրակալած բերանով, մինչև անշունչ չի տապալվում գետնին...

Հասնել, բռնել նրան, այդ կնոջը... խոսել հետը... ներողություն խնդրել... Օգնել...

«Բոլերոն» լուս է: Նա մոտենում է սեղանին, վերցնում է հերքական նավակն ու ցուցադրում է հանդիսատեսին:

ԱԱ - Իսկ նավակը... ահա: Երեք օ-

րից կժամանի: Իսկ ով է նավակի վրա գտնվում: Իսկ նավակում լուրջ մարդ է, խոշոր գործարար, հինգ ամիս Ամերիկայում էր ու վերջապես եկել է կնոջ ետևից: Մի խոսքով՝ ամուսինը: (Լրջանալով:) Ամուսինը... (Նայում է հայելու մեջ:)

Դեպի դրուք:

ԱԱ - Գաղտնիք... Հետո՞ ինչ, որ գաղտնիք... Մի՞թե չես հասկանում, որ ոչինչ գաղտնի չի մնում: Ծեծված ծշմարտություն է: Հոյի է, երկու կամ երեք ամիս, ոչ ավելի: Աչքերը՝ մոխրագույն պողպատ, ոռունգերը դողում են զայրույթից... Բայց ինչ հրաշք հանգստություն, ինչպիսի անհոգ պատասխան, այն է՝ բարձրածայն, որ բոլորը լսեն. «Ա՞հ, բժիշկ, դուք հիշել եք դեղատոմսի մասին: Ա՞խ, այս գիտունները...»: Ու բոլորը լսեցին ու հավատացին, որ այդ խենթ վազքը դահլիճի մի ծայրից մյուսը՝ նրա ետևից, բացատրվելու համար, ընդամենը մոռացկու էսկուլապի տարօրինակությունն է: (Դահլիճին, վստահող շեշտով:) Կարելի է հարյուրերորդ անգամ մոտենալ նրա դռանը, ու նա կվանի, կըշի ինչպես շանը: Ինչ եք ասում: Բրաունինգը սեղանի դարակո՞ւմ է: Բայց ես բացատրեցի ծեզ՝ վաղը չէ մյուս օրը կժամանի նավը: Հենց այդ նավը: Իսկ օգնության պարտավորությունը... Այդ անհծված պարտքը: Մի՞թե

այդ կինը կդիմանա իր նվաստացմանը:

Նուան ետևի՝ ժամացույցի զանգեր:

Ինչ-ինչ... Գրություն: Իհարկե, իհարկե, դա ելք է... Խենթ, անհմաստ նամակ, ինչպես զառանցանք... Իսկ վերջում՝ «Սպասում եմ այստեղ ձեր ներումին: Եթե մինչև ժամը յոթը պատասխան չտանամ՝ կկրակեմ... ինձ»: Ու դու պատասխանեցիր: Այո, այո, պատասխանեցիր: Տառերն աչքիս դեմ պարում են չեմ կարողանում կարդալ... Գլուխ խոթում եմ ջրի տակ՝ իհմա լավ է: Ահա. «Ուշ է: Այստեղ չսպասեք: Գուցե դեռ ձեզ կկանչեմ...»: (Ղաղար:) Կանչեց... «Come quickly», - դողլալով ասած քո ծառան: Ես գիտեմ, այդ տեղացի մանչուկն էլ էր քեզ սիրում: Բոլորս էինք քեզ սիրում... (Կրքուտ:) Ինչպես թոյլ տվեցիր, որ հաշմեն քեզ... առաջին պատահած կեղտուտ պառավը... ինչ է, թե վախեցար բացահայտումից: Թե՞ մահից ավելի քիչ էիր վախենում, քան մարդուց, ով չխնայեց հպարտությունդ: Կամ... (Կամաց:) Այնուամենայնիվ, դու սիրում էիր ամուսնուրտ...

Կտրուկ:

ՆԱ. - Լոյսը վառեք: Լոյս: Այստեղ ամեն ինչ ծածկված է կեղտով: Մորֆի...

Նորից հնչում է «Ուքվիեմը»:

ՆԱ. - Թերթերը գրեցին. «Սրտի կաթված»: Ինչ կաթված: Միայն ապուշը կհավատար պաշտոնական վարկածին: Պետք չէ երևակայել, որ ամուսինները ապուշներ են... Մնում է միայն այս սև, երկարավոր առարկան... բարձել նավի վրա ու քայլել տախտակամածի վրա սև թևկապով: Ըեռու մնալով բոլորից, քայլել ետ ու առաջ, ետ ու առաջ... Ինչպես են գրում թերթերով՝ «Ներամփոփի, ողբացյալ դեմք...»: Ինչ տափակություն: (Լայում է հայելու մեջ:) Հալածվող ամոկը այդաիսի դեմք չի ունենում: (Դեպի դուռը:) Իհարկե, գիտեմ: «Գունատ, սփրինած, ակնոցի փայլատակող ապակիներով»... Ըետաքրքիր է, ընկնելուց ակնոցը ջարդվեց... (Անսպասելի նյարդային շեշտով դիմում է դահլիճին:) Պատկերացնո՞ւմ եք՝ ուշ երեկո, նավ, պարանե սանդրութք: Նավաստիները նավակն են իջեցնում... դագաղ: (Վերջին բառն ասում է մեծ դժվարությամբ:) Ամուսինը օգնում է նրանց: Հանկարծ ինչ-որ ծանր բան (հանդիսավոր շեշտով) վերսի տախտակամածից ընկավ ու իր հետ ջուրը տարավ նավաստիներին, ամուսնուն ու... ցինկե դագաղը: Պարզ է, որ դագաղը միանգամից իջավ հատակը: Փնտրեք, փնտրեք... «Ղծվարությամբ փրկեցին նավաստիներին ու հանգույցյալի ամուսնուն»: (Կարդում է հին լրագիրը: Քմծիծաղում է:) Փրկեցին... ամուսնուն

**Պատույտներ է անում սենյակով
մեկ:**

ԱԱ - Լրագրողները: Ի՞նչ գիտեն նրանք... Կամ թե սա... (*Նորից ծանկում է լրագիրը*): «...Քառասունամյա տղամարդու դիակը»: Առանց ակնոցի, նկատի ունեցեք: Քիչ քառասունամյա տղամարդիկ կան, միայն ինքը չէր... (*Կարկամում է*:)

Դեպի դուռը:

ԱԱ - Հա, մոռացել էի: Որ այստեղ մեկն էլ էր խառնված: Ում դու սիրում էիր: Նախկինում ատում էի նրան: Այո, այո, կարող էի նրան կտոր-կտոր անել: Իսկ հիմա... Չեմ կարող ասել, թե ինչպես եմ ուզում սիրել նրան... քանի որ դու ես նրան սիրել...

Ճաճկում է հայելին, նայում է իր արտացղանքին, հայելին շարտում է սեղանին, վերցնում է նավի մանրակերտը: Դեպի դասիինը:

ԱԱ - Դուք սիրո՞ւմ եք նավեր: (*Շուրջ նայելով*) Այո, իհարկե, նավախցիկը վատն է՝ ասես փոքր դագաղ լինի: Գիշերը մութ է ու լուտ... Ու տոթ: Սարսափելի տոթ է: Իսկ օդափոխիչը ստիպված անջատում եմ, այնպես է պտտվում ու ձոռում, ասես խենթացած չջղիկ լինի: (*Պտտվում է սենյակում*: Կանգ է առնում:) Փո-

խարենը գիշերը, տախտակամածի վրա...

Դեպի դուռը, որտեղից հնչում է Բողերոն:

ԱԱ - Դու չտեսար... ինչ գեղեցկություն է: Երկինքը փայլում է: Գլխավերնում Հարավային Խաչն է, ու տաք լուսը ջրի նման թափկում է ծեռքերիդ, ուսերիդ, քնքորեն ցողվում է գլխիդ... Ուզում ես պառկել ու նայել վերև... Բայց մահձակները հավաքված են ու ամայի տախտակամածի վրա մի հարմար տեղ չկա, որտեղ կարելի լիներ հանգստանալ ու երազել: Անգամ ծխել չի կարելի, լուցկին վառես՝ կրակը կլուսավորի մոայլ, ինչ-որ անմարդկային դեմք: (*Դահլիճին*.) Իսկ ներքնում... ներքնում՝ նավախցիկում, որտեղ թեյի ու կոկոսյան ընկույզների պարկերն են, դրված է նրա... Ես չեմ կարող մոտենալ, կողպած է: (*Գլխի շարժումով ցոյց է տալիս դուռը*:) Բայց զգում եմ, որ նա այստեղ է ու գիտեմ, թե ինչ է ուզում ինձնից... Ես գիտեմ, ես պարտք ունեմ տալու... (*Դեպի դուռը*:) Այո, այո, երդվում եմ: Ոչ ոք չի իմանա...

Սկսում է քանդել, ավերել նավերի մանրակերտերը, ջարդում է վերջինն ու բնկնում հատակին: «Բողերոն» լուս է: Լավում են տագնապի ազդանշաներ ու վազող մարդկանց ոտնաձայներ: Լույսը մարում է: Խավարի մեջ լսելի են դառնում ծովային ջրերի ծփանքը, ճայերի միջերը:

ԼԵՂԻ ԿԱՊՈՒԼԵՏ

Մոնողամա

Մենաստանի խոր՝ բարձր կամարներով: Խաչելությունն այնքան բարձր է կախված, որ երևում են միայն Հիսուսի ուռերք: Ներկայացման ընթացքում խաչելությունն ավելի վեր է բարձրանում, իսկ ավարտին այլևս տեսանելի չէ: Խցի ասկետիզմին հակառակած է մեծ, շրջանակով հայելին:

Միանձնուիու զգեստով կինը աղոթում է: Նա գեղեցիկ է ու երիտասարդ, մոտ 25-26 տարեկան:

ԿԻՆ - Տարօրինակ է, աղոթելուց հետո դժվար է բարձրածայն խոսելը՝ լեզուդ չի հնազանդվում... «Աղոթք կարելի է մտքում ստեղծել», - ասաց մայրապետը, երբ լուսության ուխտ էի ընդունում: Կամավոր էի ընդունում... (Մի պահ մտորում է:) Ես ամեն ինչ թողեցի այնտեղ՝ տանը. զգեստներս, սիրելի զարդերս, ամեն, ամեն ինչ... Ծառաներն ասես քարացել էին, երևի նման բան չէին սպասում սինյորա Կապուլետից: Բայց չէին էլ լալիս: Ո՞վ գիտե, գուցե թեթևացած շունչ քաշեցին... Միայն դայակն էր ողբում... «Բայց այդպես չի լինի, սինյորա: Ո՞ւմ եք մեզ թողնում: Ախր, մենաստան գնալը նույնն է, թե ողջ-ողջ գերեզմանում պառկել, մեր թանկագին աղջկա ետևից».... (Ափով փակում է բերանը:) Աստված իմ, Զուլիետ... (Մոտենում է հայելուն:) Ո՛չ, չմտածել, չիիշել...

Մայրապետն ասաց... բայց ինչ ասաց... ԱՇԽ, հա. «Դուստր իմ, հայելին հետդ վերցրու»: «Բայց կարելի՞ է»: «Լոռության ուխտը ծանր բեռ է: Թույլ եմ տալիս, վերցրու հայելին»: (Լայում է հայելու մեջ:) Ինչո՞ւ, ինչո՞ւ այդպես ասաց: Այս հայելին այնքան օտար է այստեղ՝ խաչելության ու աղոթքների մեջ... (Ծոյում է բրոնզե շրջանակը:) Ահա իմ արտացոլանքը: Միանձնուիու սև զգեստով այս գունատ կինը ես եմ: Ես՝ սինյորա Կապուլետը, հպարտ պատրիկուիին, Վերոնայի ամենահարուստ ու հայտնի քաղաքացիներից մեկի հարգարժան կինը... Ամուսինս... (Ցնցվում է:) Այդ ինչ ստվեր է: Այնտեղ՝ հայելու խորքում... Թվաց... ինչի՞ մասին էի խոսում քեզ հետ, հայելու այն կողմում ապրող գունատ մենուիի: Ամուսնուս մասին: Այդ, նա հրաշալի մարդ էր: Ինչո՞ւ եմ ա-

սում՝ «էր»: Նա կա, ապրում է առօք-փառոք: Իհարկե, մի քիչ լացեց, երբ... (Ինքն իրեն ընդհատում է:) Ոչ-ոչ, երբ ասացի, որ գնում եմ մենաստան, մի կաթիլ արցունք էլ չթափեց: Մտքով էլ չանցավ: Միայն հարցրեց. «Վերջնական է որոշումդ: Ամեն ինչ ես կշռադատել»: Ու նայեց ինձ... ասես հանցագործ էի:

(Պոռթկուն, հայելուն:) Ես հանցագործ եմ: Իսկ ինքը հանցանք չգործեց, երբ ամուսնացավ ինձ հետ: Ինքը՝ քառասուն, իսկ ես՝ տասներեք տարեկան: Այսօրվա պես եմ հիշում. ներս մտավ ու ասաց. «Զավակս, ձեր ծնողները համաձայնություն տվեցին մեր ամուսնությանը: Ես համոզված եմ, որ իրաշալի կին ու մայր կլինեք»: Նայեցի ծնողներիս՝ փայլում էին հպարտությունից, կատակ բան չէր, ինքը՝ սինյոր Կապովետն է ուզում բարեկամանալ իրենց հետ: Հետո նայեցին ապագա ամուսնու՝ խստաբար պարոնը ընդհանրապես փեսացուի տեսք չուներ: Իսկ ես նայեցի տասնհինգամյա Զուլիաննոյին, նրա հետ երեկ էի առաջին անգամ համբուրվել: Ու ես ասացի. «Պետք չէ, խնդրում եմ: Ես չեմ ուզում»: Այնպես կամաց ասացի, որ ոչ հայրս լսեց, ոչ՝ մայրս: Իսկ

ամբարտավան պարոնը լսեց, այն, լսեց, բայց լոեց... (Կամաց, անուժ:) Հետո՝ արցունքներ, հորս զայրույթը, շքեղ հարսանիք ու նորից արցունքներ: Անօգուտ արցունքներ, մորս անօգուտ խղճահարության նման: Հա, նա խղճում էր ինձ, խեղճը... Ինքը՝ այո... (Տագնապալի շուտասելուկով:) Նա կարող էր խղճալ, ես՝ ոչ: Աստված էր վկա, ես չէի կարող խղճալ: Իմ դեպքն ուրիշ էր: Ուրիշ ընտանիք: Ուրիշ ամուսին՝ ոչ մի նմանություն հորս հետ: Ուրիշ դուստր, ով ամենահեռավոր նմանություն չուներ ինձ հետ: Զուլիետը... նա շատ տարբեր էր, նման չէր ինձ, չէ, նման չէր: Գուցե՝ դեմքը, աչքերը, ձայնը նման էին: Բայց ոչ բնավորությամբ, ոչ էությամբ...

(Հուսահատ գոռում է հայելու մեջ:) Նա ինձ նման չէր: Դժվար էր նրա հետ... «Այո, սինյորա», «Ոչ, սինյորա», սև ու սպիտակ, լավ ու վատ, երանգները չեն ընդունվում: Իսկ կյանքում բոլոր գոյները միախառնված են... (Ծշուկով:) Չէ, դա սուտ է: Ստելը մեղք է: Նա մաքուր էր ու տանել չէր կարող սուտը: Ու չափից ավելի էր ամեն ինչ հասկանում: Այդ լուս մեղադրանքը նրա աչքերում...

(Հայելուն.) Դու, գոյնատ միանձ-

նուիի, մի՞թե չգիտես, թե ինչ է ծեր ամուսինը: Գիտեիր ու մոռացնել էիր: Ծեր ամուսինը պաղ անկողինն է ու տաք սերը ինքն իր նկատմամբ: Իրեն ու իր փողերին: Իր անարատ անվանն ու իր կլանին: Կա-պու-լետ: Այն էլ ինչպես արատավորված... Արյունով, արյունով... Ինչ էին արել ձեզ այդ Մոնղեցոյները: Նոյնքան գոռող, բթագոլիս ավանակները, ինչպես դուք: Եվ ինչքան արյուն... (Զննում է ձեռքերը:) Դա ինձ չի վերաբերում: Ո՞չ: Ես ոչինչ չեմ արել... Նրանք իրենց կամքով էին իրար սպանում: Իմ ձեռքերը մաքուր են: Ձեռքերիս ձերմակությունը, որով նա այդպես հիանում էր... Ես չեմ ասի նրա անունը... որը իհմա էլ է ինձ վախեցնում: Նման է շուշանի ձերմակությանը, հարյուրավոր շուշանների, որոնցով քաղաքացիները ծածկեցին երկու դագաղները: Երկու ջահել, սպիտակ դեմքեր շուշանների մեջ...

(Սարսափով:) Ո՞վ է հայելու մեջ, քո թիկունքում, միանձնուիի՛: Չէ որ տեսնում եմ, տեսնում եմ ինչոր բան, սպիտակը կարմրին խառնված... ահա... (Թեթևացած շունչ է քաշում:) Հասկանում եմ... Չասացի քո անունը, բայց դու լսեցիր ինձ: Դա քո պատանքն է, Տիբալտ, քո արնոտ պատանքը... Ես հիանում էի քեզնով, երբ ողջ

էիր, ու չեմ վախենում քեզնից, երբ մեռած ես: Ինչպես կարելի է վախենալ, ում սիրում ես: Իսկ ես սիրում էի քեզ: Բո ուժեղ ձեռքերը, քո կիրքը, որ համարձակ էր կոպտության աստիճան... Բո խիգախությունը... Համարձակության քո անզուսպ ծարավը...

(Հայելուն:) Ինչո՞ւ ես եկել այստեղ, Տիբալտ: Հիշեցնելու մեր սիրո մասին: Դժվար թե... Այնտեղ, ու դու ես՝ չկան մարմնական ուրախություններ, և դրանց հիշողությունները փառում են մարմնի հետ միասին: Այնտեղ թագավորում է Մահիլ՝ քո անկողնում նա է իմ տեղը գրավել: Ուրեմն, ինչ է նշանակում քո հայտնվելը: Միշե դու էլ ես ինձ մեղադրում: Բայց ինչի համար: Չէ որ ամբողջ կյանքում դու մահ ես փնտոել, խաղացել ես նրա հետ ու, վերջապես, գտել ես ատելի Ռոմեոյի դաշույնի ծայրին...

Այո, նա ատելի էր ինձ համար, այդ սիրունիկ, ջահել Մոնղեցոյն, երազողն ու թուլամորթը: Չեմ հասկանում, ինչ էր նրա մեջ գտել Զովիետը: Տիբալտ, քո կողքին՝ ազնվականի ու ոտից գլուխ տղամարդու կողքին նա պարզապես խղձուկ մեկն էր: Ինչպես եղավ, որ նրան հաջողվեց սպանել քեզ, քեզ՝ Վերոնայի լավագույն մենամարտողին...

(Ընկրկում է:) Ո՞չ, լոիր, Տիբալտ: Չեմ ուզում իմանալ: (Զեռքը պարզում է խաչելությանը:) Աստված իմ, մի՞թե դա ձիշտ է: Ինձ միշտ թվացել է, թե Տիբալտը երջանիկ է: Այդքան ջահել ու ազատ, ինչո՞ւ պիտի իրեն կապաներ: Մի՞թե ավելի լավ չէր լինի, եթե գաղտնի հանդիպեր ամուսնացած սինյորայի հետ: Ամեն ինչ այսքան լավ էր... Դայակը Տիբալտին էր ասում հանդիպման տեղն ու ժամն ու վերադառնում էր՝ շնչակտուր ու փքված... Իրեն այնքան կարևոր էր զգում, նրա փորձիկ աչքերը խորամանկ ու ուրախ էին փայլում: Ամուսնու տանել չէր կարողանում, որովհետև նա չէր ընդունում դայակիս արտօնությունները, չէ՞ որ ինձ հետ էր նրա տանը հայտնվել: Ծնողներս հույս ունեին, որ նրա սովորական դարձած խնամքը կթեթևացներ ամուսնական կյանքիս սկիզբը: Դայակս նոյնիսկ ուրախ էր, որ խստաբար սինյոր Կապովետի գլխին եղջուրներ են ածում ու հաճախ էր նրա ներկայությամբ մոդայիկ երգը երգում եղջրակիրների մասին: (Ծիծաղում է:) Իսկ ամուսինս ոչինչ չէր կոահում... (Անսպասելի մտքից ապշարում:) Թեն... Այն չարաբաստիկ պարահանդեսում, որտեղ ամեն ինչ սկսվեց...

Տիբալտը տեսավ երիտասարդ Մոնդեզյուին՝ դիմակը համարյա չէր փակում նրա դեմքը, ու ձեռքը տարավ սրին: Բայց ամուսինս նրան կանգնեցրեց՝ «Ո՞ւմ է պետք սկանդալ, այն էլ՝ պարահանդեսում»: Համենայնդեպս, մոտեցա, պատրաստ միջամտելու, բայց այդ պահին լսեցի ամուսնուս տարօրինակ բառերը...

Գնա՛, գնա՛ բանիդ
Հանդուգն տղա ես
Մի՞թե այդպես չէ
Այդ հոխորտանքը,
Կարող է գլխիդ մի փորձանք
բերել, գիտեմ՝ ինչ կլինի
Դու ինձ դեմ գնա՞ն
Վահ, ես իմ հոգին,
հենց այդ էր պակաս
Աքանչելի է
Ծատ աներեսն ես.

հանգիստ կաց, կամ թե...

(Հայելուն:) Այդ պահին դու գունատվեցիր, Տիբալտ, ես նկատեցի: Քո աչքերը փայլեցին, իսկ շուրթերը ծամածովեցին: Դու շփոթված էիր, առաջին անգամ շփոթվել էիր... Կողքովս անցնելիս շշնչացիր. «Նա ամեն ինչ գիտե»: «Ավելի լավ», - ուրախ ասացի ու դու ուրախացած ժպտացիր: Օ՞հ, ես հիմա էլ տեսնում եմ այդ ժպիտը: Նրա մեջ հույս կար... Իմ ամուսնության վախճանի հույսը: Հույսը ապա-

գայի նկատմամբ: Մեր ընդհանուր ապագայի...

Այս, հիմա տեսնում եմ այդ ժայթը: Բայց այն ժամանակ նախընտրեցի չնկատել: Հնչ իմանամ, ինչ կար ամուսնուս մտքում: Ու հոյսի շողը արմատից հանելու համար, ինչը կխաթարեր իմ անդորրը, որոշեցի չեղյալ համարել մեր հանդիպումը, որ նշանակված էր գիշերը, պարահանդեսից հետո: Երբ ամուսնուս ոտնաձայները լոեցին վերին հարկի ննջարանում, կանչեցի դայակին: Նա տագնապած ինձ թվաց: Վերցնելով գրությունը՝ տեղում մտմտաց ու սկսեց, թե՝ բան ունի ասելու, որ Զուլիետը պարահանդեսում... Բայց ես ընդհատեցի նրան. «Տաք գրությունը: Իսկ այդ զառանցանքը լսել չեմ ուզում»: Նայեց կշտամբանքով, գլուխն օրորեց ու գնաց:

(Խաչելությանը.) Տե՛ր իմ, ասա, կփոխվե՞ր դեպքերի ընթացքը, եթե այն ժամանակ լսեի դայակին ու տեղեկանայի, որ աղջիկս ծանոթացել է երիտասարդ Մոնդեյուի հետ: Կարո՞ղ էի փոխել ձակատագրով կանխորոշվածը: Աստղերի թելադրանքը: Ջո կամքը:

(Ծնկի է գալիս Խաչելության առջև, քիչ անց բարձրանում է, հոգնած շեշտով:) Տե՛ր իմ, գիտե՞ս,

թե ինչ գտա մեռած Տիբալտի մոտ: Իմ գրությունը: Այն մեկը, որտեղ առանց բացատրության հայտնում էի, որ պարահանդեսից հետո մեր հանդիպումը չի կայանալու: Գրության մյուս երեսին Տիբալտի ձեռքով գրված էր մենամարտի կանչը՝ հասցեագրված Ռոմեոյին: Նա Ռոմեոյին տանը չէր գտել, այդ օրը ձակատագրական հանդիպումը պատահական ստացվեց: Բայց մեկ ժամ շուտ կամ ուշ՝ միևնույն է, նրանք հանդիպելու էին: Ու քսան Մոնդեյու չէին կարողանա հաղթել Տիբալտին, եթե... եթե ինքը մահ չփնտրեր...

(Հայելուն:) Լավ, քո արյունը իմ վրա է, Տիբալտ: Քոնք, բայց ոչ՝ Զուլիետինը: Դաշույնը սխալվեց՝ նրա ապաստանը դատարկ կախված էր Ռոմեոյի գոտուց, իսկ նա հայտնվեց աղջկաս կրծքում: Նրա մահը թաղման կոչնակի նման ինձ կանչեց այս մենաստանը, մենախցի պաղ գերեզմանը...

Գերեզման... Ծիշում եմ, երբ արտաքերեցի այդ ձակատագրական բառը: Ամուսինս խնդրեց աղջկաս հայտնել Պարիսի հետ մոտալուտ ամուսնության լուրը: Տիբալտի մահից ուշքի չեկած, տառապանքիս մեջ տապլտկվելով բարձրացա Զուլիետի մոտ ու

լսեցի նրա հարգալից հրաժարումը: Բախումն ամուսնուս հետ անխոսափելի էր: Դրա համար որտեղից ուժ գտնեի: Եվ ասացի ամուսնուս.

*«Հայտնեցի, տե՛ր իմ,
բայց նա չի ուզում
Գլուխը քարը, թռող պսակվի
իր գերեզմանի հետ»:*

Այնտեղ՝ վերևում, ինձ լսեցին...
(Նայելով հայելուն:) Ջովիետ, աղջիկս, դու այստեղ ես: Քո հարսանեկան զգեստը լույսով լցրեց հին ապակին, քո թեթև ծեռքերն են համբուրում իմ մութ երկվորյակին՝ տիխրալի միանձնուհուն... Դու ներհում ես նրան: Իսկ ի՞նձ, ի՞նձ...
Ըիշում եմ աղաշանք՝
Օ՛, բաղցր մայրիկ, ինձ դուրս
մի նետեր,

Գոնե մեկ ամսով կամ մեկ
շաբաթով պսակս ուշացրեք
Թե դեմ եք դրան, իմ
հարսանեկան մահիծն ուրեմն,
Այն մոայլ շիրմում, ուր որ
Տիրալոն է, այնտեղ շինեցեք
Եվ իմ պատասխանը.
Ինձ հետ մի խոսիր,
բերան չեմ բանա,
Ինչ կուզես արա,
քեզ հետ գործ չունեմ

Լեղի Կապուլետը ջարդում է հայելին: Փշովող ապակու ձայնը վերածվում է մեղմ խորալի: Կինը ձեռքերը պարզում է Խաչելությանը, բայց այն արդեն չի երևում: Խուզն ընկղմվում է խավարի մեջ:

Սարսափելի բառեր... Բայց միթե բնական չէ, երբ կինը ամուսնու կողմն է բռնում այնպիսի կարևոր գործում, ինչպիսին դստեր ամուսնությունն է: Խիդճս այդ մտքով էի հանգստացնում: Ու եղավ այն, ինչ եղավ... Ու նորից արյուն... Քո արյունը, Ռոմեոյի, Պարիսի...»

Ու Վերոնայի բնակիչները պնդում են հանգով՝
*Քանզի չի եղել լուսնի տակ երբեք
մի ողբ այնքան խոր,
Որքան Ջովիետի և Ռոմեոյի
վեպը սգավոր:*

Ու ես ամեն օր ու գիշեր, կորցնելով օրերի հաշիվը, կանգնում եմ այս հայելու՝ իմ ուրախությունների ու մեղերի միակ վկայի առջև ու կրկնում եմ.

*Քանզի չի եղել լուսնի տակ երբեք
մի ողբ այնքան խոր,
Որքան սինյորա Կապուլետի
վեպը սգավոր:*

Բայց դա հոգիս չի թեթևացնում:
Դե ինչ, հրաժեշտի ժամն է, իմ լուակյաց զրուցակից, սև միանձնուիի:

Իսկ հետո՝ լուսավորություն...

ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ

գրական-գեղարվեստական հանդես

ISSN 1829-0701

© «Դրամատուրգիա», 2015
Տպագրվել է պետական աջակցությամբ

Խմբագիր՝
ԿԱՐԻՆԵ ԽՈԴԻԿՅԱՆ

Կազմը և էջադրումը՝
ՆԱՌԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Նյութերն ընդունվում են մեքենագիր կամ շարվածքով:
Բնագրերը չեն վերադարձվում:

Հանդեսում տպագրված պիեսների բեմադրությամբ շահագրգիռ
թատրոնները դրանց օգտագործման թույլտվության համար
դիմուն անմիջական իրավատերերին՝ հեղինակներին:

Խմբագրության հասցեն՝
Երևան, Օրբելի 18/6, հեռ. 22-76-08

Ստորագրված է տպագրության 02.07.2015
Գինը՝ պայմանագրային:

Դրանցման վկայական՝ 01Մ 000089

Չափը՝ 70x100, 1/16: Ծավալը՝ 11.12 տպ. մամուլ:
Թուղթը և տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 500 օրինակ:

Տպագրվել է
«Վան ԱՐՅԱՆ» ՍՊԸ-ու՝
ՀԳՄ «Լ. Զ. ՍՈՒՐԵՆԵՂՅԱՆ» տպագրատանը: